



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ

№ 12 1895

ԴԵԿԱՏԵՐԵՐ

1895 № 12

ԵՐԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Կրես

| | | |
|----------------------------|------|--|
| 1 ՓԱՓԱԶԵԱՆ, Վ... | 1545 | Նոր-Տարի (կաղանդի պատմ.); |
| 2 ՊԼԵՇՉԵՎԻՑ-Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ. | 1554 | Յառաջ! |
| 3 ՇԱՆԹ. | 1556 | Դուրսիցիները (վէպ. շարուն.); |
| 4 ՊՈՒՇԿԻՆԻՑ-ՏԵՐ-ԴԵՈՐԴԵԱՆ. | 1592 | Ժամանական սլատկեր: |
| 5 ՇԱՆԹ | 1611 | Ստւերդ (բանաստ.); |
| 6 ԳԵՄԻՒՋԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ | 1612 | Խղելալիստ (պատմածք.թ.); |
| 7 ՍԱՐԳ-ՍԵԱՆՑ, ԳԱՐԵԳԻՆ, ԲԺ. | 1625 | Շիճաբուժութիւն: |
| 8 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ. | 1631 | Վիճնակի Ծխիթարեանները (Պատմական տեսութիւն Հ. Ազնաւանի չօբելեանի առիթով): |
| 9 ԲՈՐ. | 1661 | Երզնկան՝ «Պատմութիւն մանկավարժութեան»; |
| 10 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ. | 1667 | Ժամանակակից տեսութիւն: — Հայկական խնդրի ներկայ զրութիւնը, |
| 11 ԱՐԿՈՄԵԴ, Տ... | 1670 | Երեանի քաղաքադլուի ընտրութիւնը: |
| 12 ՍՏԵՓԱՆԵԱՆ, ԳԵՈՐԳ. | 1676 | Զայնագրութեան դասատրութիւնը: |
| 13 ՄՈՒՐԱԴ-ԵԱՆ, ՅԱԿՈԲ. | 1680 | Աև ծովի ափերից, IV. |
| 14 ՄԱՆՈՒԵԼ-ԵԱՆ, ԼԵՒՈՆ. | 1687 | Հայկական թատրոն III. |
| 15 ԽՄԲ. | 1695 | Զանազան լուրեր: |
| 16 Ա. Ա. | 1706 | Բովանդակութ. «Մայր» 1895 թ. |


ՏԵՂԵԿԱՏՈՒ ԵՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐՈՒ Մ. Գ. Ա-ՕՏԻՆԵԱՆՑԻ

Տիպոգրաֆիя М. Д. Ротинианца, Гол. пр., д. № 41.

1895



ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 12 1895

ԴԵԿԱՏԵՐԵՐ

1895 № 12

ԽՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ԱՕՏԵԵԱՆՑԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротніанца, Гол. пр. 4, № 41.

1895

БАРИШИ

Сборник рассказов и пьес

Федор Булгаков

Разрешено цензурой. Тифлисъ, 13 Декабря, 1895 г.

VIII ՏԱՐԻ „ՄՈՒՐՃ“ ՏԱՐԻ VIII

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Բ Ի

ԹԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ 1896 ԹԻԱԿ. ՀԱՄԱՐ ԲԱՑԻԱԾ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը 1896 թւականին կը հրատարակւի նոյն ծրագրով և նոյն գիրքով, որպէս և նախկին եօթ տարիներում։
«ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալումն էր, նոյնպէս և ապագայում՝ կը բովանդակի։

- I. Յօդւածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին։
- II. Վէպեր և պատմածքներ՝ ինքնուրոյն և թարգմանական։
- III. Առանաւոր-բանաստեղծութիւններ, պօէմաներ՝ ինքնուրոյն և թարգմանական։
- IV. Նկարագրական-ճամբորգական։
- V. Պատմական։
- VI. Գիտական հանրամատչելի յօդւածներ։
- VII. Յօդւածներ տնտեսական և սոցիալական խնդիրների մասին։
- VIII. Գրական քննադատութիւն։
- IX. Գրախոսութիւն նոր լոյս տեսած գրքերի մասին։
- X. Ժամանակակից Տեսութիւն Յօդւածներ հայկական կեանքի ընթացիկ խնդիրների մասին։
- XI. Գաւառական նամակներ։
- XII. Թատրոնական քրոնիկ և քննութիւններ։

XIII. Թղթակցութիւններ Ոռւսաստանից և Արտասահմանից:

XIV. Կարեռը գոյն լուրեր ամսւայ եղելունթիւններից:

XV. Տեղեկատուններ և յայտարարութիւններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ. կը շարունակի «Մուրճ»-ում նաև 1896 թւականին առանձին ուշալրութեան առնւել այն ձևով, ինչպէս արդէն յայսանի է 1895 թւականի բաժանորդներին: ՄՈՒՐՃ»-ի ՎԻՊՍԿԱՆ բաժինը ներկայումն առելի քան երբ և իցէ առահոված է յատուկ աշխատակիցներով:

ՄՈՒՐՃ»-ի ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ կը մնայ նոյնը ինչ միշտ եղել է՝ յառաջդիմական:

ՄՈՒՐՃ»-Ը ունի աշխատակիցների մի ստուար խումբ, որը կազմւած է ամսագրի եօթնամեայ կեանքով և որով ապահովում են ամսագրի կարեռագոյն բաժինները: Աշխատակիցների կազմը լրացւում է նորերով, որոնց նպաստները երբէք չեն պակասել «Մուրճ»-ին:

ՄՈՒՐՃ»-Ի 7 տարւայ նիւթերի լիակատար ցանկը տպագրւելու է առանձին բրոշիւրով:

ՔԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ: «Մուրճ»-ի տարեկան բաժանորդագինն է **10** ոռւբլի: Ուսուցիչները և ուսանողները վճարում են զիջումով՝ **8** ոռւբլի, արհեստաւորները՝ և բանւորները՝ **7** ոռւբլի:

ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 3 ոռւբլի սկզբում, 3 ու. ևս մինչ մարտի 1-ը, մնացածը մինչև յունիսի վերջը:

ՔՈԼՈՐ **7** տարիների «Մուրճ»-ը **14** հատորով կազմած վաճառւում է 50 ոռւբլով, իսկ առանձին-առանձին՝ որոշ գներով՝ համաձայն առանձին յայտարարութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ընդունում են ամբողջ տարով՝ տողը **1 ու.**, կէս տարով՝ տողը **75** կոպէկ:

ԴԻՄԵԼ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ—Տիֆլիսъ, въ редакцію „МУРЧЪ“
Արտասահմանից—Tiflis. Rédaction „MOURTCH“:

ՆՈՐ ՏԱՐԻ

(Կաղանդի պատմութիւն)

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ

Կէս գիշերն անցել է: Քնել չէ յաջողում՝ նրան. կոպերն անգամ չեն ծանրացել: Ծանջւում է:

Ընկղմել է բազկաթոռի մէջ — նրագ շունի. վառած-դէմքը լուսաւորւած վառարանի մէջ ճարճաթող խարոյկի ոսկեգոյն բոցով, գլուխի դրել աջ ձեռքին, արմուկը աթոռի թևին և տամուկ ճակատը կնծիռներով ակսաած՝ երազում է:

Նրազում է և տանջւում: Յիշողութիւնն է պրապուում և նրա արտայայտութիւնները այնքան վշտալից են ու այնքան դառն, որ իրենց ծանրութեամբ կորացնում են նրա գլուխի կրծքի վրայ:

Վաղուց է որ նա չէ յիշում կաղանդի երբ լինելը. 20 տարեկանից ի վեր է որ նա այլ ևս չի իմանում թէ երբ է վերջանում տարին և կամ երբ սկսում:

Այսօր մէկը նրան ասել էր որ Կաղանդի օր է:

Եւ այժմ, նստած բազկաթոռի մէջ, կրակի առաջ, յիշում է նա իր մանկութիւնը, ծնողների, եղբայրների հետ անցկացրած կաղանդի օրերը, երբ նա անհամբերութեամբ սպասում էր միւսների հետ՝ հօր տուն գալը, ճրագների վառւելը ու կաղանդի ծիսակատարութեան սկսւիլը:

Այդ ծիսակատարութիւնը այնքան քաղցր և այնքան չորտպաւորութիւն էր թողել նրա ուղեղի վրայ, որ նա՝ մի սքանչացման ժամիս դէմքին՝ թաղւեց անցեալի արտացոլման մէջ ու կանեցաւ մի առ մի մտաբերել, նորոգել բոլորի յիշատակը...

*
* *

... Ահա մանում է ալեզարդ հայրը ծառացի հետ և ծառան ծանրաբեռնաւած է չորս-հինգ մեծ կապոցներով։ Հայրիկը մի խորհրդագաւոր, սիւրարիկ պատրաստողի նշանական ժամանակակից գէմքին՝ շըրջապատռում է մանուկներով։ Նրանցից մի քանիսը վազում են դէպի ծառան և հարցնում։

— Ի՞նչ է այդ, Ալեքսան... այդ ի՞նչ է։

— Ոչինչ, ոչինչ... թոթովում է ծառան, ժամում և փախչում է կապոցները տանելով։

— Ոչինչ, աւելացնում է իր կողմից հայրիկը — ճոթեղէններ են, հագուստ։

Բայց նրանք չեին խաբւի. նրանք հոտառութեամբ զգում էին որ այդ կապոցներից, քիչ յետոյ դուրս էին գալու անուշանուշ մրգեր — խոչոր ընկոյզներ, փափուկ թուզեր, տկլւզ — երկար նշեր, ուսւածափոր սև չամիչներ ու դեղին սամի պէս բոված սիսեռներ. ապա գողտրիկ կլորիկ տկողինները...

Եւ նրանք սկսում էին դուրս կանչել, թռչկոռել հօր չորս կողմը. հայրիկի, որ ալդպէս շըրջապատռած ու երջանիկ ծիծաղդէմքին, հանում է վերարկուն։ Ամենապստիկը քաշում է նրա փեշից, իսկ ինքը — տան չարաձճի մանուկը Վարդը — enfant terrible-ը կապիկի պէս վեր-վեր ցատկելով՝ աշխատում է հօր ժամացոյցի շղթան պոկ տալ։ Յուզեմն ու ցոյցերը ընդհանուր են։

— Թողէք հանւեմ, չարեր, գոշում է հայրիկը — իսկ դու, Վարդ, եթէ չես դադարիլ, միրգ չես ունենալ։

Ա, ուրեմն մի՞րգ էր ծառացի բերածը. վայ, վայ, հայրիկը մասնեց իրեն։

— Գէ, կորէք, չարեր, ծիծաղեց ամաչած հայրիկը — դադունիքը դուրս թուցրիք բերանից։

— Ես արգէն գիտէի... երգում է Վարդը։

— Ես էլ, ես էլ, շարունակում է Սեղրակը։

— Մենք էլ, մենք էլ, ընկերակցում են բոլորը։

Հայրիկը սենեակն է մանում. նստում է, պահանջում է քիչ հանգիստ թողնել իրեն և, ընկողմանած բարձի վրայ, հանդիսատես

Է լինում մանուկների տան տակն ու վրայ անող խաղերին նրանք գլորտում են, վազվզում, թռչկոսում, իրարու կամթում, գոռացնում և... ամենից աշխացչը, ճարպիկը, ամենին չաղթողը ինքը— վարդն է. Վարդը—մի սնամիկանման մի տրաբած, գողտրիկ-կարմիր թշերով, առողջ-լայն կուրծք, ջղոտ մարմին, գեղեցիկ թաւ յօնքեր, սիրուն բոցավառ խաժակն աչեր:

Այս, տան enfant terrible էր նա. ամենքին գւարձացնող, ամենքից շատ գոռացող ու թռչկոտող, ամենից աւելի սրամիա՝ նորանոր խաղեր հնարելու, բոլորին ծիծաղից թռլացնելու և ամենից աւելի սիրելի իր ծնողներին, մինչև իսկ եղբայրներին ու քոյրերին:

...Ահա հետզհետէ ներս են գալիս բոլորը. մեծ քոյրը՝ իր կէս հեգնական ժախտը դէմքին, որ ուզում է ասել թէ ինքն էլ տան մեծ է ծնողներից յետոյ՝ նրանից յետոյ մեծ եղբայրը՝ մի խոշոր սպի ճակատի վրայ և աջ աչքը միշտ շարժող... յետոյ էլի քոյր, էլի եղբայր և մինչև 8 հոգի շարւում՝ են պատերի տակ: Մանուկների խաղերը հետզհետէ գաղարում են. մօտենում է հանդիսաւոր բուգէն. ծառան ներս է գալիս և աշտանակները մի առ մի վառում. բայց դեռ մայրիկը է երեսում, նրա ներս գալուց յետոյ միայն պիտի հանդէսը սկսէր:

Լոռւթիւն է աիրում: Վարդը աչքերը դռնին յառած, սպասում է մայրիկին, բայց աւելի՝ մեծ սինիին, որի վրայ բլրակի պէտքարտած կը լինէին չոր մրգերը և որի շուրջի բազմաթիւ բացարձակ լուսերը կը շողշողեցնէին խոշոր ոսկեգոյն լնկոցզներն ու արձաթազօծ լինձորները:

Որքան չար էր այդ մայրիկը: Գիտէր որ իրեն սպասում են. միւս սենեակում նատել, քթի տակ ծիծաղելով, գիտմամբ ուշանում է և խաղում մրգի բլրակի հետ Հայրիկն անգամ սկսում է անհամբեր դառնալ և կանչում է.

—Այ կի՞ն, ի՞նչ եղաւ քեզ, եկ է է.

Մայրիկը քիչ էլ է ուշանում, յետոյ յանկարծ դռները ուժգնութեամբ բանալով ներս մտնում: Ամենքի դէմքի վրայ փայլում է ուրախ ծիծաղ: Բոլորը նրան են նայում և իսկոյն յետոյ էլ նրա ետեից, աղախնի ներս բերած հսկայ պնակին ու վրան գիզւած

մրգի բլրակին. Մոմերը երերցնում են իրենց բոցերը, աղախինը կքում էր սրւակի ծանրութիւնից:

Նառում է մայրիկը, փոքրիկին իր մօտ առնում և ես հրում վարդին, որ կա Անալով շատ բաժին ստանալ, շտապել էր մոնել մօր թեի տակ:

—Սատանան... Կեռացնում է նրան մայրիկը—ի՞նչու ես ինձ մօտ գալիս, այ, գնա հայրիկի մօտ:

Բայց հայրիկի մօտ գնալը միտք չունէր. հայրիկն էլ միւսների պէս իր բաժին էր ստանալու և իրաւունք չունէր ձայն ծըստուն հանելը Խշանը և բաժանողը միայն մայրիկն էր:

Եւ ահա սկսում էր հանդէսը մեծ քոյրիկով: Սա ծանրութեամբ ու յարգանօք մօտենում էր հայրիկին, կէս ծունկ չոքած համբուրում էր նրա ձեռքը. հայրիկն էլ համբուրում էր նրա ճակատը և յուզւած ձայնով ասում:

—Ծնորհաւոր քեզ նոր տարի, սիրելիս.

Յետոց հայրիկի մօտ նոյնն էր կատարւում և մեծ քոյրիկը ետ էր գառնում կամ բուռը և կամ փեշը մրգով լցրած¹⁾:

Հայրիկը, որ մի շատ յուզւով ծերունի էր, սկսում էր հոսքնել իր կլոր ացուերի վրայ՝ աչքերից բղխող ուրախական արցունքի կաթիլներ: Նա կաթողին սիրով համբուրում և շնորհաւորում էր բոլորին: Եւ երր Վարդն էր մօտենում, այդ սիրելի հայրիկը սիրալիր կերպով գգւում էր նրա շքեղ-երկար մազերը, կարմիր թխլիկ թշերը, համբուրում էր ու՝

—Քեզ էլ շնորհաւոր, ասում էր—քեզ էլ, չար Վարդս.

Ո՛հ, որպիսի զւարթ էր անցնում՝ յետոց. ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ երգեր, խաղ, սղար, չարաճճիութիւններ:

Բոլորը ուրախ էին, շնորհաւորում էին միմեանց և նա—Վարդը—երջանիկ էր. ամս, շնաւ երջանիկ:

Յիշում էր աչժմ այդ բոլոր ոսկեզօծ երջանիկ անցեալը. յիշում էր իր բարի և պաշտելի ծնողներին, իր սիրելի եղբայրների և քոյրերի մէջ անցկացրած կազանդները:

Որքան վաղուց էր այդ և սակայն որքան սպարզ ներկայանում էր այդ բոլորը նրա աչքի առջև:

¹⁾ Այդ սովորութիւնը պահպանում է Հայաստանի շատ կողմերում:

*
* *

Վառւում էր խարոցկը հնոցի մէջ. բոցավառ կրակլ ջերմացնում էր նրա ճակատը, սկզբում նրա ցիշողութեան հեռաւոր խորշերը. և նա ցիշում էր բոլորը:

...Անցել էին տարիներ. մոել էր մի գիշերօթիկ ուսումնարանն Յ՛, այն, ցիշում էր այնտեղ անցկացրած կեանքը մի առ մի. ցիշում էր նոյն իսկ կաղանգները:

Ցիշում էր որ ընթրիքի սեղանի վրայ աշակերտները սովորականից դուրս գւարթ էին լինում և աղատ. երգում էին, աղմուկ հանում. վերակացուն ծիծաղում էր ու մեծերի հետ կատակներ անում փոխանակ սատելու կամ բարկանալու:

Ահա դպրոցի չարութիւնների ինիցիասոր Քրիստափորը բարձրացաւ նատարանի վրայ և գուաց. «Լուսութիւն, տղայք»: Բոլորը լուսում են. նա ձեռքը բարձրացնում է և գոչում.

—«Մարթին ախաղարը» պիտի երգել

Եւ սկսում է իր կաշաղակի ձախնով.

«Մարթին ախաղար, Մարթին արպարը»

Ու մինչ մի խումբ նրա հետ շարունակում է՝

«Վեր ելաւ, վեր ելաւ»

Մի ուրիշ խումբ նորից սկսում է երգը սկզբից. այդ խումբն էլ երբ հասնուս է երկրորդ տողին, երրորդ խումբն է սկսում սկզբից: Խակ առաջին խումբը, երգի բոլոր տողերը վերջացնելուց յետոց, առանց կանգ առնելու՝ վերակսում է:

Ամբողջ սրան է թնդում; խառն ի խուռն լսում են՝

«Մարթին ախաղարը, Մարթին ախաղարը

Վեր ելաւ, վեր ելաւ

Զանգակները զարկաւ

Տիր բնմ բոմ;

Տիմ բոմ բոմ:

Վերակացուն յոնքերն է սրաստում ու մռմռում.

—Հըմ; էլի մեղախ երգը սկսեցին:

Այդ՝ խակապէս ուղախ՝ երգը տեսում է ամբողջ կէս ժամն Խեղ-

կառակ Քրիստովորը որ սկսել էր, էլի թռնում է նստարանի վրայ ու որքան ոյժ ունի՝ գոռում է:

— Բաւական է, բաւական է:

Վերջանում է երգը. առաջ գնացողները հասնում են «տիմ բոմ» բոհն-ին են սպասում, մինչև որ միւսներն էլ հասնում են և երգը մի ընդհանուր տոիմ բոմ բոհն-ով դադարում է:

Մառաները ներս են բերում 5—6 ահագին տոպրակներ: Զոր մրգեր են, ամեն մէկին տալիս են երկու-երկու փոքր պնակներ. ամեն ոք տկուզեցնում է գրավանը, յետոյ, առանց արձակման հրամանի սպասելու, բոլորը միասին խուժում են սեղանասնից դուրս, վազում, հաւաքում գասարաններում, ահագին դզրդոցով նստարանները քաշում—դարսում են պատերի տակ, յետոյ պազում խումբ խումբ և շրջանաձև ու սկսում են ընկոյզներով, նշերով խաղեր սարքել:

Քիչ յետոյ հնչում է մեծ զանդը. պատառ պազի պէս մօրու-քով վերակացուն մի առ մի բաց է անում գասարանների դուռը և հրամայում որ դուրս գնան: Բոլորը գործուալով ու կորիդորը փոշիով լեցնելով վազում են բագլը Սկսում են խմբական երգեր, լուսավառութիւն, խաղ, գժութիւններ:

Յետոյ, միմեանց զլիսի վրացից ցատկելով վազում են դէպի մեծ սրահը, ուր պիտի ներկայացում տեղի ունենար:

Յիշում էր թէ որպիսի ծիծաղելի բան էր դուրս գալիս, երբ կնոջ գերը կատարում էր մի տղայ և շարժելով աղերսագին իր մօրուքը, գոչում էր մի ուրիշ մօրուքորի. «Յիրում եմ քեզ»:

Յիշում էր թէ նա—միշտ նոյն չարաճճի Վարդը —մի անգամ մտաւ բեմի ետե, ճանաչեց այնաեղ Տիգրանին, որ մի կեղծ, բըր-գեաց սպիտակ մօրուք դրած, երեսին ու մազերին ալիւր քսած՝ ծերունի էր դարձել: Նա ծիծաղեց երկար, յետոյ վերչընց մի մոմ և երբ ծիգրանը զբազւած էր ածուխով նակատի վրաց կնճիռներ կազմելու, նա կրակ տւեց ցանցառ բուրդին ու փախաւ: Տիգրանը բարկացաւ, բոցավառ մօրուքով դուրս թռաւ բեմի ետեից և վա-զեց սրահի մէջ ապաստանող Վարդի ետեից: Բոլորը, նոյն իսկ վար-ժապետներն ու տեսուչը ծիծաղից թռւանում էին ծիգրանի մօ-րուքը արծարծւում էր, Վարդը փախչում խուսափում էր նրանից, իսկ բէժիսէօրը բեմի առաջ եկած, խղճալի դէմքով գոռում էր.

— Զգանարկել, եկ, թշւառ:

Զգանարկը մոռացել էր ամեն ինչ և ուզում էր վրեժ լուծել:

Ախ, որքան չար էր այն ժամանակ:

Ստիպւած էին անարակալ քիչ երկարեցնել՝ Զգանարկի մի նոր մօրուք շինելու համար, իսկ ներկայացումից յետոյ ծիգրանը արդէն մոռացել էր նրա մօրուքին հասած փորձանքի մասին:

Յիշում էր այդ բոլորը — այդ մանկական անմեղ զւարձում թիւնները. ախ, որքան կ'ուզեր կարողանալ խաղալ մի անդամ այնպէս... Յիշում էր իր բարեմիտ ու ներողակիտ ուսուցիչներին ու սիրելի ընկերակիցներին, որոնց մէջ նա անց էր կացրել երջանիկ տարիներ ու կազանդներ:

Նաև վաղուց էր այդ, բայց շատ պարզ ներկայանում էր բոլորը նրա առջև, շատ պարզ... և որքան հաճոյք էր պատճառում այդ պատկերացումը:

* * *

Եւ վառւում էր խարոցիլ հնոցի մէջ. ճարճաթում էին փայտերը. բոցը արեան գոյն էր ստանում, տաքացնում նրա ճակատն ու պեղում նրա յիշողութեան ոչշշատ հեռաւոր, սակայն վշտալից խորշերը:

...Սահել էին շատ տարիներ:

Դպրոցից դուրս եկած, վաղուց էր որ կեանքի մէջ էր մտել, շատ բան տեսել, վշտեր կրել, փորձանքների մէջ ընկել, բայց չէր ընկնել:

Կեանքը սկսում էր հասկանալ և... ոչինչ լաւ բան չգտնել նրա մէջ, եթէ ոչ անիրաւութիւն, թշւառութիւն և զրկանք:

Նա կուել էր «բաղդի» դէմ. ինչ որ «բաղդ» էին կոչում մարդիկ, նա նրան «ապունիկ» էր գտել, որ գնում է նրա մօտ, ով ուրիշի դառն քրտինքը արծաթ արած թուխս է նստել վրան. Ինչ որ ուրիշները «յաջողութիւն» էին անւանում, նա ստուգել էր, որ կամ ստորացում էր նշանակում և կամ հարստահարութիւն:

Եւ նա չգիտէր «յաջողութիւն» ունենալ. ու մնացել էր աղքատ, թշւառ ու զրկւած: Բայց կուել էր. կարողացել էր իրեն շրջապատող տիղմից դուրս գալ, կարողացել էր լաւ կեանքի պա-

հանջը զգալ և նրան փափառել... բայց հէնց դրանով նա տանջում էր:

Երանի էր տալիս նրան, ով սպահանջ չունէր, ով գոհ լինել գիտէր. գոնէ չէին տանջւիլ այդպիսիները:

Իսկ ինքը. մի քաղցր բոսէ ունեցաւ: Մենակ է. կորցրել է այլ ևս ոչ միայն գւարճութիւնը, աշխոյցը, այլ մինչև իսկ նիհարացել է. այտերը զեղնել. թոշնել, աչքերը փոս ընկել—փայլը կորցրել. խանդը մարել. մելամաղձու, վաստառողջ և մի սուեր:

Որբ էլ մնաց. մայրը վազուց մեռել էր, եզրացրներն ու քոյրերը ցրւած բոլորովին. իսկ հանցը...

Հանցը—նա վաղուց շշկար։ այնտեղ-հեռու մեռած։

Յուսահասութիւնից յետոյ կատաղութիւն էր յաջորդել նրան-նրա մէջ ծագել էր վրէժխնդրութիւն, փափագ, վրէժ առնել. բայց ումի՞ց. ո՞ր լինկերութիւնը իր և իր պէս զրկւած մասածողների համար չէր կագմւած, այլ ձիշո իրենց թշւառացնողների օգտին:

Բայց աշխատել էր, գործել... որքան ժամանակ, ինչպէս, ինչ օգուտ ունեցաւ այդ բոլորից—չէ կարողանում լիշել չգիտէ. զիտէ միայն որ իր վրէժը շատ դանդաղ էր քայլում, գրեթէ չէր քայլում, իսկ ինքը մաշում էր, ծիւրում և իրա հետ շատ շատերն էլ... Սշխարհը թշւառներով և թշւառացնողներով էր միայն լիքը:

Նրա համար գոյութիւն չունէին ոչ կազանդ, ոչ նոր տարի, ոչ զատիկ կամ տօն, ոչ ուրախութիւն և ոչ էլ գւարճութիւն... այդ բոլորի գոյութիւնը մի տիմար կատակ էր թշւում նրան:

Ոչինչ, ոչինչ, եթէ ոչ մի խոր վիշտ, թանձրացած ու մելամաղձութիւն, սուր դառնութիւն և բարկո թիւն զէպի այդպիսի մի անտանելի կեանք, վշտակից երիտասարդութիւն, որ աւելի վատթար էր, քան ամեն տեսակ ապիկարութեամբ լիք անզգայ զառամութիւն:

Թաղել էր նա ուրախութիւնը. և եթէ մի բոսէ զօրում էր երջանիկ լինելով ուրախ լինել—այնքան բռնազբօսիկ և արհետական էր լինում նա, որ ամենքը գտնում էին նրան ծիծաղելի:

Կարծես վիշտն էր նրան ծնողը, ցաւեր՝ մեծացնողը և թշւառութիւն՝ մնուցողը:

Սւ վառում՝ էր խարոյկը՝ ճարճաթում էին փայտերը. բոցը

արիւն էր կտրել, տաքացնում էր նրա զլուխն ու պտապելով նրա ցիշողութեան ախրալից անկիւնները, վերարտադրում էր նրա համար միմիայն դաւնութիւն ու տանջանք:

Ա, կազանդներ, վաղուց էր որ նա մոռացել էր ձեր գոյութիւնը, ձեր զանազանութիւնը միւս օրերից. վաղուց էր որ նա վարժւել էր ոչ իր մանկութիւնը ցիշել և ոչ էլ անցեալ անհոգ օրերի երջանկութիւնը:

Վաղուց էր որ նա ուսել էր տանջւելը տեսնել, ինքն էլ տանջւել:

Բայց երբ ցիշում էր որ այդ օրը կազանդ էր, որ գիտեր թէ թիւն են եղել կազանդները հետու անցեալում իր համար:

Հիւանդ էր արդեօք... բայց ոչ, չնայելով որ կէս գիշերն անց էր, քնել չէր կարողանում:

Ոչ ոք նրա պէս չէր տանջւում այդ միջոցին:

Հիւանդ չէր, ոչ կոկորդն էր սեղմառում. ցիշում էր անցեալը... ցիշում էր շատ բան, սոսկալի՛ պատկերներ... Եւ սակայն որքան կ'ուզէր, որքան տոփում էր մի օր երջանիկ զգալ իրեն՝ իր մանկութեան կազանդների օրերի պէս... օրօրւել մի սիրելոյ գրկի մէջ, գգւանք սոսանալ, փացփացւել, զլուխը սիրուց տրոփող մի սրոտի կոթնեցնել, շրթունքները տենդոտ համբոցըների պարզել և մի քաղցր, անուշ ու սիրով լիքը ձայն ունենալ, որ շշնջէր նրա ականջն ՚ի վեր մի նոր, երջանիկ տարւայ ծնունդը.

— Նորհաւոր նոր տարի, նոր աւելի լաւ կեանք, ուր այլ ևս չի լինի թշւառութիւն և զրկանք:

ՅԱՌԱՋ!

(ՊԼԵՇ ԶԵԵԽԻՑ)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԻ

(ՆԻԷՐ ՅԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ)

Յառաջ, դէպի գործ—մի գործ սրբազան
Նիւենք, ընկերներ: Երկիւղ ու զասկած
Թող կորչին իսպառ: Ահա փրկութեան
Տեսնում եմ արդէն ոսկի՝ լուսաբաց:

Գեռք ձեռքի տւած, ազառ, համարձակ
Գրմհ տանք միասին, յառաջ լնթանանք.
Թող մեզ փողփողի գիտութեան զրօշակ,
Ամրանան մեր ուխտ, մեր սուրբ դաւանանք:

Արդար քարոզով անվերջ նախատենք
Սըսութեան մեղսոտ, խարդախ քուրմերին.
Եւ թւմրածներին դէպի կեանք կոչենք,
Դէպի սուրբ կըռիւ դիմենք խըմբովին!

Չըկանգնենք երբեք կուռքերին բազին
Ո՞ւ երկրիս վերայ, և ոչ երկնքում.
Այս փուշ աշխարհի պատեին ու փառքին
Գլուխ չխոնարհնք մեր մատաղ կեանքում:

Քարոզենք միշտ սէր, սիրոյ գաղափար
Եւ աղքատներին, և՝ հարուստներին.
Տանենք հալածանք այդ սիրոյ համար,
Ներելով մեզ կոյր հալածողներին...

Երանի նորան, ով ջերմ փափագով
Ապրել է կըռւում; գառն հոգսերում.
Ով երբէք ընկճւած, սորկական հոգով
Խը վառ յոշսերը չե թաղել հողում:

Թո՞ղ մեզ ուղեցոյց փարոսի նըման,
Նողայ, շողշողայ սուրբ ճշմարտութիւն.
Օ՛, հաւատացէք, ձայնը փրկութեան
Զի կորչիլ երբէք կեանքում ապարդիւն:

Լսեցէք, եղբայրք, ձեր եղբօր ձայնին,
Եւ քանի մեր մէջ եռում են ոյժեր—
Մատազ, վառ ոյժեր — գրոհ տանք խըմբովին!
Յառաջ, միշտ յառաջ դիմենք անլիհեր!

Մոսկա, 1895թ.

ԴՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ

ՇԱՆ, ԹԻ

(Շարունակութիւն ¹⁾)

Է.

Բագրատ տարակուսանքով դուրս ելաւ ու բաղխեց միւս սե-
նեակին դուռը:

—Մտէք:

Բագրատ բացաւ. ու սեմի վրայ կանգ տռաւ:

Բաց դաշնակի առաջ դաշնակի աթոռակին վրայ նստած էր
Լուիզը և անոր ծունկերուն մէջ կէս մը զետինը, կէս մը անոր
գիրկը ինկած էր Օգիւստան և դէմքը թաղած քրոջը ծոցին մէջ
ջղաձգօրէն կուլար:

Լուիզ երբ Բագրատը տեսաւ, ոսքի ելնելու շարժում մը ըրաւ
ու կարեկցոս ձայնով մը հարցուց.

—Պարօն Սուրեմեան, այս խենթը ինչու կու լայ:

Այդ երկու քրոջ պատկերը, Օգիւստայի հեծկլտուքը, Լուիզի
անուշ-քննող հայեացքը դաշնամուրի մոմերուն կէս լոյսին մէջէն
մեծ ազգեցութիւն ըրաւ Բագրատի վրայ:

Բագրատ երկու քայլ ըրաւ, մօտեցաւ աղջիկներուն, ծռեցաւ
ու փորձեց Օգիւստայի գլուխը քրոջը կրծքէն բարձրացնելու: Աղջիկը
ընդդիմաղրեց, ու Բագրատի ձեռքը սեղմէեցաւ Օգիւստայի ճակար

¹⁾ Տես «Մուրճ» № 11, 1895 թ.

ու Լուիզի ծծերուն մէջ: Բագրատի ձեռքը՝ զողաց, և կարծես վախ-
նալով ետ քաշել ուզեց, բայց չքաշեց:

Դուք ասոր բան մը ըրե՞ր էք. կրկնեց Լուիզ:
— Ինքս ալ չգիտեմ. եղաւ պատասխան:

Յանկարծ Օգիւստան գլուխը ետ առաւ քրոջը ծոցէն, և ար-
ցունքի մէջ լողացող դէմքը Բագրատին դարձնելով՝ կըտըրաւող ձայ-
նով մը հեծկըլացաց.

— Չգիտէք. ես ձեզի ինչ ըրի, որ ինձի այնպէս յանդիմա-
նեցիք:

Բագրատ խղճահարւեցաւ ացդ աղւորիկ էակը իզուր տեղը
վշտացուցած լինելուն համար. արգէն այսօրւան յուզումէն ջիզերը
բոլորովին թուլցած՝ ինքն ալ ծունկի եկաւ աղջկան քովը. յուզ-
ւած դէպի իրեն քաշեց անոր գլուխը ու սկսաւ համբուրել անոր
արցունքոս այսուրը՝ կրկնելով.

Եթի լոր, մի' լոր, սիրունա. ներէ. ուրիշ բանի վրաց սիրոս
նեղացած էք:

Աղջիկը առանց արտասւելէ դադրելու՝ գլուխը յենեց Բագ-
րատի ուսին:

— Բայց մի' լոր, հերիք է. կըսէր տղան:

— Ա'լո չեմ կարող. կակազեց աղջիկը. Միայն այլիս բարկա-
նալուդ համար չէ, որ կուլամ. աւելցուց արցունքի տակէն ժըպ.
տելով:

— Թողէք, որ հանդատանաց. մէջ ինկաւ քոյրը՝ Բագրատի
գրկէն աղջկան գլուխը հեռացնելով:

Բագրատ նայեցաւ Լուիզին. անոնց աչքերը իրաւու հանդի-
պեցան. աղջիկը աչքերը փախցուց: Այդ աչքերու փախուստը նո-
րէն տեսակ մը ցնցում տւաւ Բագրատին:

Ելաւ ոսքի ու դուրս ելնել կուզեր, երբ Օգիւստան աշխոյժ
շարժումով մը ցատկեց ոսքի, փաթթւեցաւ ազուն՝ հծծելով.

— Ո՛չ. ես ալ հետդ պիտի գամ:

— Եկուր. ըստաւ ան. ու կէս մը գրկւած միասին սենեակէն
գուրս ելան:

Լուիզ նայեցաւ ետևուն. երբ անոնք հեռացան՝ պահ մը ցնոյն
պիրքով աչքերը դռան անշարժ մնաց. շրթունքները երերացին,

կարծես բան մը ըստաւ. յանկարծ «Ե» բացականչեց, դարձաւ դաշնակին ու սկսաւ ամուր-ամուր նւագել:

Իսկ Բագրատ՝ աղջկան փաթթված՝ հաղիւ ոտքը իր սենեակին ներս դրած էր, երբ քանապէին խորերէն սոսկալի քահքան մը փրթաւ, որ ամբողջ սենեակը լեցուց.

Բագրատ կանգ առաւ, աշքերը մութին մէջ այն կողմ յառած:

—Եկուր, եկուր նայինք, խելօք պարոնս. ինչ եկեր բարկութիւնդ խեղա աղջիկներէն կ'առնես:

—Սարգիս, զ՞ուն ես:

—Հրամանոցդ ծառան. ինչ ըրեր նայինք ընկերութեանդ Փոնդը. անշուշտ վերջացուցիր, ինչ ըսել կ'ուզէ:

Էլէնին լոյսը բերաւ:

Բագրատ առանց պատասխանելու նստեցաւ բազկաթուին մէջ ու մտածկու սկսաւ աղջկան մազերը շոյել:

—Ե՛, չիսպատասխանես. հարցուց Սարգիս ու սկսաւ նորէն խնդրալ: Լաւ, լոէ դուն. Թորոսեանին քովէն կու գամ: պատմեց քաջագործութիւնդ: Սիրելիս, ինչու քի: մը փորձւածներուն ականջ չես դներ. այդ մարդիկներէն մեզի օգուտ չի կայ: Այդ մարդիկը ոչ այն գլուխը ունին քու ըստածներդ ըմբռնելու, ոչ ալ այն սիրտը՝ գէթ առանց լաւ ըմբռնելու զոհողութիւն մը ընելու:

—Ո՞չ. ես զոհողութիւն չեմ ուզեր. շահ, շահ, իրենց շահը:

—Զոհողութիւն անոնց համոզումով. ոչ ալ այնչափ յանդրդնութիւն ունին հասկընալնէն վերջը զործի ձեռնարկելու: Անոնք քեզի պէս նորութեան, յառաջդիմութեան, փոփոխութեան սիրահար չեն. անոնք ամեն նորութենէ այնպէս կը վախնան ինչպէս մուկը կատուէն. անոնց ձգէ, որ իրենց հայրերու ատենը տեսածը կրկնեն ու կրկնեն:

—Բայց, բարեկամ, ժամանակը այլ. ևս՝ իրենց հայրերու ժամանակը չէ:

—Ե՛, այդ փիլիսոփացութիւններդ որու կը հասկըցնես:

—Բայց, եղբայր, եղածը իւրաքանչիւրի համար քանի մը տաճանեակ ոսկիի ինդիր է միայն. մէջտեղ բարդ հաշիւներ ալ չկան:

—Այդ միևնունն է. տասնեակէն հարիւրեակին անցնիլը դիւրին է. առաջին քայլն է գժւարը: Ե՛, ալ այսօրւընէ քիչ մը կը խելօքնաս, չէ: Գիտես քեզի անցեալ օր ալ այնքան ըսի, որ այդ մարդոց օձիքը բաց ձգես, որ անոնք այդ տեսակ գործերու համար ստակ տըւող չեն. իսկ դուն ինծի Շէ, դուն ալ Պոլսեցի ես դարձեր. թուլամնըթ, առանց փորձելու ոչինչ չի յաջողիր» կ'ըսէիր. դէ՛, կը շնորհաւորեմ փորձ:

—Իմ սկզբունքս նորէն նոյնն է. առանց փորձելու ոչինչ չի յաջողւիր. միայն այսօր պիտի աւելցընեմ՝ առանց անյաջողութեան ալ ոչ մի փորձ չի յաջողւիր:

—Դուն դեռ յոյսդ կտրած չես:

—Ամենելին:

—Մարդու գլուխը կամ դատարկ տակառ լինելու է, կամ քուկինիդ պէս քամիներով լեցւած, որ այսօրւան փորձէդ ետքը նորէն այդ փորձը կրկնել ուզէ:

—Ի՞նչ ըսել կ'ուզես. եթէ գործ տեսնել կ'ուզենք՝ մաքառենք պիտի, աշխատենք պիտի, զլուխ պիտի հանենք. ոչ թէ կէս ճանապարհին ետ քաշւենք, կամ նոյն իսկ դեռ գործի չսկսած, մտածելով որ անկարելի է. այդպէս դատելով է, որ մինչև հիմա ոչինչ չենք շինած:

—Գործէն ձեռք վերցուր չեմ ըսեր քեզի. միայն հիմակու հիմա այդ հաստատ ֆոնդէն վազ անցիր:

—Լաւ, ըսենք, նախնական ծախքերը կերպով մը գոցել կը դնանք. բայց այն ատեն թարգմանիչները, հեղինակները ինչով պիտի վարձատրենք քիչ-շատ. Ուսիորի օդնվը:

—Ճիշտ իմ ըսածիս եկար. առայժմ այդ վարձատրելու խնդրէն ձեռք վերցնելու է:

—Բայց մի՛ մոռանար, որ այդ աշխատողները գրեթէ բոլորն ալ խեղճ մարդիկչեն, մե՛ծ մասով ուսուցիչներ:

—Այն. բայց գործի յաջողութեան համար, ով որ կը նայ, պէտք է զոհողութիւն մը լնէ: Եւ այդ ալ առժամանակ մը միայն. մինչև որ գործը իր սեփական ոտքերին վրայ կենայ:

—Հիանալի տրամաբանութիւն. ֆույ, այդ հոտած գաղափարներէն, տես, դեռ դուն ալ չես ազատւած. հասարակութեան մէկ

անհատը ոչինչ չունի, կարօտ է, խեղճ է. բայց թնչ ընենք, ազգասիրաբար պէտք է աշխատի աղջին դործերուն ձրիաբար. իսկ անդին միւսները հարուստ են, հանգիստ. բայց որովհետեւ անոնք չեն բարեհաճիր հասարակութեանը որ և է կերպով պէտքի գալ, անոր համար ալ ձեռք պիտի չի տանք անոնց։ Մէկէն պահանջենք, որովհետեւ արդէն ձեռքէն եկածը կ'ընէ. իսկ միւսը հանգիստ ձգենք, որովհետեւ ոչինչ չընէր և ընելիք ալ չունի. համ։

— Սցդ բոլորը ես ալ գիտեմ. միայն առաջինները որովհետեւ գործը կ'ըմբռնեն՝ կրնանք զոհողութիւն մը ընել տալ. իսկ երկրորդները քանի որ...

— Պատճառը թնչ կ'ուզէ լինի. ինծի համար ըսածներուդ եղբակացութիւնը միշտ նոյն է. «Որ ունիցի տացի նմա, և որ ոչ ունիցի» բարձցի ինմանէ։ այս է ըսածդ՝ որ կողմ որ գառնաս։

— Ի՞նչ ընենք, սիրելիս, աշխարհք այդպէս է։ Բագրատ կամաց մը աղջիկը գիրկէն հեռացուց, ոտքի ելաւ, եկաւ կեցաւ շխատկ Սարգսի դէմը ու պատասխանեց։

— Ո՞ւ. աշխարհք այդպէս չէ. միայն մենք մարդիկս այդպէս կ'ընենք. մեր կարգերը, մեր օրէնքները, մեր հազիւ զարգացման ճամփան գտած քաղաքակրթութիւնն է, որ այդպէս կ'ընէ։ Այն, քանի մը անհատներու ձեռքը ստակը քոլերայի բացիլին պէս կ'աճի, մինչ անդին հազարաւորներու կեանքը գժոխք կը դառնայ. իրաւ, այս իրողութիւն է. բայց թնչ, մի՛թէ պիտի այդ գաւանանք շինենք, մի՛թէ պիտի ընդունինք, որ այդ է աշխարհքի բնական ընթացքը. դուն չես համոզւած, որ այս բոլորը փոխանցման շրջանի մը մէջ է ինն կեանքին ու նորին մէջ, որ արդէն սկսած է իր գարնան ծիլերը արձակել. դուն չես հաւատար մարդկացին նոր, մէ՛ծ վերածնութեան դարին...»

— Նորէն բըռընկեցաւ մեր լուցկին։ Լաւ. ըսենք թէ երբ այդ ասպագան գայ՝ կը փոխւին պայմանները. բայց հիմա որ դեռ փոխւած չեն...

— Գործենք, ինչ որ գիտենք թէ սխալ է, համ. շարունակեց Սարգսի կէս ձ լած նախագասութիւնը։

Եւ պահ մը կարծես պատասխանի սպասելէն վերջը՝ շարունակեց։

—Եթէ ամեն մարդ այղպէս մոտածէ՝ երբէք այդ ապագան չի գար. այդ ապագան երկնքէն իջնելու չէ Երեմիա մարգարէին կառքերովը. այդ ապագան մեր արդի կետանքէն պիտի զարգանայ, այդ ապագան մենք պիտի ստեղծենք:

Սարգիս ժամանեցաւ. Բագրատ շարունակեց.

—Մենք պարտական ենք ամեն վայրկեան ձեռքերնուս եկածը ընենք հինը բարեփոխելու, քայլ մըն ալ նորին մօտենալու համար: Ամէն թուլութիւն ու գանդաղկոտութիւն յանցանք մըն է ժամանակին դէմ, որ նոյն ժամանակին ձեռքովն ալ անպատճառ կը պատճըւի:

—Աղէկ, թող այդ փիլիսոփայութիւններդ ու ինծի ըսէ տեսնեմ, ինչ ես մտապիր հիմա ընելու: Զկարծեմ որ ոստիկանութեան ձեռքով անոնցմէ բռնի ստակ առնել մտածես:

—Ոստիկաններէն աւելի կարող ոստիկաններ կան մարդու վրայ:

—Նորէն փիլիսոփայութիւն. օրինակ.

—Օրինակ. ձանձրնիթ, ամօթ, նախանձ, ոգևորութիւն, մագնիսացնմ, հոսանքի ենթարկում, ալ կ'ուղես:

—Իրաւ, որ չեմ հասկընար լեզուդ:

—Մէկին կարելի է ամըցնել միւսին ոգևորել, երրորդը ձանձրացնել, չորրորդին իր գրացին օրինակ տալ, ու գործը առաջ քշել: Արդէն ես այսօր նկատեցի, որ միջերնին մէկը շատ ազդւեցաւ. Թորոսեանը արդէն մերինն է. կարելի է մէկ երկու հատ ալ ճարել. ու գործը եփեցաւ:

—Եւ դուն կը կարծես, որ այդ կերպ սկսած գործը առաջ կ'երթայ. առանց ոգևորութեան, առանց հաստատ գիտակցութեան:

—Դուն ինքդ ըսիր, որ գործը անգամ մը սկսելը դժւար է. եթէ այդ մարդիկը անգամ մը տեսնան, որ ոչ միայն տւած ստակ-նին ըլկորաւ, այլ և մէջը իրաւ շահ մը կայ իրենք ալ կ'ազդւին: Մենք հիմա այն տեսակ վիճակի մը մէջ ենք, որ ամեն բան բնականին հակառակ ծայրէն սկսելու ենք. փոխանակ գիտակցութենէն, կամքէն գործ յառաջացնելու, պիտի աշխատինք կատարւած գործէն գոնէ կամք ու գիտակցութիւն առաջացնենք:

—Հոգիս, աղոնք և լնդհանրապէս բոլոր ըսածներդ սիրուն խօսքեր են, բայց չեն յաջողւիր, անիրագործելի են:

— Իրագործելի՞ են, թէ ոչ այդ օրեկտիւ կերպով դատելու կարողութիւն չունիք մենք։ Միայն այս ըստ ինձի՞ քու համրացումովդ այդ բորորը ճիշտ է, շխտակ է։

— Անտարակոյնս. այդ ամենը իւրաքանչիւր մարդու գլխին մէջն ալ կայ քիչ կամ շատ։

— Եթէ աղոնք ճիշտ են, եթէ աղոնք ամեն մարդու գլխին մէջն ալ կան, ուրեմն աղոնց համեմատ ալ պէտք է գործենք. իսկ ով որ իր զլիսին մէջ եղածը իրագործելու չաշխատիր՝ անազնիւ մարդ է ան, կամ առնւազն անպէտք մարդ։

— Ե՛, սիրելիս, շատ սուր կը խօսիս. քանի մը տարի դեռ եփւելու ես կեանքին մէջ։

— Այսինքն, խաշած մնի պէս, մէջս եղած բոլոր սննդարար, կենսատու նիւթը դուրս տալու եմ ըսել կ'ուզես։

— Ո՛չ. նորդն չափազանցում. այլ միայն քիչ մը աւելի դրականանալու ես։

Բագրատ արհամարանքով ուսելը ցնցեց։

Ը.

Խոնաւ ու ցուրտ գիշեր մըն էր։

Թէև հազիւ էր արելը մայր մտեր, բայց շուրջը կէս գիշեր-աւն պէս մութ էր։

Պերացի կողմնակի նեղ ու տղմոտ քանի մը փողոցներ անցնելէ վերջ՝ Բագրատ զարկաւ բարձր տան մը դուռը։ Դուռը բացւելու կ'ուշանար. տղան անհամբերութենէն ոոքը գետին կը տռափէր ձիու պէս։

Դու ու իվերջոյ բացւեցաւ. Բագրատ քայլերով սկսաւ բարձրանուլ ոլորուն սանդուղէն վեր. այս վերելքը բաւական երկար տեսեց. Ծնչասպառ ու հոգնած կանգ առաւ վերջապէս դրան մը առջեւ. կամոց մը հրեց ու ներս մտաւ։

Փոքրիկ սենեակ մըն էր, անկողինը տրորւած, աթոռները խառնակ ու ամենուն վրայ հագուստի կտոր մը. ասդին, անդին կօշիկներ, վրձիններ, պատուած թղթի կտորներ, ձմոթքած թերթեր, կէսը բաց մնացած մարդակազմութեան քարտէզ մը. վառարանին մօտիկ սեղան մը գրքերու ու լրագիրներու կոյտի մը տակ

թագւած. իսկ աղոնց բոլորի վրայ ինկած երիտասարդ մը, որ նստած կը կարդա՞ լայն վերարկու ին մէջ պինդ մը փաթթւած:

Դռան թեթև ճոճոցը կարգացողի ուշազրութիւնը դրաւեց. ևտ գարձաւ կամաց մը ու թեերը պարզեց. կարծես նորեկը զրկել կուզէր. բայց իսկոյն բացաւ բերանն ալ, խորունկ մը յորանջեց, պինդ մը կոտրըտւեցաւ, և յանկարծ մէկ ոստինով ցատկեց ոտքի ու կեցաւ հիւրին առջելը, որ դռան յօտը կեցած կը ժպտէր:

— Ի՞նչ քարացար. վրայինդ չանինս է՛, աղէկ որ եկար. սիրալս սկսեր էր նեղանալ. երեակայէ. այսօր տունէն դուրս ելած չունիմ. մինչև հիմա կը կարգացի. վերին աւտիճանի հետաքրքիր:

— Կարգացածդ ի՞նչ է:

— Նոր բնագիտական երկ մը. ռենդանիներու հասարակական կեանքը. շունշանորդի. կենդանիներ կան, որոնք մեզմէ շատ աւելի խելօք հիմքերու վրայ են դրած՝ իրենց լնկերական յարաբերութիւններու շէնքը:

— Աղէկ, ա. դնա անոնց հասարակութեան մէջ մալիր:

— Այն, ի՞նչ գիտցար. ո՞չ միայն ես, դուն ալ, ամենքն ալ այդ հասարակութեան մէջ պիտի մոնենք օր մը:

— Վայ. այդ գիւտը նոր ես ըրեր:

— Ինձի նայէ. կենդանական կեանքի մի՛ակ ու բոլո՛ր ձգտումը իր ու իր սերնդի անականութիւնը ապահովելն է. բայց մենք՝ մարդ-անասուններս, որ ամենազարգացածը լինելու հաւակնոտութիւնը ունինք, մեր գարգացած ուղեղէն այն տեսակ պայմաններ ենք ստեղծեր, որ նոյն իսկ մեր գոյութեան խորհուրդը ոտքի տակ կուտանք. մեր ըրած ամեն քայլ սխալ է. մեր վարչական կազմակերպութիւնները, մեր տնտեսական յարաբերութիւնները, մեր ընկերական նիստ ու կացը, մրը, մրը բնական շաւզին մէջն է. ամենկըն ալ մեզի գեսի կորուսո, գէսի մեր սեռի կործանումը կը տանին. մենք ո՞չ միայն դրականութիւնը հիւանդաս երեակացութեան արդիւնքը եղող բանաստեղծութեան ենք վերածեր, այլ նոյն իսկ մեր կեանքը: Մենք պարզ ու բնական կեանքի լնթացքը թողած՝ ուղեղնիս կը շարշարինք ու իր ուժերէն վեր բաներ արտադրել կը պահանջենք. Է, խեղճ ուղեղն ալ ի՞նչ լնէ. երբ կովին ծիծը շատ կժես կաթի փոխարէն արիւն կուզայ:

— Օ՛ֆ, ձգէ, Վասակ. քու բնագիտական անվերջ քարոզներդ ամբողջ օրը ինչ գլուխ կ'ուռեցընենք հերիք է. ելայ քեզի եկայ, քիչ մը կը բացւեմ ըսի. զուն ելեր ես գլխուս գայլի աւետարան կը կարգաս: Դպրոցը ինչ գլուխ կը բաւցընենք բաւական է:

— Տեղն է. քեզի ո՞վ ըստ աշխատս ցիմար գործերու մէջ մտնես: Բայց, ներէ, մոռցայ, որ ցիմարներէն ամենէն մեծը դուն ինքդ ես:

— Նորէն բերաննիս աւրեցի՞նք:

— Բագրատ, ձեռքէս որ գայ քեզի բլիկ-բլիկ պիտի ընեմ. դուն, որ իբրև թէ խելօք հասկըցող երիտասարդ ես, էտանը թողած երկակացական բաներու ետեէն կը վազես, հաւա միւս խեղճերը ինչ ընեն:

— Այսօր նորէն քրիզիսիդ օրն է. հասկցայ. ցտեսութիւն:

Գլխարկը առաւ, որ դուրս ենէ: Վասակ վազեց գէմը, զըլիսարկը խլեց ձեռքէն, նետեց անկողնի միւս ծայրը, Բագրատը բռնի աթոռին վրայ նստեցուց ու առանց անոր թեւը բաց թողնելու՝ շարունակեց.

— Բագրատ, եկուր ինծի լսէ, դուրս թափէ գլխէդ այդ ցիմարութիւնները. ես քեզի շնորհքով մարդ կը մկրտեմ:

— Մկրտէ, նայի՞նք. ըստ Բագրատ մատուցվ:

— Հա. դէհ, ուրեմն լսէ ինծի հետ հրաժարիմքը: Հրաժարիմ ի դպրոցէ և յամենայն ցիմարութեանց նորա. հրաժարիմ ցիգէալէ և յամենայն գեւզեկութեանց նորա. Հրաժարիմ ի բանաստեղծական ցնդաբանութիւններէ, յանուրջներէ և ի յօդւածներէ. ի.... Ե՛, չըսես:

Բագրատ ակսաւ ջղաձգօրէն խնդալ:

— Ապուշ. մարդ դառնալիք չունիս. եղբակացուց Վասակ Գլխիդ մէջ այնքան աւլուկ-թափուկ բաներ ես լիցուցեր, որ շնորհքով գաղափարի այլ ևս տեղ չէ մնացեր:

— Ինծի նայէ, աղւոր Վասակս, իւաւ դլխուս մէջ քու այդ շնորհքով գաղափարներուդ տեղ չի կայ. բայց հաւտա, որ սոսամոքսիս մէջ ահազին տեղ կայ քու Թուսաստանի թէլիդ ու խաւեարիդ համար. դէհ, շնւա, գործ տես:

Վասակ իսկոյն ողիի լտմալը վառեց, թէյամանը դրս վրան.

բերաւ քանի մը մանր մռւնր ուտելեղէններ ու Բագրատի ուզած խաւեարը:

Ծամելիքները իրենց գերին մէջը մտան. և լսու երկոյթին կատարեալ լրջութեամբ. բաւական երկար երկուքն ալ լուս էին:

Վասակ յանկարծ այդ լրութիւնը մէկէնիմէկ լնդհատեց.

— Նիտակ լսէ, Բագրատ, մինչև հիմա քանի աղջիկ սիրած ես. մվ գիտէ՝ գուցէ սիրած ալ չես:

— Ի՞նչ հարցում է այդ: Քանի մը անգամ կարծեր եմ թէ սիրած եմ. սակայն երկար տեած չէ. զգացումներու գրգռում մը, որ անցած է արագ. խորոնկ, ամբողջական զգացումներու ցնցու մը դեռ ունեցած չեմ:

— Ե՛, ես քեզի այդ չեմ հարցներ. քու ծթուած, բանաստեղծական հիւանդու զգացումներուն հետ ես զործ չունիմ. իմ հարցուցածս բնական, վիզիքական, առողջ սիրոյ մասին է: Տես, է. շուտով քսանլինդ տարեկան պիտի լինիս. ուժերուդ գագաթնակէտը. և ուժերդ իր նսկատակին չեւ ծառայեցներ. հրէշութիւն է այդ պարզապէս:

Բագրատ լծեթե մը կարմրեցաւ. ու չի պատասխանեց:

— Ահա, այդպէս էք զուք, իդէալիստ ապուշներ: Մարդիկ անօթի «հաց», հաց» կը պոռան երեսնուդ, զուք անոնք իդէալներով, բանաստեղծութիւններով, բարոյական քարոզներով, աստւածաբանական տափակութիւններով, անձնութրութեան ու ինքնազրկման անբարոյական խրատաներով կը կերակրէք: Մարդիկ ամեն կողմ բնութիւնէն խթւած ։ սերել, սերել կը կրկնէն. զուք անոնց ըսածը կը ծռէք, սիրել, սիրել կը ծամածուէք, զգացումներու նրբութիւններ կը հնարէք. ճաշակագիտական, իդէալական նախապաշարումներ կը փաթթէք խեղճի գլխուն. կրօնական առաասոց օրէնքներ ալ մէջքին կը կապէք, կը կաշկանդէք, կը ծռէք խեղճ արարածը, ու կերթաք սլարլամէնաներու մէջ տարիներով ապահարզանի մասին կը վիճէք, առանց ժամանակնիդ մեղքընալու: Ա, անխելքներ, ծըռած, խեղաթիւրւած անխելքներ:

— Այդ բոլոր փամփուշտ բառերը մէկդի: Ըսածէդ ինչ գուրաեկաւ. քու կարծիքով սէրը հանդիպած աղջկան գիրկը նետիլն է. առանց հակումի, առանց զգացումներու բնական զարգացման,

առանց մոքի ու բնաւորութեան փոխադարձ կապակցութեան. ուրիշ խօսքով երկու էակներու մէջ կապ մը, որ այս իրիկուն չի կար և որ վաղ առաւոտ նորէն լինելու չէ. կապ մը, որ պտուղ ալ չունի. այս է, հա, բնական սէրը, մարդկացին սեռի զարգացման նպաստողը: Բարեկամ, այդ բոլորը ինչ կ'ուզես անւանէ, բայց միայն ոչ «սէր»: գոնէ անւան սիրունութեանը խնայէ:

—Այս. անւան սիրունութիւնը. բանաստեղծութիւնը վրայէն վար կը թափի, այնպէս չէ: Որչափ դժւար է ամեն բանին իր ճշմարիտ անունը տալը: Խսկ սոմելը, երևակացմէլը, բանաստեղծելը, ադոնք ոչինչ. Սուրբ սէր, իդէալական սէր, զգացումներու յորդութիւն, հակնելմ, միտում, համակոռութիւն. ես ինչ գիտնամ—տոպրակներով բառեր էք հնարեր. մինչդեռ մէկ պարզ բայց մը հերիք էր:

—Երկարելու ախորժակ չունիմ. արդէն ժամանակն ալ ուշ է. բաժակ մը թէյ ալ տուր. տաք-տաք խմեմ ու ելնեմ:

Թէյը խմեց. ելաւ, հագաւ վերարկուն ու միասին սանդուղի գլուխը ելան:

Նոյն միջոցին վերի յարկի սպասուհին արագ սահեցաւ անոնց առջևէն ու վերի սանդուղի անցաւ:

—Մարիանի. կանչեց Վասակ:

Սպասուհին կեցաւ ու ժպտեցաւ:

Վասակ անոր մօտենալ կ'ուզէր, որ աղջիկը կարծես միտքը հասկըցաւ ու վեր վազեց խնդալով: Վասակ ցատկեց ետեւէն, բռնեց հագուստին քզանցքէն, գրկեց բռնութեամբ, պինդ մը համբուրեց երկու այտերէն ու վեր հրեց, մինչդեռ աղջիկը գէշ-դէշ կը ձըւճըւար:

Երբ տղու թեւերէն ազատեցաւ՝ նախ բարկացած դէմք մը շինեց, ետքը մատը տղուն վրայ թափ տըւաւ, խընդաց ու վեր փախաւ:

Բագրատ դէմքի տարօրինակ արտացայտութեամբ մը կեցած էր անշարժ:

Երբ աղջիկը անյալտացաւ՝ դարձաւ Վասակին.

—Է, այս է սէրը, հա:

Վասակ յաղթական ու նշանակիչ շեշտով մը վրայ բերաւ:

—Այս, այս է, ինչ գիտցար. այս սիրոյ ծաղկազարդն է, դուքնբացէքը. ճիշտ շաբաթէ մը խթումն ալ կու գոյ, զատիկը:

Եւ իր այլաբանութենէն կատարեալ գոհ՝ մոտաւ իր սենեակը
Համելով։

—Դէ, ցտեսութիւն. հոս շատ ցուրտ է։

Իսկ Բագրատ ճնշըւած սրտով, զգւանքը դէմքին զրոշմշւած՝
սկսաւ սանդուղներէն վար իջնել։ Նարունակ աչքերուն դէմն էր
սպասուհին, որ անասունի պէս կը ճըռճըռար Վասակի երկաթէ
ճմլումին տակ։

Երբ տան դռնէն գուրս ելաւ՝ պաղ հովը զարկաւ երեսին.
սթափեցաւ. ձեռքը թոթւեց. և՛ մրժնջեց, վանել ուզեց գլխէն
այդ պատկերը, ու ճանապարհ ելաւ։

Բայց զեռ մինչև տուն համնիլլ ուզեղը շարունակ նոյն նիւթի
շուրջը կը յածէր։

«Ճինի, իրաւ, ես եմ սխալը. չլինի՞ իրաւ, որ ծուռ եմ
կրթըւած, ինչպէս որ յիմարը կըսէ. չլինի՞ իրաւ, որ մեր ամբողջ
կեանքը ծուած է. գուցէ իրաւունք ունի. զգացումներ, իդէալներ
իրաւ գուցէ մեր հնարած բաներն են։ Գուցէ իրաւ անբնական է
իմ կեանքս. մինչև հիմա ոչ իսկ աղջիկ մը սիրած. բայց որ սիրու
չէ կպած, թնչ ընեմ։ Սիրոս չէ կպած. արդեօք. թէ իդէական
ցնդաբանութիւններով սիրոս բոնդատած եմ, որ չսիրէ. հասա-
րակական վարկ, օրէնք, սովորութիւն. և միւս կողմէն իդէալներ,
քարձրագոյն, ամբողջական սիրոյ իդէալներ, որոնք չեն թողներ
սովորական զգացումներով գոհանալու։ Բայց թնչ է այդ իդէալա-
կան ըսւած սէրը. կայ այդ տեսակ աղջիկ մը, որ իմ բոլոր պա-
հանջներուս, իմ բոլոր անրջանքներուս համապատասխանէ. և եթէ
կայ, միթէ ես արժանի եմ, որ ան ինծի կապւի. և միայն ինծի.
ինչո՞ւ. իմ որ առաւելութեանս համար. Փու, սոսկալի են այս
մոածումները։

Վերջին խօսքերուն հետ ելաւ իրենց սանդուղի վերջին ոտքը
ու թափով մը քաշեց դռան զանգակը։

Գէորգ զեռ արթուն էր։ Հագուստներով անկողնին վրայ փըռ-
ած, ձեռքերը գլխուն տակ, աշքերը առաստաղին՝ կը մոտածէր։

Երբ Բագրատ ոտքը սենեակէն ներս դրաւ.

—Եկամր. ուր էիր կորսըւէր. հարցուց Գէորգ։ Գիտե՞ս. Մկըր-
տիչը հոս էր։

— Ե՞նչ Մկրտիչ:

— Հոգաբարձուին եղբայրը: Աչքդ լոյս. թաղացին կիրակնօրեաց վարժարանի խնդիրը յաջողւելու վրայ է: Անցեալ օրւան թաղական խորհուրդի մէջ ըրած աղմուկդ ազդեր է մեծապատիւներուն. խելքներին մաեր է քիչ մը: Ե՛, գէշ չէ, կ'ըսեն. թող զան դաստան, ի՞նչ վնաս ունի. ծայրը ծախք ալ չի կայ. աւելի աղեկ, թաղեցի անգրագէտներուն քիչ մը գրել կը սորվեցնեն, քիչ մը կրօնագիտութիւնը կը բացատրեն. կարելի է ժողովուրդը քիչ մը աւելի ջերմեռանդանայ. թէ չէ այդպիսով եկեղեցիին սնդուկը շատ խեղճ վիճակի մէջ էն:

Գէորգ լոեց. ու իր աչքերը խորամանկութեամբ յառեց Բագրատին տեսնելու համար, թէ իր խօսքերը ի՞նչ տպաւորութիւնն պիտի լնեն անոր վրայ:

Բագրատ շրթունքը խածաւ. հանեց գլխարկին ու վերարկուն մրմնջելով.

— Ե՛, զարմանալու ոչինչ չի կայ. այդ մարդոց աջ կողմը վաշ-խառու է, ձախը՝ տիրացու:

Յանկարծ գէմքին մկանները ձգւեցան. սկսաւ խնդալ՝ կրկնելով.

— Հա, հա, հա. աջը վաշխառու, ձախը տիրացու: Զէ, հաշիւնին շխտակ են տեսեր. թող հաշւեն ինչպէս որ կ'ուզեն. մինակ մեզի թող շխանգարեն: Կրօնագիտութիւնը բացատրել. հիանալի դաղափար. խեղճ ժողովուրդ, աչքը բացած վայրկեանէն կրօնագիտութիւն են բացատրեր. և ինչնու համար. հաս է փիլիսոփայութիւնը. որպէս զի եկեղեցիին սնդուկը խեղճ վիճակի մէջ չի մնայ. սնդուկը. հա, հա, հա, սնդուկ. ահա այդ կրօնասէրներու էական կրօնը: Մտիր գիւղ, մտիր քաղաք, նայէ թերթերը, լսէ ճառերը, դամբանականները. ամեն կողմ նոյն եղանակը կ'երգեն. ամեն կողմ աղոնք կրօնքի ու ջերմեռանդութեան անունով կը խօսին. բայց բառերը կամաց մը անդին հրէ ու տակէն պիտի ելնէ միշտ նոյն սընդուկը. այն, զանազան ձեւերու տակ. երբեմն աւելի կրպիտ՝ գրպանի ձեւ առած, երբեմն աւելի քաղաքակրթւած՝ նըւէրներու, աջամբոյրներու, բաժանորդներու, այլ և այլ պաշտօններու ձեւափոխութիւններուն տակ. բայց միշտ նոյն սնդուկը: Վաշխառուներ, տիրացուներ:

Վայկեան մը կեցաւ, մոտածեց. ու յանկարծ դարձաւ ընկերոջը:
— Գէ՞րգ, ինծի բան մը պատմէ՛. այսօր չափազանց յիմար
արամաղրութեան մէջ եմ: Երէկ իրիկուն ժատրոնը բնչալէս էր.
շատ բազմութիւն կար. Գունօցի «Ձառւստն» էր. չէ, Մարգարիտի
գերը ով խաղաց. անցեալ օրւան իշխանուհին. կ'երևակացեմ շատ
սիրուն երգած պիտի լինի. շան աղջիկը ինչ մաքուր ձայն ունի,
է: Ազւոր աղջիկներ շատ կաչին. հա, քու աղջիկդ նորէն եկած
էր. սա բեմին կից լոժին մէջ. կարմիր չփակով, կապոյտ ժապա-
ւէններով, ճերմակ շրջազգեստով աղջիկը. մես յիշեր. չծիածննը:
լսեցի, որ... ինչ պիտի ըսէի. հա. տես, է, վազւան պատրաստե-
լու դաս ունիմ գեռ. ժամը քանին է: Գէ՞րգ, վառարանը այսքան
չեն վառեր. քնացեր ես. Գէ՞րգ. ինչ կը խնդաս:

Սկսաւ երգ մը մոլլտալ. անցաւ գրասեղանին գլուխը. գիրք
մը բացաւ, քանի մը թերթ թղթատեց, գոցեց, դրաւ մէկդի,
քաշեց թերթ մը թուղթ ու սկսաւ դրել:

Բացց առաջին բառին դէմ առաւ. ոչինչ չէր մոտածեր. ձըգ-
ւած, անդիտակից:

Գրիչը իրեն համար եռանկիւնիներ, քառանկիւնիներ կը դժէր
անդալար մաքուր թղթին վրայ:

թ.

Ամիսները կ'անցնէին իրարու ետե է:

Թէև զեռ հազիւ փետրւարի կէսերն էր, սակայն արդէն սկսած
էր գարունը տարօրինապէս կանուխ:

Այս այն տաքուկ, կակուղ, հեշտոտ, ցօղոտ գարուններու սկզբ-
ներէն էր, որ հարաւային ծովերը երբեմն կը նըւիրեն իրենց սի-
րած ցամաքներուն:

Երիտասարդներուն գործերը իրենց կատարեալ ընթացքին մէջն
էր: Դարբոցը՝ Բագրատի ովեորութեան ու գործունէութեան հնոցը՝
օր օրի կ'առաջանար: Աւսուցիներէն մէկ-երկու հատը գործին
նըւիրւել էին արդէն ու բոլորովին Բագրատին կապւեր. միւսները
կամայ-ակամայ կ'աշխատէին լարւած աշխատանքով: Աշակերտներու
դէմքէն թմրութիւնը փախեր էր. ակասկ մը թարմութիւն, կեն-
դանութիւն մարդ կ'սզգար, երբ այդ ազմիոտ շէնքէն ներս կը մտնէր.
ամեն կողմ խաղ ու աշխատանք:

Բագրատ հիմու զբաղւած էր դպրոցական մատենագարանի խնդրով. թէ աշակերտական և թէ ուսուցչական կրկին բաժինով. արդէն քանի մը անհրտժեշտ գրքեր ու թերթեր կ'ըստացւէին, բայց ազդքանովը հերիք չէր. գործը շնորհքով լնդարձակել կ'ուղէր. դեռ կը մտածէր դպրոցական մատենագարանին կամաց կամաց թաղացինի գոյն տայ:

Բագրատի ու իր ընկերներու եռանդն ու աշխատանքը հոդաբարձուներու աչքին չէր վրիպեր. և ընդհանրապէս գոհ էին:

Երիտասարդներուն ամենէն աննպաստ տարրը թաղականներն էին, որոնք շատ ալ հաշու աչքով չէին նայեր այդ նորելուկ և բերեխաներու ոգեսորւած աշխատութեանը. մանաւանդ սաստիկ դժգոհ էին Բագրատի գրեթէ բոնի բերել արւած քանի մը ֆիզիքական ու քիմիական գործիքներէն, մոդելներէն, նկարներէն, որոնք ևեկեղեցու մնդուկը շատ ծանրաբեռնած են, ինչպէս թաղականները կ'ըսէին:

Բագրատ պահանջած էր նաև դպրոցին մէջ շէնքի քանի մը փոքրիկ վոփոխութիւններ տղոց առողջապահական տեսակէտէն. բայց այդ անկարելի էր եղած, որովհետեւ թաղականները այդ ստակով մտադիր էին պատարագիչ քահանային համար երկու ձեռք նոր շուրջառ կարել տան:

Դպրոցէն գուրս միւս գործերն ալ բաւական գործի մտած էին:

Կիրակնօրեաց վարժարանը արդէն նոր-ուարիէն սկսած էր, ուր քսանի չափ մեծ մասով գաւառացի մշակներ կը սորվէին կարգալ. գրել, պարզ թւաբանութիւն ու բնագիտութիւն. գիւղական պահանջներուն անհրաժեշտ եղածին չափ:

Ասկէ զատ Բագրատ կ'ուղէր ժողովրդական դասախոսութիւններու շարք մը բանայ, զլսաւորաբար երիտասարդներուն ազդելու ու բնագիտական ուղղութեամբ լնթերցանութեան գրդելու համար. Բայց թաղականները ոչ մէկ կերպ համոզւել չուզեցին. աջնպէս որ այդ գաղափարը առժամանակ յետաձգւեցաւ. գոնէ այսպէս կ'ըսէր Գէորգ, որուն Բագրատ միշտ կը պատասխանէր:

—Յետաձգւած —գետը ձգւած:

Դալով մանկական գրքերու հրատարակութեան ֆոնդի խնդրին Թորոսիան ինքը յանձն էր առեր այդ գործը կերպ մը կարգադրէ.

ինքը մէկ-երկուքին հետ արդէն խօսած էր այդ առթիւ ու Բագրատին յաջող յոցանու կուտար:

—Բարեկամն, քիչ մը քաղաքականութիւն բանեցնելու է այս տեսակ ինպիրներու մէջ: Մորդու երեսին պոռալով՝ ձեռքէն ստակ շառնւիր. կ'ըսէր Թորոսեան Բագրատի ուսին զարնելով:

Այս էր տղոց դուրսի կեանքը՝ գործի կեանքը. կար ևս ներսի կեանք մը. կեանք մը, որ իրենց տան չորս պատերուն մէջ կ'ըսկը-սէր ու հոն ալ կը վերջանար ամեն առաւօտ դպրոց երթալէն առաջ և ամեն իրիկուն դպրոցէն գալէն վերջը:

«Դուրսեցիներուն սենեակը» ոչինչ փոխած չէր: Միայն վառարանը այլ ևս չէր ճարճաթեր. և կարծես աշխատութիւնը քիչ մը աւելի պակսած էր:

Բագրատ անգամ տունը այլ ևս համեմատաբար քիչ կ'ըզբազւէր:

Ըսկերներ եղած ատենը նոյն աղմուկն ու իրարանցումն էր սենեակին մէջ. հիւր չեղած ատենն ալ՝ կամ տղայք աղջիկներու ու տիկնոջ քո՞ն էին, կամ անոնք տղոց սենեակը:

Գէորգի ներսի գործերն ալ պարզ էին, դուրսիներուն պէս: Սիրալ շշէն եղած ատենը էլէսիին հետը կ'ինար, կը վազվազէր, կ'երգեր, աղջիկը կը բարկացընէր. իսկ երբ սիրալ նեղանար՝ աղջիկն թեէն բռնածին պէս դուրս կը վարնաէր, երբեմն այն աստիճան կոպիա, որ Բագրատ կը բարկանար ու կը յանդիմանէր.

—Վայրենի:

—Դուն ի՞նչ զիտես, է. այդպէս որ չընէի մինչեւ հիմա այլ ևս երեսս չէր նայեր:

—Վայրենի:

—Ընտանին Շիտակը շատ աւելի գերադասելի է ինծի համար, որ վայրենի վագրի մը պէս փաթթըւիմ ծառերու բունին, ճանկը լուսեմ, մռընչեմ ու վար ցատկեմ, քան թէ ընտանի կատւի մը պէս թռչնեմ, որ աղջիկ մը ինծի գիրկը առնէ, մանրիկ մատիկներովը շոյէ գլուխս պիխի, փիսի, աղւոր փիսին. ինքն ալ որ սիրալ նեղանաց պիխսաց գոգնոցը թոթւէ ու ինծի բազմոցի անդիի անկիւն նետէ: Այդպէս է, այդպէս, անգինա. շորս կողմդ նայէ, հերիք ճգնես:

Կ'ըսէր, կ'առնէր գաւազանը ու դուրս կ'ելնէր:

Ըստհանրապէս հիմա շատ դուրսն էր կամ խաները, կամ Պերացի փողոցները:

— Մինչև իրիկուն հոգինիս կ'նենէ. իրիկունները քիչ մը անուշ օդ ծձենք. կ'ըսէր «անուշ» բառը մասնաւորապէս շեշտելով:

Բագրատ թէեւ գոհ չէր Գէորգի խենթութիւններէն, բայց մէկ կողմէն ալ ուրախ էր. տունը ինքզինքը աւելի մենակ կ'ըզգար. և կարծես այդ իրէն բաւականութիւն կը պատճառէր:

Ինքն ալ իր մէջ փոփոխութիւններ սկսած էր նշմարել: Իր զբաղմանքներէն զագար առած ամեն վայրկեաններուն գլուխը մէկ զազափարի մը շուրջը կը զառնար—աղջիկ: Եւ այդ բառը, որ շատ փոքր հասակէն բովանդակ բանաստեղծութիւն մըն էր եղած իրեն համար, և որ վերջը իդէալականացած ու իր ապադայ կեանքի երջանկութեան պատկը կը պատկիբացնէր, հիմա հետզհետէ նոր ձև մը, նոր գոյն մը կ'ըստանար: Հիմա այդ զազափարը մարմին էր առած: Դրացի պատուհանէ մը երեցած մերկ կանացի թիւ մը իրեն ցնցումներ կուտար. իր քովին անցնող աղջկան մը երկոր հիւսքը մագնիսի պէս հետը կը տանէր իր հացեացքը. թատրոնը իր թեւին կից՝ անհանգիստ շնչող կուծական կուրծք մը տարօրինակ խոռվութիւն մը կը պատճառէր իր հոգիին: Երբ տունը Օդիւսոսն թեւրուն մէջ առած կը համբորէր՝ արեան յուզւիլը կ'ըզգար. Երբ Լուիզի հետ գէմ գէմի ընթերցանութեան կը նստէր՝ զրքի բովանդակութենէն աւելի աղջկան շրթունքներն ու ծնոտը իրեն կը հետաքրքրէին. և աղջիկը երբ դաշնակի առջե. կը նւագէր, ինքը անոր ծոծրակի ճերմակ ու փափուկ մորթովը կը հիանար: Այդ տեսակ վայրկեաններուն երբ աղջիկը իր խորունկ ու թափանցող վճիռ աշքերը աղու դէմքին նետէր՝ ոս ամօթ մը կ'ըզգար, կը պատկառէր. ինքն ալ որոշ հասկնալով՝ ինչու:

Գործը այլ կերպ էր Ելէնիին հետ: Յոյնուհին հիմա սովորականէն շատ յաճախ կը կենար Բագրատի աշխատառութեան սեղանին մօտ. երկար, անպէտք հարցումներու շարքեր իրարու կը յաջորդէին և Բագրատ առանց ձանձրանալու կը պատասխանէր աղոնց՝ աշքերը գամած աղջկան կրծքի այն վերի, բաց, փոքրիկ մասին ուր խորհրդաւոր ակօսիկ մը իր հետաքրքրութիւնը կը կարթէր: Աղջիկը հազար դիրքեր, հազար ձեւեր կ'առնէր անոր գէմ. կը խըն:

դար՝ երկու ձեռքերով պինդ իր մէջքը գրկած. երբեմն կը յենւէր զրասեղանին, ճագրատի զիրը յունարէնի կը նմանցընէր ու յունարէնով կարգալ կը փորձէր. յիմար, անմիտ վանկեր դուրս կուգային. կը խնդար ինքը ամբողջ զրասեղանը իր լեցուն կրծքին հետ ցընցելով. և այնքան դէպի տղան կը հակէր, որ իր աշտերուն տաքութիւնը անոր գէմքին կը զարնէր. այդ վազրկեաններուն Բագրատին կը թւէր, թէ սենեակին օդը մէկն ի մէկ կը պակսէր:

Անգամ մը աղջիկը մազերը արձակ, թեերը մինչև ուսերը վեր ժողւած, չփակէն կոճակներ մասամբ միայն կոճկած տղուն սենեակը մտաւ ձեռքը սանդր մը բռնած, խնդրելով որ անոնց հացելիին մէջը սանորըւի. իրենը սրբելու համար վար էր առնըւած ու անյարմար էր, ինպէս ինքը կ'ըսէր Բագրատ թողուց ու գրել ձեւացուց Բացց չկրցաւ. սիրու կը նետէր. ու սկսաւ գողունի ագահութեամբ նայել այն լեցուն ողորկ թեերուն, որնք շաղանակի առատ մազերուն վրացէն կը սահէին՝ մաղի հեղեղատ մը թափելով ուսերուն, որոնք կէս մը կ'երեացին Բագրատ այնպէս խածաւ ձեռքի գրիչը, որ ճարճաթեց Հացելիին մէջէն աղջիկը ժպտուն իրեն կը նայէր: Բագրատ կարմրեցաւ, առաւ բառարան մը ու սկսաւ արագ թղթատել. ինչ կը վընտըռէր. ով գիտէ. միայն ացդ փընտուքը շատ երկար տեսեց, մինչև որ աղջիկը ժպտելով ու աշքերը Բագրատին յառած սենեակին հեռացաւ.

Այս բոլորը, ի հարկէ որոշ սահմանափակումներով, պատմեց Ասսակին:

Վասակ խորհրդաւոր կերպով ժպտեցաւ ու պատասխանեց.

— Գալնան հովերուն շնորհքն է, սիրելիս Այդ կ'ասրացուցանէ, որ մարմինդ խելապատակէդ աւելի խելացի է: Ահա այդ այն է, որը դուն ընդհանրապէս բոլոր բանաստեղծացածներդ սուրբ տենչ, երկնացին հուր, իդէալական յուղում, և այն, և այն կ'անւանէք, որը բոլոր բանաստեղծները առարկը մինչև իրիկուն երգել իրենց պարտքն են համարած, որը սակայն ամեն մարդ ալ ու ամեն անասուն շարունակ կ'երգեն, առանց բանաստեղծ լինելու, ի հարկէ քիչ մը աւելի գործնական եղանակով: Հասպա, իդէալիստ, միամիտ, ողորմելի բարեկան, աղոր մեր աշխարհքը կ'ըսեն սէր: Նւ ոչ թէ քու ցընդի-փընդի վերացական փիլիսոփայութիւններուդ, ապուշա-

իգէալական զգայնականութիւններուդ ու երազական ցնորքներուդւ
Բագրատ քովէն կը քալէր՝ առանց անոր ճառին կարևորու-
թիւն տալու։

Իր գանգին տակ հիմա մէկ մոածում մը միայն թուխս էր
Նստած։

Աւրեմին ես Ելէնին կը սիրմի, Ելէնին. ի՞նչ առտառոց գաղա-
փար. Ելէնիին սիրահարմծ. ես. զարմանք. չէ, այդ մարդը իրա-
ռունք ունի — մենք բոլորովին ծռեր ենք։»

†.

Երկու-երեք օր վերջն էր։ Շաբաթ իրիկուն մը։
Դպրոցէն գարձին Բագրատ ելաւ Պերա։

Հիանալի օդ մը կար։ Գաղջ, գրգռող, անուշ։

Ահագին կինդանութիւն կար մեծ փողոցին վրայ։ Բագրատ
աշխոյժ շուրջը կը նայէր. կը դիտէր բազմութիւնը. կը դիտէր այն
անվերջ զոյզերը, որոնք թեւ ծիծաղելով, խօսակցելով իր դէ-
մը կու գային նեղ մայթին վրայ։

Յանկարծ նախանձ մը մոաւ իր մէջը. ամենքը կեանք կը վա-
յելէին, զւարթ, զոհ, զոյզ-զոյզ. իսկ ի՞նքն ալ թէւը
աղջիկ մը չունէր, որ առնէր տանէր գուշուրը գեղեցիկ վերջ ս-
լոյմին դէմ, երեկոյեան զովութեան դէմ, կասոյտ ու ծիծաղկոտ
երկնքին դէմ։

Ու թէւ աղջիկ մը ունենալը իրեն պահանջ դարձաւ։

Նոտալ քայլերով գնաց տուն։ Ելէնին ու տիկինը տանը մե-
նակ էին։

«Դիպւածը ինձի հետ է» մրմնջեց Բագրատ։

Ու զառնալով կիներուն աւելցուց։

— Հիանալի իրիկուն է, Տիկին. մարդ սենեակը մնալ չի կրնար.
Երթամ քիչ մը շրջելու։ Ելէնի, կարելի է միասին գալ կուզէիք։
Աղջիկը ցնցւեցաւ։

— Ա, ամենայն սիրով. վայրիեան մը. գլխարկս գնեմ։

Ակնթարթի մը գործ եղաւ աղջկան արդուզարդը. ու երի-
տասարդին հետ գուրս ելան։

Այս առաջին անգամն էր, որ Բագրատ աղջիկներէն մէկուն-

հետ առանձին շրջելու կ'ելնէր. սովորաբար երեքով կամ չորսով կը լինէին:

Աղջիկը ուրախութենէն ըրածը շը գիտէր: Բագրատ ալ զւարթէր. կը խօսէին, կը կատակէին, անցորդներու վրայ իքար ակնարկութիւններ կ'ընէին ու կը ծիծաղէին սրտանց, բարձրաձայն:

Երբ շիտակ ճանապարհը ելան՝ Բագրատ առանց այլեայլութեան աղջկան թեւը խլածին պէս իր թեւը անցուց: Աղջիկը զարմանքէն ու բերկրանքէն սկսաւ քըքչալ:

Բագրատ հիմա տեսակ մը խղճահարութեամբ կը նայէր այն անզոյգ երիտասարդներուն, որոնք քննող հայեացքով իրենց քովին կ'անցնէին. իրեն այնպէս կը թւէր, թէ իրեն կը նախանձէին. ու այդ զգացումէն հպարտ՝ թեթև մը աղջկան թեւը կը սեղմէր:

Աղջիկը կը պատասխանէր ացր սեղմումներուն. ամբողջ կրծքովը. կը փակէէր տղուն: Ու այն տեսակ ակնարկներ կը շանթէր անոր աչքերուն, որ տղու սրտէն սարսուռ կ'անցնէր:

Խօսելի ու քաշելի յոգնած հասան Շիշլի. ու մտան պարտէզ մը: Շուրջերնին նստելու յարմար տեղ մը կը փնտուէին:

—Հան, հովանոցին մէջ թէ աւելի չոր է և թէ աւելի առանձին. ըստ սպասաւորը խորամանկութեամբ ժամանակուի:

Բագրատ աղջիկը հովանոցէն ներս մոցուց, որ բաղեղներու դեռ անտերև թփերովը կէս մը գոցւած էր:

Եկրել տւին գարեջուր. սկսաւ խմել, խօսել ու խնդալ:

Բագրատ կատակի համար հանեց աղջկան դաստակէն ապարանջանը. իր թեւը անցնել փորձեց՝ հասաւ. նորէն հազցուց աղջկայ դաստակին, դիտմամբ զարդը կոճկելու երերացը. և կոճկելէն վերջն ալ անմիջապէս աղջկան թեւը չձեց:

Սրեւ արդէն մայր մտած էր: Թահնձր կապտութիւն մը արևելքէն սպառէզին վրայ կը թափէր: Խոնաւութիւնը սաստկացած էր. ու սպարտէզը եղողները ներս ուստորանն էին մտած:

Աղջիկը յանկարծ ոտքի ցատկեց. ու մատովը գուրսը ցոյց տալով.

—Տեսէք, տեսէք. հոս օրրան կայ եղեր. ըստաւ: Ա, օրրւխմախի. եկէք ինձի օրբեցէք. աւելցուց գլխու քծնող շարժումով մը:

Դուրս ելան հովանոցէն: Աղջիկը նստեցաւ օրրանին մէջ. Բագրատ դէմը կեցած օրբել սկսաւ. նախ նստարանի վայտէն կը հրէր.

բայց քանի սկսաւ օրրանը ուժովնալ՝ տղան սովհագւած էր աղջկան ոսքերէն հրելու. և ամեն անգամ, որ կէս-կօշիկներու մէջէն դուրս աշխող մանր ոլոքները կը բռնէր՝ ձեռքերը կը խըսիսըտային:

Օրրանի պատճառած հովը թեթե մը վեր կ'առնէր աղջկան շլջազգեստը, որուն տակ սև երկար գուլպաները ճերմակութեան մը մէջ կը կորսւէին:

Բագրատ օրրելը դադարեցուց:

— Ինչու չեք օրրեր. հարցուց աղջիկը:

— Կեցէք, միասին օրրւինք:

— Իրաւ. և կէք:

Ու աչքերը սկսան տարօրինակ ցոլք մը արձակել:

Օրրանը կեցաւ. աղջիկը մէկ կողմ քաշւեցաւ. Բագրատ նստեցաւ ու բռնեց սլարաններէն. իսկ աղջիկը փաթթւեցաւ Բագրատին: Տղան ուժ տւաւ ոտքի մէկ-երկու հարւածով. օրրանը թափ առնել սկսաւ. ու էլէնին ալ ուժով փաթթւեցաւ երիտասարդին՝ գլուխը անոր կրծքին յենած:

Բագրատ դողաց. ոտքը ուժով գեանին զէմ տւաւ: Օրրանը ցնցումով կեցաւ: Աղջիկը զարմացած բարձրացուց գլուխը. ու միւնոյն ատէն զգաց երիտասարդի պինդ թևերը, որ իր մէջքը կը փաթթէին և անոր շրթունքները, որոնք իր այտին յարեցան:

Իրար ընդգրկած, կթուա ոտքերով դարձան տեղերնին:

— Ա, ես գիտէի, որ ինծի կը սիրես. կը հծծէր աղջիկը մարմող համբոցըներուն մէջէն:

Իսկ Բագրատ ոչինչ չէր մտածէր, ոչինչ չէր լսեր: Իր առողջ, մաքուր, լեցուն արիւնը կեռար. ամբողջ մարմող կը դողար ու քոլոր ուժովը աղջիկը գրկին մէջ կը սեղմէր:

Յանկարծ ձգեց աղջիկը թեթերուն մէջէն, ցատկեց ոտքի, դրաւ գլխարկը ու անոր ձեռքին բանած:

— Երթանք, երթանք. կը կրկնէր: Տնւն երթանք, հեռանանք:

Էլէնին ինկած էր աթոռին, գլուխը ետ նետած, շրթունքները բաց, թևերը Բագրատին. թոյլ, անկամք ու շնչարգել:

Բագրատ թեէն քաշեց, հանեց ոտքի, առաւ թևը, ու արագ վճարելով սպասաւորին՝ դուրս ելաւ պարտէզէն:

Նարժումը աղջիկը ուշքի բերաւ.

— Բագրատուն, մը մնջաց ակռաներուն մէջէն, նայեցաւ տղուն ու անոր ձեռքերը սեղմեց:

Բագրատ արագ կը քալէր:

Նստեցաւ առաջին հանդիպած թրանվացը: Աղջիկը առանց տղուն ձեռքը ձգելու կրթլնցուց զլուխը անոր ուսին:

Թրանվացի միակ ուղևորը տաճիկ ծերունի մըն էր, որու բարի գէմքին ներողամիտ ժպիտ մը կը խաղար քանի երկուքին կը նայէր:

Կէս ժամ վերջը իրենց ապարտմանի զանգը քաշեցին. դուռը բացւեցաւ. ու Լուիզ ժպտելով բարեւց:

— Այս նրգան ուշացաք. մայրս ձեզի կ'ըսպասէր. ըսաւ ու շադիր Բագրատին նայելով:

Բագրատ ճնշում մը ըզգաց Լուիզին հանդիպելէն: Անոր աչքերը իրենները փախցլնելու կ'ըստիպէին:

— Ինձի ինչու չէք բարեեր, պարո՞ն Բագրատուն. հարցուց Լուիզ միամիտ ժպիտով մը:

— Կեցէք մէկ շնորհքով ներս մտնեմ. հազիւ վրայ բերաւ Բագրատ ու աղջկան պարզած ձեռքը թօթւեց: Ո՞ւր է Կէորդը:

— Եկաւ, ու նորէն դուրս ելաւ. Մանուկի կազինօն է. ըսաւ որ դուք ալ հոն երթաք: Բայց մի՛ երթաք, պարո՞ն Բագրատուն. քանի գիշեր է իրարու հետ շնորհքով տեսակցած չունինք. այս գիշեր մենք ալ մենակ ենք. մայրս գործ ունէր դուրս ելաւ. մեզի հետ անցուցէք այս գիշեր. եթէ կ'ուզէք ձեզի համար կը նւագեմ ալ ձեր սիրած կոտրներէն.

— Այս, այս. ես ալ կ'երգեմ. մենք ալ միասին կ'երգենք, պարո՞ն Բագրատուն. կը կրկնէր Օգիւստան տղուն ձեռքերէն քաշելով:

Բագրատ ճնշող զգացում մը ունէր մէջը. կ'ըզգար, որ ինքը իր աչքին առջև ինկած էր և աղջիկներու արտասանած իւրաքանչիւր սիրալիր ու միամիտ խօսքը իր աց զգացումը աւելի կը շեշտէր. երբ Օգիւստան իր թևերէն կը քաշըշէր՝ ինքը բնազգորէն եւ կը քաշւէր լսու կարելոյն աղջիկը չի շօշափելու համար. ու Լուիզի աչքերուն մէջ նայելու կ'ամչնար:

«Ո՞չ, չեմ կարող տունը մնալ» վճռեց ինքնիրեն: Ու բարձր աւելցուց.

— Ես ալ կ'ուզէի տունը մնամ այս իրիկուն, սակայն անկարելի է: Գէորդը անպատճառ տեսնելու եմ. գործ ունիմ: Գիշեր բարի:

Մտաւ սինեակ, առաւ հաստ վերարկուն, շտապով հազաւ ու զուրս նետւեցաւ:

Երբ տան դուռը ետևէն գոցեց ու ինքըզինքը մենակ զգաց՝ խոր շունչ մը առաւ: Ծանր-ծանր սանդուղներէն իջաւ մտածկոտ. ու փողոցի դուան առջն կանգ առաւ.

«Ե՛, պարապ բաներու մասին մտածելու ախորժակ չունիմն ըստ կամաց, ձեռքով մերժողական շարժում մը ըրաւ, գլուխը թոթւեց, պինդ մը հազաց ու հպարտ քայլերով փողոցը մտաւ:

Գէորդ երեք-չորս ընկերներու հետ կազինոն նստած կը խօսէր:

Բագրատը տեսնելուն պէս տեղ բացին. ու խօսակցութիւնը տաքցաւ: Խնդիրը հրապարակի վրայ երեցած նոր վէպի մը մասին էր: Բագրատ իր բոլոր թափովը մէջ նետւեցաւ: Ամենէն շատ կը խօսէր. կը կառակէր. կը յարձակւէր աջ ու ձախ. կը ցատկէր մէկ նիւթէն միւսը, առանց միջոց տալու, որ լռութեան վայրկեան մը մէջ գայ:

Նատ ուշ էր, որ տուն դարձան. գարեջուրէն թեթև մը գլուխը կը դառնար ու չափազանց խօսելէն ձախնը մարեր էր:

ԺԱ.

Երբ աչքը բացաւ պայծառ առաւօտ էր:

Գէորդ հայելիին առջեւ կեցած երկու ձեռքով կ'աշխառէր ընչացքներուն զէպի վեր ուղղութիւն տալու. և անյաջողութենէն զայրացած կը հայնոցէր:

Երբ երկուքն ալ արդէն հագած էին՝ Գէորդ կաթ ուզեց: Ներս մտաւ էլէնին կաթի ամանը ու բաժակներով ափսէն ձեռքը:

— Բարի լոյս. գիշերը բնչակէս քնեցիք. հարցուց աչքերը Բագրատի կողմը ուղղելով:

Բագրատ ձայն հանեց:

— Ամենափառաւոր կերպով. պատասխանեց Գէորդ: Իսկ դժւն:

— Ա՛, ես ամբողջ զիշերը չի կրցայ քնանալ. լսաւ աղջիկը աչքերը միշտ Բագրատին:

— Ինչու. հարցուց Գէորգ անտարբեր՝ օձիքը խոզանակելով։
— Ես ի՞նչ դիմնամ։

Բագրատ նստած էր սեղանին առջև, իսկ Ելենին դէմը կեցած
կաթը կը լեցընէր։ Բագրատ սկսաւ. դիտել Ելենիի երկար ու քիչ
մըն ալ ազտոտ եղունկները. և յիշեց որ ամբողջ նախորդ իրիկունը
այդ մատներն էր սեղմած այնպէս պինդ-պինդ. նողիանքի պէս
բան մը ըզգաց։

Իսկ Ելենին Գէորգի պահ մը սենեակէն ելնելէն օգուելով՝ ըն-
տաներար մօտեցաւ Բագրատին, ծռեցաւ վրան, ու

— Ինչու չես խօսիր. ինչու այդպէս լուրջ ես. հարցուց։

— Ի՞նչ խօսիմ. պատասխանեց Բագրատ. ու սկսաւ աղջկան
դէմքի զծերը դիտել, որ տարօրինակ կերպով գուեհիկ կը գտնէր։

Մինչ աղջիկը այդ յամառ նայւածքէն խրախուսւած ալ աւելի
ծռեցաւ, ձեռքը տղու վիզը նեսեց ու համբուրել կ'ուզէր։ Բագրատ
ուղակի զզւանք զգաց այս անգամ. ուժով մը մէկ կողմ ծռեցաւ,
որքի ցատկեց ու սկսաւ յուզւած յուզւած շուրջն ու գրպանները
որոնել։

— Ի՞նչ կը փընտրաւ. հարցուց իսկզբ աղջիկը յուզւած ու
ապշած։

— Թաշկինակս մւր դրի. ի՞նչ եղաւ թաշկինակս. Գէմրգ, թաշ-
կինակս մւր դրի. կը կրկնէր Բագրատ իրար ետեկ։

— Եյտ ի՞նչ ցիմար հարցում է. լսւեցաւ Գէորգի ձայնը սե-
նեակի սեմի վրայէն։

Բագրատ հազիւ քանի մը ումապ կաթէն խմեց, ևս գործ ունիմ
լսաւ, Գէորգին հետ կիրակնօրեաց վարժարանը իրար հանդիպելու
որոշումը տրւաւ ու գուրս նետեցաւ։

Առանձին մնալու պահանջ մը կ'ըզգար։

Դեռ երկու-երեք ժամ կար մինչև իր գործին սկսելը։

Իջաւ կամուրջ. ու Ասփոր մեկնող շոգենաւներէն մէկը մտաւ։
Մտաւ քովի երկու հոգինոց պզտիկ խցիկներէն մէկը ու վարագոյր-
ները քաշեց։

Նոզենաւը ճանապարհ ելաւ. անիւները ձիշտ իր խցիկին կից
էին ու ահագին աղմուկ կը հանէին։

Բագրատ սկսաւ խորունկ մտածել։ Երկու հոգի կար հիմա իր

մէջը, որոնք իրարու հետ կը վիճէին։ Եղածը վերլուծելու պէտքը կ'ըզգար։ իր գաղափարներուն մէջ երկութիւն կ'ըզգար։ հոգեկան վիճակներէն ամենասոսկալին։ Ինքն իրեն հետ հաշորւել կ'ուզէր

«Եւ այն ալ այդ աղջիկը. կը մտածէր։ Այդ սովորական գեղեց կութիւնը, այդ հասարակ հոգին, այդ փափուկ բանականութիւնը, որ երէկ Գէորգին հետ էր, այսօր ինձի, ու վաղը նվ գիտէ որու Խնչպէս եղաւ այդ. միթէ երբ և իցէ լուրջ զգացում մը տածած եմ այդ աղջիկան. զգացում. ո՛չ. բայց այն. այդ աղջիկը գրաւիչ ու սիրուն չէի գտներ. ուրեմն կը սիրէի. սէր. չէ որ Վասակը կ'ըսէ, թէ այդ է սէրը. իրաւ. չէ որ կ'ըսեն թէ սէրը կարճառե է, ու յագեցածին պէս կը մարի. իմն այն տարբերութիւնը ունէր, որ կէս ճանապարհին մարեցաւ. և այդ ալ զարմանալի չէ. չէ որ Վասակ կ'ըսէ, թէ ես բոլորովին ծուռ եմ մեծացած. չէ որ բոլոր նախապաշարումներս մէկ անգամէն գլխէս նետել չէի կրնար՝ նախապաշարումներ. ահա այս ալ նախապաշարումներ են պարզապէս այս բոլորը, բոլոր իմ ձգտումներս, անուրջներս, իդէալներս և այն սէրը, որ այնչափ երկար ժամանակ երազած եմ. ախ, այն սէրը, այն սէրը...»։

Կախեց զլուխը տիրութեամբ. ու մնաց անշարժ։

«Ի՞նչ. բացականչեց յանկարծ. ցընցըւեցաւ, շակըւեցաւ, բացաւ փոքրիկ լուսամուտը, աչքերը յառեց ծովի խուսափող փրփրուալիքներուն ու նորէն մտածել սկսաւ։

«Ի՞նչ. այն սէրը, այն բոլորը, որ ինձի համար սուրբ էին, այս բոլորը նախապաշարումներ են. նախապաշարումն. և այս է սէրը, համ, որ երէկ իրիկուն կարեւոր այս առոտու ցիշելու կ'ամշնամ. ո՛չ. այս ամօթը նախապաշարում չէ. ո՛չ ալ իմ զգացումներս նախապաշարում են. ատոնք բնութեանս՝ էութեանս խորքերէն կուգան։ Գեղեցկութեան տիպար մը ունենալը, քու էութեանդ ամենէն աւելի յարմարւող զոյգ մը փնտռելլ և այդ էակին տեականորէն կապւելու աենչը սեռի պահպանման ամենահական պայմանն է. ատոնք բնուկան պահանջներ են մեր մէջ. այդ զգացումներէն առաջնորդւիլը հրէշութիւն չէ. հրէշութիւնը ինքզինքը բռնաբարելն է. հրէշութիւնը իմ երէկ գիշերւան ըրածս է, գուցէ. և անշուշտ

ատոր համար է, որ հիմա կ'ամնամք Աղջիկ մը, որ չեմ սիրեր, դէպի որը ոչ մի մասնաւոր կապ չեմ զգար և որ ոչ մի կերպով ինձի համար չէ. և այդ տեսակ աղջկան մը լանջին վրայ մարմրել. ինչու. որովհետեւ աղջիկ է, որովհետեւ մի՞ս ունի: Բայց ի՞նչ պէս եղաւ, որ այդ աստիճան սահել կարողացաց. այդ ալ պարզ է. գրգռում, արւեստական գրգռում. ուրիշ ոչինչ. շրջապատողներս այն մսի երգը կրկնեցին ականջիս տակ. այդ է սէրը, ըսին. ու անչափ կրկնեցին, որ ես առանց հաւալու կարծես հաւտալ սկսայ. ինձի հրէշ, ծուռ, անբնական անւանեցին, որովհետեւ Փիզիքական ու հոգեկան զգացումներս դեռ չգտան իրենց ներդաշնակող էակ մը և ես առանց կարւորութիւն տալու կարծես սկսայ կարւորութիւն տալ այդ ծաղրին. այդ խնդիրներու վրայ մոտածել սկսայ շարունակ, գրգռեցի ուղեղս, գուցէ գարունն ալ ինձի օգնեց և ահա ըրած էի արդէն առաջին քայլը. և այդ հերիք էր: Խմ ճաշակիս հակառակ, օրգանիզմիս բնական ձգառումներուն հակառակ, բնազդիս հակառակ, հոգեկան պահանջներուս հակառակ, նոյն իսկ իմ համոզումներուս ու իդէալներուս հակառակ՝ հարկադրեցի ինձի այդ աղջկանը փաթթւելու. ահա թէ ո՞րն է ծուռթիւնը, անբնականութիւնը, հրեշութիւնը...:

Նոգենաւը կը յառաջանար. մէ'կ եւրոպական մէ'կ ասիական ափին մօտենալով: Երբ մօտեցաւ ն. գիւղի նաւահանգստին՝ Իագորաստ դուրս ցատկեց իր խցիկէն, ելաւ նաւամատոցց, աշխոյժով բարեց հոգաբարձուներէն մէկը, որ շոգենաւ կը մօնէր ու սկսաւ արագ. արագ դէպի վարժարան քալել, ուր կ'ըսպասէին իր մօրուքաւոր աշակերտները:

Բազրատի շացլւածքը վստահ էր. դէմքը պայծառ. կ'երեւէր, որ իր որոշումը տուած էր արդէն:

Երեկոյեան ձւշ ատեն միայն տուն վերադարձաւ:

Դուռը բացողը էլէնին էր:

—Մեր սինեակը մարդ կմէր:

—Ո՞չ:

—Հետո եկէք:

Աղջիկը ուրախութեամբ ու վախով հետևեցաւ երիտասարդին: — Էլէնի, կարծեմ ինձի կ սիրէք. ըսաւ Բագրատ առանց

յառաջաբանի: Բայց պարզապէս խենթութիւն է ձեր ըրածը. իմ խելքս բոլորովին ուրիշ գործերու է: Դուք ինծի համար միշտ քրոջ պէս էք եղած. եթէ կ'ուզէք որ ասկէ վերջն ալ այդպէս շարունակւի՝ աւելորդ բաներ մի մոռածէք: Գիտցած եղէք, որ ես ձեզի երբէք սիրած չեմ. այս կ'ըսեմ, որ չլինի թէ ինծի սխալ հասկընաք. ես ձեզի քրոջս պէս կը յարգեմ:

— Բայց երէկ գիշեր այս առեմն. հարցուց աղջիկը յուզումէն դողացող և արտասուքէն ուռած ձայնով մը:

— Ը'ը'ը'... երէկ ես գործով մը չափազանց ուրախացած էի, և չափէն քիչ մը աւելի խմած. շիտակը աղէկ միտքս չէ, թէ ինչ ըրի. միայն այսքանը կը չիշեմ՝ կարծեմ ձեզի համբուրեցի. Է, վնաս չունի. եկէք անգամ մըն ալ համբուրեմ. դուք բարի աղջիկ էք:

Թեմեւ մը գրկեց, շրթունքներէն համբուրեց, զրաւ նորէն գլխարկը ու դնւրս:

Սենեակի սեմի վրան էր, որ ետեէն լսեց աղջկան հեծկլտուքը:

Սոսկալի խղճահարութիւն մը իր սիրտը խածաւ. շտապեց. անգամ մը մտածեց ետ դառնայ. ալ ուշ էր. արդէն ետեէն գոցած էր տան դուռը:

Մութ սանդուղի գլխին ակընթարթ մը կանգ առաւ:

« Խեղճ աղջիկ, խեղճ աղջիկ» կը կրկնէր ակուաներուն մէջէն՝ երկու ձեռքով դէմքը գոցած:

«Գուցէ ան ինծի պէրանքէ աւելի լուրջ զլացումով մը կը սիրէր. ա, ի՞նչ իրաւունքով խաղացի իր սրտին հետ. բայց, է. եղաւ. մէկ անգամէն կորելու էր. լսւ ըրի. սակայն չափազանց կոշտ եղաւ այս. խեղճ, խեղճ էլէնիս. ա, ով գիտէ ի՞նչպէս կուլայ հիմա. ա, հրէշ, հրէշ. արգեօք կ'արժեմ այդ աղջկան արցունքը. է...»:

Ու սկսաւ արագ-արագ վար իջնել:

ԺԲ.

Կամուրջին վրայ Գատը-գիւղ տանող շոգենաւներու նաւամատոյցին մօտ՝ կազինոցի բաց պատուհանին առջելը նստած՝ Վասակ քառորդի մը չափ էր մէկ աջ կը գառնար Պոլսի կողմը, մէկ ձախ՝ Ղալաթիս. ու անհամբերութենէն ոոքերը կ'երերցընէր:

Կիրակի էր, ու կէս օրի մօտ, ապրիլի արել Ռակեղջիւրի կո-
հակներուն հետ կը խաղար:

Վասակ յորանջելով վերցուց սեղանի վրայի հայերէն լրագիր-
ներէն մէկը, աչքէ անցուց ու նետեց անդին:

— Տորիչելեան դատարկութիւն, մռըլտալով:

Աւաւ. Պարիզեան պատկերազարդ թերթ մը, առաջին երեսի
գունաւոր պատկերը ոճրագործի մը կալանաւորումն էր, վերջին
երեսինը՝ շոգենաւի մը Ատլանտեանի ջրերուն մեջ ընկղմիլը:

Երկար ուշադրութեամբ դիտեց բռնըւած ոճրագործի կատաղի
դիմագծերը, ու սկսաւ համեմատել անդին խեղտըւող աղջկան մը
յուսահատ դիմագծերուն հետ:

«Եռունշանորդին, ինչ նմանութիւն, կը մոտածէր: Աչքերուն բաց-
ւածքը, բերնին քովի ծալքը, ոունգերուն լայնացումը, բառնցք-
ներուն գալարումը. նոյնը երկուքն ալ: Խեղճ աղջիկ, անմե՛ղ զոհ.
բայց ես ինչու աղջիկը մեղքըցայ. աւանդական, դասական արտա-
յաշտութիւն, ուրիշ ոչինչ. է, մեր զգացումներն ալ արդէն դասա-
կան՝ քլասիկ են դարձեր: Ոչ, ես աւելի ոճրագործը կը մեղքնամ:
մէկը մարդկացին հոսանքին մեջ խեղտըւողն է, միւսը պարզ ջուրի.
մէկին տանջանքը կէս ժամ առաջ հազիւ սկսաւ ու քանի մը
վայրկեանէն կը վերջանաց. միւսը տանջանքը սկսած է գուցէ արդէն
ծնած օրէն և գեռ ով գիտէ որքան ալ տեւելու է բանտերու, շըդ-
թայակիր տաժանանքներու մեջ. մէկին մահացընողը կոյր դիտ-
ւածն է, իսկ միւսինը մե՛նք՝ մեր ընկերութիւնը իր ծռութեամբ,
իր բրտութեամբ, իր վայրենի օրէնքներովը ու անբնական կազմու-
թեամբը: Խեղճ մարդ:

Նոյն միջոցին գաւազան մը երկընցաւ պատուհանէն ներս ու
լրագրի տակէն թեթև հարւած մը տըւաւ:

Վասակ գլուխը բարձրացուց:

— Բաղրատը զեռ չեկամւ. հարցուց եկողը:

— Ո՛չ: Հնա եկուր, Գէնրգ. նայէ այս պատկերը. ի՞նչ է այս:

— Ոճրագործ մը կարծեմ:

— Ոճրագործ: ի՞նչ է ոճրագործը: Խնծի լսէ. երկաթուղին
կապեր են երկու զծերու մեջ. ոչ զուրս կրնաց նլներ, ոչ նե ս.
հիմա երեւակայէ լոկումոթիւը. հնն լեցւած է ջուրը. տակն ալ ան-

ընդհատ քարածուխը կը վառեն. արդ ի՞նչ պիտի լինի հետևանքը ջուրը կը գոլորշիանայ. գոլորշին բանորւած է. ի՞նչ պիտի ընէ. ուզէ-չուզէ պիտի պատցլնէ չափած, ձևած ու յարմարցուցած անիւները. և երկաթուղին առաջ կ'երթայ իր գծերուն վրայ:

— Է՛, ինձի մեքենաբանութիւն դաս կուտաս, ի՞նչ է:

— Ինձի պատասխան առեր. հիմա այդ լոկոմոթիւը այդ պայմաններուն մէջ, երբ իր գծին վրայ գտնըւող մարդու մը մարմինը մէջէն կէս կ'ընէ, ոճրագործ է:

— Սակայն այսօր նորէն շատ ցիմար օրերէդ է, ըստ երեսչթին:

— Ցիմար, այնպէս չէ, ըստած ցիմար է:

Ու սկսաւ խնդալ բռնազբոսիկ, կեղծ ծիծաղով մը. յանկարծ ծիծաղը ընդհատեց ու վրայ տըւաւ:

— Իսկ դժւն. դուն ցիմար չես, համ, երբ այս խեղճ մարդը ոճրագործ կ'անւանես: Անսիրտ, նախապաշարւած, կարճամիու: Ահա այս այն լոկոմոթիւն է, որ վայրկեան մը առաջ քեզի նկարագրեցի, մեր մարդկային սահմանափակ մոտածումներով ասոր համար տնտեսական զծեր ենք շիներ, ուրկէ ո՛չ մի կերպ զուրս ելնելու կարող չէ. խեղճի մէջը լեցուցեր ենք բոլոր հարստանալու, ինքը ուշը լինելու, ինքը ուրիշներու վրայ տիրելու, ինքը ուրիշները ճնշելու, աշխատցնելու, հարստահարելու հակումները, գաղափարները, փափագները. արդէն կրակը բնականէն մէջը կաչ՝ անօթութիւնը. և խեղճ մեքենայ. ուզէ-չուզէ առաջ պիտի երթայ. ճանապարհին վրայ մէկ ուրիշ մարդ է պառկած. կորէ պիտի մէջէն ու անցնի. կրնայ շեղիլ մե՛ր, լսէ, մե՛ր իսկ շինած, շիտկած, պնդացուցած գծերէն. ոճրագործ, համ. խեղճ մեքենայ:

— Է՛յ, ես քու մեքենայիդ ալ խերը կ'անիծեմ, քու ալ, ոճրագործիդ ալ. անդին նետէ սա լրագիրը:

Պոռաց Գէորգ զայրացած, խեց անոր ձեռքէն թերթը ու նետեց հեռաւոր մարմարէ սեղաններէն մէկուն վրայ:

— Դուն ինձի այն ըսէ՝ ժամը քանիին է շոգենաւը:

— Զգիտեմ. արդէն մէկ հատ եկաւ ու գնաց: Սպասելէն ձանձրացայ. արդէն ձեզի հետ ճամբայ ելնելը խենդութիւն է ինքնին. ձւը էիր մինչև հիմա:

— Բարեկամ, մենք քեզի պէս հով կը լլող չենք. չգիտես, որ խանը մէկ-երկու հայրենակիցներուս հետ կը պարապիմ:

— Իրաւ. ես մուշեր էի. ի՞նչ կը տորվեցընես. ամօթ չկինի հարցընելը:

— Միասին կը կարդանք. կը բացատրեմ, կը հասկըցընեմ, որով թէ ընթերցանութեան սէր կուտամ և թէ առիթ կը դանեմ ոգեւորւելու ու անոնք ալ ոգեւորելու ինձի ամենէն աւելի հետաքրքըրող խնդիրներովը. հիմա Ծերենցի «Երկունքը» կը կարդանք միասին:

— Միայն, ի սէր Աստծու, զգուշ. չլինի յանկարծ մուկ մը ծնէք. ըստ Վասակ շար ու չոր ծիծաղով մը:

Տեսակ մը զայրոյթ կ'ըզգար Գէորգի դէմ:

Ինքը անկէ շատ աւելի զարգացած, հասուն ու փորձւած լի. նելու էր. բայց անոր վրայ վասահութիւն մը, ոգեւորութիւն մը, իր ըրածին վրայ ու թողածին վրայ հաւատք մը կար, որ Վասակ իր մէջը չէր տեսներ:

Նախանձի պէս բան մը կ'ըզգար. ու այդ զգացումը ծաղրով խեղդել կ'ուզէր:

— Բարե՛ ձեզ, տղայք, լսեցաւ Բագրատի զւարթ ու սուր ձայնը:

Պինդ մը սեղմեց երկուքի ձեռքը ու ինկաւ աթոռի մը վրայ. ժպիտը շրթունքին, քիչ մը գունատ. գոհ ու յոզնած մարդու մը բոլոր արտաքին արտացայտութիւններով:

Բագրատի հետ էին ուրիշ երկու երիտասարդ ուսուցիչներ ևս, որոնք անոր հետ կիրակնօրեայ վարժարանը կ'աշխատէին:

— Խէր լինի, Բագրատ. ըստ Գէորգ: Այսօր շատ ուրախ կ'երկնաս աշքիս. երկի օդէն է. այսպէս պայծառ օր:

— Դեռ դուն ճամբան տեսնելու էիր անոր ոգեւորութիւնը. նկատեց հետի երիտասարդներէն մէկը:

— Լաւ, ի՞նչ է պատահեր:

— Յովհաննէս ախալարը կը յիշես, Գէորգ. ինքը մէջ նետեցաւ Բագրատ: Սա քառասուննոց, աղ-պղպեղ մօրուքով միշտ լոիկ մարդը. յիշեցի՞ր:

— Ե՞՞ Եսոքը:

— Այսօր դասէն ետքն էր. դուրս պիտի ելնէի. կամաց մը

լնծի մօտեցաւ ու մէկ կողմ՝ քաշեց։ Տարօրինապէս յուզւած էր բան մը պիտի ըսէր, բայց կը քաշւէր։ «Ե՞նչ ունիս, Յովհաննէս աղբար» հարցուցի։ Էնծի ներէ, պարմ։ պատասխանեց. դուք ու ձեր ընկերները այնքան բարի էք, այնքան սիրով և սրտով մեղի հետ կ'աշխատիք, որ ես կ'ամընամ. ըրած ուդ տակէն ոչ մէկ կերպ ենել չեմ կրնար, գիտեմ։ Գիտեմ, որ նւէր չէք առներ։ բայց այս նւէր չէ. արդէն ձեզի համար ոչինչ ալ չարժեր. իսկ ինծի անոր համար թանկ է, որ աղջիկներուն ձեռքի բանածն է. դեռ երկրէն երէկ ստացայ. մի՛ մերժիր, պարմ։ ինծի շատ կ'ուրախացնես։ Խեղճի ձայնը կը զողար. կը դողար և ձեռքը, որ այս թաշկինակը ինծի էր պարզած։ Սիս, Գէնրգս, չեմ կրնար նկարագրեր, թէ ինչ զգացի այդ պարզ ու անկեղծ զգացումի այդ քնքոյց անտայացտութեան դիմաց. յուզումէս ինչ ըսելս չգիտէի. ծերուկի ձեռքը սեղմեցի պինդ մը, թաշկինակը առի, հազիւ շնորհակալութեան մէկերկու բառ արտասանեցի ու փախաց սենեակս։ Պահ մը վերջը պատռհանէն տեսայ, որ ծերուկը դպրոցի քարէ սանդուղներէն վար կ'իջնէր. ախ, Գէնրգ, տեսնելու էիր դէմքը. չգիտէմ, երբ այդ դէմքի արտայացտութիւնը կը յիշեմ ուրախութենէս ինչ ընելս կը մոռնամ. գոհութիւն, բերկրանք, հպարտութիւն, խանդաղատանք. ամէն բան կար այդ դէմքին վրայ դրոշմած։ Ինծի այնպէս կուգայ, որ չի լսւած, չի տեսնւած բարիք մը գործած եմ. ինչպէս ըսեմ. այս զգացումը չի բացատրւիր. բոլոր մինչև հիմա ունեցած աշխատանքս վարձատրւած է կարծես. ոչ միայն այդ. դեռ կարծես վրաս պարտք դրւած է դեռ շատ ու շատ աշխատելու. ահա այս թաշկինակով։

Ու թոթւեց թաշկինակը. փոեց ծունկերուն վրայ։

— Բագրատ. նկատեց Վասակ բոլորովին լուրջ դէմքով։ Պահէ այդ հիմա. երբ օր մը սիրուհիէդ օ-դը-քոլոնի մէջ թաթխւած մետաքսէ թաշկինակ մը նւէր ստանաս՝ ատոր քովիկը կը դնես։

— Պարտքս լինի. ցանկացածդ այդ լինէր. պատասխանեց Բագրատ ժողովելով։

Վասակ յօնքերը կիտեց. Ժաղը չէր դիսած. կ'ուզէր անպատճառ կերպ մը Բագրատը խածնէ. անոր այդ ուրախութիւնը թունաւորէ։

—Կամ եթէ կ'ուզէս՝ ես քեզի ոսկեզօծ շրջանակ մը գնեմ։
առ թաշկինակը մէջը դի՞ր ու սենեակիդ պատէն կախէ, պատւի
վկայականի մը սղէս։

Բագրատ նայեցաւ Վասակին. նորէն թեթև մը ժպտեցաւ. ու
սկսաւ ուշադրութեամբ թաշկինակը ծալլել իր ծալքերուն վրայ։

—Տեսնեմ անգամ մը. ըստ Վասակ՝ ձեռքը երկնցընելով։

Բագրատ թաշկինակը անոր տըւաւ։

—Իսկ հայու քիթի համար է չափած ըստ Վասակ՝ թաշ-
կինակը քիթին տանելով։

Բագրատ մէկէնիմէկ ոտքի ցատկեց ու կտրուկ շեշտով մը, որ
դիմադրութիւն չի վերցընէր։

—Չի համարձակիս. պոռաց երեսին։

Վասակ սկսաւ բարձրաձայն խնդալ ու ծաղրաբանելով ալ թաշ-
կինակը ետ տըւաւ։

Շոգենաւը սուլեց։

Ելան տոմսակ առնելու։

—Ինձի նայէ, Բագրատ. ըստ Վասակ անոր թել մոնելով։
Այդ քու ըրածիդ ցիմար զգայնոտութիւն կ'ըսեն. տղայ-մարդուն
այդ տեսակ վարմունք չի վայլեր. պէտք չէ, որ հիստերիկ աղջկան
մը նմանիս. ամծթ է։

Բագրատ հպարա ու արհամարոտ ձեռքի շարժում մը ըրաւ.
ու առաջ անցաւ դէպի տոմսակ գնելու պատուհանիկը։

Պիտի երթային Գատը-գիւղ, Սարգսի տունը։

ԺԳ.

Շոգենաւը Ոսկեզչիւրէն ելած՝ դէպի Մարմարա կը ծըռւէր։
Տղայքը վեր ելած բաց օդի տակ կը խօսակցէին ու կը դի-
տէին շուրջը։

Բագրատ քաշւէր էր հովէն պատսպարւած անկիւն մը ու
կծկւէր։

Վասակ՝ կռնակը միւսներուն՝ Բագրատի քովը ոտքի վրայ կե-
ցած ակնապիշ ծովուն ջուրը կը դիտէր։

Կը մուածէր։

—Բագրատ, ամենելին մտածեր ես, թէ անձնըւիր ութիւն ըս-

ւած բանը քանի փարա կ'արժէ. հարցուց յանկարծ լոռութիւնը խզելով:
—Այսօր ինձի հանգիստ ձգէ. քիչ մը տկար եմ, կարծես.
քեզի հետ զլուխ դնելու բնաւ տրամադրութիւն չունիմ:
—Զէ, կատակը մէկդի. լուրջ կը խօսիմ:
—Ղամծդի ինչ է:

—Լսէ: Մենք կեանք առած ենք ապրելու համար. և ամենէն առաջ մենք մեզի համար. էակի մը գոյութեան ամենաէական ինուդիրը ինկըզինքը պահպանելն է. դիտութեան այսօրւան հաստատած ամենապարզ ճշմարտութիւնն է այս. արդ՝ երբ մէկը կ'ելնէ և իր գոյութիւնը արհամարելով, իր կեանքի խորհուրդը անգոսնելով՝ իր բնական աճումն ու զարգացումը կը նւիրէ ուրիշ անհատի մը հանգստեան, և կամ—որ աւելի ապուշ է—որ և է գաղափարի սը իրագործման՝ այն ատեն այդ ձեր ուղեղներու տրամաբանութեամբը կը լինի ինքնազոհութիւն, անձնւիրութիւն. այնպէս չէ: Սակայն, ըստ, հիմա այն բնակմն եղաւ. կեանքի, դոյութեան պայմաններուն համեմատ եղաւ. իսկ այս մէկը կարծեմ չես կրնար մերժեր, որ ինչ բնութեան հակառակ է՝ այն սխալ է, ծուռ է, անբարոյական է:
Անա քեզի պարզ ճշմարտութիւն մը, որ վերջապէս պէտք է լոմբը անեաւ:

—Ոլիմպոսի ասոււածները քեզի խելք տան:—
—Օրինակ, երեակայէ, որ աշխարհիս մէկ անկիւնը պատերազմ՝ է ծագած. և կըուի պատճառ ալ զնենք ամենէն ազնիւ համարւած բաները. օրինակ, իրենց յաջորդ սերնդին տնտեսապէս ու բարոյապէս աւելի հանգիստ պայմաններու մէջ զնելու փափազը. և ենթադրենք—որովհետև ան անհեթեթ բան ալ կարելի է ենթադրել որ բոլոր զինորներն ալ այդ զիտակցութեամբ ճշմարիս որ տոգորւած են, և ոչ թէ ճառերու, երաժշտութեան ու օղիի գոլորշիներուն տակ պարզապէս մեքենայացած. և ահա 100,000-ներով կ'երթան թնդանօթին բերանը, կը մեռնին, կոչընչանան, կամ ինչպէս դուք կ'ըսէք, կը զոհւին. շատ լուռ. հիմա այս ձեզի համար աննման դիւցազնութիւն մըն է, առաքինութեան վերջին խօսքն է, այնպէս չէ. իսկ չնախապաշարւած դատողի մը համար: Մտածէ. այդ զոհւող 100,000-ներն ալ նոյն կեանքը ունին ու գոյութեան ալ նոյն իրաւունքը, ինչպէս և ասոնք. ի՞նչ հաշիւ է այդ և ի՞նչ բարոյականութիւն. Կիրակոսը

մեռցընենք, որ Թորոսը ապրի. այդ զործին մէջ շիտակը ես ոչ մի բարձրութիւն, ոչ մի ազնլուռթիւն չեմ տեսներ: Եւ վերջապէս մարդկութեան օգոտի տեսակէտէն ալ դատուլով՝ այդ կիրակոսները գուցէ շատ ու շատ առողջ էին ու մարդկութեան շատ աւելի պիտանի, քան քու Թորոսներգ: Գիտես, այս պատմութիւնը ինչի կը նմանի. ամենամեղմ համեմատութեամբ 100 գրամ ածուխ վառեցինք 100 գրամ նոր ածուխ պատրաստելու համար: Ամենամեղմ կը ըսեմ, որովհետև արդէն պատմութեամբ ապացուցւած ֆակտ մընէ, որ պատերազմներու մէջ ոչընչացող սերունդը թէ Փիզիքապէս և թէ բարոյապէս շատ աւելի բարձր է եղած, քան այդ զոհողութիւններէն՝ օգալըւող յաջորդ սերունդը:

—Դեռ չըլլմընցամբ:

—Սունեմ ուրիշ օրինակ մը: Մարդ մը, որ առողջ է, խելօքէ, որ կարող է կորովի սերունդներ առաջացընել՝ կ'ելնէ ինքզինքը կը թուլացընէ, իր ջղային դրութիւնը կը խանգարէ, թոքերը կը փառեցընէ. և գիտես ինչու. որպէս զի քանի մը սմբած, մեծ մասով սպիրոտի տիրապետութեան վայրիեանին կեանքի կանչւած քանի մը ողորմելի արարածներուն կրթութիւն տայ. հա, հա, հա. կրթութիւն, կը լսես, բարոյապէս, Փիզիքապէս ու մուաւոր. հիմա այս անձնլութիւն, ինքնազոհութիւն է, չէ. սակայն բնական է: Եւ վերջապէս Բնչ օգուտ. մի՛ մոռնար, որ այդ մարդը գրամ մը իրական օգուտ չի կրնար տար իր ողորմելի տանիկներուն, որոնք արդէն ախտն ու փշացումը իրենց արեանը մէջն ունին. ու փշանալու են վերջ ի վերջոյ, ինչ ալ որ լինի:

—Դիցուք. միայն հոգիդ սիրես վերջ տուր:

—Բայց Բնչ հեռուները կ'երթամ: Առնենք այսօրւան քուդէպքդ. էշի պէս ամբողջ շաբաթը կ'աշխատիս. —աշխատանքդ ալ աշխատանք լինի. ինչ և է, հիմա այդ ձգենք. —այն փոշիներու, այն խժլզուքի, այն հասած տղոց մէջ:

—Հոտածը դու ինքդ ես:

— Նայէ արդէն գոյնդ-մոյնդ թռեր է, վաղը-միւս օր բժիշկները աւետելու են, որ թոքերուդ ճիւղիկներուն մէջ անկոչ բացիլներ իրենց գահը գրեր են. իսկ դուն դեռ ունեցած մէկ խեղճուկ կիրակիդ ալ կ'երթաս նորէն կը դոցւիժ այն անպիտան սե-

նեակներուն մէջ ու ժամերով շունչ կը հատցընես։ Այն ալ ինչնւ.
4—5 մարդու մէկ.երկու կտորիկ բան պիտի սորվեցընես. այդ մար-
դիկն ալ ացլչափ բան թող պակաս գիտնան, ի՞նչ կ'ելնէ. կամ թէ
մենք որ մէկ.երկու բան աւելի ենք սորվեր՝ շատ մեծ խնդր մը տե-
սեր ենք։ Բայց չէ. ծիծաղելին մըն է. այդ բոլոր իշացին աշխա-
տանքն վերջը՝ գիւղացին իր պարզ տրամարանութեամբը ուզեր է
քեզի կերպ մը վարձատրէ, ու առեր թաշկինակ մը.քերեր է. բա-
րձի վայելսո. իսկ դժւն. շրւարեր, յուզւեր, տակնուվրաց ես եղեր.
ինչնւ. որովհետեւ շաբաթներով կրած չարչարանքիդ փոխարէն 20:
փարանոց լաթի կտոր մը ստացել ես. հա, հա, հա. զիմարութիւն
յիմարութեանց. չէ, արդէն այդ յիմարութիւններու սատանան է։

Բագրատ ժպտեցաւ. իսկ Վասակ շարունակեց.

—Ահա այդ է ձեր անձնլու իրութիւնը, ինքնազոհութիւնը,
գերազոյն առաքինութիւնը, բարոյական գագաթնակէտը. ես ի՞նչ
գիտնամ. արդէն գուշ տմեն ցիմար բանի համար տակաւներով բա-
ռեր ունիք. մինչդեռ. միւս կողմէն ճշմարիտ, իրական բաներու
անունը անդամ տալու կը վախնաք, կ'ամչնաք։ Եթէ ինծի մնաց
այդ բոլոր բառերը կը ջնջեմ բառարանէն և ատոնց տեղը կը գրեմ
սպարզ ճշմարտութիւնը. ոչ թէ անձնլու իրութիւն, այլ պարզապէս
եշնահատակութիւն։ Վերջապէս աչքերդ բայց, ինքդ երեսցթները
վերլուծելու վարժըւէ, և ոչ թէ պապիկէդ ու թոռմշտած վար-
ժապետէն սորված անհեթեթութիւնները անդապար կրկնէ. և այն
ատեն պիտի տեսնես որ հազար անդամ կարդացած ու բիւր ան-
գամ լսած ամենապարզ համարած ճշմարտութիւններէդ, իդէալ-
ներէդ, զաղափարներէդ մեծագոյն մաս մը ձմերուկի ջուր է, որ
թէւ անուշ է, բայց փոր ուռեցընելէ զատ՝ ոչ մի սնունդ չունի։

—Վերջի ըսածներդ սկզբունքով կ'ընդունիմ։ Բայց ինչ կը վե-
րաբերի անձնլու իրութեան, Վասակ, մենք իրար շենք կրնար հաս-
կընար. պարապ տեղը շունչ կը հատցընես. մէկ կէտ մը կայ, որ
գուն չես ըմբըսնած, և ըմբըսնելիք ալ շունիս Սիրելիս, այն բո-
լոր դժւարութիւնները, որ զուն հաշւ եցիր, ես այդ բոլորէն հա-
ճնչք կ'ըզդամ. մի՛ կարծիր թէ աշխարհի մէջ մարդ մը գոնըւի,
որ իբ կամքովը իր ես-ին ահաճոց բան մը ընէ. իթէ կ'ընէ՝ ան-
պատճառ աւելի մեծ հաճոյքի մը յոյսը ունէ։ Իմ ըրածս ուրիշ-

ներու կրնաց անձնըւիրութիւն թւել, բայց ինծի համար պարզապէս իմ էութեանս հաճոյքն է: Աւրիշներու բարձրացսան նպաստած լինելու, մարդկացին յառաջդիմութեան ասեղի խթան մըն ալ ես տըւած լինելու, իմ ըմբըռնածս իմ նմանիս ալ հաղորդելու, կեանքի, գործի, շփման ու կըսւի մէջ լինելու գիտակցութիւնը ինծի համար շատ ու շատ աւելի մեծ հաճոյք ունի, քան ուրիշ հազարաւորներու պէս ուտել, խմել ու հարստանալու ետևէ վազելը. ամեն մարդ իր հաճոյքին. ուրիշ ոչինչ: Խակ թէ ացդ հաճոյքը իմ ուժերս կ'ըսպառէ՝ ատոր պէտք չէ որ զարմանաս. բնութեան մէջ հաճոյք ու սպառում միշտ ձեռք-ձեռքի են. յիշէ օրինակ սէրը: Հաճոյք. ահա հոս է մեր բաղիսման կէտը: Մենք իրարմէ տարբեր կերպով կը մտածենք ու տարբեր կերպով ալ կ'ըզգանք:

—Բայց մեր օրգանիզմները նոյն են. ես ալ, դուն ալ նոյն կենդանական սեռի միւնոյն զասին կը պատկանինք. և գիտապէս անկարելի է, որ նոյնակազմ օրգանիզմներ իրարու տրամագծօրէն հակառակ կերպով իրենց ուժը արտաքայտեն. ուրեմն պարզ է, որ այս երկու կերպ մտածումներէն ու զգացումներէն մէկը հիւանդ է:

—Իրաւունք ունիս. մեզմէ մէկը հիւանդ է. բայց նվազ անկեղծ խօսելով՝ չեմ կրնար ըսեր. գուցէ դռւն. բայց գուցէ և ես. կամ գուցէ երկուքս ալ: Եւ քանի որ վերջապէս կէտ մը գտանք, ուր երկուքս ալ իրարու համաձայն ենք, եկուր կանգ առնենք. գլուխս ցաւել սկսաւ:

Վասակ սկսաւ դիտել Բագրատի թեթև մը դժգունած այտերը, ցոլուն աչքերը. և տեսակ մը յուզում զդաց. կարծես կարեկցութիւն, կարծես պատկառանք, կարծես համբուրելու փափառ մը, կարծես նախանձ:

Եաքը քայլ մը հեռացաւ, մինչև մէջքը շոգենաւի եզրէն վար կախւեցաւ ու աչքերը շոգենաւի սնիւներուն հանած փրփուրին ու տակնուկրայութեանը յառած՝ նորէն թաղւեցաւ մուածումներու մէջ:

«Հաճոյք...» կը մտածէր:

(Յարունակելի):

ԺԼԱՏ ԱՍՊԵՏ

(Դրամատիկական պատկեռ)

Ա. Ա. ՊՈՒՇԿԻՆԻ

Թարգմ. ՅԱԿ. ՏԵՐ-ԳԵՈՐԳԵԱՆԻ

(Տեսաբաններ Զենաստնովայի «The caveteous Knight» արագի-
կոմէդիայից)

Առաջին տեսաբան

(Ամրոցում)

ԱԼԲԵՐ և ԻԻԱՆ

ԱԼԲԵՐ

Ինչ էլ որ չըլինի, տուրնիրին կ'երթամ։
Իւան, բեր, ցոյց տուր ինձ իմ սաղաւարտը։
(Իւանը տալիս է նորան սաղաւարտը)։

Զարդւած է միջից և փշացած է.

Սա անկարելի է ծածկել. ես պէտք է

Նոր սաղաւարտ ճարեմ։ Ինչպիսի հարւած!

Անիծեալ կոմս Դէլորժ։

ԻԻԱՆ

Բայց դուք էլ նորան

Ըստ կարգին հասուցիք։ Հէնց որ նորան դուք

Զիուց վայր զցեցիք, մի օր ու գիշեր

Ընկած էր կիսամեռ և գժւար թէ նա

Առողջացած լինի։

Ա.ԲԷՐ

Յամենայն դէպս

Նա վնաս չէ կրել, նրա Վենետիկի
 Կըրծքակալն ամբողջ մնաց. իսկ նորա կուրծքը՝
 Գոռշ չարժէ. ուրիշ կուրծք էլ չի առնի:
 Ինչու ես հէնց այնտեղ չը վերցրի նորա
 Սաղաւարտը. վեր կ'առնէի, եթէ
 Տիկիններից, դուքսից ես շամաչէի:
 Անիծեալ կնմ, աւելի լաւ էր նա գլուխս
 Զարդէր: Հարկաւոր է ինձ նաև հագուստ
 Վերջին անգամ այսոնդ բոլոր ասպետներն
 Նստած էին թաւշի և ատլասի մէջ.
 Եւ միայն ես էի որ նստած էի
 Դուքսի սեղանի մօտ ցնցոտիներով:
 Եւ ես ինձ նորանով արդարացրի,
 Որ պատահմամբ էի ներկայ գտնւել:
 Իսկ այժմ ի՞նչ կ'ասեմ: Ո՛հ աղքատութիւն,
 Աղքատութիւն. ինչպէս սոորացնում ես դու
 Մեր սրտերը: Երբ որ Դէլորժը ջարդեց
 Եւր ծանր նիզակով իմ սաղաւարտը
 Եւ մօտովս սլացաւ, իսկ ես գլխաբաց
 Խթեցի Էմիրիս, մըրկի պէս թռաւ
 Եւ քսան քայլի վրայ շպոտեց կոմսին
 Ինչպէս մի փոքր պաժի. ինչպէս ողջ տիկնացք
 Վեր կացան տեղերից, երբ ինքն Կլոտիլդան
 Երեսը ծածկելով ակամայ բղաւեց.
 Եւ գովում էին իմ հարւանդ բոլոր
 Մունետիկներն—այնժամ նորա պատճառի
 Սոսկալի ոյժիս և քաջութեանս մասին՝
 Ոչ ոք չէր մոտածում: Ես կատաղեցի
 Երբ իմ սաղաւարտս վեասւեց. բայց ի՞նչ էր
 Հերոսութեան պատճառն—Ժըլատութիւնը.
 Այն, այսոնդ նրանով մի տան յարկի տակ
 Գժւար չէ վարակւել հօրս հետ մէկ տեղ:
 Ի՞նչ է խեղճ Էմիրս:

ԻԻԱՆ

Նա կաղում է դես,
Եւ նորանով դուրս գալ ձեզ չի կարելի:

ԱԼԲԷՐ

Ել ուրիշ ճար չկայ. մի շառաթ կ'առնեմ.
Եատ էլ չեն պահանջում:

ԻԻԱՆ

Եատ չեն պահանջում:

Բայց դուք փող չունիք:

ԱԼԲԷՐ

Ի՞նչ է ասում այն

Անզգամ Սողոմոնը:

ԻԻԱՆ

Նա ասում է, որ
Ել չէ կարող առանց գրաւականի ձեզ
Փող պարտք տալ:

ԱԼԲԷՐ

Գրաւական! բայց որտեղ գտնեմ

Գրաւական, սատանայ:

ԻԻԱՆ

Ես այդ ասացի:

ԱԼԲԷՐ

Եւ ի՞նչ ասաց նա:

ԻԻԱՆ

Ծըռմըռուում է միայն:

ԱԼԲԷՐ

Դու կ'ասէիր նորան, որ հայրս էլ իւր պէս
Հարուստ է. և որ ես, վաղ թէ ուշ, նորա
Ողջ հարստութիւնը պէտք է ժառանգեմ:

ԻԻԱՆ

Ես ասացի:

ԱԼԲԷՐ

Եւ ի՞նչ:

ԻԻԱՆ

Ծոմուում է միայն:

ԱԼԲԵՐ

Ո՞հ, այս ինչ ցաւ է:

ԻԻԱՆ

Նա ուզում էր գալ:

ԱԼԲԵՐ

Փառք Աստուծոյ. նորան առանց փըրկանքի

Զեմ բաց թողնի:

(Դոււը ծեծում են):

Ո՞վ է

(Ներս է մտնում ջնուդը):

ԶՀՈՒԴ

Զեր խոնարհ ծառան:

ԱԼԲԵՐ

Ա՛, իմ բարեկամ, անիծեալ ջնուդ,

Յարգելի Սոլոմոն. մէ'կ արի այստեղ.

Թմացել եմ, որ դու էլ պարտք չես տալիս:

ԶՀՈՒԴ

Ա՛խ, ողորմած ասպետ. երդուում եմ ես որ...

Մեծ ուրախութեամբ. բայց յիրաւ չեմ կարող:

Արտեղ ճարեմ փողը. ես կործանւեցի

Ֆսրտէ օգնելով ողջ ասպետներին.

Ոչ ոք չէ վճարում. ձեզ կ'ուզեմ ինդրել,

Քքը կարող արդեօք տալ գոնէ մի մասը:

ԱԼԲԵՐ

Աւազակ! եթէ ես փող ունենայի՝

Գլուխ կը գնէի միթէ քեզ հետ.

Քաւական է. յամառ մի լինիր դու, իմ

Սիրելի Սոլոմոն. տուր մանէթները.

Հանիր մի հարիւր, քանի չեն խուզարկել:

ԶՀՈՒԴ

Հարիւր... եթէ հարիւր մանէթ ունենամ:

ԱԼԲԵՐ

Լսիր, միթէ ամօթ չէ քեզ, որ չես ուզում

Քարեկամներիդ ազսոսել:

ԶՀՈՒԴ

Երդում եմ...

ԱԼԲԵՐ

Հերիք է, հերիք:

Գրաւական ես ուզում: Ինչ յիմարութիւն:
 Եւ ինչ պէտք է տամ քեզ. խողի կաշի...
 Թէ մի բան դրաւ դնել կարողանացի՝
 Վազուց արդէն ծախած կ'ունենացի այն:
 Կամ մի՞թէ հերիք չէ քեզ համար, շնուն,
 Ասպետական խօսքս:

ԶՀՈՒԴ

Զեր խօսքը, քանի

Մենք կենդանի ենք, շատ և շատ բան արժէ.
 Ֆլամիանդական բոլոր հարուստների
 Արկղները, ինչպէս մի թալիաման, նա
 Զեր, առաջ կը բանայ: Բայց եթէ դոք, այն
 Տաք ինձ, խեղճ հրէացիս, և նոյն ժամանակ
 Մեռնէք (Աստւած չանէ), այն ժամ իմ ձեռ քում
 Ծովը գցւած արկղի բանալիներին
 Նա կը նմանի:

ԱԼԲԵՐ

Բայց, մի՞թէ իմ հայրը

Ինձանից շատ կ'ապրի:

ԶՀՈՒԴ

Ո՞վ գիտէ, մենք չենք
 Համարում մեր օրերն. երեկ ծաղկում էր
 Պատանին, իսկ այժմ մեռաւ, և ահա
 Չորս, ծերեր կոբացած ուսկը վերայ
 Տանում են նորան դէպի զերեզման:
 Բարոնը առողջ է. եթէ Աստւած տայ՝
 Տասը, քսան, քսանեհինդ, երեսոն տարի
 Գարձեալ կ'ապրի:

ԱԼԲԷՐ

Հրէաց, դու անտ ես ասում,
Երեսուն տարուց յետ իմ յիսուն տարիս
Կը լրանայ. այնժամ փողը ի՞նչ պէտքս է:

ԶՀՈՒԹ

Փողը, փողը մեզ միշտ, ամեն հասակում
Պէտք է. բայց նորա մէջ երիտասարդը
Փնտրում է իւր համար ժիր ծառաներին,
Եւ առանց խնայելու չորս կողմն է շւայլում.
Իսկ ծերը—յուսալի բարեկամներին,
Եւ խնայում է նոցա աչքի լոյսի պէս:

ԱԼԲԷՐ

Օ՛, հայրս նրանց մէջ ոչ բարեկամներին,
Ո՞չ ծառաներին, այլ տէրերին է տեսնում,
Եւ ծառայում է ինքը, այն էլ ի՞նչպէս—
Ինչպէս ալժիրեան ստրուկ կամ շղթայած շուն
Ապրում է շների նա սառը որջում,
Ուտում է չոր հաց և խմում է ջուր.
Զէ քընում ողջ գիշեր. վազվզում է միշտ
Եւ հաջում. իսկ ոսկին արկղների մէջ
Ածւած է իր համար: Լուիր. նա մի օր
Ինձ կը ծառայի, պառկել կը մոռանայ:

ԶՀՈՒԹ

Այն, բարոնի թաղման ժամանակ
Աւելի փող, քան թէ արցունք կը թափսի.
Տայ Աստւած, որ շուտով ժառանգէք:

ԱԼԲԷՐ

ԱՄՅՆ:

ԶՀՈՒԾ

Բայց կարելի է:

ԱԼԲԷՐ
Ի՞նչ

ԶՀՈՒԴ

Մտածում էի,

Որ կայ մի միջոց

ԱԼԲԵՐ

Ինչպիսի միջոց:

ԶՀՈՒԴ

Այնպէս—ես ունիմ ծանօթ մի ձերուկ.

Հրէայ է և մի խեղճ գեղավաճառ.

ԱԼԲԵՐ

Քեզ նման վաշխառո՞ւ, թէ մի քիչ ազնիւ:

ԶՀՈՒԴ

Ո՛չ, ասպետ, Տորիոսն ուրիշ վաճառք է

Անում. նա պատրաստում է հրաշալի

Կաթիլներ. և ինչպէս ազդում են նոքա:

ԱԼԲԵՐ

Ինձ Բնչ շահ դորանից:

ԶՀՈՒԴ

Մի բաժակ ջրում

Ածել երեք կաթիլ նորա մէջ—ոչ համ;

Ո՛չ զոյն է տեսնեռում. բայց մարդը առանց

Փորի մէջ ծակոցներ զգալու, առանց

Փսխելու և առանց ցաւի է մեռնում:

ԱԼԲԵՐ

Քո ծանօթ ձերունին իմոյն է վաճառում:

ԶՀՈՒԴ

Այս, և թոյն:

ԱԼԲԵՐ

Ի՞նչ կայ, փող պարտք տալու տեղ

Առաջարկում ես երկու հարիւր շիշ թոյն,

Շիշ մէկ մանէթով. այդպէս է արդեօք:

ԶՀՈՒԴ

Դուք ցանկանում էք ինձ վրայ ծիծաղել.

Ո՛չ, ես ուզում էի... Կարելի է դուք...

Կարծում էի արդէն ժամանակ է որ

Քարոնը մեռնի:

ԱԼԲԵՐ

Խնչպէս, թունաւորել
Հօրը. և դու որդուն համարձակւեցիր...
Խւան, բռնիր նորան. համարձակւեցիր...
Խնձ... բայց զիտես, ջնուդ, շնւն, օձ, որ ես քեզ
Հէնց այս րոպէիս դռներից կը կախեմի

ԶՀՈՒԴ

Ներեցէք. մեղաւոր եմ. հանաք էի
Անում:

ԱԼԲԵՐ

Խւան, թոկ քեր:
ԶՀՈՒԴ

Ես հանաք էի

Անում. ես ձեզ համար փող եմ քերել:

ԱԼԲԵՐ

Կորիր, շուն: (Զհուդը դուրս է գնում):
Ահա ինձ մինչ ուր է հասցնում
Իմ հարազատ հօրս ժըլատութիւնը.
Զհուդը յանդգնեց ի՞նչ առաջարկել:
Մի բաժակ զինի տուր, ես ողջ դողում եմ...
Յամենայն դէպս փող հարկաւոր է ինձ...
Վազիր անիծեալ ջնուդի յիտեից.
Վերցրու մանէթները, թանաքաման բեր
Ացստեղ. ես մի տոմսակ կը տամ սրիկացին.
Ներս չըբերես այստեղ դու այն Յուդային.
Կամ թէ չէ սպասիր նրա մանէթներից
Թոյնի հոս կը գայ, իրա հայրերի
Արծաթների նման... դինի ու զեցին

ԻՒԱՆ

Ոչ մի կաթիլ գինի մենք չունինք:

ԱԼԲԵՐ

Իսկ այն,

Որ ընծայ ուղարկել էր ինձ Ռէմսնը
Սպանիայից:

Ի Թ Ա Ն

Երեկ ես վերջին շիշը

Տւի հիւանդ դարբնին:

Ա Լ Բ Ե Ր :

Այն յիշում եմ:

Ուրեմն առւր ինձ ջուր. ո՞հ անիծեալ կեանք.
 Վճռւած է. ես անշուշտ կ'երթամ զուքսի մօտ
 Խնդրելու նորանից արդարութիւնը
 Թող ստիպեն իմ հօրս, որ նա ինձ պահի
 իբրև իւր որդի—և ոչ իբրև մի մուկ
 Ներքնատան մէջ ծնւած:

Ե Ր Կ Ւ Ր Ո Ր Դ Պ Ե Ս Ա Ր Ա Ն

(Ներքնատուն)

Բ Ա Ր Ո Ւ

Ինչպէս որ ստահակ երիտասարդը
 Սպասում է խարեբայ մի անառակի
 Եւ կամ թէ իւր խարած յիմար աղջկայ
 Տեսութեան, նոյնպէս և ամբողջ օրը ես
 Սպասում էի թէ երբ կը մոնեմ արդեօք
 Գաղտնի ներքնատունս, իմ հաւատուրիմ
 Արկղներիս մօա: Օ՛, երջանիկ օր:
 Ես այսօր կարող եմ վեցերորդ արկղը
 Հաւաքած մի բուռն ոսկի էլ ածել.
 Կարծես շատ չէ. սակայն քիչ-քիչ են աճում
 Գանձերը: Ինչ որ մի տեղ կարդացել եմ,
 Թէ մի օր թագաւորն իւր զինւորներին
 Հրամացեց հաւաքել մի՛-մի՛ բուռն հող,
 Եւ յանկարծ մի հպարտ բլուր բարձրացաւ,
 Որի գագաթից նա ու բախութեամբ
 Կարող էր աչք ածել և հովիտը—ծածկւած
 Սպիտակ վրաններով—և ծովը—որի վրա՞:

Նաւեր էին լողում։ Ըստ սովորութեան
 Ես աղքատ իմ հարկս այսոեղ բերելով
 Կանգնեցի բլուրս։
 Եւ սորա գագաթից կարող եմ նայել
 Բոլորի վրայ, ինչ որ ենթակաց է իմ
 Իշխանութեանս։ Բայց ինչ չէ գանւում
 Իշխանութեանս տակ. այսոեղից կարող եմ
 Կառավարել ինչպէս մի դե աշխարհը։
 Յանկամ—կը կանգնեն շքեղ սպալաաներ,
 Եւ դէպի հոյակապ իմ պարակները
 Կը վագեն խմբերով յաւերժահարսներ։
 Մուսաները իրանց հարկը կը բերեն,
 Եւ ազատ հանճարը ինձ կը սորկանայ։
 Առաքինութիւնը և անքուն աշխատանքն
 Խոնարհ կը սպասեն իմ վարձատրութեան։
 Կը սուլեմ—և իսկոյն հնազանդ և դողդոջ
 Կը սոլայ դէպի ինձ արիւնոտ ոճիրն,
 Եւ ձեռքս կը լիզէ, աչքիս կը նայէ,
 Դոցա մէջ կարդալով նշանը կամքիս։
 Հընազանդում են ինձ բոլորեթեանք,
 Իսկ ես—ոչ ոքին. ես շատ բարձր եմ՝ բոլոր
 Իղձերից. հանգիստ եմ, գիտեմ իմ ոյժը։
 Այս էլ հերիք է։ (Նախում է իւր սոկիների վերաս)։
 Կարծեմ որ շատ չէ,
 Բայց որքմն արդիօք սա մարդկային հոգսեր,
 Խաբեցութիւն, արցունք, աղերս, անէծքներ
 Է ներկայացնում։ Կայ այսոեղ հնուց
 Մընացած մի զուրլոն. ահաւասիկ նա.
 Մի այրի տւեց այժմ. բայց առաջ երեք
 Իւր որդիների հետ պատուհանի մօտ
 Ամբողջ կէսօր չողած էր նա և ողբում։
 Մերթ գալիս էր և մերթ կարում էր, անձրեն։
 Բայց կեղծաւոր կինը չէր շարժէում տեղից,
 Աարող էի նորան իսկոյն զուրս անել,

Բայց, կարծես, ինչ որ բան շշնջում էր ինձ,
Որ նա իւր ամռանու պարոքն է բերել.
Եւ չը ցանկանայ որ վաղը բանտ նստիւ
Իսկ սա. սա ինձ համար բերել է Տիբո՞ն.
Որտեղ է ձեռք զցել այն ծոցլը, սրիկան.
Գողացել ՚ի հարկէ, կամ գուցէ այնտեղ
Անտառում, գիշերով, մեծ ճանապարհին...
Այն, եթէ յանկարծ երկրի խորքերից
Դուրս հոսէր այս բոլոր գանձերի համար
Թափւած արցունքներ և արիւն քրտինքը,
Ապա կը պատահէր նորից ջրհեղեղ,
Եւ ես կը խեղդւէի իմ այս մտերիմ
Ներքնատների մէջ; Բայց ժամանակ է:

(Ռում է բանալ արկղը)

Եւրաքանչիւր անգամ, երբ որ ուզում եմ
Եմ արկղը բանալ, ջերմ և տապ եմ զգումն
Երկիւ զից չէ. օ, ոչ, իմ մօտ է սուրս.
Ումնից եմ վախենում. ոսկու փոխարէն
Այս ազնիւ պողպատը կը պատասխանէ:
Բայց դարձեալ մի ինչոր անյայտ զգացմունք
Ճնշում է իմ սիրտը: Բժիշկները մեզ
Հաւատացնում են թէ կան այնպէս մարդիկ,
Որոնց համար քաղցր է սպանութիւնը.
Երբ որ ես բանալին դնում եմ կողուկեքում
Նոյնն եմ զգում, ինչ որ նոքա պէտք է զգան
Իրանց զոհի սիրտը գանակ միսելիս.
Եւ հաճելի է և սարսափելի:

(Բաց է անում արկղները)

Ահաւասիկ իմ երջանկութիւնը:

(Փողերը ածում է մէջը)

Գնացեք ներս, երկրի վրայ հերիք թափառէք.
Եւ մարդկանց կրքերին և պիտոցքներին
Դուք հերիք ծառայեք: Հանդսառեան քնով

Քնեցէք այստեղ, ինչպէս ասուածներն են
Երկնքում՝ քնում։
Ուզում եմ ինձ համար այսօր մի ինջոյք
Սարքել։ Նախ կը վառեմ ես իւրաքանչիւր
Արկղի առաջ մի մոմ և բոլորը կը բանամ։
Եւ ինքս կը կանգնեմ նոցա մէջ տեղում
Եւ փայլուն կոյտերին կըսկսեմ նայել։
(Վառում է մոմերը և մէկը միաի գառեից բաց է
անում արկղները):

Ես թագաւոր եմ... ինչ դիւթական փայլ։
Հնազանդ է ինձ իմ զօրեղ պետութիւն։
Ահա իմ պատիւս, ահա իմ փառքս
Եւ երջանկութիւնս։ Ես թագաւոր եմ...
Բայց ինձանից յետոց ո՞վ պէտք է իշխէ
Նոցա վրայ.—Ժառանդս! Անմիտ և վառնող։
Մի երիտասարդ և իւր պէս փչացած
Եւ զբոսասէր պատանիների
Ընկերակիցը։ Ես մեռայ թէ չէ՝
Եւ նա պէտքէ մոնի, իւր պալատական
Աղան և փաղաքշող խմբով միասին,
Այս խաղաղ և համբ կամարների տակ։
Եւ գողանալով իմ դիակիս մօտից
Բանալիները—նա ծիծաղելով
Կը բանայ արկղներս և իմ գանձերը
Բոլորը կը թափւին ապրէշումէ ծակ
Նորա գրապանները։ Նա կը կոտըրաէ
Սրբազան անօթներն, նա ցեխը կ'ածէ
Արքայական իւղը, նա կը վասնէ... բայց
Ի՞նչ իրաւունքով։ Ես միթէ ձրի եմ
Չեռք բերել այս բոլորը. թէ հանաք ով,
Խաղացողի նման, որ չըլխացնում՝ է—
Եւ փողի կոյտերը ահա դիզւեցին։
Ո՞վ գիտէ, թէ որքան գառն ժուժկալութիւն,
Զսպած կրքեր, ծանր առօրեայ հոգսեր

Եւ անքուն գիշերներ է ինձնից խլել։
 Կամ կ'ասէ իմ որդիս, որ իր հօր սիրով
 Մամով է ծածկը ել, որ ինձ օտար է
 Եղել ցանկութիւն, և խիղճը ինձ երբէք
 Զէ խայթել—խիղճը, աց սիրով ճանկըռող
 Գազանը, այս անփօչ հիւրը, ձանձրացնող
 Այս խօսակիցը և անգութ վաշխառուն.
 Դա մի կախարդ է, որից լուսինը
 Ջրկւում է իւր փայլից և շիրիմները
 Այլայլում են և դուրս են արձակում
 Ննջեցեալներին... Ո՛չ, նախ չարչարւիր դու
 Եւ հարստութիւն գիղիր քեզ համար,
 Յետոյ կը տեսնենք թէ թշւառականը
 Կուգենայ վատնել այն բոլոր գանձերը
 Որ վաստակած կը լինի իրա քրտինքով:
 Օ՛, եթէ անարժան ես հայեացքներից
 Ներքնատունս ծածկել կարողանայի...
 Եւ կամ թէ երանի իմ գերեզմանից
 Ինչպէս մի ուրւական ինձ հնար լիներ
 Վեր կենալ և նստել արկզների վրայ
 Եւ պահել գանձերս ինչպէս որ այժմ
 Կենդանի մարդկանցից...

ԵՐԵՒՐԻ ԹԵՍԱՐԱՆ

(Պալատում)

ԱԼԲԵՐ և ԴԱԿԻՔԱ

ԱԼԲԵՐ

Հաւատացէք, տէր,

Դառն աղքատութեան ամօթը ևս շատ
 Երկար կրեցի: Եթէ չըլինէր անել
 Դըրութիւնս, դուք իմ գանգառը չէիք
 Լոիլ:

ԴՈՒԲՍ

Հաւատում եմ քեզ, ազնիւ ասպետ,
Զեր նմաններն երբէք առանց կարիքի
Խրանց հայրերին չեն ամբաստանին
Այդպիսի լրբեր քիչ են պատահում...
Դուք հանգիստ մընացէք. առանց աղմուկի,
Միայնակ, ձեր հօր մէջ գութը կը շարժեմ.
Ես սպասում եմ նորան. վաղուց չենք տեսնել.
Պապիս բարեկամ էր նա: Յիշում եմ ես,
Երբ դեռ մանուկ էի, նստեցնում էր ինձ
Իւր նժոյգի վերաց և ինչպէս զանգակ
Ծածկում էր գլխիս իւր ծանր սաղաւարտ:

(Նայում է պատուհանից)

Բայց ով է այն: Նա չե՞:

ԱԼԲԵՐ

Այ՞ո՞—նա է, տէր:

ԴՈՒԲՍ

Դուք գնացէք միւս սենեակ. ես ձեզ կը կանչեմ.
(Ալբէրը դուրս է գնում. ներս է գալիս բարոնը)
Ես ուրախ եմ, որ ձեզ առողջ եմ տեսնում:

ԲԱՐՈՆ

Ես երջանիկ եմ: տէր, որ ոյժ ունեցայ
Զեր հրամանով ձեզ ներկայանալ:

ԴՈՒԲՍ

Բարոն,
Վաղուց է ինչ որ մենք բաժանել ենք. ինձ
Մտարերում էք դուք արգեօք:

ԲԱՐՈՆ

Ե՞ս ձեզ...
Ես ինչպէս որ այժմ տեսնում եմ ձեզ, տէր
Օ՛... դուք մի աշխոյժ երեխայ էիք.
Հանգուցեալ դուքսը ինձ ասում էր. Ֆիլիպ,
Դու ի՞նչ կ'ասես հա, քսան տարուց յետոյ

Յիրաւի ես ու դու յիմար կը լինինք
Այս փոքրիկի առաջ... այսինքն, ձեր առաջ...

ԴՈՒՔՍ

Մանօթութիւնը այժմ մենք կը նորոգենք,
Բայց դուք մոռացել էք իմ պալատը:

ԲԱՐՈՆ

Տէր,

Մերացել եմ արդէն. պալատում ես այժմ
Էլ ինչ պէտք է շինեմ: Դուք դեռ առողջ եք,
Զեզ զեռ սիրելի են տօներ, հանդէսներ,
Իսկ ես նոցա մեջ էլ բանի պէտք չեմ:
Ասուած մեզ պատերազմ թող տայ, պատրաստ եմ
Ես նորից տնքալով նժոյզս հեծել.
Դեռ ոյժ կը գտնէի՝ ձեզ համար հին սուրս
Իմ դողդոջուն ձեռքով դարձեալ մերկացնել:

ԴՈՒՔՍ

Բարոն, յայտնի է մեզ ձեր քաջութիւնը:
Դուք բարեկամ էիք պապիս. հայրս ձեզ
Զարդում էր. և ես միշտ ձեզ համարել իմ
Հաւատարիմ և քաջ ասովեա. բայց նստենք.
Բարոն, ունիք որդիք:

ԲԱՐՈՆ

Մի որդի ունիմ:

ԴՈՒՔՍ

Բայց ինչու չեմ տեսնում ես նորան այստեղ.
Զեզ ձանձրացրել է պալատը, բայց նորան
Վայել է լինել մեզ մօտ, համաձայն
Թէ իրա հասակին և թէ իւր կոչման:

ԲԱՐՈՆ

Իմ որդին չէ սիրում աղմբկալից կեանք.
Վայրենի և մոռայլ բնութիւն ունի:
Իմ ամրոցի շուրջը, անտառների մեջ
Թափառում է ինչու ջահիլ եղջերու:

ԴՈՒՔՍ

Այդ լաւ չէ, որ ազդպէս նա վայրենանաց.
Ուզարկեցէք մեզ մօտ. մենք նորան շուտով
Բալ-հանդէսներին կընտելացընենք:
Նշանակեցէք դուք և նորա կոչման
Սրժանի թոշակ. բայց դուք մռայլում էք,
Գուցէ դուք յոգնած էք ճանապարհից!

ԲԱՐՈՆ

Տէր,

Ես չեմ յոգնել. բայց դուք ինձ շփոթեցրիք:
Զեր առաջ ես երբէք չէի ցանկանայ
Խոսանվանել. բայց դուք սոխալում էք ինձ,
Որ իմ որդուս մասին ասեմ այն բանը,
Ինչ որ ես կուզէի ձեզանից թագցընել:
Տէր, դժբախտաբար նա արժանի չէ
Ոչ ձեր ողորմութեան, ոչ ուշադրութեան:
Իւր ժամանակը նա անց է կացընում
Ստոր և յանդուգն սպանութիւններում...

ԴՈՒՔՍ

Պատճառն այն է, բարձն, որ նա մենակ է.
Միայնակութիւնը և անգործութիւնն
Փչացնում են միշտ երիտասարդին:
Ուզարկեցէք նորան, նա կը մռանայ
Խաւարի մէջ ծնւած սովորութիւններն:

ԲԱՐՈՆ

Ներեցէք, բայց յիրաւ անկարող եմ, տէր,
Համաձայնել դորան...

ԴՈՒՔՍ

Եւ ինչու համար:

ԲԱՐՈՆ

Ազատեցէք ձերիս:

ԴՈՒՔՍ

Ես սկահանջում եմ.

Բայց արէք սպատճառը ձեր բացասելու:

ԲԱՐՈՆ

Քարկացած եմ որդուս վրայ:

ԴՈՒԻՔՍ

Խնչու համար:

ԲԱՐՈՆ

Մի եղեռնական, ստոր յանցանքի համար:

ԴՈՒԻՔՍ

Քայց ինչի մէջն է զա կայանում, ասմա:

ԲԱՐՈՆ

Ազատեցէք ինձ, դուքս...

ԴՈՒԻՔՍ

Անսովոր բան է.

Գուցէ ամաչում էք նորա փոխարէն:

ԲԱՐՈՆ

Այն, ամաչում եմ...

ԴՈՒԻՔՍ

Քայց ինչ է արել:

ԲԱՐՈՆ

Նա, — նա ուզում էր ինձ սպանել:

ԴՈՒԻՔՍ

Զեզ սպանել:

Ուրեմն ես նորան դասի կը յանձնեմ:

Որպէս մի սկերես եղեռնազործին:

ԲԱՐՈՆ

Ապացուցանել ես չեմ սկսի. թէև

Գիտեմ փափագում է իմ մահը տեսնել:

Նա փորձեց մի օր ինձ...

ԴՈՒԻՔՍ

Ի՞նչ:

ԲԱՐՈՆ

Ինձ կողովանել:

(Ալբէրը ներս է վազում սենեակը)

ԱԼԲԵՐ

Քարոն, դուք խաբում էք:

ԴՐԽՑՄ

(Ալբէրին) Ինչպէս յանդգնեցիք:
ԲԱՐՈՆ

Դու այստեղ, դու, դու, ինձ համարձակեցիր,
Դու կարող ես հօրը այդ խօսքը ասե՞լ:
Ես խաբում եմ, այն էլ մեր տիրոջ առաջ...
Ինձ, ինձ... և մի՞թէ ես այլ ես ասպետ չեմ...

ԱԼԲԵՐ

Դուք խաբերայ էք:
ԲԱՐՈՆ

Ո՞հ, արդար Աստւած.
Լաւ է որ դեռ ես կայծակ չէ զարկել.
Ուրեմն վեր առ և թող սուրը մեզ դատի:
ԱԼԲԵՐ

Ահաւասիկ իմ հօր առաջին ընծան,
Շնորհակալ եմ ես:

ԴՐԽՑՄ

Ի՞նչ եղաւ իմ առաջ.
Այս ի՞նչ աեսայ ես: Որդին ընդունեց
իւր ծեր հօր հրաւերը: Այս ի՞նչ օրերում
Զգեցի իմ վերայ դուքսերի շղթան:
Լռեցէք դուք, անմիտ: Եւ դու, վագրի ձագ:
Բաւական է. (Ալբէրին) թողէք այդ շուտով.
Տըւէք ինձ ձեռնոցը: (Խլում է այն):

ԱԼԲԵՐ (մի կողմը)

ԱՎԱՆԱ:

ԴՐԽՑՄ

Ինչպէս էլ
Բոնել է ճանկերով... 0', եղեռնագործ:
Հեռացէք. այլ ես աչքիս չերևաք,
Մինչ որ ինքս ձեզ այստեղ չը կանչեմ:
(Ալբէրը դուրս է գնում)
Դուք, թշւառ ծերունի. ամօթ չէք քաշու՞՛

ԲԱՐՈՆ

Ներեցէք, տէր... կանգնել չեմ կարող... ծնկներս
Թուլանում են... շունչս կտրում է... հւր են
Քանալիներս, բանալիներս,
Քանալիներս... (Մեռնում է):

ԳՈՒՔՍ

Նա մեռաւ. Աստեմձ,
Սարսափելի սրտեր, սարսափելի դար:

Ս Տ Ի Ե Ր Դ

Շ Ա Ն Թ Ի

Քու ստերդ է թևերուս մէջ՝
Քու ստերդ խաբեբայ,
Որ քունիս մէջ կը դըրկըսի
Ու քունիս հետ խոյս կու տայ:

Ու կանգ կ'առնէ քայլ մը անդին,
Կարծես ինծի կը հեգնէ.
Մեղկ ժպիտ մը քնքուշ այտին
Չի բաժնըւիր ալ ինձմէ:

Բայց ետ կանչէ ստերդ նենգ,
Որ միշտ շուրջս կը յածի,
Երբ զուն ինքդ, դուն, չար աղջիկ,
Դեռ միշտ օտար ես ինծի:

Հայոցի, 1894 թ., ապրիլ 26:

ԻԴԵԱԼԻՍ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Взглянись, мой другъ, въ устройство свѣта —
И въ человѣка, какъ онъ есть.

Вотъ юмора источникъ вѣчный,
Сюжетъ сатиры самой злой.

Г. Н.

Պ. Փրիստաֆոր Ռաֆայէլեանը արդէն ստացել էր ուսուցչական վկայական և տեղն էլ պատրաստ էր, միայն սպասում՝ էր ուսումնական տարեշրջանը սկսելուն։ Թէև յայտնի է, որ գիւղական ուսուցիչ լինելը նրա սրտի բաղձանքներից մէկը չէր, բայց բանը այնպէս թարսւեց, որ նրան նշանակեցին գիւղական ուսուցիչ։ Իսկ իդէալները... այնքան էլ շատ են, որ... մարդ զգիտէ որը ընտրի, որի իրագործման ձեռնարկի։ Հնց ուսման ընթացքը վերջացնելու վրայ էր, որ սկսեց սպարապ ժամանակւայ զբաղմունք շնորհ մտածելը, թէ ինչպէս սկսի իւր գաղափարներին նւիրած գործունէութիւնը։

Մտածեց, մտածեց և վերջապէս այն կէտին հասաւ, որ ամենից առաջ հարկաւոր է տեղ գտնել իր համար... քաղաքում, որովհետև գիւղում մի քիչ անյարմար էր և ասպարէզը քիչ, իսկ իր ծրագիրները... որքան կուգէք։ Ահա այս էր պատճառը, որ երբ իր վիճակը թեմական տեսչից որոշւեց, վարժապետը սկսեց տիրել։ Այսպէս թէ այնպէս մի-երկու շաբաթից յետով նա գիւղում

Էր: Ծանօթացաւ հոգաբարձուների հետ, ուսումնարանի շինութեան հետ, քննեց հին մատեանները և ցուցակները, սկսեց տեղաւորւել... այնպէս որ առաջի շաբաթը գործը շատ ծանր էր առաջ գնում, որի համար նորեկը մի քիչ տվյալում էր: Քաղաքից նոր եկած, անծանօթ գիւղական կեանքի պայմաններին, հոգաբարձուների մէջ դեռ ժամանակ չունէր, կամ գուցէ հէնց չէր էլ ուզում, որոնել իր համար փոքր ի շատէ լաւ լնկեր... Իսկ զիրք կարգալու մասին հօ ոչ ժամանակ կար և ոչ էլ մի առանձին եռանդ՝ մոածելու: Մի խօսքով սկիզբը դժւար էր:

Երբեմն էլ իրան յոյս էր տալիս, թէ ահա վաղ-ուշ կը վերջանաց տարին: Շէ՛ն, մոածում էր նա, ուսումնարանումն էլ ահագին շարչարանքներ եմ կրել. բայց օրերը այնպէս եկան անցան, որ բոլո՞յը մոռացաց. դէ՛ն, աս էլ այնպէս կ'անցնի, որ ոչինչ չեմ զգալ տարւաց վերջը... Յետոյ՝ Ծննդեան, Զատկի տօներ կան, որոնց ընթացքում կարող եմ քաղաք դնալ. Իսկ տարւաց վերջը մի կերպ կ'անենք, որ էլ զիւղերը ընկնեմն:

Այսպէս մոածում էր և ինքն իրան յոյս տալիս: Բայց այդ միայն դասերից յետոյ էր պատահում, երբնա կամ նատում էլ թէյի, կամ ընկնում էր անկողնու վրայ: Իսկ առաւոտները... Գլուխը ծանրանում էր, անդամները ցաւում. օրերն էլ այնպէս տիսուր էին լինում, — ամպած, մռացլ, ցնւրտ: Դեռ զիշերները լաւ էին, բայց նրանք էլ այնպէս շուտ էին թոշում, որ երբ աչքը բաց էր անում, — ահա և առաւոտը:

Հոգաբարձուները վաս չէին վարւում հետը: Նրանք գիւղական, հողագործ մարդիկ էին, ամբողջ օրը իրանց գործերով էին զբաղւում, ուսումնարան չէին այցելում, միմիայն զիշերները խմբով լցւում էին վարժապետի սենեակը, գիւղի մի քանի իշխանների հետ՝ խօսելու, ծիծաղելու և, որ ամենագլխաւորն է, ծխելու: Ուսումնարանի մասին այնքան էլ խօսք չէր բացւում: Եւ երբ վարժապետը ուղղակի գ անդատուում էր թէ վառարանները չեն տաքացնում, կամ փայտը հատնել-պրծել է, նրանք միայն ունքերը վեր էին քաշում և հանաքով նկատում:

— Եղբայր, գու միայն աշակերտների հետ լաւ պարագիր, քո զիտեցածից մի քիչ նրանց էլ մաս հանիր, բոլորը չենք ուզում:

Վի քիչ էլ սահմանիր, որ խելօքանամն: Դէհ, իսկապէս դրանք հօ ուռում առնելու, չինովնիկ գառնալու համար չեն գալիս այսուեղ: Այնքանը միայն, որ տանը չմնան, չարութիւններ չանեն: Խոկ ինչ վերաբերում է ցրտին;—էհ, նրանք երկրագործ մարդիկ են, սովորած են:

Ուսուցչի մասին նվ էր հոգում: Խոկ եթէ ցրտից հիւանդանար և մի քանի օր գասերը գալարեցնէր, էլ պրծաւ... հոգաբարձուները արդէն գիտենց բանը: Նրանք շատ համբերող մարդիկ չեն, մէկ էլ տեսար այնպիսի մի օջին խաղացին նրա գլխին, որ կեանքումը չի մնանալ: Վերջապէս այդ իրողութիւն է, և նա առաջինը չէ, որ այդ գիւղում ուսուցչութիւն է անում: Նրանից առաջ շատերն են փախել հոգաբարձուների ձեռքից: Այս ամենը գիւղի քահանան էր ասում նրան իրրեւ գալտնիք, և այդ էլ այն պատճառով չէր, որ նա հոգաբարձուների հետ մի քէ չակառակ է, ոչ, քաւ լիցի... հէնց այնպէս, իր պարտականութիւնն է համարում, իրրեւ մեծ՝ զգուշացնել.

—Թէ չէ, դու գիտես, որդին: Ես միայն քո՞ օգտի համար եմ ածում, որ վերջը դու քաղցած չմնաս: Յիմայ նվ է ուշադրութիւն գարձում այդ տեսակ բաների վերանց: Ե՛ց, որդին, հիմայ ժամանակը այնպէս է վատացել որ...

Ահա այս էր պատճառը, որ նա կարողանում էր զսպել իր բարկութիւնը, եթէ ոչ՝ նա պատրաստ էր ուղղակի մորակել հոգաբարձուների անտարբերութիւնը դէպի ուսումնարանը:

Դեռ այդ ոչինչ: Խօհական օյինները գեռ յետոյ ովէոք է գային:

—Ի՞նչ հպարտն է, խօնում էին կանացք մի տեղ հաւաքւած, ման գալիս այնպէս է գնում, որ կարծես առաջը մարդ չլինի, քիչ է մնում ուքի տակն էլ տայ:

—Դէհ, նա ուսումնական մարդ է, արդարացնում էր տէրուբակինը, այդպէս պէտք է լինի: Նա խօմ գիւղի ջահելների հետ արթուրմա չպէտք է խաղայ:

—Մազերն էլ ի՞նչ երկար է պահում: մեռնեմ թէ կեանքումն տեսած լինեմ այդպիսի երկար մազերաւոր մարդ:

—Եկեղեցումն էլ ձեռներով խաղում է մազերի հետ, լրացնում էր մի ուրիշը:

Դեռ լաւ էր, որ այս և սրանց նման շատախօսութիւնները կանանց մէջն էին կատարւում։ Տէամարդիկ գեռ չէին սկսել քիրանցը։ Նրանք գեռ նոր էին հետաքրքրում՝ զիւղի հարցերով։ Մնացել էին ծերերը, որոնք քիչ թէ շատ լաւ կարծիք ունէին իրանց վարժապետի մասին, և դրա համար նա պարտական էր զիւղի քահանացին, որ ամեն անդամ եկեղեցու բակում խօսում էր նրանց հետ և, ի՞նչ ասել կուզէ, վարժապետին պաշտպանում էր։

Գիւղի երիտասարդներից շատերը ցրտերի պատճառով կամ տանն էին մնում, կամ ամբողջ օրը անց էին կացնում։ զիւղի օղետնում, ուր նոքա առհասարակ հոգեւոր մսիթարութիւն և մոաւր-բարոյական կերակուր գտնելու համար են գնում։ Շատ էլ քէֆ սիրող, բարեսիրտ տղերք են։ Մի անգամ երբ վարժապետը անցնում էր օղետան առաջից, ջահէլները սկսեցին ներսից բզաւել։ «Համեցէք, պարոն վարժապետ, համեցէք ներսա... Բայց ի՞նչ... պարոն վարժապետը այնքան զայրացաւ այդ զգւելի» հրաւերից, որ առանց շնորհակալ լինելու, անձայն շտապեց հեռանալ։

Դրանից յիտոյ գիւղի ջահէլ-ջուհուների խօսակցութեան առարկան վարժապետն էր։ Եւ եթէ նա ստիպւած էր լինում և մտնել ելնելը զիւղացիների մէջ, էլ ականջը հանգիստ չէր մնում տեղական հաճոչախօսութիւններից։ Մեր ժողովուրդն էլ ո՞ր գիտէք։

Այսպէս անցաւ մի-երկու ամիս։ Ուսուցիչը իրա մասին քիչ չէր մտածում։ յիշում էր շատ անգամ իւր նստարանը, իր ընկերները, իրանց ունեցած վէճերը, կարգացած գրքերը... և, ինչքան նա հեռու է այժմ այն կեանքից։ Իր «ծրագիրներից» շատերը այժմ ծուխի նման էին ցնդել։ Նա մեծ յոյս ունէր մի ժամանակ վերադարձնել անցեալը, բայց առ այժմ... նա տեսնում էր, որ առօրեայ, իրական կեանքի մէջ անցեալը իսկապէս չկար, զիտէր, որ իր զայն ծրագիրները բացակայում էին և միայն մնացել էին ինքը և այն էկոպիտու ամբոխը, որի հետ նա գործ ունէր, որից հանդառութիւն չունէր՝ իրա ասելով։ Նրան հաց էր հարկաւոր առ այժմ։ նա դրա մէջ դեռ այն ժամանակ աւելի համոզվեց, երբ իրանց տանից ստացաւ մի չարագուշակ նամակ, որի մէջ մայրը ուղղակի յայտնում էր, որ իրանց պարտասոէրը խլեց միակ կալւածը

բացի իրանց բնակւած տնից, որ ընտանիքի հոգսը աւելի իր, քան թէ փոքր եղբայրների վերաց է ծանրանում. որ իրանք կարօտութիւն են զգում՝ իրա օգնութեանը. որ իրանք նրա յուսովն են ապրում և որ, որ... Այնքան էր երկար նամակը... Ինչքան էլ շարշարւեց, մինչև որ կարողացաւ հոգաբարձուներից զջել մի 20 ռուբլի իր վարձից տուն ու զարկելու համար: Նա իր աշխատանքից էր ուղում. բայց արի տես որ հոգաբարձուները ինչ. ինչ պատճառներով թարսել էին, չեին ուղում տալ: Եւ երբ այդ մասին Քրիստովորը նկատեց քահանային, նա

—Գիտես, որդի, ինչ կայ, ասեց. ես հասկանում եմ, որ զու փողի մեծ կարօտութիւն ես զգում: բայց ինչ արած, երբ քո և քեզ նմանների բաղզը դրանց ձեռքին է: Այսօրւան օրս մեծ մարդիկ են, գիւղի մեջ դիբք, ագգեցութիւն ունեն, հեշտ չէ դրանց հետ գործ ունենալը: Զգուշացնիր: Իսկ գիւղացիները հօ, գիտես. ամեն մինը իր համար մի-մի ազա է, կողքը հաստ ժողովուրդ: ամենափոքր գործի հետ հեշտ չեն կազում, չեն կարողանում առանց վէճի, առանց հողային և ուրիշ անձնական հաշիների մի փոքրիկ համաձայնութիւն կայացնել. կարծեմ տեսած կը լինես, վարժապետ, ձանապարհների վերաց քայլ ջարդողներին: Նրանցից մեծ մասը մեր գիւղից են: Շատերը գիւղացիների հետ կուած մեր աղանձը րից փախած մարդիկ են: Որը արալ ձեռքից բաց է թողել, գնացել է, որը բեզարել է հողագործութիւնից, որովհետեւ իր աշխատանքը իրան չի պատկանում, այլ, ես ինչ գիտեմ, հազար ու մի տեսակ մարդկանց, որն էլ հէնց այնպէս գնացել է: Ահա դրանք էլ երբ ձմեռնամոխն վերադառնում են գիւղ՝ հետները կարգին խօսել չի լինիլ. Նրանցից էլ ամեն մինը մի-մի ազա է:

Դրանից յետոյ քահանան նրա ականջին այնպիսի «առակներ» պատմեց, որ թէկ սկզբում հաւատալը չէր գալիս, բայց վերջերը արամազիր էր դարձել հաւատալու: Բայց վերջապէս վարժապետի ինչ գործն է այդ բոլորը. միթէ նա պարտական է մինչև վերջ ձմեռնամոխն տէր-հօր «անկապ» և «յիմար» պատմութիւններից:

—Գիտեմ, տէր-հայր, գիտեմ, ընդմիջում էր վարժապետը:

—Դէհ ես ինքս էլ գիտեմ, որ գիտես. բայց հօ բոլորը չես գիտենալ: Հիմայ նրա համար եմ պատմում այս ամենը, որ դու

արդէն գլխի ընկնես, հասկանաս թէ բանը ինչումն է։ Պ. Առաքէլեանը, որ քո նախորդն էր, ազդալիսի պատմութիւններ շատ էր սիրում լսել։ Ե՛ն, վարժապետ, վարժապետ։

Հոգաբարձուները ճիշտ որ կողը հաստ մարդիկ էին։ Նրանց հետ հանաք անել չէր կարելի առանց անախորժ։ հետեւանքներին «Ճէր աստւած, մը սատանան է փշել-բերել գրանց ուսումնարան» — աշխատում՝ էր կատակաբանել վարժապետը, բայց և այնպէս դարձեալ զգում՝ էր, որ իր վիճակը գրանց մէջ ոչ-միշտ ապահով է։ Արդեօք չի կարելի գրանց հետ խստութեամբ վարւել։ Ոյ, տէր-հայրը բարի և, ինչպէս երեսում է, հասկացող մարդ է։ լաւ կը լինի սկզբում մտնել նրա հովանաւորութեան տակ։ Յետոյ՝ նրա միջոցով իրանց կողմը քաշել տամնուատէրին։ նա մի անմշակ ոյժ է։ պէտք է միացն մի քանի օր նրա հետ խօսել, հասկացնել ուսումնարանի, ժողովրդական կրթութեան նշանակութիւնը։ Ե՛. յետոյ նրա միջոցով իրանց կողմը քաշել գիւղի ազգեցիկ մարդկանց, որ փառք ամենակարողին հօ էլի կան բացի հոգաբարձուներից։ Է... յետոյ էլ սկսել զիմադրել և հոգաբարձուներին քշել ուսումնարանից։

Այս մտածմունքների մէջն էր, երբ ահա սկսեակի մէջտեղ կանգնեց հոգաբարձու Ակունը։

Վարժապետ, առանց նազ ու տուզ անելու սկսեց նա, քո մասին վատ լուրեր են պտտում ժողովրդի մէջ։ այդ լաւ չէ, գիտես, որդի։ դու զեռ ջահէլ ես։ եթէ չես կարողանում, շնորհք չունես մերոնց հետ վարւելու, աւելի լաւ է թողնես քո «մտնելելնելլա»։ Ախար նրանց հետ վարւելն էլ մի շնորհք է, հացի պէս անհրաժեշտ բան է։ Զնեղանաս, եթէ հէնց պարզ ասեմ, որ հետեւանքը լաւ չի լինիլ. դիտես, որ ամեն բան մեր ձեռքին է, զէ՞ն, էլ ինչ ասեմ, հասկացիր։ Մենք, հոգաբարձուներս էլ ասում ենք, որ, զէ՞ն, այսօրւաց օրս մի խեղճ տղայ է, մի կտոր հաց ունի, թող հալալ ուտի։ Մենք հօ այդ չենք արգելում։ Դէ՞ն, հիմայ բանը նրանումն է, որ դու էլ, որդի, քո չափը պէտք է ճանաչես։ Ուսումնարանի սենեակներից մէկում ապրում ես, քեզ հալալ լինի, ով է բան ասում, եղբացր։ Գնա, ինչքան քէփոդ տալիս է բոլ-բոլ ապրիր մէջը։ Քո ինչ բանն է «դուրս» էլ լինել, ամեն բան իմանալ, տեսնել։

— Ե՞նչպէս թէ, ախար...

— Ել ի՞նչ ախար...

— Դէհ, այն որ, առաջինը ես զեռ չեմ սկսել մտնել ժողովրդի մէջ։ Նրա հետ գործ չեմ ունեցել։ Բայց եթէ ես այդ անեմ, դուք ինչու պէտք է ինձ արգելէք։ Կարծեմ, ես էլ ինձ համար կամք ունեմ։

— Կամք։

— Այսինքն, դէհ, հէնց բանն էլ նրանումն է, որ... փաստաբանեց իդէալիստը և հոգաբարձուն մեղմացաւ։ Նրանք սկսեցին թէյ ըմպել։

Վաղուց է, որ գիւղ էր եկել մի 22-24 տարեկան երիտասարդ։ Դա էլ մի ուրիշ տեսակ բան էր։ Գիւղացիների մէջ կը մտնէր, հետները կը խօսէր, ամեն բանին կը հետևէր։ Գրեթէ ամբողջ օրը գիւղի տանուտիրոջ դռների մօտ էր թափառում և գիւղացիների համար խնդիրներ, պարտամուրհակներ, նամակներ էր գրում և լաւ էլ վարձ էր պոկում։ Պէտք է ասել, որ նրա օգնութեամբ տանուտիրոջ գործերն էլ մի քիչ թեթևանում էին։ Գիւղացիները ասենք նրան էին սիրում սրտանց, բայց արի տես, որ նրան աւելի էին պատռում, քան թէ մի ուրիշին, որին թէև սիրելիս էլ լինէին։ Ինչու որովհետեւ, էհ, այսօրւան օրս, պէտքական մարդ է, գործերից քիչ թէ շատ հասկանում է, մարդու աշք է բաց անում, թեիցը բռնում է, երբ հակառակորդները գործը խճճում են, շփոթում են մարդու միտքը։ Բայց եթէ քը թամբ քիչ եղաւ, էլ պրծաւ։ գործը այնպէս է խառնում որ... Բացի դրանից ահա այսօրէգուց տանուտիրոջ մօտ աւելի բարձր գիրք կ'սատնայ, նրա խոսքն էլ աւելի ազդեցութիւն կ'ունենայ ու հազար ու մի տեսակ բաներ։ Երա ասելով քաղաքում քննիչի մօտ թարգման է եղել և այնտեղ է սովորել այդպիսի երկար-բարակ ֆանդեր, գործը խառնելու կարգատելու համար։ Հանաքչի տղայ է, բայց հանաքների մէջ էլ միտք կայ։ Օրինակ երբ տեսնէ մի չքաւոր գիւղացու դատարանում գործ սկսելիս՝ կ'ասէ։ «Հը, սանահէր, ոսկու գանձ ես զտել, որ մինչեւ անդամ գործ ես բաց անում»։ Ու այսպէս խորիմանս

հանաքներ։ Մի կառքով շատ աչկարաց տղայ է, որի հատը չես գտնիլ բոլոր աշխարհում։

Նեռ մենակ նա չէր. ուրիշներն էլ կային։ Այս, օրինակ գիւղի տիրացուն։ Նատ սուս ու փուսն էր երևում։ Փողբում անցկենալիս վերև չէր նայում. գիւղացիների ասելով ամաչոս էր։ Միշտ լուս, միշտ խոնարհ գիւղի մեծաւորների առաջ։ Հասկա ժպիալր... կարծես բերանում շաքար էր հալչում։ գիւղի սիրուններից քչերը չեն նորա վերա աչք անկել։ Գիւղի իշխանները նրա հետ շատ ընկերաբար էին վարւում, բայց նա մրացն հոգաբարձուների մօտ էր իրան ազատ զգում։ Ասում են, թէև այնքան էլ հաւատալի չէ, թէ դա ինչ-որ ափիրացին» միջնորդութիւններ էր անում գիւղի մի քանի սիրունների և հոգաբարձուների մէջ։ Գիւղի մնացած մեծաւորները այդ գիտէին և դրա համար էին նրա հետ ընկերաբար վարւում, յուսալով, որ նրա միջոցով... իրանք ևս կ'օգտւեն։ Քաղաքի իր քարեկամն մարդկանցից նամակներ էր ստանում, որի մէջ նրանք յայտնում էին, թէ իրանք մի կերպ համոզում են գործակալ քահանացին, որ սա միջնորդի սրբազն առաջնորդին տիրացուի խոնարհ համար։ Տիրացուն ինքն էլ նրանց պակաս չէր թողնում։ Ե՛հ, Աստուծոյ տւածից ինքն էլ նրանց պատում, սրաները շահում էր։ Բանից գուրս էր գալիս, որ փուճկենդանին ճարպիկութեամբ պատրաստում էր հոգեոր խոտ մատակարարելու անտէր հօսին։

Այս բանը ՚ի հարկէ տէր-հօր սրատով գիտչում էր, բայց ձիւնը նրա գլխին էլ... մենակ էր, ի՞նչ կարող էր անել։ Ե՛հ, այսօր կայ, վազը չի լինիլ. նրա մի ոտը դուրսն է, միւսը գերեզմանումն է։ Հակառակ ելու ժամանակը անց է կացել։ Նա էլ մատածեց, մոածեց և ինքն իրան մի քիչ խօսելուց յետոյ սուս կացաւ։ «Գլուխը քարը, թող անի ինչ որ ուզում է։ Թող ի՞նքը առաջի Աստուծոյ պարտական մնաց։ Մենակ հօ նա չէ, բոլորն էլ մի ծառի պտուղներ են։ Անիծեալ, գարշելիներ»։

Վարժապետը աչքի տակով, հէնց ակամայ հետեւմ էր այս բոլորին։ Ասենք, նա այնքան էլ հետաքրքրողներից չէր, բայց ի՞նչ անէր, եթէ գիւղում ացնաղիսի օյխններ էին կատարում, որ եթէ նա կոյր լինէր, գոնէ ձայնը կը լսէր։ Գիւղի ազգեցիկ մարդիկ կար-

ծես շղթայի մի-մի օղակ լինէին, եթէ մէկին ձգէր, միւսները պէտք է տեղից շարժւէին: Ե՞հ, հեշտ բան չէ դրանց հետ գործ ունենալը. զու այն ասա, շուտով տարին կորչի գնայ, ինքն էլ ազատւի աներես, բութ մարդկանցից, գարձեալ ընկնի քաղաք, հանգստանայ, տչքը բաց անի, զործ սկսի: թէ չէ, հօ իդէալները գետնում չպէտք է թաղել...

Վերջապէս եկան Զակի տօները, և վարժապետը գնաց քաղաք ազատ շունչ քաշելու, կենդրոնանալու ինչպէս ինքն էր ասում: Տեսաւ իրանց տունը, մանրամասնօրէն քննեց իրանց զործերը, տեսնելու թէ արդեօք մի բան մնացմէլ է իրանց, թէ, ինչ-որ կայ չկայ յափշտակել են «Հակառակորդ»-ները: Տեսաւ, որ մացը թոյլ էր վարւել. նրանք էլ քրիստոնէաբար առել-կերել-էին: Նատ բան տեսաւ, շատ բան հասկացաւ, վերջը եկաւ այն եղբակացութեան, որ իրանց ամէն բանից առաջ ապահովութիւն է հարկաւոր, որ ինքը պէտք է աշխատի տանուլ չտալ այն մի կտոր հացը, որ իր արդար քրտինքով պոկում էր ուսուցչական ասպարէզում: Չէ, չէ, անտանելի բան է ճքաւորութիւնը, պէտք է զգոյշ լինել. եթէ ոչ... Եւ ինչպէս գիւղում նա այդ մասին քիչ էր մտածում: Ճիշտ որ քահանան խելօք էր խօսում: Ապա թեմական տեսչի պատասխանը, որ ստացաւ իւր մի նամակի համար, որի մէջ նա ինդրում էր իրան քաղաքում ուսուցիչ նշանակել: Քաղաքներում բռնւած էին բոլոր տեղերը: Գիւղերում շատ նպատակ այս արմար է ուսուցիչ լինելը, նա պէտք է գոնէ մի առջժամանակ այնուեղ մնայ:

Մի առ ժամանակ—այսինքն մինչև վերջին դատաստանը:

Պ. Քրիստաֆոր Թափայէլեանը շատ բարկացաւ այդ պատասխանի համար և ցաւեց, որ իր այդքան քիչ են հասկանում, որ իր իդէալները պէտք է անիրագործելի մնան, որ վերջապէս կարելի էր և՛ քաղաքում ընարել նպատակայարմար ասպարէզ, որ... Բայց ճարն ի՞նչ: Մի քանի օրից յետոյ նա ուղեորւց գիւղ, տանելով թեմական տեսչի մասին շատ աննպատ կարծիքներ:

Այժմ նա իրան տեսաւ արդէն բոլորովին մենակ և աղքատ: Չէ, չեղաւ, սրանից ոչինչ չի դուրս գալ:

Գիւղում պարապմունքները շատ էին ձանձրացնում նրան. այսինքն այնքան չէին ձանձրացնում, որքան մի տեսակ տխրեցնում

Էին: Վարժապետութիւնով ի՞նչ գուրս կը գայ: Վիճակը իսկապէս անորոշ էր և տաղտկալիք: Այնպիսի մի ռոճիկ են տալիս, որ առամմերիդ արանքում կորչում է: Դեռ լաւ է, որ տալիս էլ են, շատ տեղերում վարժապետը հազիւ է խորում իր տարեկան ռոճիկի կէսը:

Ահա և ընկերներից ստացած նամակները. նրանք ի՞նչ են անորոշ որ... Ճրագիրներից, գաղափարներից մասին դեռ ոչ մի խօսք էլ չկայ շատերի նամակներում: Բոլորն էլ գանգատում են տպրուտիք, չքաւորութեան և, ով գիտէ, հազար ու մի տեսակ բաների մասին: Մինչև անգամ մէկը ծաղրում է այն իդէալները և ծրագիրները, որ բաժանման ժամանակ միմեանց խօսք էին տալիս իրագործել: Ասենք, գլուխը քարը, նրանից այդ սպասելի էր: Նա կուել չգիտէ: Ե'ն, բայց սրանցից ոչ մինը հաւատարիմ չէ մնացել իր իդէալներին: Նամակներից երեւում է որ կան. բայց ի՞նչ յուսահատ նամակներ են: Ամեն տեղ կռիւ, կեղծութիւն, խաբեքայութիւն, հացի խնդիր... Թիւյ, սատանան տանի: Ահա և մի ուրիշը: Խսկի վարժապետի հաւատալը չէր գալիս, թէ սրանից մի բան գուրս գար: Ամեն անգամ ծաղրում էր նրանց վիճաբանութիւնները, գաղափարները: Բայց ահա ընկերները գրում են նրա մասին, որ իրանց քաղաքում կարողացաւ համոզել մի քանի կրեսուներին, կառուցանել մի աղքատ գիւղի ուսումնարան և վերջերն էլ հիմնել է մի գրադարան: Ասենք այդ մի ողջմելի գործ է, բայց այն ամեքենացի համեմատութեամբ ահագին բան է:

Բայց և այնպէս իրանք հօ մինչև վերջը հաւատարիմ կը մնան: Դեռ ով գիտէ, մինչև հիմայ իրանք սկսած կը լինէին, միայն թէ սէտք է մի քիչ տպահովել կեանքը, այն, ապահովել:— Այդքանը միայն. թէ չէ, իրանք այնպէս սկսէին որ... և ի՞նչ քան գործեր կարելի էր սկսել:

Վարժապետը աշխատում էր քնելով մոռանալ, որ ինքը գիւղում է, աշխատում էր ընթերդանութեամբ սպանել ժամանակից: Բայց դա էլ չէր օգնում: Այ քաղազում ուրիշ բան է: Ճշմարիտ, ի՞նչ հիանալի է թատրոնը: Մարդ տեսնում է իր աչքի տռաջ սիրած և պաշտօն իդէալական տիտղերը, ոգևորում է, եռանդի է գալիս...

Թիւհ, սատանան տանի այս գիւղն էլ, այս մարդկանց էլ, այս
պիւղական, գուեհիկ և կոպիտ» կեանքն էլ... Դժոխքի մէջ ենք,
հաւատա:

Այսպէս թէ այնպէս քննութիւնները վերջացան և վարժա-
պետը ուրախ էր, որ շուտով գիւղից պիտի վնալնիւ: Հոգաբարձու-
ները վճարեցին մնացեալ ոռմիկը ի մեծ զարմանս վարժապետի, և
նա գնաց քաղաք:

Սկսեց ամառը, դրա հետ էլ հանգստանալու, հոգեկան ան-
մեղ գւարժութիւններ ստանալու, բաղդաւորութեան մասին ցնո-
րելու օնհնեալ օրերը: Վարժապետը նկատեց, որ գիւղի եւրկար
և ծանր աշխատութիւններից յետոյ իրան առ աչմ շատ կա-
րեր և նույտակ այս ամար է հանգստանալ բարոյապէս և ֆի-
զիկապէս: Դրա հնարն էլ կայ. պէտք է ունենալ մի հաւառարիմ
և պետանքի ծանր լուծը» միասին կրող լնկերուհի: Դրա մասին ընէ-
մայրը և թէ հարուստ հօրեղբայրը ակնարկում էին վարժապետին
և նա էլ մտածում էր այդ մասին: Վերջը իր կատարեալ պատ-
րաստականութիւնը նա յայտնեց հօրեղբօրը: Նա էլ ուրախացաւ և
խոստացաւ օգնել այդ գործում:

Մի շաբաթից յետոյ տեղի գործակալ քահանան ստէպ-ստէպ
հրաւիրում էր պ. Քրիստափոր Առաքյէլեանին իր մօտ ևառօրեայ,
հասարակական հարցերի մասին վիճաբանելու, ժամանակ անցկաց-
նելու համար: Նաև էլ զբաղեցնող, ուրախ մարդ էր տէր-հայրը:
Պր. Քրիստափորը հէնց բացարձակ յացանում էր տէր հօրը, որ
նրա մօտ իրան շատ լաւ է զգում, որ նրա օգնութեամբ կարողա-
նում է մօտիկից ծանօթանալ ժողովրդի հետ, որ... Պէտք է անել,
որ տէր-հայրը յիմար մարդ էր, որ չնաևկանար թէ ի՞նչ է նշա-
նակում ժողովրդի հետ ծանօթանալ, իրան լու զգալ: Բայց...
չն, հօ ամեն բան չի կարելի դիմացինի երեսին տալ, ամեն ինչ
իր հաշիւները ունի:—Այսինքն թէ; նա էլ իր արտրաստականու-
թիւնը յայտնել էր պ. Քրիստափորի հարուստ հօրեղբօրը: Բայց
չմոռանալու համար փակազծի մէջ յիշենք, որ տէր-հայրը մի քիչ
էլ ուրախ էր, տեսնելով իւր փեսացուի մէջ այնպիսի յատկութիւն-

ներ, որոնք առհասարակ պէտք են գալիս «այժմեան կեանքի» մէջ։ Նրա ասելով եթէ այդ յատկութիւնները կարելի լինէր մշակել, այն ժամանակ նա վստահ էր յուսալու, որ իր փեսան կը շարունակի իր գործունէութիւնը, իր անունը և իր գիրքը քահանազական ասպարէզում։ «Սպասիր, զեռ նա ջահէլ է, նոր է կեանք մոռել. ժամանակին կը համոզւի, որ կեանքի մէջ գաղափարներից առաջ գեռ մի կառը հաց է հարկաւոր պոկել մարդկանցից. իսկ հաց գտնելու համար, գաղափարները պէտք է ուղարկել «ի վերին Երուսաղէմ. . .»։

Ահա այս կերպ մոռածող մարդկանցից էր տէր-հայրը, և պ. Քրիստափոր Ռաֆայէլեանը այդ վաղուց գիտէր և մի ժամանակ մոռադիր էր եղել մի խիստ թշնամութիւն սկսել տէր-հօր հետ, բայց վերջը բարեկամացաւ։ Ե՞հ, կեանք է, ապրել պէտք է գիտենալ, մաստակ չէ որ ծամծըմես։

Պր. Քրիստոաֆոր Թափայէլեանը իր ամուսնութիւնից յետոյ մի նամակ գրեց իր ընկերներից մէկին։ Նամակի մէջ յայտնում էր, որ ինքը այժմ քաղաքումն է և, շնորհիւ իր աներոջ միջնորդութեան, քաղաքում ուսուցիչ է լինելու։ Թէև սկզբում թեմական տեսուչը արգելք էր լինում այդ բանին, բայց վերջը մի կերպ... Զէ, այսինքն թեմական տեսուչը տեսնելով իր աշխատասիրութիւնը և գործունէութիւնը՝ քաղաքում նշանակեց ուսուցիչ լինել։ Գրում էր, որ տեղի ազդեցիկ, նշանաւոր քահանան կնութեան է տուել իր մինուճար գտրիկը, որի վերայ ինքը սիրահարւած է եղել, հետն էլ բաւականաչափ ապրուսի միջոց։

«Այդ քեզ գարմանալի չի թւալ, սիրելիս, գրում է նա, եթէ իմանաս, որ աղջիկը, շատերին դուք չեր գալիս։ Փակագծի մէջ աւելացնում եմ, որ տէր-հայրը թէև գործողներից» ։ Հ. Դողովրդին վեասակար մարդ էլ չէ և իմ խիզնը քառարոշապէս, այս, կատարելավէս հանդիսաւ է, որ նրա հետ բարեկամացայ և այժմ շատ հաշտ եմ ապրում նրա հետ։ Եղբայր, ժողովրդի յառաջադիմութեան գործին ծառաչելու համար շատ նպատակացար մարդ է իր ձեռքում ունենալ նրա պէս գիրք ունեցող մարդկանց աջակցութիւնը։ Գրիր հետեւեալ նամակումդ թէ ինչ գրութեան մէջ են գործերդ։ Հա, մի բան մոռացայ ասել. կարգացիր Ն լրագրի մէջ

ող. Մ.ի յօդւածը: Ինձ շատ դուք եկաւ նրա խիստ, կծու ոճը: Այս այդպէս կը հարւածեն կեղծաւորներին: Նրանց հէրն անիծած, սովորել են ժողովրդին կլափել...

«Մի վհատուիր, հոգիս, կութիր, որքան ներում են ոյժերդ:

Մենք շատ պարտականութիւններ ունենք կատարելու:

Ուրեմն զէպի նպատակ, զէպի գաղափարների և իդէալների անմահ աշխարհը»:

«Աշխատո՞նք, աշխատե՞նք...»:

ԵՒԱՍԲՈՒԺՈՒԹԻՒՆ¹⁾

ԲԺ. ԳԱՐԵԿԻՆ ԱԱՐԳՍԵԱՆՑԻ

Աերջին տարիները մեր պարբերական հրատարակութիւնների մէջ քանի անգամ խօսացւել է բժշկութեան նոր մեթոդի՝ շիճաբուժութեան (սերուերապիազի) մասին. իսկ այս տարի բժիշկ Առուի անունը չէր դուրս գալիս պարբերական հրատարակութիւններից, շնորհիւ այն գիւտի որ նա արաւ զիվտերիտի բժշկութեան համար: Այդ տեղեկութիւնները, որքան ինձ յացնի է, մեր պարբերական թերթերում շատ անկատար և կցկատւը են եղել և բժշկականութեան հետ անծանօթ լնթերցողներին չէին կարող պարզ գաղափար տալ բժշկութեան նոր մեթոդի մասին. նրանք չէին պարզում՝ թէ ինչ ֆակտուրի վերայ է հիմնւած այդ մեթոդը, ինչով է բացատրում նոր գեղերի զօրութիւնը և ինչպէս են պատրաստում այդ գեղերը:

Ներկայ յօդածովս մենք մտադիր ենք պատասխանել վերը դրած հարցերին:

Վազուց արդէն յացնի է՝ որ երբ մէկը հիւանդանում է մի վարակիչ հիւանդութիւնով, օր. ծաղիկ, քութէշ (կօրք), կարմրուկ (սկօրլոտինա), զիվտերիտ, հարինք հիւանդութիւններով և առողջանում է, նա արդէն զրանով ապահովւած է լինում երկար ժամանակ (մի քանի տարի) միևնոցն հիւանդութիւնով վարակւելուց: Եթէ մէկը, դիցուք, թեթև կերպով հիւանդացաւ ծաղկով և առողջացաւ, նու երկար տարիներ ապառւած է այդ սարագիելի հի-

1) Եթէ կամ շիճուկ արեան չեղուկ մասն է. երբ արիւնը լերպանում է, շիճը բաժանում է արեան գնտակներից և ֆիբրինից

ւանդութեան ճանկերից։ Միւս կողմից դեռ անցեալ դարում բժիշկներին յացտնի էր, որ ծաղկի վարակիչ գօրութիւնը նւազում է հիւանդի մարմնի մէջ։ Այդ երեւում է հիւանդալից։ Եթէ ծաղկով հիւանդից վերցնենք նրա ծաղկի բշտիկի հիւթը (ծաղկաւիշը, օսպеннаյ լիմֆա) և մոցնենք առողջ մարդու կաշւի տակը, վարչինս նոյնապէս կը հիւանդանայ ծաղկով, միայն այն զանազանութեամբ որ նորա հիւանդութիւնը առաջինից աւելի թեթև կը լինի։ Այս իրողութեան հիման վրայ դեռ անցեալ դարում գործադրուում էր աւելի պատւաստը, որը (աւիշը) վերցնում էին հիւանդից և վարակում նորանով առողջին։ Այսպիսով առաջ էին բերում թեթև հիւանդութիւն, որը ազատում էր ծանր հիւանդանալու վտանգից։ Այն գործողութիւնը անւանեւում է ինոկուլացիա:

XVIII-դ դարու վերջում Զեննէր (Zenner) ապացուցեց, որ կոմի ծաղկաւիշը պատւաստելով՝ մարդոն, կարելի է նրան ապահովել ծաղիկ հիւանդութիւնից, թէև ծաղկի բշտիկներ դուրս կը գան միայն պատւաստած տեղերում։ Զեննէրի գիւտից յետոյ ինոկուլացիան թողեցին, որովհետեւ ազդպիսով հիւանդացածը դառնում էր հիւանդութիւնը տարածող, վարակող, և, ինչպէս ընթերցողին յացտնի է, հիմա ամեն տեղ մեծ քանակութեամբ գործադրուում է պատւաստը։

Ես առաջ բերեցի իրողութիւններ ծաղիկ հիւանդութեան մասին, որովհետեւ նրանք հանրածանօթ են. ինձ մնում էր միայն մասնացոյց անել նրանց վերայ և բացադրել յետոյ նրանց իմաստը։ Կարելի էր բացի ծաղիկց և ուրիշ օրինակներ բերել (խոլերա, գիվտերիտ) և նրանցից ևս կը պարզեր՝ առաջինը, որ մի որ և է վարակիչ հիւանդութիւն տանելը ապահովում է մի անյայտ ժամանակով նոյն հիւանդութիւնով վարակւելուց և, երկրորդ, որ արւեստական կերպով (պատւաստելով) կարելի է կենդանուն (մարդուն) ժամանակաւորապէս անխոցելի դարձնել մի հիւանդութեան համար։ Սակայն հարկաւոր չէ կարծել որ անխոցելիութիւնը (immunité) տեղի ունի բոլոր տարափոխիկ հիւանդութիւնների համար առանց բացառութեան ինֆլուէնցան, ըստ երեցիթին, չէ ենթարկում այդ օրէնքին. մարդ կարող է հիւանդանալ ինֆլուէնցայով կարծ ժամանակամիջոցում մի քանի անգամ։

Վերը բերած իրողութիւնները ցոյց էին տւել բնագէտներին մի ճանապարհ, որը պիտի տանէր նրանց բնութեան գաղտնիքի պուռը:

Բայց այդ գեռ բաւական չէր: Հարկաւոր էր իմանալ, թէ ինչն է վարակիչ հիւանդութեան պատճառը, ինչումն է կայանում նրա վարակը: Այդ հարցերին հիմաց այսպիսի պատասխան կայ: Վարակիչ հիւանդութիւնները առաջ են գալիս միկրոբներից, որոնք զանազան հանգամանքների շնորհիւ բոյն դնելով կենդանու մարմնի մէջ, պատրաստում են զանազան տեսակի թոյներ. թոյնը, նայած թէ ինչ միկրոբից (կամ միկրոբներից) է առաջացել, արիւնի հետ շըրջելով մարմնի մէջ, ստեղծում է այս կամ այն հիւանդութիւնը: Սյժմ արդէն յայտնի են շատ հիւանդութիւնների միկրոբներ. թոքախտի, գիֆտերիտի, փորհարինքի, խոլերայի, տետանուսի, կարմիր քամու, թամնչի (ԱՅՅԵԿՏԵՐԻՅ), գարձահարինքի, ինֆլուէնցայի և ուրիշ: Նրանց կարելի է տուանալ հիւանդի մարմնից և աճեցնել առանձին ամանում մի որ և իցէ սնունդի մէջ (օր. սիճուկի, թուլիօնի և այլն): Այդպիսով մենք կ'ունենանք պատրաստի միկրոբներ իրանց թոյների հետ. հենց որ ուզենանք առաջ բերել մի որ և իցէ հիւանդութիւն, կարող ենք մեր ձեռքում ունեցած թոյնով վարակել անասունին և ստեղծել մեր ցանկացած հիւանդութիւնը: Վերջին նպատակի համար զոհ են գնում ահագին քանակութեամբ խողուկներ, շներ, նահատակւելով մարդկութեան ցաւերի համար:

Ուրեմն վարակը կամ, ինչպէս ասում են, ինֆեկցիան, օղու, մորֆիի, սուլեմի, կամ ուրիշ թոյների նման, տարածւելով կենդանու մարմնի մէջ՝ ստիպում է նրան շեղւել իւր բնական (նորմալ) ֆիզիոլոգիական լնթացքից և ենթարկել զանազան փոփոխութիւնների. նա թունաւորում է մարմինը: Զանազանութիւնը նրանումն է որ օղիի, մորֆիի, սուլեմի քիմիական բաղադրութիւնը յայտնի է գիտութեան, իսկ վարակային թոյնի բնաւորութիւնը դեռ ևս մերջնականապէս յայտնի չէ, թէև այդ ուղղութեամբ էլ հետազոտութիւններ եղել են և լինում են և գիտութիւնը այժմ հասել է յայտնի հետևանքների:

Ընթերցողը, ի հարկէ, գիտէ որ բոլոր մարդիկ մի տեսակ չեն

վերաբերում միենոյն վարակիչ հիւանդութեան, որոնք մեռնում են, չդիմանալով նրան, իամ որոնք առողջանում են, երբեմն նոյն իսկ առանց բժշկի օգնութեան։ Այդ զանազանութիւնը կախւած է մի կողմից վարակի զօրութիւնից, միւս կողմից օրգանիզմի ոյժից։ Հենց որ վարակը ոտ կոխեց կենդանու մարմնի մէջ, վերջինս սկսում է կռիւ հղել նրա դէմ (իւր տեսակի գոյութեան կռիւ) և, նախած թէ որի կողմն է ոյժը, նաև յաղթող է հանդիսանում այդ կըռ- ում։ եթէ մարդու օրգանիզմը յաղթեց վարակին, նա այլ ևս չէ վախինում այդ հիւանդութիւնից։ Այդ մարդը, ինչպէս վերև ցի- շեցինք, երկար ժամանակ (թէ որքան՝ դժւար է ասել) անխոցելի է դասնում այդ հիւանդութեան համար։ Անխոցելիութիւնը հիմա բացատրում է նորանով որ օրգանիզմը, վարակի հետ կուելիս, պատրաստում է արեան մէջ այնպիսի նիւթնը (հակաթոցներ, ան- տիտոկիններ), որոնք ոչնչացնում, զերօի են հասցենում վարակա- թոցնի ազդեցութիւնը. մինչև որ այդ նիւթերը շրջում են արեան մէջ, հիւանդութիւնը չէ կոչում մարդուն. հենց որ հակաթոցները վերջացան՝ մարդս նորից կարող է հիւանդանալ։ Եւ զարմանալին այն է, որ կենդանին, տանելով յայտնի վարակիչ հիւանդութիւն, առաջանալում է ոչ թէ միայն իրան այդ հիւանդութիւնից, այլ նա կարող է ապահովել և ուրիշի կեանքը. եթէ առողջաշած կենդա- նու արեան շիճուկից մացնենք մի ուրիշ կենդանու մարմնի մէջ, մեռք դորսնով վերջինս կը դարձնենք անխոցելի այդ հիւանդութեան համար։ Այդ էլ գեռ բոլորը չէ. անխոցելի դառած, կամ դարձրած, կենդա- նու արեան շիճուկը կարող է մինչև անգամ բժշկել ուրիշ կենդանուն, որը հիւանդացել է համապատասխան հիւանդութեամբ։

Այժմ վերև ցիշած օրէնքը անժխտելի կերպով ապացուցւած է այսպիսի հիւանդութիւնների համար, ինչպէս է. ծաղիկ, գիմփա- րիտ, տետանուս (СТОЛБНЯКЪ, ֆայտացումն), կան փորձեր և ակ- նարկներ հետեւեալ հիւանդութիւնների համար։ թոքախտ, փորհա- րինք, խոլերա, կարմիր քամի (րոյա), կարմրուկ (скорлатина), սիֆիլիս, նոյն իսկ այնպիսի հիւանդութիւնների համար, ինչպէս քաղցկեղ (ракъ, сорцинома) և մառուցց (сиркоажа), որոնց վա- րուկիչ լինելը գեռ վերջնականապէս ապացուցւած չէ։

Այժմ բացադրենք, թէ ինչպէս են պատրաստուում գեղերը

նոր միջոցներով։ Դորաւ համար մանրամասն կանգ կ'առնենք զի՞մտերիտի վերաց, որովհետեւ վարակիչ հիւանդութիւնների մէջ դա տմենալաւն է ուսումնասիրւած և պարզւած։ այն ժամանակ ընթերցողի համար կը պարզւեն մէժողի գլխաւոր հիմունքները, իսկ այդ հիմունքները ընդհանուր են բոլոր վերոցիշեալ հիւանդութիւնների համար։

Դիֆաներիա հիւանդութեան վարակը Լէօֆլէրի (Löffler) բացիլներն են։ Նրանք, անյացա պայմանների շնորհիւ, բազմանալով սոսորդի խլնացին թաղանթում (ըլիզտայ օబոլոչկա)⁸ ունենում են երկու տեսակ ազդեցութիւն օրգանիզմի վրայ, մէկ, որ առաջացնում են բորբոքում, որը ծածկում է սոսորդի թաղանթը սպիտակ փառով, երկրորդ, նրանք պատրաստում են թոյն, որը, մանելով արեան մէջ, թունաւորում է մարմինը։ առաջ են գալիս ործողութիւն, դող, ջերմ, մարմնի թուլութիւն, պատահում են անդամալուծութիւններ մարմնի զանազան մասերի։ Ահա այդ Լէօֆլէրի բացիլները, անեցնելով արեւեստական կերպով պատրաստած սնունդի մէջ (բուլենի մէջ), ստանում են զիֆաներիտի թոյնը։ Յետոյ սկսում են թունաւորել մի բոլորովին առողջ ձիու, ներածելով նրա կաշւի տակը այդ թոյնը։ Մկզբում թոյնը վերցնում են շատ փոքր քանակութեամբ (մի քանի սանտիգրամ)։ Ներածելուց յետոյ ձիու մարմնի սաքութիւնը բարձրանում է, խոս չէ ուսումնական օրից յետոյ այդ երեսոյթները անցնում են և թոյնի միւնոյն քանակութիւնը չէ կարողանում առաջ բերել նոյն երեսոյթները։ Հարկաւուր է աւելի մեծ քանակութիւն։ Ներածում են առաջի անգամից աւելի մեծ քանակութիւն։ առաջ են գալիս նոյն երեսոյթները և մի քանի օրից յետոյ նորից անցնում։ Հետզինետէ շատացնելով՝ թոյնի քանակութիւնը հասցնում են այն աստիճանի, որ զիֆաներիտի ամենազօրեղ թոյնին անգամ ձին կարողանում է զիմանալ։ Ընդհանուրապէս 4—6 ամսում ձին հասնում է այդ կարողութեան։ այն ժամանակ զիֆաներիտի գեղը նրա արեան մէջ արգէն պատրաստ է և մենք կարող ենք ստանալ նորանից։ Վերջին գործողութիւնը (ստանալու) կատարում է այսպէս։ Կտրում են ձիու երակներից (սովորաբար զղի) մէկը և թողնում են որ արիւնը հոսի մաքուր ամանների մէջ։ Երբ արիւնը հոսել է այն քանակութեամբ, որ

ձիուն ոչինչ վտանգ չէ սպառնում, նա կարող է ապրել, արիւնը կանգնացնում են և սպասում մի քանի շաբաթ մինչեւ որ կենդանին վերականգնի իւր կորցրած արիւնը և կազդուրւի. դորա համար, ի հարկէ, հարկաւոր է ձիուն լաւ խնամել և լաւ կերակրել: Երբ ձին վերատին կազդուրւեց՝ կարելի է նորից արիւն վերցնել: Այդ ձին կարող է երկար ժամանակ, (թէ որքան ժամանակ: գեռ յայտնի չէ) մեզ մատակարարել զիֆտերիտի զեղ: Վերցրած արիւնը ամանների մէջ զնում են ցուրտ տեղում և թողնում մինչեւ որ լերդանայ. այդ ժամանակ շիճը (serum) բաժանւում է արեան միւս մասերից և հաւաքւում է լերդի վերևում նիճը թափում են ուրիշ ամաններ և ծախում արգէն ինչպէս զիֆտերիտի զեղ:

Նիճաբուժութիւնը մեծ ապագայ է խոստանում. նա տալիս է բժիշկների ձեռքը մի զօրեղ միջոց կռւելու այն հիւանդութիւնների հետ, որոնց զէմ նրանք մինչեւ հիմա անզօր էին մաքառելու:

ՎԻԵՆԱՑԻ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅՐ ԱՐՄԵՆ ԱՐՔԵՊ. ԱՅՏՆԵԱՆԻ 50-ԱՄԵԱՑ 80ԲԵԼԵԱՆԻ ԱՌԴԹՈՎ.

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑԻ

Երկու միաբանութիւններից, որոնք Մխիթարեան անունն էն կրում, մէկը՝ հնագոյնը՝ Վենետիկութիւն է, իտալիացում, միւսը՝ Աւստրիացի Վիեննա մայրաքաղաքում: Վենետիկի անունը սերտ կապւած է հայ ազգի լուսաւորութեան, գրականութեան ու տպագրական գործի պատմութեան հետ 18-րդ և ներկայ դարի մի մեծ մասում, որի միջոցին Վենետիկի միաբանութիւնը, թէև ոչ օրինակելի կերպով, սակայն, լաւ թէ վստ, իրօք զեկավար է հանդիսացած հայոց ուսումնական ու գրական կեանքի: Մի Չամչեան; մի Խնձիճեան, մի «Հայկազեան բառարան», մի Արսէն Բագրատունի, հայ կլասիկ գրւածների տպագրութիւնը, մի նախսկին Մուրագեան (և ապա Մուրագ-Ռաֆաէլեան) վարժարան, մի յիսնամեայ «Բաղմավէոր», մի Ալիշան—դոքա անուններ և գործքեր են, որոնք յարգանք են պահանջում, որովհետև հայրական զեր են կատարել: Եւ Վենետիկի միաբանութիւնը, շնորհիւ այդ հանգամանքի, յաճախ զգացւել է ազգի ընդնանրութեան կողմից որպէս մի համահայկական հիմնարկութիւն: Այդ նոյնը չի կարելի պնդել Վիեննացի Մխիթարեան միաբանութեան մասին, չնայած որ շատ կէտերում՝ վերջինս գերազանցում է առաջնին: Եւ մինչդեռ Վենետիկի միաբանութեան թէ անունը միանգամայն հանրածանօթ է և թէ պատմութիւնը ուսումնասիր ած — Վիեննացինը, կարելի է ասել, ազգի ահազին մեծամասնութեան համար հանրածանօթ է դաւնում այժմ՝ շնորհիւ Այտնեանի անւան և կատարւած յօբելեանի: Իսկ նորա անցեալը և հութիւնը՝ կարծում ենք գոնէ՝ սակաւ նւիւրւածներին յայտնի կարող է լինել: Գոնէ մի հայերէն աշխատասիրութիւն նորա մասին մեզ չի պատահած տեսնել:

Մխիթարեան ուխտի հիմնողը Մխիթարն էր, ծնւած 1676 թւականին Սեբաստիայում, Փոքր-Ասիայում: 1691-ին սարկաւադ ձեռնազրւելով նա Կ. Պոլսում, Աալաթիա թաղում, մի գորոց հիմնեց, բայց հալածւելով՝ անցաւ այն ժամանակուայ Վենետիկի հանրապետութիւնը, որը նորան Մելոնում տեղ տւեց վանք շինելու: Պապ Կլեմենտ IX հաւանեց նորա հիմնած միաբանութիւնը և նորան թողեց ընտրելու բազիլիս, Օգոստինոս և կամ Բնեպիկոսս սուրբերի կանոնները: Մխիթարը ընտրեց վերջինը և ինքը եղաւ առաջին արքահայրը: Բայց երբ 1715 թւականին պատերազմ ծագեց Վենետիկի հանրապետութեան և Թիւրքիայի մէջ՝ Մխիթարը իւր միաբաններով անցաւ Վենետիկ, ուր և սկսեց նորա իսկական գործունէութիւնը: Եւ այդտեղ նա վախճանեց 1749 թ. ապրիլի 14 (նոր տոմար), 74 տարեկան հասակում⁽¹⁾:

Մխիթարի մահից 25 տարի յետոյ միաբանութեան մի մասը տեղափոխւեց Տրիեստ (Աւստրիայում), ուր և հիմնեց Մխիթարեան մի երկրորդ միաբանութիւն: 1775 թ. Աւստրիայի մեծ կայսրուհի Մարիա Ֆերեզիա գետին տւեց Տրիեստում միաբանութեան համար եկեղեցի շինելու, ուր ժամերգութիւնը պիտի կատարելը հայկ-կաթոլիկաց ծէսով: Ապա միաբանութիւնը իրաւունք ստացաւ գորոց հիմնելու, ուր հայազգի տղաները պիտի ուսանեին կաթոլիկ կրօն՝ թէ հոգևորական և թէ աշխարհական դասակարգերի համար: Տրւած էր նաև իրաւունք միսիոնարներ ուղարկել գէնի Արևելք (Թիւրքիա), սեփական ընտրութեամբ, տպարան հիմնել՝ հայկական և եւրոպական տառերով: Վերջապէս միաբանութեան եկեղեցուն որւեցին ծխական եկեղեցու իրաւունքները: Եւ շուտով Տրիեստ հասաւաւեցին հայկաթոլիկներ, որոնք և եղան այդ եկեղեցու ծխականները:

Միաբանութիւնը սկսեց իւր գործունէութիւնը՝ գորոցական, գիտական և միսիոնարական, և նիւթապէս էլ յառաջդիմութիւններ արաւ: Բայց անա վրայ հասաւ 1810 թւականը, թէ Աւստրիայի համար ընդհանրապէս և թէ Տրիեստի միաբանութեան հա-

⁽¹⁾ Վենետիկի Մխիթարեանների մասին տես Ազ. Երիցեանի ավենետկի Մխիթարեանուք» 162 երես գիրքը, Թլ Գլ. ալա. Մարտիրոսեանի 1883:

մար դժբաղդ տարին։ Պրեսբուրգի հաշտութեան զաշնազրութեամբ Տրիեստը բաժին ընկաւ Նապոլէօն Լին, եւ մինչդեռ Նապոլէօնը Վիեննակի Տիփթարեաններին խնայեց որպէս տաճկա-հպատակների, Տրիեստի միաբանութեան նկատմամբ անխնայ եղաւ. միաբանութեան բազմաթիւ գոյքերը յարքունիս գրաւեցին՝ ընդհանուր միանածիական օրէնքի հիման վրայ, իսկ միաբաններին հրամայւած էր ցրւել։ Արբահացք Աստւածատուր (Ագէոդատ) Պատիկի և միաբանութեան ընդհանուր-պրոկուրատոր (գործակալ) հայ Արիստակէսի փաստաբանութիւնները գուր անցան։

Այդ ժամանակ Տրիեստի միաբանները իրենց աչքը դարձրին Վիեննա, ուր յուսով էին կայսր Նապոլէօն Լի մօտ նոյն հոգանաւորութիւնը գտնելու, ինչ երբեմն, Տրիեստում եղած ժամանակ, Մարիա Թերեզան էր նոցա նւիրում։ Եւ չսխալւեցին։ Վիեննա հասաւ նախ հ. Արիստակէս, և ապա շուտով միաբանութեան ընդհանուր արբահացք Ագէոդատ (Աստւածատուր), որոնք սիրալիր ընդունելութիւն գտան Վիեննացի իշխան-արքեպիսկոպոս կոմա Հոհենվարտի մօտ, որը կանխօրէն կարգադրել էր Սերւիանների հայրերի մօտ առժամանակ բնակւելու։ Նոցա օգնեց նաև սեղանաւոր Ամիգտէր։

Այժմ նոքա մտածեցին Վիեննացում մի եկեղեցի ունենալ, ուր կարող լինէին հայ-կաթոլիկաց արարողութեամբ ժամերգութիւն կատարել և միաբանութիւնը կառավարութիւնից հաստատել տալ։ Հաստատումը կատարեց շատ աւելի արագ, քան յուսալի էր, այն է 27-ն դեկտ. 1810 թ։

Համաձայն հաստատման թղթի՝

Միաբանութիւնը իւր ոչ մի մասով չպիտի պետութեան վրայ ծանրանայ և իւր պահպանութեան համար պիտի օգուէր այս աղբիւրներից։

1. Հայ մանուկներին ուսուցանելուց։
2. Տպարաններց՝ արևելեան և արևմտեան լեզուներով։
3. Նպաստներից՝ Արևելքի միսիոնարների և առանձին բարեգործների կողմից։

1811 թ. յուն. 8-ին կայսերական հրամանով Տիփթարեան միաբանութեան բնակութիւն տրւեց կապուչինների մենաստունը, քաղաքի արարածներից մեկում և նորա հետ կից Աբ. Ուլրիկոս թաղի

եկեղեցում նոքա պիտի կատարէին իբենց ժամերգութիւնը հայ-
կաթոլիկական արարողութեամբ։ Երկու տարի անց՝ թէ բնակարանը
և թէ եկեղեցին շատ չափաւոր գնով Մխիթարեանների սեփակա-
նութիւնը դարձան։ Եկեղեցին իբր սեփականութիւն հանդիսաւոր
կերպով ընդունելու համար, որպէս նաև վիեննացիներին ցոյց տա-
շու համար որ չնայած ծիսակաստրութեան տարբերութեան՝ հա-
ւատով նոցա հետ մի են, — միաբանութեան արբահացրը, զարդար-
ւած եպիսկոպոսական թագով և գաւազանով՝ պատարագ մասու-
ցեց։ Պատարագից յետոց ներս մտան նաև այն չորս միաբանները՝
որոնք Տրիւստից հալածւած՝ Գրաց քաղաքում սպասում էին Վիեն-
նա գնալու թողարկութեան։ Արբահացրը իւր վեց միաբաններով յա-
ջորդ օրը Սերւիտների մենաստանից անցաւ։ Ար. Ռելիկոսի մենաս-
տունը։ Նա ներկայացրեց իւր միաբաններին պապի նւիրակ Սեւե-
րովին և իշխան արքեպիսկոպոսին և չնորհակալութիւն առա-
սցանից։

Առաջին ժամանակները միաբանութիւնը՝ զուրկ միջոցներից՝
օգնութիւն ստացաւ բնակիչներից։

Արբահացրը ապա մոցեց վանական կարգեր, խմբական երգե-
ցողութիւն և ժողովրդի համար եկեղեցական կարգադրութիւններ-
արաւ, թէեւ հայկական ծէսերի համաձայն, բաց և միաժամանակ
այն կարգով ինչպէս գորանից առաջ կապուշիններն ունէին (օրհնու-
թեան սպատարագ, օրհնութիւն և այլն)։ Ապա սկսեցին եկեղեցու-
շինութեան մէջ փոփոխութիւններ անել և տպարանի մասին մտա-
ծել։ Առաջին զիրքը և Սուրբ Աստւածածնի կեանքը տպւեց 1811
թւականին։ Միաժամանակ Կ. Պոլսից չայէլ տղերք կանչւեցին, որ
Արեւլքի համար միսիոնարներ պատրաստելու ընդհատած գործը
նորից սկսեն։

Արբահացր արքեպիսկոպոս Վաստածատուր 85 տարեկան ծերու-
թեան հասած լինելով՝ կամեցաւ հրաժարւել իւր պաշտօնից. բայց միա-
բանների խնդրանօք նա շարունակեց կոչումը կրել, համաձայնու-
թիւն տալով որ գործերի կառավարող ընարւի. այդ տեղապահա-
կան պաշտօնին ընտրւեց միաբանների կողմից ընդհանուր-պրոկուրատոր
(գործակալ) հայր Արիստակէս Ազարեան։

Հայր Արիստակէսի գործունէութիւնը այնքան մեծ եղաւ, որ միաբանութիւնը համարում է նորան երկրորդ հիմնադիր նախ իբր տեղապահ աբբահայր միաբանութեան՝ նորա տւած ուղղութիւնը որոշի եղաւ միաբանութեան ոգու և ապագայի համար: Իբր տեղապահ նա անմիջապէս մոցրեց ներքին ռեֆորմներ: Ընծայարանի (աշակերտարան) շինութիւնը նորոգւեց և աւելի յարմարութիւն ստացաւ բնակութեան համար: Դորան յաջորդեց կանոնաւոր գլուզոցների բացումը Կ. Պոլսում և աւելացաւ միսիոնարների թիւը:

1825 թ. ապրիլի 18-ին վախճանւեց աբբահայր Աստւածատուր Պապիկ և յաջորդ օրը ընտրւեց հ. Արիստակէսի իբր ընդհանուր-աթոռակալ և աւագ, իսկ (միաբանութեան կանոնների համաձայն) մի տարի և մի օր նախորդի մահից յետոց՝ նա եղաւ նորա յաջորդը իբր աբբահայր: Դորանով սկսում է միաբանութեան համար մի նոր դարագլուխ: Արիստակէսի գործունէութիւնը արտասովոր ծաւալ ունեցաւ և ստացաւ մի յայտնի չափով նաև ընդհանուր աւստրիական կարևորութիւն: Նորա մանրամասն կինսագրութիւնը տւել է աւստրիական պալատական խորհրդական ֆոն Նուրուէր:

Ծնորհիւ այն բանի, որ Հռոմաց պապը արքեպիսկոպոսութիւն էր տւել Արէոդատ (Աստւածատուր) Պապիկին՝ վերջինս դորանով իսկ իրաւունք էր ստանում միաբանութեան աշակերտներին ձեռնադրելու: Նոյն աստիճանը և իրաւունքը տրւեց նաև Հ. Արիստակէսին, 1827 թ. յունարին: Արիստակէսը ստացաւ Կեսարիացի արքեպիսկոպոսի տիտղոսը, որը, ի հարկ է, լոկ անւանական տիտղոս է:

Արիստակէսի աբբահայրութեան առաջին տարիներն էր (1827 դեկտ. վերջը և 1828 յունար և փետրւար ամիսներին) որ Կ. Պոլսում պատահեց մի զարհուրելի հալածանքի ողբալի գէսկը, որով 12.000 կաթոլիկ հայեր բռնի ոյժով հարկադրւեցին թողնել Կ. Պոլիսը և Փոքր Ասիայի նահանգներում բնակւել: Այդ այն ժամանակին էր, երբ Եւրոպացոց միացեալ նաւախումբը Օսմանցոց նաւատորմիզը այրեց նաւարինի առաջ և երբ նաև Տաճկաց և ուսւաց մէջ պատերազմը գրգռւելու վրայ էր: Օսմաննեան տէրութիւնը, բարբարոս ինչպէս նա եղել է միշտ, զգուշութեան

միջոց կարծեց հռոմէական հայ-կաթոլիկներին հետացնելը Պոլսից, Եւ բոպացոց հետ նոցա ունեցած յարաբերութիւնների պատճառով։ Եւ որովհետև մինչև այդ ժամանակ հռոմէական հայ կաթոլիկները հայ լուսաւորչականների պատրիարքութեան ներքոց էին, ուստի և Սուլթան Մահմուդի հրամանը նոցա աքսորելու վերաբերմամբ՝ արեց Պօղոս հայոց պատրիարքին, որը, ի նախատինս իւր, և յանպատւութիւն հայ համայնքի՝ տուլթանի առաջ չէր կամեցել երաշխաւոր կանգնել հայ կաթոլիկների համար։

Վիննացի Միհիթարեանների արքահոյը Արիստակէսի համար այդ գեպքով բացւեց գործունէութեան մի նոր ասպարէզ։ Խնդիրը նորա և առհստարակ Վիեննացի հայ վարդապետների համար՝ հայ կաթոլիկներին իսպառ ջոկելն էր հայ լուսաւորչականների համար՝ հայ կաթոլիկներից։ Այդ քաղաքականութեամբ նոքա վարւել էին նաև առաջ, աշխատելով խզել ամեն տեսակ կապ հայ կաթոլիկների և հայ լուսաւորչականների միջեւ, որոնց նոքա, Վիեննացի Միհիթարեանները, նաև աշխատ այլ կերպ չեն անւանում բայց եթէ ո՞չ միաբանուցն եր խօսքով (այսինքն ոչ միաբանող Հռոմի հետ)։ Դեռ ևս 1820 թւականին երբ գժտութիւն ծագեց այդ երկու համայնքների մէջ Կ. Պոլսում, երկու կողմի մեծամեծների ջանքերով և վիճելի կրօնական խնդիրները երկու կողմի գիտնականների լինդհանուր ժողովներում լուծելուց և միութիւնը նորից հաստատելուց յետոյ՝ գարձեալ Վիեննացի հայ վարդապետներն էին որ՝ Կոէջցի և Լիբանանցի հռոմէական կաթոլիկ վարդապետների հետ վահեցին Կ. Պոլսի Ղալաթիա թաղի հայ կաթոլիկների մոլեռնանդութիւնը, մինչ-դեռ Վիեննացոց աւագ եղբայրները՝ Վենետիկի Միհիթարեան վարդապետները՝ աւելի համարա էին միաբանութեան հայ լուսաւորչականների հետ, իրենց հետ ունենալով հռոմէական հայերի զարգացած մասը։

Այս գեպքերը բաւականաչափ յայտնի են հայկական պատմագրութեան 1). բայց կարծում ենք որ յատկապէս Վիեննացի Միհիթարեանների և առանձնապէս նոցա աբբահայր Արիստակէս Ազարեանի կատարած գերը այդ խնդրում հանրածանօթ չէ։ Այդ գերի հետ ծա-

1) Համեմ. Ա. Պալասանեան—Հայոց Պատմ. գլ. 85.

Նօթանում ենք 1887 թւականին միաբանութեան հրատարակած մի գերմաներէն բրոշիւրով, որի կէսը այդ անձնաւորութեանն է նւիրւած 1):

Միաբանութիւնը, դէպքից վախթուն տարի անցած՝ հարկ համարեց այդ բրոշիւրում վկայել, որ, հայ կաթոլիկների Պոլսից աքսորելու ժամանակ՝ 1827-28-ին «Տաճիկները, որոնք նոցա օգնութիւն էին տալիս, աւելի կարեկ ցութիւն ցոյց տւին և մինչեւ անգամ խնդրում էին խնացել հալածւածներին»: Եւ այդ խոսքերը տպագրել են իրենք Մխիթարեանները...

Ոկզում խնացւեցին Մխիթարեան միսիոնարները, իբր աւըստրիական հպատակներ. նոցա թիւլ հինգ էր կ. Պոլսում. բայց յետոյ նոքա ևս պիտի թողնէին քաղաքով՝ ցամաքով Բուխարեստ գնալու իրաւունքով. նոցանից մնաց միայն մէկը, որին իբր իւր խոստվածահօր՝ աւստրիական դեսպանը իւր տանը ընդունեց: Մի ուրիշը, որ Զմիւռնիացումն էր նոցակէս հարկադրւեց քաղաքով թողնել:

Երբ այդ ամեն լուրերը Վիեննա հասան, արքեպիսկոպոս Արիստակէս իւր միաբաններով իսկոյն այդ անցքերի նկարագրութիւնը պատրաստեց՝ մի ազերսապրով միասին՝ պետական կանցլէր իշխան Մետաքրնիխի միջոցով կայսեր ներկայացնելու: Համար: Եւ կայսրը խոստացաւ իւր պաշտպանութիւնը: Ապա Արեստակէսը դիմումն արաւ Սարդինիացի թագաւոր Կարլ Ֆելիքսին. դիմեց նաև կարդինալ Օստինիին որ սա ինդրի պապին հրաւիրելու. բոլոր կաթոլիկ վեհապետներին Բ. Գուան առաջ միջամտելու համար:

Բայց երկար ժամանակ ացդ միջամտութիւնները նպաստակի չհասցըին: Սակայն միաբանութիւնը իւր ձեռքից եկածը անում էր. Արիստակէս արքեպիսկոպոսը խնդրեց իշխ. Մետաքրնիխին, որ Մխիթարեաններից հայր Գրիգոր Ենքերծեանին անցագիր տրւի Պառլ Օրնի վաճառտիկոնի կեղծ անունով, Զմիւռնիս գնալու համար: Այդ-

1) Abrisse der Geschichte der Wiener Mechitharisten-Congregation und ihrer Wirksamkeit aus Anlass des 50-jährigen Jubiläums der Grundsteinlegung zu ihrem neuen Kloster durch Ihre Majestäten Kaiser Ferdinand und Kaiserin Maria Anna, Wien, 1887. Դորանից և օպաւում ենք միաբանութեան վերաբերեալ պատմական անզեկութիւնների համար մինչև 1887 թւականը.

աղիսով Ենքզերձեան կ. Պոլսով գնաց Զմիւռնիա, որտեղից անցաւ Փոքր-Ասիա՝ աքսորւածներին այցելելու համար։ Մի այլ Մխիթարեան, Սերաֆիմ Մերձանձեան, նոյն եղանակով այցելեց Ամասիա, Նոր-Կեսարիա, Սեբաստիա, Կեսարիա և Փոքր-Ասիայի այլ տեղերը։

Միւս կողմից Արիստակէսը աշխատեց և համոզցրեց իշխ. Մետուերնիխին որ Սուլթանի մօտ Աւատրիայի կացեր ցանկութիւնը առաջ տանելու լաւագոյն միջոցն է՝ սուլթանից պահանջել հայ-կաթոլիկական գաւանութեան ազատութիւնը և մի կաթոլիկ պատրիարքի հաստատումը կ. Պոլսում։ Եւ այդ պլանը յաջողւեց։ Հայ-կաթոլիկները պէտք է ստանային մի պրիմատ (գլխաւոր) պապից նշանակած, որին Բ. Դուռը պիտի տար պատրիարքի տիտղոսը և իրաւունքները։ Մետուերնիխը ուղեց որ Արիստակէսը նշանակւի ացդ պաշտոնին։ բայց Արիստակէսը, ասում են Մխիթարեանները, հրաժարեց այդ պատւից և առաջարկեց կ. Պոլսի առաքելական աւագ Անտոն Նուրիջանին։ Բայց որովհետեխնդիրը պապիցն էր կախւած, Արիստակէսը գնաց Հռոմ, որովհետեւ պապը, առանց Արիստակէսի կարծիքն իմանալու, չէր կամենում ացդ խնդիրներում որևէ վճիռ կայացնել։ Հռոմ գնալը եղաւ մարտին 1830 թ., իսկ 11 յուլիսի Անտոն Նուրիջանը պրիմատ նշանակւեց։ Բայց միայն մի քանի տարի յետոց՝ Բ. Դուռը պատրիարքութիւնն հաստատեց։ Երրորդ հայ-կաթոլիկ պատրիարքը կ. Պոլսում Վիեննայի Մխիթարեաններիցն էր (հ. Գրիգոր Ենքզերձեան 1835 թւին)։

Մենք չգիտենք թէ ինչ կ'ասեն մանաւանդ ֆրանսիացիք, որոնք կաթոլիկական խնդիրներում միշտ մեծ զեր են կատարել արևելքում, բայց Վիեննայի Մխիթարեանները հայ կաթոլիկ պատրիարքութիւն հաստատելը կ. Պոլսում ամբողջ ապահովում են իրենց աբբահայր Արիստակէսի ջանքերին և Աւատրիայի ցոյց տւած պաշտպանութեան, ընդունելով առանձին պատրիարքութեան հաստատելը հաւասարազօր կրօնի ազատութեան։

Հռոմ եղած ժամանակ Արիստակէս արքեպ. գործեց պապի առաջ նաև այն մտքով, որ հարթւեն կրօնապեաի և Աւատրիայի մէջ եղած լարւած յարաքերութիւնները։

Ապա Սրիստակէս արքեալ. հիմնեց մի ընկերութիւն՝ «Կաթոլիկական լաւ գրքեր տարածելու ընկերութիւն» անունով, որին անդամ գրւեցին նաև Աւտորիայի կայսրը և կայսերական տան անդամները, Աւտորիայի գրեթէ բոլոր եպիսկոպոսները, որպէս նաև Գերմանիայի վեհապետներից մի քանիսը և եպիսկոպոսներից ումանք և բաւականին թւով քաղաքացիք: Անդամը վճարում էր տարեկան երեք գուլդէն և ստանում տարեկան վեց հատոր գիրք. կրկնակի վճարով՝ մասնակից անդամի տիտղոս էր ստացւում; իսկ 18 գուլդէն վճարով անդամը իրաւոնք էր ստանում գրքեր առաջարկելու: Գլխաւոր զեկավարութիւնը պատկանում էր Մխիթարեան միաբանութեան, որը թէ իւր միջից և թէ ընկերութեան անդամներից պիտի նշանակէր սպագրելու գրքերը որոշող անձերին: Այդ ընկերութիւնը գործեց 20 տարուց աւելի և տպեց աւելի քան 120 հատոր, ունենալով «իբր զեկավար սկզբունք՝ ընթերցողին հաստատել կաթոլիկ հաւատի մէջ»: Եւ համոզւած ենք որ գերմանական և մասնաւորապէս աւստրիական քաղաքակրթութիւնը Վիեննայի Մխիթարեանների գլուխ բերած ընկերութեան այդ երկարամե գործունէութիւնից մի մազաչափ վաստակ չունեցաւ և ով գիտէ որքան նպաստեց տգէտ ժողովրդի խաւարամութեան: Անկասկած է միայն որ Մխիթարեանների սպարաննը իւր շահն էր գտնում «ընթերցողին կաթոլիկ հաւատի մէջ հաստատելու» գործում:

1848 թւականի ազատարար յեղափոխութիւնը, որ Պարիզից սկսելով նաև Վիեննա իւր ահեղագոչ արձագանքը գտաւ՝ մահւան հարւած տւեց այդ ընկերութեան, այնպէս որ յաջորդ տարին ընկերութեան անդամների թիւը այնքան նւազեց, որ խոստացւած հասորները լուս տեսնել չկարողացան. և ընկերութիւնը փակւեց:

Մխիթամանակ միաբանութիւնը աշակերտների բնակութեան աւելի ընդլարձակ տուն շինել տւեց: Իւր ունեցած մի փաքրիկ կայքը վաճառելով՝ նա ձեռք բերաւ մի այլ տեղում ֆրանցիսկեանների երթեմն վանք եղած մի աւերակ, ուր միաբանութիւնը ընդարձակ բնակարան շինեց մի մասունով հանդերձ, ուր 1830 թ-ին անցան մի քանի միաբաններ և աշակերտները: Գովրոցը այդտեղ մնաց մինչև 1838 թ., երբ արդէն պատրաստ եղաւ. նոր շինութիւնը Վիեննայում: Մխաբանութեան համար նոր շինութիւն կառուցանելը

անհրաժեշտ եղաւ շնորհիւ այն բանի որ 1835 թ. մարտին Սուրբ Ալլիխ արւարձանում մի հրդեհից յետոց՝ քաղաքացին վարչութիւնը խուզու զարկից թաղի տները և ամենից անկայուն գտաւ Մխիթարեանների բնակարանը։ Արիստակէս արքեպ., իրեն հարկադրւած տեսաւ նոր շինութեան մասին հոգս քաշել, այդ շինութիւնը պատրաստ եղաւ մէկ ու կէս տարում։ Այդ այն շինութիւնն է, ուր տեղաւորւած է ոյցժմ Վիեննացի Մխիթարեան միաբանութիւնը, եկեղեցիով, դուրսցով, տաղարանով և զրադարանով։ Դա մի երկար շինութիւն է, 75 մետր (106 արշին) երկարութեամբ, երեք յարկանի, իսկ մէջ տեղում հինգ յարկանի և մի թեւով դէպի աշգին։

Արիստակէս արքեպ. ներկայացրեց միաբանութեան ամենահսկատակ խնդիրքը որ շինութեան հիմքը ինքը կայսրը դնի։ Կայսրը, Ֆերդինանդ I, խոստացաւ և գրեց հիմքը 18 հոկտ. 1837 թ. ներկայութեամբ կայսրուհի Մարիա Աննացի, կայսերական տան մի քանի անդամների, սպալինւիրակի, Վիեննացի իշխան-արքեպիսկոպոսի, բազմաթիւ պետական-զինուորական և եկեղեցական բարձր պաշտօնեաների։ Հանդէսը բացեց աբբահայր Արիստակէս արքեպ. լստինական ճառով ուղղած կայսր Ֆերդինանդին, ուր նա թւում էր այն բարիքները, որ ստացել է միաբանութիւնը կայսերական տանից։ Արարողութիւնները կատարելուց յետոց՝ նոցին մեծութիւնները և իշխանական հիւրերը այցելեցին տաղարանը, ուր առաջին բանը որ տաղեց՝ հանդէսին վերաբերեալ ոտանաւոր էր, հեղինակութիւն պրոֆ. Զիլբերտի, երկրորդը՝ մի լատիններէն ոտանաւոր. յաջորդ 24 մամուլները տպեցին մի ազօթք հայ կաթոլիկաց պատրաշից, ուր խնդրում է ամբողջ աշխարհքի բարօրութիւնը, ևս առաւել կաթոլիկ եկեղեցականների, կաթոլիկ թաղաւորների և նոցա զօրքերի, ամեն մի օրինակը ջոկ-ջոկ լեզով։ Հին յունարէն հին հայերէն, լատիններէն, գերմաններէն, բելգիերէն, անգլիերէն, ֆրանսներէն, իտալիերէն, պորտուգալիերէն, վալախներէն, սլաւններէն, օսրբերէն, ռուսներէն, չեխներէն, լիհերէն, իլլիրիերէն, կարնիոլիերէն, ունգարերէն, նոր հայերէն, նոր յունարէն, արաբերէն, պարսկերէն, տաճկերէն և քրդերէն։ Ապա անցան կիաբանների և աշակերանների բնակարանները. յատկապէս զարգարւած մեծ զահլիճում նախաճաշ ընդունեցին, որի ընթացքում միաբանները մի քանի լեզու-

ներով շնորհակալութեան խօսքեր արտասանեցին կայսերական տան ցոչց տւած ողորմածութիւնից Կայսրը Արխատակէս արքեպիսկոպոսին շնորհց աղամանդեաց մատունի և կրծքիսաց, ճարտարապետներին ընծաներ տաեց և ապա հեռացաւ:

1838 թ-ին միաբանութիւնը և աշակերտները տեղափոխւեցին այդ նոր շինութիւնը: Այդ ժամանակւանից սկսում է միաբանութեան գրական գործունեութիւնը: Մի քանի հայերէն գրքեր տպւեցին, 1847 թ-ին սկսեցին հրատարակել «Եւրոպա» անունով քաղաքական և դիտական հայերէն մի շաբաթաթերթ, մասնաւորապէս զրումամբ յայտնի Յակոբ Զելեպի Տիւզեանի: «Եւրոպան» որ 1847 թ. յունիսից սկսեց հրատարակել, շարունակեց իւր գոյսւթիւնը իբր շաբաթաթերթ մինչև 1857 թ., իսկ 1858 թւականից զարձաւ երկշաբաթաթերթ, դադարելով 1863 թ.:

Այդ թերթը անձամբ տեսնելու դէպք չենք ունեցած և նորաբովանդակութիւնից զիտենք միայն այն, ինչ որ յիշւած յօդւածներ կան Հ. Գալէմքերեանի «Պատմութիւն հայ լրագրութեան» երկի մէջ: Մեզ հետաքրքրողը այստեղ խսկապէս նորաբովանդակութիւնը չէ, այլ նորա ոգին, ուղղութիւնը, նորատակը, նորատենդենցիան, որովհետեւ զորանով մենք կ'ուզենայինք ճանաչել Վիեննայի Մխիթարեանների ուղղութիւնը: Հանդամանքը սա է, որ այդ թերթի նորատակի մասին մենք ունինք մեր ձեռքի տակ միաբանութեան հրատարակած և վերը արդէն յիշած գերմաններէն բրոշիւրը, իսկ միւսը՝ նոյն միաբանութեան անդամ Հ. Գալէմքէրեանի երկը: Բայց իրենց հրատարակած թերթի մասին մէկի և միւսի գրածները իրար համեմատելով՝ գալիս ենք այս եզրակացութեան, որ Վիեննայի Մխիթարեանները միենոյն առարկայի մասին իրենց ասելիքը փոխում են՝ նայած թէ ինչ լեզւով են գրում և որ հասարակութեան ականջը պիտի հասնի իրենց ասելիքը: Դէպքը շատ բնորոշ է, որովհետեւ թէ յիշեալ գերմաններէն բրոշիւրը և թէ Հ. Գալէմքէրեանի երկը գրւած են զրեթէ միաժամանակ. մէկը 1887 թւականին, միւսը՝ 1887—90 թւականներին Բայց աեսէք, խնդրեմ: գերմաններէնում Վիեննայի հայկաթոլիկ միաբանութիւնը գրում է՝

« Թերթի աենդէնցն (ձգտումն) էր՝ երեսյթները աւստրիական,

« այժ՝ ընդհանուր գերմանական մոքով պարզաբանել և աւստրիական ազգեցութեանը արևելքում նպաստել ինչպէս որ «ուրիշ թերթեր միոք ունին ռուսական, անդլիական և ֆրանսիական ազգեցութեան համար գործելու» (Die Tendenz des Blattes war, die Erscheinungen in österreichischem, ja in allgemein deutschem Sinne darzustellen und den österreichischen Einflus in dem Orient zu fördern, wie es andere Blätter darauf anlegen, für russischen, englischen und französischen Einfluss zu wirken). Այդ՝ մէկ կողմից: «Խոկ միւս կողմից թերթը պէտք է հայ ազգը գիտականապէս ուսուցանէր և ազգային պատմութիւնը, լեզւագիտութիւնը և գրականութիւնը մշակէր»:

Ուրեմն միաբանութեան ասելով՝ քաղաքական «Եւրոպա» շաբաթաթերթը ունէր քաղաքական տեսդենց աւստրիական-գերմանական ձգտումներով; Այդ նա գրաւորապէս վկայում էր 1887 թւականին, երբ գերմաներէն էր գրում՝ գլխաւորապէս աւստրիացիների համար:

Բայց տեսէք որ, երբ նոյն միաբանութիւնը կամ նորա ամենագործն անդամներից մէկը, որը եթէ ինքը մենակ չէ զրել «Ա.իեննայի Սխիթարեան միաբանութեան համառօտ պատմութիւնը» գերմաներէն լեզով աւստրիացիների համար, զէթ աշխատակցել է, նոյն այդ թերթի մասին ահա թէ ինչ էր գրում.

« Քաղաքական Եւրոպացի (շաբաթաթերթի) ջանքն էր « իւր լուրեն ստոյգ ազբիւրներէ տանուլ, և քաղաքական դիսլաց « շարունակեալ պատմութիւնն այնպէս իրանու կապել, որ պատմական ամբողջ մը կազմէ, և առանց մէկ կամ միւս կողմակցութեան միտելու՝ իրաց վիճակն ինչպէս որ է « ներկայացնէ»: (Տես Հ. Գալէմքէրեանի պատմ. հայ լրագր. էջ 105—106):

Այսպիսով, ուրեմն, Վիեննայի Սխիթարեանները աւստրիացիներին յայտնում են՝ մեր թերթը ձեր՝ աւստրիական՝ քաղաքականութեան բերան էր, իսկ մեզ՝ հայերիս՝ թէ մեր թերթը ոչ ոքի բերան չէր, և մի անկողմնապահ քաղաքական լրագիր էր ...

Այժմ անցնենք:

1848 թւականը խանգարմունք մացրեց Վիեննայի Սխիթա-

բեանների հանգստութեան մէջ. չեղափոխական տարի էր: Գիշերը գէպի 9-ը ապրիլի միաբանութեան եկեղեցու առաջ ճիւաղացին մուզիկ (գերմաներէն ասում են՝ կատալյին մուզիկ-Katzen-musik) սարքեցին վիեննացիք: Մի քանիսները նոյն իսկ ներս մոտան աբբահացը Արիստօնկէսի սենեակը: Մամուլի մէջ յարձակողական յօդւածներ գրւեցին միաբանութեան իրք օտարների դէմ: Տպարանը պահպանւում էր աղջացին (աս սորբական) պահպաններով: Պատրաստում էին մի մէծ ցոյց անելու, որ և եղաւ: Ամբոխը ջանաց տպարանը ներս մտնել, որի պատճառով գիշերւայ ժամ 12-ին եկեղեցու զանգակը հարեցին, աղջացին պահպանները առաջ եկան և ամբոխը ցրւեցին: Այնու ամենայնիւ տպարանը ստիպւեցին առժամանակ փակել: Միաբանութիւնը դիմումներ արաւ կառավարութեանը՝ խնդրելով որ միաբաններին և միաբանութեան գոյքը պաշտպանելու համար միջոցներ ձեռք առնելին: Կառավարութիւնը վստահացրեց, բայց և խորհուրդ տւեց որ միաբանութիւնը տպարան ունենալու իրաւունքի մասին յօդւածներ տպի թերթերում: Միաբանութիւնը ապրիլի 18-ին մի թուռցիկ թերթ տպեց «Վիեննայի քաղաքացիներին և բնակիչներին» վերնադրով, որի մէջ հարկաւոր բացատրութիւնները տւեց միաբանութիւնը, որից յետոյնա ացլ ևս հանգիստ մնաց:

Ապա Արիստօնկէս արքեպ. աշխատեց վերջապէս գլուխ բերել մի գործ, որին միաբանութիւնը վաղուց ձգտում էր, դա էր՝ միաբանութեան կանոնագրութեան հաստատութիւնը Հւոսմի պապի կողմից: Հանգամանքը այս էր որ Վիեննայի Միիթարեան միաբանութիւնը թէեւ ճանաչւած էր պապից և հետևում էր միաբանութեան հիմնադիր Միիթարի կանոններին, բայց մի հաստատ և պապից թույլատրած սահմանադրութիւնը չունէր: Միաբանական ժողովը մշակեց մի այբապիսի կանոնադրութիւն, որի հաստատել տպուհամար Արիստօնկէս արքեպ. Ազարեան նոյն 1850 թ. գնաց Հուոմ (որ արգէն հինգերորդ անդամ Հուոմ ուղեկորւելն էր) և ներկայացրեց ի քննութիւն Պրոպագանդայի կարգինալների: Դեկտեմբերի 8-ին 1851 թ. պապը ընդունեց կանոնադրութիւնը, որի համար կոնդակ տրւեց 23 յուն. 1852 թ.:

Մենք ի մօտոյ ծանօթ չենք այդ կանոնադրութեանը, և թէեւ

մեր ազբիւրը յայտնում է թէ նա հիմնւած էր Մխիթարի կանոնների կամ հրահանգների (Vorschrift), բայց հիմք կաց կարծելու, որ նա ուրիշ տարրեր ևս ընդունած է իր մէջ: Զէ որ յայտնի է թէ ինչ դիրք էր բռնել նոյն Արիստակէս Ազարեան՝ Վենետիկի Մխիթարեանների վերաբերմամբ՝ մատնելով սոցա իբր համակրողների հայ լուսաւորչական եկեղեցու?

Աւելցնենք նաև, որ այդ 1852 թւականի կանոնադրութիւնը պարունակում էր միայն հիմնական կանոնները, որովհետեւ, ինչպէս պիտի տեսնենք ներքեւ, երեսուն տարի անց՝ հարկ եղաւ մի աւելի մանրամասն կանոնադրութիւն մշակել և հաստատել տալ:

Այդ ժամանսակ Արիստակէսի առողջութիւնը արգեն վատացել էր: 1851-ին նա պէտք է վիրաբուժական գործողութիւնների ենթարկեր. հիւանդութիւնը հետևանք էր զեռ ևս 1843-ին պատահած մի դէպքի, երբ նա, բարձրացած աթոսի վրայ իւր պատի ժամացոցը լարելու համար՝ վայր էր ընկել, գիւղչելսվ մի արկղի տուր եղբին: Տարիների ընթացքում ստացած վերքը զարդացել էր այն աստիճան, որ 1851-ին մի քանի ամիսների ընթացքում երեսունից աւելի վիրաբուժական գործողութիւններ կատարւեցին, յաջողակ հետևանքներով. նա առողջացաւ 13 ամիս հիւանդութիւն քաշելուց յետոց:

1852 թ. մայիսի 27-ին միաբանութիւնը տօնեց իւր աբբահօր արքեպիսկոպոսութեան 25-ամեակը, իսկ 2 փետր. 1854 թ. աւելի մեծ հանդիսաւ որութեամբ տօնեց նորա քահանայութեան 50-ամեակը, որ օրը յօբելեարը պատարագ մատուցեց, որից յետոց ներկայ եղողները յօբելեարի սենհակները գնացին շնորհաւորութիւններ անելու համար: Այդ ժամանսակ կայսեր ադիւտանուը պալատական կառքի մէջ եկաւ և յօբելեարին մատուցեց Երկաթեայ թագի մեծ խաչի նշանները: Միաբանութիւնը այդ օրը ճաշ տւեց, որին մասնակցեցին 62 հրաւիրած անձինք, որոնց մէջ էին պապիտ պլոնունցիոնը, Վիեննայի իշխան արքեպիսկոպոսը, մի քանի այլ բարձրաստիճան եկեղեցականներ, մինիստրներից հինգ հոգի, երկու գեներալ, Ստորին Աւստրիայի կայսերական փոխանորդը, Վիեննայի քաղաքագլուխը և մի քանի այլ բարձրաստիճան անձինք: Ճաշից յետոց աշակերտները ուսանաւորներ կարդացին տասնուշորս լեզուներով

և այլն։ Յաջորդ կիւրակին կայսրը ուղարկեց յօքելեարին Երկաթեաց Թագի օրդէնի ոսկեայ վզնոցը, իսկ փետրւ。 18-ին Արիստակէս Ազարեան նշանակւեց իսկական գաղտնի խորհրդական։

1855 թ. մայիսի 6-ին Արիստակէս արքեպ. վախճանեցր Կատարւած արարողութիւններից ցիշենք որ մատուցած պատարագներից առաջին օրը կատարւեց լատինական ծէսով, երկրորդ օրը հայ-կաթողիկական ծէսով, երրորդ օրը յաջ-կաթոլիկական ծէսով։

Յաւակցութեան յայտարարութիւններից Մխիթարեանները առանձին ցիշատակում են Միլանի արքեպիսկոպոսինը, որ և մէնք առաջ կը բերենք, դանելով այն բնորոշ Վիեննացի Մխիթարեանների համար։

«Պայծառափայլ միաբանութիւնը, զրում էր Միլանի արքեպ. և նորա (Արիստակէս արքեպ. Ազարեանի) մէջ կորցրեց սիրող և սիրւած հօր, երկրորդ Մխիթարին։ Եկեղեցական ուխտերը ունին և նորա մէջ յարգելու վարպետին և վանական պարտաճանաչութեան օրինակին։ աշխարհական եկեղեցականները և եպիսկոպոսական գասը՝ ես անդուռ աստիճաննաւորին, իսկաթողիկ հաւատի բարձրամիտ տարածողին և ախոյեանին։ քաղաքացիական հասարակութիւնը և նորա իսկական շահների (?) խորահայեաց պաշտպանին։ կայսերական տունը՝ տւելի քան նշանաւոր բարձրաստիճաննաւորին, յարգւած խորհրդականին ու բարեկամին։ բոլոր լաւ մարդիկ գերջապահ և օրինակին։ — նա շարունակում է ասլրել իւր գործերի մէջ, առաւելապէս այս միաբանութեան մէջ, որը նորա ամենաքնքոյց խնամքների առորդիկան էր և որին նա ներշնչել է իւր ողին։»

Եւ աս ճշմարիտ է։ Արիստակէս եղա. Ազարեան կաթոլիկ հաւատի տարածող և ախոյեան եղաւ և իւր այդ ողին նա ներշնչեց Վիեննացի Մխիթարեաններին։ Ճշմարիտ է նաև այն, որ նա եղաւ մի երկրորդ Մխիթար նոյա համար, այս մոքով, որ նա միաբանութեան հիմնադիր Մխիթարին մոռացնել տւեց, Սեբաստացի Մխիթարի ոգու տեղ զնելով մի այլ այն հայ մարդուն խորթ՝ ողին Մխիթարը նպաստակ չէր դրել կաթոլիկութեան քարոզչութիւնը, այլ հայ ազգի լուսաւորելը և նորա գրականութեան ծաղկեցնելը։

Արիստակէսը իւր բարձր հեղինակութիւնը գործ զրեց հայկաթուլիկներին իսպառ անջատելու հայ ազգի աւելի սուար լուսաւորչական մասից և, իւր անհաշտ թշնամութեամբ դէպի աւելի հայտաբեր ճանաչւած վենետիկցիները, հասունեանների հետ միասին այնտեղը հասցրեց Վենետիկի միաբանութեանը, որ ոչ միայն սովորեց սորա արբահայր Գէորգ Հիւրմիւղեանին հրատարակել Հայաստանեաց եկեղեցին իբր «հերձւածող և հերետիկոս», այլ և ընդունել տալ Վենետիկում Յիսուսեան (եղւիտների) ուխտի կանոնադրութիւնը:

Արիստակէս Ազարեանի յաջորդ ընտրւեց Յակոբ Պողածի (ծընւած Փոքր-Ասիայի Էնկիւրէ քաղաքում 1808-ին և ընդունած միաբանութեան մէջ 1826-ին); նոյն տարին պատ Պիոս IX նորան նշանակեց անւանական (տիտուլար) արքեպիսկոպոս Կեսարիայի; Յակոբ Պողածին չունէր իւր նախորդի ձեռնարկու ոգին; Նորա արբահայրութեան ժամանակ չորս անգամ միաբանական ընդհանուր ժողովներ կայացան (1861-ին, 1867-ին, 1875-ին և 1882-ին), ուր շատ վճիռներ կայացան մանաւանդ միսիոնարութեան վերաբերեալ գործերի մասին. 1882 թ-ին նա մշակեց մի աւելի ընդարձակ ուրագիծ կանոնադրութեան, որից երկու տարի յետոյ Վիեննայի Միհիթարեանների այժմեան կանոնադրութիւնը առաջ եկաւ (1852-ին պատի հաստատած կանոնադրութիւնը պարունակում էր միայն հիմնական յօդւածները):

Միհիթարեանների ունեցած վանքերը և միսիոնարական տների գործունէութիւնը բարձրացաւ և նոր միսիոնարութիւններ հաստատուեցին Արևելքում և Արևմուռքում: Նոցանից մի քանիսում՝ Կ. Պոլսում, Զմիւռնիայում և Տրիեստում՝ հիմնեցին միջնակարդ դպրոցներ (գիմնազ) և կրթական տներ՝ տղաների համար: Տրիեստում դպրոց հիմնելուց երկու տարի յետոյ՝ մի նոր եկեղեցի շինւեց: 1860 թւականին նոյն այդ կրթական դպրոցը աւատրիական կրթական մինիստրութիւնից ճանաչւեց իբր հասարակական (միջնակարդ) դպրոց. բայց 1875-ին ստիպւած եղան փակել թէ պետական և համայնական դպրոցների մրցման և թէ նիւթակուն մի-

Հոցների սղութեան պատճառով, որ հետեանք էր 1873 թւականի ընդհանուր տնտեսական տագնապի:

Յակոբ արքեալ. Պողամին մասնակցեց 1869 թւականին հայ կաթոլիկների պատրիարք Հասունի նախագահութեամբ կազմւած ժողովին և թէ 1870-ին Հոռոմում պապի կազմած ժողովին, ուր պապի անսխալականութեան զաւանանքը հռչակւեց: Երկու ժողովներում էր Պողամին՝ իբր հաւատարիմ ներկայացուցիչ Վիեննայի Մխաթարեանների՝ հետեւեց հմոռայական կաթոլիկ Պրոկագանդացի թելադրութիւններին:

Մխաթանութեան գործունէութիւնը խոչնդունների հանդիպեց սկսած 1870 թւականից: Այդ տարին Կ. Պոլսի Պերա թաղը կործանող մեծ հրդեհը ձարակեց նաև Մխիթարեան միաբանութեան առնը, և որովհետեւ կաթոլիկ հայերի մեծամասնութիւնը՝ հակահատուննեանները՝ բնականաբար դէմ էին Վիեննայի միաբանութեան, ուստի և օգնութեան վրայ այլ ևս յոյս դնել չէին կարող: Նաև Վիեննայի եկեղեցու առաստաղը քայլացւած լինելով՝ 1871-ին քաղաքացին վարչութիւնը արգելեց ժամերդութիւն կառարել: Պողամին կարգադրեց ամբողջ եկեղեցին և կից շինութիւնները քանդել և նորից շինել: Հենց այդ ժամանակները Վիեննայում սկսւեց շինութիւններ կառուցանելու այն տենդը, որ 1873-ին սարսափելի կրախ յառաջացրեց: Եինութեանց նիւթերի գները եռապատիկ թանկացան, քաղաքացին հարկերը բարձրացան, իսկ մի երկու տարի յետոյ պատահեց Թիւրքիայի Ֆինանսական սնանկութիւնը, — այդ բոլորը աւերիչ հետեւանքներ ունեցաւ միաբանութեան ֆինանսների և զործունէութեան վրայ: Մխաթանութիւնը հարկադրւած տեսաւ վաճառել նախ Վիեննայում ունեցած իւր դրավաճառատունը, իսկ յետոյ 1874 թ-ին նաև տաղարանը, պահպաննելով իրաւունք ունենալու մի տպարան և գրաշարական բաժանմունք՝ իւր աշխատասիրութիւնները հայերէն և տաճկերէն լեզուներով հրատարակելու համար: 1874-ին պատրաստ էր ամենաաննպաստ հանդամանքներում շինւած նոր եկեղեցին:

Մխաթանութեան պարտքերի մի մասը վճարեցին կողմնակի անձեր:

Մենք արդէն ասացինք, որ՝ միանդամայն համաձայն Վիեն-

նայ։ Միսիթարեանների աւանդութեան՝ աբբահայր Յակոբ Պողածին Հասունի կողմն էր, որ ասել է թէ հայ-կաթոլիկութիւնը ամբողջապէս առանց այլ և այլութեան Հռոմի պապին ենթարկելու քաղաքականութեան կողմն էր։ Եւ Վիեննայի Միսիթարեանները այժմ էլ պարծանքով ցիշատակում են, որ երբ աքսորւած Հասուն պատրիարքը 1875 թւականին Վիեննա եկաւ, նա վայր իջաւ այդ միաբանութեան վանքում և որ իրենց աբբահայրը՝ Հասունի հետ միասին՝ կայսր Ֆրանց-Յովաչիմի մօտ քայլեր արաւ Հասունի օգտին և որ շուտով վերջինս Կ. Պոլիս վերադարձաւ ու նւազառնեազ իւր բոլոր նախկին իրաւունքները վերստին ստացաւ, ի մեծ միսիթարութիւն պապականների և ի մաս ընդհանուր հայկական շահերի։

Պողածին նոյնակէս իւր յոթելեանն ունեցու, թէև առանց մեծ հանդիսաւորութեան, միասին Էմանուէլ Դիրւիշեան վարդապետի հետ նա տօնեց իւր 50-ամեայ քահանայութեան և 25-ամեայ եպիսկոպոսութեան յօթելեանը՝ իւր միաբանակիցների նեղ շրջանում։

1882 և 1883 թւականներին միաբանութեան գործերով Պողածին գնաց Հռոմ։ Վերադառնալուց յետոյ 1883 թ. հոկտեմբերի 1-ին վախճանւեց։

Մինչև նոր աբբահօր ընտրութիւնը գործերը կառավարեց Հ. Տիմօթէոս Հիմոմեան։ 1884 թ. սկզբում միաբանութիւնը, թույլտութեամբ ներքին գործոց մինիստրի, դիմումն արաւ ամբողջ Աւստրօ-Աւնգարիայի բնակիչներին՝ պարագերից ազատելու համար միաբանութեան Կ. Պոլսում ունեցած միսսիացի հիմնարկութիւնը։ Այդ աստիճան ուրեմն կորցրել էր այդ միաբանութիւնը Թիւրքիայի հայ-կաթոլիկների համակրութիւնը։ Աւստրիական կայսրը և ուրիշներ օգնութեան հասան, և պարտքը վճարւեց։ Միևնույն ժամանակ Հռոմից ստացւեց միաբանութեան նոր ընդարձակ կանոնագրութիւնը, հրամանով որ յուլիսին 1884 թ. միաբանական ժողով գումարւի՝ աբբահայր ընտրելու համար։ Ժողովը կայացաւ պապի պատւիրակ Վաննուակլի արքեպիսկոպոսի նախագահութեամբ, կարդացւեց կանոնագրութիւնը լսաբիներէն և

Հայերէն լեզուներով և ապա ընտրութիւն կառարւեց։ Ընտրւեց
հ. Վարդան Եստեգար 12 յուլիսի 1884 թ. ձայների երկուերրորդա-
կան մեծամասնութեամբ։ Ապա պատ 1.էօ XIII նշանակեց նորան
անւանական-արքեպիսկոպոս Սելիմբրիայի։ Նորա աբբահայրութիւնը
աևեց ընդամենը երկու տարի։ Ցիշենք որ իւր ընտրութիւնից
յետոյ շուտով նա ճանապարհորդութիւն արաւ դէպի Զիբենբիւր-
գէնի քաղաքները (Սամոշույւար, Կլաուզէնբուրգ, Եղիսաբէթպոլիս),
ապա զնաց Կ. Պոլիս, Զմիւռնիա, Ազգին և Տրիեստ, այցելելու հա-
մար միաբանութեան հիմնարկութիւնները. մեպաեմբերին վերադար-
ձաւ Վիեննա, իսկ յաջորդ 1886 թ. գնաց Հռոմ, որտեղից վերա-
դաւնալիս հիւանդացաւ և վախճանեց Տրիեստում 23 յունիսի,
43 տարեկան հասակում։ Դիակը բերւեց Վիեննա։ Վարդան Եզրի-
գարեանը միաբանութեան ամենակարևոր ոյժերիցն էր։

Երկու ամիս յետոյ 18 օգոստոսի միաբանական ժողովը ընտրեց
աբբահայր հ. Արսէն Այտըն ին անին գրեթէ միաձայն։ Պապը զորա-
նից յետոյ նորան տւեց Սալամինայի անւանական-արքեպիսկոպոսի
տիտղոսը, մարտ ամսին 1887 թ. հանդիսաւոր ձեռնադրութիւնը
կատարեց Կ. Պոլսի հայ-կաթոլիկների պատրիարք Ստեփան Ազարեան։

Ներկայ 1895 թ. հոկտեմբերի 22-ին (նոր տոմսրով նոյ. 3-ին)
հանդիսաւոր կերպով տօնւեց հ. Այտնեանի յիսունամեաց քահանայու-
թեան յօրելեանը, որով տօնւում էր նաև նորա գրական գիտական
գործունէութիւնը։ Եւ արդարեւ, հայր Այտնեանը իւր բոլոր նա-
խորդների մէջ միակն է որ կարող է պարձենալ գրական-գիտական
վաստակներով։ Այդ յօրելեանի առիթով միաբաններից հ. Գաբրիէլ
վ. Մէնէվիշեան մի տետր հրատարակեց, ուր մի ամփոփ և ջերմ ոճով
տեսութիւն է անուում հ. Այտնեանի կեանքի և գրական գործունէ-
ութեան մասին¹⁾։

Հ. Այտնեան ծնւեց 1825 թ. յուն. 7/19 Կ. Պոլսում։ Երբ
1827—28-ին Պոլսի հայ-կաթոլիկները աքսորւեցին դէպի Փոքր-

¹⁾ Կիակատար վերնագիրը տես Մուրճ. № 11, լուրերի մէջ (Նոր
ստուցած դրաբեր)։

Ասիա՝ Այտնեանի ծնողները ստիպւեցին հեւանալ և իրենց երեք տարեկան երեխացի հետ՝ մատնւած ձմեռւայ ձիւն ու բռւքին՝ ուղևորեցին Անգորա, և ապա 1830-ին վերադարձան Պոլիս։ Այդտեղ նորան տէին նախ Վենետիկի միաբանութեան գալրոցը, ուր պատահած հրդեհի պատճառով՝ վեցամեաց երեխան անցաւ Վիեննական հայրի Ղալաթիացի գալրոցը և ապա 1833 թ. նոյն միաբանութեան Պերացի վարժարանը մտաւ, իսկ 1835 թւականի մայիսին, ճանաշւած արդէն իբր շատ ուշիմ աշակերտ՝ տասը տարեկան հասակում Վիեննա ուղարկւեց՝ միաբանութեան մայր վարժարանը։ Այդտեղ նա ցոյց տւեց սէր և տաղանդ լեզուների մէջ։ Հայերէնի ու լատիներէնի ծանօթութեամբ աւելացաւ ծանօթութիւնը իտալերէնին, ֆրանսերէնին, տաճկերէնին, արաբերէնին, անգլիերէնին, գերմաններէնին։ միաժամանակ նա անցաւ գալրոցում աւանդուղ այլ առարկանները։ 17 տարեկան նա ուխտով հրաժարւեց աշխարհականութիւնից և սկսաւ եկեղեցական ուսումները։ 18 տարեկան հասակում կատարած մի թարգմանութիւնը տպագրւեց մի քանի տարի յետոյ, որ և ներկայացնում է նորա հայկաբանութեան առաջին նախափորձը։ Դորանից առաջ նա գլեց իբր նախափորձ և ասոբաշխական տախտակ մը մօլորակաց դրից։ 1845 թ. նոյեմբ. 1 ըստ նոր տոմարի՝ քահանաց ձեռնադրւեց։

Երիտասարդ վարդապետը կարգում էր իւր ձեռքն ընկնող ամեն գրաբար գիրք կամ ձեռագիր։ Այդ ժամանակները գրաբարի ուսումը երկու ճիւղի էր սկսում բաժանւել—դասական գրաբար հայերէնի և յետին դարերի գրաբար հայերէնի։ Ճանաշել և դորանով իսկ ջոկել զուտ, մաքուր, դասական ոսկեգարեան գրաբարը՝ ընդհանրապէս գրաբար գրած հայերէնից—այդ էր խնդիրը, որի վրայ աշխատել էին գլխաւորապէս Գարագաշ և Գաթըրմեան։ Այտնեան եկաւ շարունակելու այդ գործը և ոսկեգարեան գրաբարի նմուշը տւեց նա 1845 թ.-ին Յիցերոնի Միլօի ճառի թարգմանութիւնով։

Հմտութիւն ձեռք բերած լինելով ձեւագրեր կարգալում՝ Աղաթանգեղոսի անընթեռնելի գրերը առաջին անգամ նա կարդաց։ Իսկ նորա հմտութիւնը հայերէնում դրդեց Արիստակես աբբահօրը, որ Այտնեան նոր կոտակարանի քննութիւն կատարի։ Հա-

մեմատելով ամեն ծանօթ ձնուագրերի հետ և նշանակելով տարբերութիւնները, որ և կատարեց չորս ամսում:

1847 թ. (հայ.-կաթոլիկ) Յակոբ Զելեսի Տիւզեանցի հիւր գալը վանքին՝ պատճառ եղաւ որ 1851-ին Այտնեան արաբերէն մի մեծ երկը բագունդ շինեց, որ մնաց ձեռագիր, իսկ 1848-ին արդէն կազմել էր նոյնը հայերէն տառերով, որից մի քանի հատ միայն տպագրւեց չորս գոյներով՝ մեծ մաքրութեամբ, որ և դրւատւեց ժամանակի լրագիրներից:

Միաբանութեան և այլ գործերով տասը տարի Կ. Պոլիս, Զմիւնիա, Այդին և Պարիզ, 1862-ին էլ Վենետիկի Ս. Ղազարի վանքը շրջելուց յետոյ՝ Այտնեան մտադրւեց հրատարակել տարիներից ի վեր սկսած իւր աշխատութիւնը որ և մնաց նորա ամենակարեւոր գրական-գիտական գործը,—«Քննական քերականութիւն» արդի հայերէն լեզւի հանրածանօթ գործը որ պատրաստ լինելով 1865-ին և լոյս տեսնելով 1866-ին՝ հիացք է պատճառում նուև այժմ՝ երեսուն տարի անցնելուց յետոյ:

Աշխարհաբար լեզւի այդ քերականութիւնը գրելու համար նորան հարկաւոր էր բուն ժողովրդական լեզւի մօտաւոր ծանօթութիւն, որ և նա ձեռք բերեց զրամագէտ Հ. Կղեմէս Սիպիլեանի հետ ճանապարհորդելով Փոքր-Ասիա. բայց այդ ճամբորգութիւնը, որ պիտի շարունակւէր մի քանի տարի և որ պիտի ընդգրկէր Տաճկա-Հայաստանը և թէ Կովկասը, խափանւեց Արխատակէս աբբահօր հիւանդութեան ու մահւան պատճառով։ Իսկ Յակոբ Պողաճիի արբահայրութիւնը երեխ այլ ևս նապաստաւոր չէր այլպիսի գիտական ուսումնասիրութիւնների համար։

Այտնեանի «Քննական քերականութիւնը» մի գլուխ գործոց է հայերէնագիտութեան, և իբր այդպիսին՝ նա մնայուն նշանակութիւն ունի, չնայած որ, որքան մենք դատել կարող ենք, աշխարհաբարի ներկայիս շինւածքը Այտնեանի «Քննականին» չէ պարտական։ Եւ մեր խօսքը ի հարկէ արեմտեան հայոց գրական լեզւին է վերաբերում, որի զարգացնողներից շատերը Այտնեանին միայն անունով են ճանամելք ձիշդ է և այս, որ Այտնեանի լեզւի և ներկայիս արեմտեան գրական լեզւի մէջ մասնական տարբերութիւններ կան, մասնաւանդ հողովների մէջ, ուր Այտնեան զիջողութիւններ է արել

գրաբարին, որ արեւմտեան հայերէնով լաւադոյն զբողները այսօր չեն ընդունում, մինչդեռ իւր համաձայնութեան և փրազների շինւածքի մէջ զուտ աշխարհաբար է¹⁾: Այդ պատճառով և ճիշդ է զատում հ. Մենելիշեան, ասելով որ որքան արեւմտեան աշխարհաբարը պոփոխութեան ենթարկել ուզենք՝ պիտի կրէ միշտ գոնէ յընդհանուրն՝ 1866-ի նկարագիրն»:

Ճանաչւած լինելով իբրև մաքուր հայերէն գրաբարի բարձր դընահատողներից մին՝ իւր ժամանակին զարմանալի է թւել որ Մխիթարեաններից մէկը պիտի հանդէս դուրս գար մաքուր աշխարհաբարի կանոնաւորութիւնը աղացուցանելու համար իւր ժամանակին, երբ աշխարհաբարի գործածութիւնը գեռ ևս խնդիրների շարքումն էր շատ շատերի համար, մանաւանդ արեւմտեան հայերի մէջ, և երբ նոյն իսկ աշխարհաբար գրելու յաւակնութիւն ունեցողները գրաբար գրողներից միայն զանազան աստիճաններով էին հեռու, մի այզպիսի ժամանակ գասական գրաբարի ներկացացուցիչ մի կենտրոնավայրում, որպիսին Մխիթարեանների երկու միաբանութիւններն են, կանոնաւոր աշխարհաբարի անհրաժեշտութեան փոռաւոր խոստովանանքը և ջատագովութիւնը արդարեւ երեսով էր, և աւելի քան երեսով—դա մի գարադլուխ էր, որովհետեւ այդ խոստովանութեան և ջատագովութեան յայտագիրը Այտնեանի «Քննական քերականութեան» պիս թանգարժէք ցիշատակարանն էր:

Այս ամենից չպէտք է եղբակացնեն թէ Այտնեան գորանով մէջք շուռ տւեց գրաբարին: Ընդհակառակը՝ զորանով նորա հիացմունքը գրաբարից ոչ մի կերպ չնսեմացաւ. նորա ասածը այս էր ինչ բոլոր ողջամիտ մարդիկ սինդում էին, այն է որ մեր այժմեան գրական լեզուն պիտի լինի աշխարհաբարը. որ գրաբարը իբր սովորական լեզու անկարելի պիտի լինի ժողովրդի բերանը դնել: Այդ իսկ հիման վրայ նա չի ալահանջում որ ամեն ոք գրաբար գրել գիտենաց, թէեւ ցանկալի է համարում որ ամենքը հասկանան գրաբարը: Համաձայն այդ հայեացքին՝ նա պահանջում էր որ նաև աշխարհաբար սովորյցւի և ապա միայն գրաբարը:

¹⁾ Համեմատել, օրինակ, Արշակ Զոպանեանի վկանութիւնը Հայութիւնի լոք լրագրի համարում առ. 13 նույնմբերի:

Հ. Այսնեան գործել է նաև որպէս ուսուցիչ, տեսուչ, նկարիչ, արևեստագէտ, երաժշտագէտ և, իւր աբբահայրութեան միջոցին՝ նաև իբր ամսաթերթի զեկավար:

Իբր դասառու նա առաջին անգամ գործեց Զմիւռնիայում 1851 թ., ապա 1854-ին Վիեննայի վանքի վարժարանում, 1855 կրկին Զմիւռնիայում, 1856-ին իբր նոյն քաղաքի աւստրիական հիւստառոսի որդոց դաստիարակ և դասառու. 1867-ին նշանակւեց վարիչ Կ. Պոլսի Մխիթարեան վարժարանի, որ և աւեց մինչև 1876 թ.: Իսկ այդ տարւանից մինչ աբբահայր ընտրվելը 1886 թ.-ին՝ նա վարեց զանազան միաբանական պաշտօններ և 1883-ից սկսած իբր մայր վանքի մեծաւոր, մինչև 1886 թ., երբ աբբահայր ընտրվեց:

Այտնեանի իբր մանկավարժական գործիչի մասին մենք չենք կամենալ խօսել, զեկավարւելով հ. Մենեվիշեանի գրքոյկով. և դորա պարզ պատճառն այն է, որ Վիեննայի Մխիթարեանների գրչի տակ, երբ հարկաւոր է իրենց օգտին օրինակներ բերել՝ (այս գեղքում՝ Կ. Պոլսի վարժարանից գւրս եկածները) ամեն մի հասարակ գրող դառնում է արդէն մի խոշոր մեծութիւն:

Աւելի ակներե է Այտնեանի վաստակը եկեղեցական ձայնագրութեան համար: Խնդիրը այս էր որ հայ եկեղեցական երգերը մաքրեն օտարամուտ յաւելւածներից: Այտնեան այդ խնդրով զբաղւել սկսեց 1854-ին, իսկ 1855-ին նա ձայնագրեց եւրոպական նոտաններով. ապա 1876 թ.-ին պրոֆեսոր Վայսի օգնութեամբ նա զբաղւեց իւր ձայնագրութեան սրբագրութիւններով, որ և փորձի համար վիմագրել տւեց թէ Զայնաւոր Պատագագի եղանակները, իւր վարիացիաններով, և թէ շարականներից գլխաւորները, որոնց մէջ աւելի ակներե էր տեսնուում յունական կոմ ասորական դրոշմը: Դեռ տպագրութեան չցանձնած՝ Այտնեան 1883—84 թւականներին իւր գործը տւեց ի քննութիւն Վիեննայի եկեղեցական երգերի ընկերութեան (Ambrosius-Verein) պրոֆեսոր Յովսէփ Բէօհմին (Joseph Böhm): Բէօհմը կազմեց խումբը և նոյն տարին՝ յաջող փորձից յետոյ՝ մտառուցւեց Հանդիսական Պատարագը երաժշտութեամբ: Պարտիտուրը՝ թէպէտ ոչ վերջնականապէս՝ տակայն տպագրւեց, նոյնպէս առանձին ձայնները՝ եւրոպական տառե-

բոլի կ գիւրութիւն օտարազգի երգիչներին Այնուհետև գրեթէ 8—9 անգամ նոյն յաջողութեամբ մասուցւեց այս պատարագը, երբ յանկարծ վերջի սրբազրութիւնն արած ժամանակ պրով. Բէօնմ վախճանւեց. դարձեալ հրատարակութիւնը ուշացաւ. բայց նոյն գիտնականի եղբայրը՝ որ նոյնպէս իբր եկեղեցական երգեցողութեան պրովեսոր մեծ անուն ունի, իւր վրայ է առած գործի շարունակութիւնը:

Այսնեանը յայտնի է նաև իբր գծագրիչ և նկարչան: Դորաշնորհիւ նա հրատացրել է Միիթարեան տպարանը այլ և այլ տեսակ գրերով, որոնց նմուշները կարելի է տեսնել Վիեննայի Միիթարեան տպարանից գուրս եկած հրատարակութիւնների և թէ մի քանի այլ թերթերի մէջ («Հանդէս Ամսօրեայ», «Աղբիւր», «Տարագ», «Արարատ»):

Այտնեանի գծագրած օրինակներով Միիթարեանների պատրաստած տառերը շատ բազմատեսակ են և մեջը նկատում է ճաշակ: Մի կողմէ թողնելով այլ և այլ զարդարաւերը, տառերի բազմատեսակութիւնը, որի նկատմամբ ոչ մի այլ տպարան այսօր չ' մրցում, սակայն, նկատենք որ ամենագործածական հայկական տառերի գլխաւոր սպակասութիւնը նաև հայր Այտնեան չկարողացաւ վերացնել. մենք ակնարկում ենք այն սպակասութեան վրայ, որի շնորհիւ ա և տ, գ և դ, զ և զ, չ և շ և ո չափագանց հեշտութեամբ իրար տեղն են բռնում տպագրութեան մէջ:

Վերջապէս Այտնեանի գործն է «Հանդէս Ամսօրեայ» ամսասաթերթի հիմնագրութիւնը: Այդ թերթը հիմնւեց Այտնեանի արքայութեան երկրորդ տարին, այն է 1887 թւականին, և այսօր յաջողութեամբ շարունակւում է Այդ թերթը, որ կոչում է «բարոյական», ուսումնական, արւեստիտական», դատած իւր այն նիւթերով, ողոնք և թերթի արժանիքն են կազմում; իսկապէս ոչ բարոյական է, ոչ ուսումնական և ոչ արւեստագիտական: Բարոյական սական ոչինչ չկայ նորա մէջ—և, ըստ մեզ, դա մի արժանիք է և ոչ սպակասութիւն,—և ոչ էլ ուսումնական թերթ է—որովհետև գիտնական նիւթերի մասին թերթը չի զբաղւել. իսկ արւեստներից, որքան մենք կարողացել ենք հետեւ այդ բաժնին—թերթը մի գրւածք է տւել՝ կարծեմ մոմ շինելու արւեստի մասին: Եւ,

սակացն, «Հանդէս Ամսօրեաց»-ն ոչ միայն աւելորդ թերթ չէ, այլ և իւր տեղն ունի հայ պարբերական մամուլի մէջ: Թերթը մեծ տեղ է տալիս հայկական հին գրականութեան և ձեռագիրների ուսումնասիրութիւններին, և շնորհիւ գորան՝ մինչ այս մասնակից առանձին գըրքերով արտապատած են այդ ամսաթերթից քսոնի մօտ հասորիկներ («Ազգային մատենագարան» անունով), որոնց գլխաւոր նիւթը հայկական ուսումնասիրութիւններ են թէ ինքնուրոյն և թէ մասսամբ թարգմանական. նոցա մէջ են նաև հայկական մի քանի գաղթավայրերի ուսումնասիրութիւնները: Այլ և ձեռնարկուած է հայկական բոլոր ձեռագիրների ցուցակները կազմելուն, որ և կատարուած է Վիեննայի Մխիթարեաններին պատիւ բերող եւանդով և հմտութեամբ: Այդ հրատարակութիւններից ոմանք իրենց գնահատութիւնը գտել են «Մուրճ»-ի մէջ: Հայկական ուսումնասիրութիւնները դրւած լինելով քննական հիմունքի վրայ, այլ և շնորհիւ համեմատապէս կանոնաւոր լեզւին, (որ կատարելապէս հակառակ է «Բազմավիճակի» անձունի լեզւական խարնուրդին) և խնամքով կատարւող տպագրութեան՝ թերթին գրական նպաստներ հասնում են նաև Վիեննայի Մխիթարեաններից դուրս հայերէնագէտ գիտնականներից: և այդ ամենի շնորհիւ «Հանդէս Ամսօրեան» այդ ճիշդի համար ներկայանում է անհրաժեշտ թերթ բոլոր նոցա համար, որոնք հետևում են հայկական ուսմունքներին:

Ահա այդպէս է ներկայանում հայր Այտնեան իւր արդէն մօտ 70-ամեայ կեանքի ընթացքում: Վաստակաւոր կեանք, որ անկասկած արժէր որ տօնւէր ոչ միայն իւր միաբանակիցներից, այլ և ընդհանրութիւնից: Բայց երբ—ահա խնդիրը, որը ստիպում է մեզ շօշափել Մխիթարեանների ամենափափուկ ջիզը: Այտնեանին տօնեցին մի այնպիսի ժամանակ—երբ ամբողջ աշխարհը գղրդում էր Տաճկա-Հայաստանից եկող լուրերից—բայց Վիեննայի Մխիթարեանները մնացին անկրդւելի: Մեր ընթերցողներին աւելի պարզ լինելու համար պէտք է ցիշենք որ Վիեննայի Մխիթարեանների և մանաւանդ հայր Այտնեանի օրդան՝ «Հանդէս Ամսօրեա»-ն ունի նաև քաղաքական բաժին: Բայց կարմղ էք երևոկայել որ այդ

բամբում, ուր ինչ քաղաքան լուրեր չափք որ զետեղւում են, զուր կորոնէք որ և է չիշատակութիւն ներկայումն և արդէն մի տարուց աւելի ամբողջ աշխարհքը յուղող հայկական խնդրի մասին?!

Դորա փոխարէն նոքա մոտածեցին տօն կատարել: Այդ տօնախմբութեան նկարագիրը, կատարւած նոյն Մխիթարեանների ձեռքով նոյն իրենց օրգանում՝ այժմ մեր աշքի առջևն է: Այդ նկարագրի և Մխիթարեան հայրերի խոկմունքների մէջ էջեր դտանք, որոնք մեր նողկանքը բերին:

Մէնք արտագրում ենք—և մեզ հետ թող մեր ընթերցողները գտանեն:

«Զուզագիպութիւն մ'եկաւ աւելի նշանաւոր ընել ալս հանդիսին և տարեթիւը Տարիներէ հետէ բաղձացւած, յուսացւած իրի մը¹⁾ դոր և ծաղրութիւնն՝²⁾ որ ծաղկալից աշագաէ մը կը խոստանաց ազդացին « յառաջադիմութեան, Ալտնեանի օբելեանին ժամանակները պատահեցաւ...³⁾: Այս պարզ զուզագիպութիւն մը անւանեցինք. բայց ոչ առ և պաքէն պատմութեան երենելի դիպւածներն պատահականութեան օրէն « քէն կ'առնուն իրենց մնծ կամ փոքր նշանակութիւնը⁴⁾, Թերես միշտ և տխուր զգացմունք մը՝ եթէ ոչ բոլորովին, գոնէ ըստ մասին մթագնէ « այս նշանաւոր հանդէսը⁵⁾, բայց լամենացն դէպս միշտ—սկզբնաւորութիւն մըն է, Եւ ալսօր տոհմալին պատմութեան մէջ նշանաւոր տարին « կը պարունակէ իւր օրաթիւերուն մէջ Ալտնեանի Յօբելենին ամսաթիւը « գոնէ, եթէ ոչ օրաթիւը...⁶⁾:»

Մէնք այս իրողութիւնները պէտք չէինք ունենալ առ աջ բերելու, եթէ մեր խօսքը միմիայն հայր Ալտնեանի մասին լինէր. բայց այս վաստակաւոր և տաղանդաւոր գրական և զեղարւեսորի մար-

¹⁾ Այդ իրի մը խօսքով Մխիթարեանները ակնարկում են ռեֆորմաները, որ սուլթանը ստորագրեց հոկտ. 5-ին:

²⁾ Սուլթանի իրագէլին չաջորդած կոտորածնիրը արդեօք...

³⁾ Բազմակէտերը բնագրինն են:

⁴⁾ Դա մի ֆիլիսոփաէութիւն է, որ ի հարկէ, ամբողջապէս իւր հեղինակներին լիտ ենք ընծալում:

⁵⁾ Ալսինքն, ուրիմն, Ալտնեան այնքան նշանաւոր մարդ է, որ նորան տօնելու դնծովթիւնը միայն մասսամբ կարող է նոհմանալ ազդի կոտորածով պատճառած սուզով, չէ որ միայն մի քանի տասնեակ հազար հաւատաւորչականներ են կոտորելու...

⁶⁾ Բազմակէտերը միշտ բնագրինն են:

դու մասին խօսում ենք կից Վիեննայի Մխիթարեան մէաբանութեան պատմութեան հետ. իսկ մի հայկական մարմնի վարւողութիւնը մի ամենակիշնական խնդրում, ինչպիսին տաճկահայկական խնդիրն է—գա կարեոր հարց է: Այդ հանդամնքում այլ և այլ արւեստական ու կեղծ հոետորութիւններ միանգամայն անտեղի են: Հանդէս Ամսօրեացի տաճկահայկական խնդրի մասին պահպանած կատարեալ լսութեան ողառմառով մեր աչքում իրենց արժէքը մի մէծ մասով կորցնում են հայր Այտնեանի այն խօսքերը, որոնցով նա իւր շնորհակալութիւնն էր յայտնում: Ահա թէ «Հանդէս Ամս» (Խոյեմբերի համար, էջ 343) ինչ է գրում այդ մասին.

«Հակիրճ բաց սրատուխ խօսքերով վախնեան իւր չնորս և հակալութիւնն, նախ ներկալից, երկրորդ՝ հեռաւորաց, որ աւապիսի և անչարմար¹⁾ ժամանակ մը, պիտի ստիպւէր ծիծաղադէմ երեալ, և մինչ սղալ պէտք էր և լալ... Սական ընդդէմ իմ կամացո մասնաժոռ դավիճեր կազմեր էք, քաջալերութիւն գտեր էք ի մերձաւորաց և ի հեռաւորաց»: Եւալլն:

Մի այլ տեղ (էջ 354) միաբանութեան թերթը ։ ոստովանութիւնը է հանդէս կատարելու անցարմարութիւնը:

«Պէտք չէ սական մոռանալ թէ աւսպիսի անչարմար ժամանակ, չորսում հեռաւորք կենօք չափ կը մաքառին ի պաշտպանութիւն կենաց, ալս չափն իսկ աւելուրդ պիտի նկատւէր, ²⁾ եթէ ընտանիկան հանդիսաւորութեան նկարագրին սահմանն աւելի լայնցընել ուզէինք ³⁾). Երկրորդ՝ կան հանդիսութիւնք որ կը լետաճգլին, եթէ նկատողութեան առնւին ամեն հանգամանք տեղուզ, ժամանակի, անձին և ալլն և ալլն. բաց ապագային անստուգութիւնը, պարագալից բերմունք և ալլն և ալլն, շատ անզամ ստիպմանք իսկ կը բռնադասեն, կարծիս, զմարդ իւր բաղձանքները դապելու և աչլուց կամաց ⁴⁾ համակերպելու»:

Այդ մում կամքին են կամեցել համակերպւել—մեզ համար մութ է:

Այս ամենը կարծում ենք որ բաւականին բնորոշ է Մխիթա-

¹⁾ Խօսրը բնադրինն են:

²⁾ Ստորագծումները մերն են:

³⁾ Ել աւելի «լայնցնելը» ո՞րն է, չենք հասկանում: Դա էլ մի զուտ ոճաբանութիւն է:

⁴⁾ Ստորագծումը մերն է:

րեան միաբանութեան համար, որպէս զի աւելորդ չդատէր այս պատմական տեսութեան մէջ առաջ բերւելու:

Եւ այժմ անցնենք:

Այտնեանի յօրելեանով Մխիթարեանները երկրորդ փառաւոր յօրելեանն էին տօնում միաբանութեան հիմնադրութեան օրից ի վեր. առաջինը բաժին ընկաւ երկրորդ աբբահայր Արիստակէս արք. Ազարեանին: Բայց մի տարբերութիւն կայ այս երկու յօրելեանների մէջ. մինչդեռ Արիստակէսին տօնեցին միմիայն իւր կաթոլիկ կրօնակիցները, Այտնեանը իւր կողմն ունէր հայութեան ընդհանութիւնը և, չլինէր տարւայ անաջող ընտրութիւնը—ընդհանրութեան զշացմունքները աւելի ևս բուռն այխոի արտայացուեին: Յօրբելեանին ստացւեցան ութսուն և եօթ հեռագիր սոսկ անհատներից և թէ հաւաքական մարմիններից, և դոցա մէջ նաև Ռուսաստանի և մասնաւորապէս Կովկասի հայերից և հիմնարկութիւններից, այլ նաև մի քանի տասնեակ չնորհաւորութիւններ նամակներով Եւրոպայի զանազան կողմերից: Որ Տաճկա-հայերը, Կ. Պոլսից և Զմիւռնիայից դուրս, մասնակցութիւն չունեցան՝ այդ արդէն շատ է հասկանալի, — հազիւ երեք-չորս շնորհաւորութիւններ Կարինից, Այդինից, Իզմիդից:

Մի օր առաջ աւստրիական կայսր Ֆրանց Յովակի շնորհեց յօրելեարին «Ֆրանց Եողէֆ կարգի» մեծ ժապաւէնն ու մեծ խաչը. իսկ յօրելեարի օրը պապի Վիեննայի նւիրակ Այլիարդի՝ յայտնեց նորան որ պապը նորան կարգել է իւր «սենեակի թագաղիր», «Հռոմայ Գահի առընթերակաց» և «Հռոմի կոմս» (միշտ ի հարկէ զուտ անւանական տիտղոսներ) և յանձնեց դորա վերաբերեալ զրաւոր զոկումէնտները:

Այտնեանը բարձրացրեց Վիեննայի Մխիթարեան միաբանութեան յարգը այն ընկած դրութիւնից, որի մէջ էր նա Յակոբ Պոզանեանի աբբահայրութեան օրերով: Եւ մեզ թւում է թէ իւր պատրաստած նոր շկոլայով՝ նա տանում է Վիեննայի միաբանութիւնը դէպի մի աւելի օգտաւէտ գործունէութիւն, քան Բոզանին և նոյն իսկ Արիստակէս Ազարեան, որոնց ժամանակ կրօնական մոլեռանդութիւնը առաջին գծի վրայ էր դրւած:

Վերջացնենք այս տեսութիւնը Վիեննայի Մխիթարեանները՝ միաբանութեան գործունէութեան մասին ընդհանուր տեղեկութիւններով՝¹⁾:

Միաբանութիւնը ունի մի կենտրոնական տուն Վիեննայում, որի նպատակն է միսիոնարներ և գիտնականներ պատրաստել: Տղաները ընդունում են 11—18 տարեկան հասակում—հայ-կաթոլիկներից, առանց երկրի խորութեան: Դասընթացքը համապատասխանում է աւստրիական գիմնազին, աւելացած մի քանի լեզուներ և կրօնական զիտութիւններ: Դասաւանդութիւնը հայերէն է, ուսուցիչները՝ գրեթէ ամենքը միաբաններ:

Միաբանութիւնը ունի գրադարան, բաղկացած 16.000 գլուքերից, ցորոնք կազմում են 33.000 հատոր. մի ժողովածու հին հայկական ձեռագիրների, մի ֆիզիկական կաբինէտ, խեցիների և միներալների ժողովածու, մի հասբանական թանգարան և գրամմների ժողովածու՝ բաղկացած 6.500 կտորից:

Աենտրոնական դպրոցը 1810-ից մինչ 1887 թ. ունեցել է ընդամենը 400 աշակերտ ներկայում աշակերտների թիւը հասնում է 40-ի, որի մի երրորդը Աւստրիայի հպատակ հայեր են:

Բացի դպրոցից՝ կենտրոնում՝ ունին մի եկեղեցի:

Միաբանութիւնը ունի հաստատութիւններ Թիֆլիսիայում: Միաբանութիւնը նաև կազմում է Պոլում, իսկ չուական թւականներին հիմնեց նաև մի միջնակարգ դպրոց: Հակա-հասունեան շարժումից յետոց դպրոցը խեղճացաւ և 1877 թ. փակւեց, 1884 նորից բացւեց. աշակերտների թիւն է 60-70 հոգի, որոնցից կէսը գիշերօթիկ, կէսը երթների: Կայ և մի ծխական եկեղեցի:

Միսիոնարական տուն հիմնեց 1828 թ. Սուչաւայում, ապա Խուսաստանի Մուգիլե ու քաղաքում, որ փակւեց 60-ական թւականներին: 1839-ին միաբանութիւնը Հասմունի մի դպրոց հիմնեց, որ յետոց սովորեցին ծախել: 1840 թ. միսիոնարներ ուղարկեցին Վիարեջի և Զմիւռնիա: Վերջինում մի քանի

¹⁾ Որ առաջ են բերւած լողւածիս սկզբներում վիշտ գերմանական բրոշիւրի մէջ, տպւած 1887 թ., որից դէս հազիւ թէ զգալի փոփոխութիւններ եղած լինեն.

տարի յետոց տարրական դպրոց հիմնեցին, իսկ 1856-ին մի միջնակարգ դպրոց, որը գործում էր մինչ 1883 թ., որից յետոց չկարողացան շարունակել և իջեցրին տարրական դպրոցի աստիճանին— Միսիոներական կայարան հիմնեց նաև Զմիւռնիացից ոչ հեռու Այդին քաղաքում, ուր այժմ էլ երէք միսիոնարներ կան:

Տրիեստում մի ժամանակ ունեցած դպրոցը փակւեց. բայց մինչ այժմ էլ միաբանութիւնը ունի այնտեղ մենաստուն, մի հասարակական եկեղեցիով:

50-ական թ.-ների վերջը Հռոմի Պրոպագանդացի ցանկութեամբ՝ Ավենացի միաբանութիւնը երկու միսիոնար ուղարկեց Պարսկաստան, բայց տասը տարի միայն այդ միսիոներական կայարանը գոյութիւն ունեցաւ:

Միաբանութիւնը 60-ական թ-ների վերջը իւր վրայ ընդունեց Նէուզայ քաղաքի կաթոլիկ ծուխը, ուր մենաստուն և եկեղեցի շինել տւեց: Այդտեղի քահանան այցելում է նաև հալկանան երկիրներում և Ռումինիացում ցրւած հայ-կաթոլիկներին:

1870-թւականին միաբանութիւնը մէկը Կարինումն էր. 1877 թ. տեղափոխեց Տրապիզոն, ուր դպրոց ունին հիմնած: 1876 և 1879-ին միսիոնարներից մի քանիսը Գալիցիայումն են, իսկ Սամոցուցւարում ունին նաև դպրոց:

Միաբանութիւնը տակել է մինչ 1887 թ. շուրջ 300 հայերէն գիրք (վենետիկցիք մինչ նոյն ժամանակները տակել էին մօտ 700 գիրք), հաշւած գերմաներէն և լատիներէն տպածները: Հայերէն տպած լինքնուրոյն և թարգմանական գրքերը վերաբերում են ամեն կարգի ճիւղերին:

Միաբանութիւնը, որպէս դիտենք արգէն, ունի տպարան և 1838-ից սկսած մի ձուլարան և տառերի մայրեր (հայերէնի համար 2400 հատ, մի մեծ մասը Այտնեանի գծագրութեանը և Յրէնովէր ու Մարկլովսկիի ձուլարանում փորագլած):

Այս է ահա Վիեննացի Միսիոնարեան միաբանութեան համառաօս պատմութիւնը և նորա գործունէութեան նկարագիրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆՐՁՆԿԵԱՆՅ ԳՐԻԳՈՐԻՍ.—Պատմութիւն մանկավարժութեան (հայկական կրթական բաժնով) Թիֆլիս, տպ. Նարանջի. 1895 թ. 318 էրես. գինն է 1 ռուբլի:

Մի քանի տասնեակ տարիներում մեր մանկավարժական զրականութիւնը բաւականին մեծ չառաջադիմութիւն է արել. նամանաւանդ նշալրելի է մեր մէջ Հերբարտական շկոլայի ազդեցութիւնը. Դասաւութեան ձեական աստիճանները, կուլտուրական պատմական գաղափարը, առարկաների կենդրոնացումն մեզ անծանօթ գաղափարներ չեն. Այդ վերջինները չաճախ են նկարագրել, բացադրւել Ցիլլերի հայ աշակերտների միջոցով, նոյն իսկ և երտասարդ Ռաւնականներն էլ անդործ չեն մնացել, նոքա ևս աշխատել են և աշխատում են իրանց ուսուցչապետի սկզբունքները տարածել իրանց հայրենակից ուսուցիչների շըրջաններում. Սակայն որքան և հայուսուցիչը ծանօթ է մանկավարժութեան սկզբունքներին և կարողանում է նոյց գործադրել, բայց և այնպէս այդ սկզբունքները տրւած են մեր հայ ուսուցչն, որպէս գիտութեան վերջինական նզրակացութիւնների, առաջանական պատմութիւնը մեր մանկավարժութիւնների շատ անգամ է խօսք եղել այդպիսի մի ձեռնարկութիւնները, պակասութիւնները, մեզ կարեոր էր ունենալ մի «մանկավարժութեան պատմութիւն» Դուռը կարենորութիւնը մեր մանկավարժութիւնը շատերն են հասկացել և շատ անգամ է խօսք եղել այդպիսի մի ձեռնարկութիւն ունենալու մասին, սակայն այդ խօսքը մնացել է «Ճայն բարբառու չանապատի» Դորութիւնների շատ պարզ է. մանկա-

վարժութեան պատմութիւն գրողը
պէտք է առաջին՝ օգոստ քաղէ
պատմութեան իսկական աղբիւրնե-
րից, այսինքն ուսումնասիրէ մանկա-
վարժներին և աղջիսով անմիջաբէս
ծանօթանակ ալս կամ աչն մանկա-
վարժի տեսութեանը և ոչ պատմա-
բաններից, Երկրորդ՝ մանկավարժու-
թեան պատմաբանը պէտք է առ-
անձնապէս ուսումնասիրած լինի մի
մանկավարժական սիստեմ և հետեւ
աչդ վերջինին, որպէս զի այս
կամ աչն մանկավարժի տեսու-
թիւնը նկարագրելուց և պարզա-
բանելուց լեռով, ենթարկէ քննա-
դատութեան, ցուց տակ նորա թէօ-
րիափ լաւ և վաս կողմերը, ջոկէ
մանկավարժի արտավագուած մոռքերի
մէջ լաւագոյնը, որին կարելի է դա-
սական նշանակութիւն տալ:

Երրորդ՝ բաւական չէ, որ մէ-
կը ուսումնասիրել է լիովին ալս
կամ աչն մանկավարժի տեսութիւնը
և ինքն էլ պատկանում է մի որենիցէ
մանկավարժական շկոլալի, որը
պէտք է հիմնաքարը կազմէ նորա
քննադատութեան, այլ անհրաժեշտ
է նոյնպէս, որ նա կատարեալ ծա-
նօթ լինի ժամանակաշրջանի ոգու
հետ. Այն պատմաբանը, որ չէ հաս-
կացել ժամանակի կրթական ոգին,
նա վաս պատմաբան է. Պարզենք
մեր ասածները մի օրինակով. Մի
պատմաբան, որ յանձն է առել գրե-
լու, դիցուք, Ռուսօֆ մանկավարժա-
կան տեսութիւնը, նա պէտք է նախ
պատկերացնէ աչն կեանքը, որի
ծնունդն է Ռուսօն. չէ որ իւրա-
քանչիւր մեծ մարդ ծնունդ է իւր
ազգի բարուական և մտաւոր շրջանի.

Ռուսօն ծնունդ է աչն դարի, երբ
Գրանտիական ազգի կուլտուրական
լաւաշադիմութիւնը կանգ է առել
ազգի բարուական կեանքը ոտնա-
կոխ է արւած, Ապա պատմա-
բանը պէտք է պարզաբանէ նորա
մանկավարժական տեսութիւնը և
վերջ ի վերջու երեսան հանէ ալն նշա-
նաւոր սկզբունքներն, որի չնորհիւ
Ռուսօն առաջնակարգ տեղ է բըռ-
նում դասական մանկավարժների
շրջանում:

Պարզենով մի ճշմարիտ պատմա-
բանի լաւագութիւնները, դառնանք
այժմ պ. Դրիգորիս Երդնկեանցի
Պատմութիւն մանկավարժութեան
վերնագրով երկասիրութեան:

Այդ գիրքը չէ համապատասխա-
նում առաջին պահանջին, հէնց հեղի-
նակը ինքն էլ խոստովանում է իւր
լաւաշաբանում. «Սոյն գրաւոր գոր-
ծը լաջողութեամբ գլուխ բերելու
համար մենք օգտած ենք օտար-
ազգի նշանաւոր մանկավարժների
աշխատասիրութիւններից՝ մերթ հա-
մառօտելով, մերթ ընդարձակելով
և տեղ-տեղ էլ մի քանի մասներ նոյ-
նութեամբ լառաջ բերելով: Այս վե-
րաբերմամբ ընդհանուր մանկավար-
ժութեան պատմութեան ճիւղի մասին
մեզ շատ նպաստած է «Տեսութիւն
մանկավարժական պատմութեան
Նշնիցկու, որին և առաելապէս հե-
տեած ենք. սորանից լեռով օգտաել-
ենք Դիտտեսի, Մողղալեսկու և մա-
սսամբ էլ Կ. Նմիդափ մանկավարժու-
թեան պատմութիւններից»:

Երկրորդ կէտի վերաբերմամբ
մենք միախն աչնքանը կ'ասենք, որ
եթէ պարոն Երդնկեանցը այս կամ

աշխախտեմը ուսումնասիրած և նորան
հետեւող էլ չլինի, կ'ունենաւ ինքնու-
րոցն համոզմունքներ, ինչպէս և դիր-
քը վկայում է, այս կամ այն մասն
կավարժի սկզբունքներից գոհարը
հասարակ քարից զանազանելու.

Երրորդ կետի վերաբերմամբ,
մենք համարձակ կարող ենք ասել,
որ հեղինակը շատ քիչ ուշադրու-
թիւն է դարձրել ազգերի կրթա-
կան ոգու վերաց. նա զետեղել է իւր
երկասիրութեան մէջ միմիան իւրա-
քանչիւր մանկավարժի համառօտ
կենսագրութիւնը, որին և կցել է
նորա մանկավարժական տեսու-
թիւնը, առանց առաջ բերելու թէ
այս կամ այն մանկավարժը ինչ հան-
գամանքների ներքու հասել է իւր
սկզբունքներին. Օրինակի համար,
մենք տեսում ենք, որ իդէալակա-
նութիւնը մանկավարժական սկզբ-
քունքների մէջ ֆրանսիական հողի
վերաչ երեան է զալիս Ռուս-
սովի, իսկ գերմանական հողի վերաչ
— Պեստալուցու մէջ, Ռուսովի ունե-
ցած մեծ ազգեցութիւնը Պեստա-
լուցու վերաչ ոչ չէ կարող ու-
րանալ. Այդ ազգեցութիւնն այնքան
մեծ է, որ ամենայն քալվարիխում
Պեստալուցու երկասիրութիւնների
մէջ կարող ենք նկատել. Ռուսովի
սկզբունքների հետքերը գտնում ենք
Պեստալուցու նոյն իսկ դորդունէու
թեան սկզբներում. Պեստալուցու
ցանկութիւնը թողնել քաղաքակին
կեանքը և հեռանալ դէպի գիւղական
շրջանը և դառնալ հողագործ ան
der Stille der ländlichen Flur, fern
von des Lebens verworrenen Kreis-
sen», մաքուր մարդկակին զգացումներ

պահպանելու համար, մեծ կապ
ունի Ռուսովի գաղափարների հետ.
Պեստալուցու «ինհարդու և Գեր-
տրուդի երկասիրութեան, նոյնպէս և
ուրիշ գրւածների մէջ երեան են
գալիս Ռուսովի գաղափարները. Պես-
տալուցին 1782-ին գրում է. «իմ որ-
դին՝ (Յակովլը, միակ որդին ծնւած
1740-ին) շուտով տասն և երկու
տարեկան է, բայց ոչ կարդալ և ոչ
գրել գիտէ»: «Մարդկակին կրթու-
թեան ամբողջ ուժը կալանում է նո-
րա մէջ, որ երեխան սովորէ իւր
մարմնական պահանջողութիւններին
գոհացումն տալ: Նախ պէտք է նո-
րա մարմինը և զգակարանքները
վարժեցնել հոգուն բոլորովին ձեռք
շտալի և ալին: Նթէ մենք մի առ մի
թւելու լինենք Պեստալուցու ման-
կավարժական սկզբունքները, մենք
կը գտնենք որ ազդ վերջինները ճիշդ
պատճեն են Ռուսացի մանկավար-
ժական սկզբունքների, իսկ Պեստա-
լուցու դասաւութեան սկզբունք-
ների մէջ ոչինչ չէք գտնիլ, որ չլի-
նին «կմմլիլ» մէջ. Սական, չնայերով
այս ազգեցութեան, Պեստալուցին
սակաւ առ սակաւ սկսում է շեղել
Ռուսովից նորա կրթութեան գա-
ղափարի որոշնամբ: Պարզ է, որ
Պեստալուցին՝ մեծացած այլ հանգա-
մանքների ներքու, ստացած բարի
կրթութիւն իւր մօր ձեռքով, աստ-
ւածաբանական զարգացմամբ չէր
արող Ռուսաօի ուզգութիւնը կուր-
օրէն ընդունել: Պեստալուցու
և ուսուօի կեանքի տարբերութիւնը
մասել է երկուսի կրթութեան նպատա-
կի տարբեր որոշումների մէջ: Առա-
ջինը ծնունդ մի լուրջ ժողովրդի, ուր

Կութերն էր բարողական սերմերը ցանել, իսկ երկրորդը ծնունդ Փրանսիական ազգի կուլտուրական կեանքի, որի մէջ Փրանսիական ժողովուրդը ներկայացնում է մեզ բոլորովին ընկած, անբարուցականացած, նորա ընկերական շրջանը ոչնչացրած և քաղաքակրթութիւնը բառի բուն նշանակութեամբ կեղծ ընթացք ստացած:

Դառնունք կրկին մեր նիւթին, Որքան և գիրքը քիչ համապատասխանէ մեր որոշած պահանջներին, այնուամենանիւ նա ունի իւր նշանակութիւնը. նա մի ամիսով պատմական տեսութիւն է որ մեր ուսուցիչների համար շատ հարկաւոր է, Հեղինակը համառօտ կերպով նկարագրելով հին ազգերի կրթութեան պատմութիւնը, անցնում է նըղերին, ուր և աւելի կանգ է առնում. Այսուղ երևան ևն գալիս աւելի ընդարձակ պարզաբանութիւններ Ամոս Կոմենցիոսի, Ռուսօսի, Պետալոցցու և այն դասական մանկավարժների: Սակայն ցաւօք սրտի պէտք է խոստովանւել, որ Պետալոցցուց կտող երևան եկող ցախանի մանկավարժների տեսութիւնը շատ սեղմւած է ներկայացնում հեղինակը. Օրինակ առնենք Հերբարտին: Այդ վերջինը այն գերմանական դասական փիլիսոփաներիցն է որ փիլիսոփական գիտութիւնը զբեց գրական հիմունք ների վերաբէ, հոգեբանութիւնը մաքրեց կարողութեան թէորիալիդ (Verstandstheorie), որը մինչեւ Հերբարտի գալն, որպէս մեացորդ հնագարքան վերաբանութեան՝ դասառութեամբ պահպանում էր իւր գոյութիւ-

նը, և հոգեբանական երևութեարը վերլուծեց մտապատկերների՝ վոխագարձէարքերութիւնների միջոցով ու ազգպլիսով հոգեբանութիւնը դիտութիւն դարձրեց: Եւ ահա այդ իւր հոգեբանութեան վերաբէ դրաւ իւր մանկավարժական թէորիալի մեծ շինութեան հիմնաքարը: Ահաւասիկ այդ մանկավարժին, որն այժմ բազմաթիւ հետևողներ ունի ամբողջ երկրագնդի երեսին, հեղինակը նվիրել է միան մի երես բացի աչշՀերբարտի դաստիարակչութան դործունէութիւնը շատ սխալ է բաժանում: Հեղինակն ասում է. «ամբողջ դաստիարակչական գործունէութիւնը Հերբարտը երեք մասն է բաժանում. ա. Կառավարութիւն, թ. Ուսուցումն գ. Կարդապահութիւն»: Այդ սխալ է. Հերբարտը որոշում է դաստիարակութեան (Erziehung) հետեւեալ մասները. 1. Կառավարութիւն (Regierung), 2. Դաստաւութիւն (Unterricht) և Կրթութիւն (Zucht): Խոչթէ հեղինակն ուսուցումն և կարդապահութիւն գաղափարներն որպեսից է վերաբել, այդ մեղ շատ զարմանք է պատճառում: Դուցէ այդ թերութիւնները նորանից են ցառաջացել, որ ինչպէս հեղինակն իւր գրքից լառաջաբանում խոստովանում է, օգուտ է քաղել զվարարապէս ուսւական. ազգիւրներից և գերմանական մանկավարժներից միանք Գիտութեալից, որը լաւո՞ի է իրքի հականերբարտական և աշխատող նսեմացնել Հերբարտի մեծ նշանակութիւնը կրթութեան գործում:

Ապա հեղինակն անցնում է «Համառօտ պատմական տեսութեան Ուու-

աաստանի կրթութեանու Ազստեղ նա
համառօտ, բայց պարզ և հասկանալի
ոճով նկարագրում է ծշութեամբ
ոռուսաց կրթութեան գործի ընթաց-
քըն ե, ոռուս լազոնի մանկավարժ-
ների մասին մի քանի թոռուցիկ
խօսքեր առնելով, անցնում է: Այս
տեսութեան արժեքն աւելի բարձր
կը լինէր, եթէ հեղինակը մի առ մի
բացադրէր, պարզաբանէր ոռու ման-
կավարժների ընդհանուր ուղղու-
թիւնը. օրինակ, մենք գտնում ենք, որ
Ռւչինսկու մասին հինգ կամ վեց առող
է գրւած, մինչգեռ. Ռւչինսկին ոռու-
սաց ամենալազանին մանկավարժնե-
րիցն է, և կարենոր էր դորա ուղղու-
թիւնը ճիշտ պարզաբաննել. նաև մա-
նաւանդ այդ մանկավարժը հաւերին
էլ անծանօթ չէ. վաղուց ի վեր մեր
ուսումնարաններում գործադրում է
դորա «Մակրենի լեզուն»: Ինչ վերա-
բերում է հաջոց կրթութեան համա-
ռուս պատմական տեսութեանը. մենք
պէտք է խոսուվանւնենք, որ հեղինակն
ամեն ջանք գործադրել է մի
ամփոփ տեսաւթիւն տալ մեղ. միան
ալստեղ ևս նկատելի է նոյն պակա-
սութիւնը, ինչ ոռուսական բաժ-
նումն է: Մենք ունեցել ենք մի
քանի աչքի ընկնող մանկավարժներ,
որոնց գու ծունեցութիւնը փոքր թէ
շատէ բարերար ազգեցութիւն է ու
նեցել մեր կրթական ասպարիզում.
օրինակ ինչպէս առաջ լիշեցի Ա.
Քահաթրեանց և Ս. Մանդինեանց-
Հեղինակն, այդ երկու անձնա-
ւորութիւնների մասին, որոնք բազ-
մաթիւ ուսուցիչներ են պատրաստել
կրթութեան գործին միծ զարկ են
տւել բաւականում է միան նե-

տեեալ խօսքերով. «Վերուիշեալ եր-
կու աշխատաւոր անձինք կազմեցին
և մի քանի ընտիր դասագրքեր
մանկավարժութեան, մեթոդիկալի,
հաջոց լեզվի և թւաբանութեան վի-
րաբերեալ, որոնք արգէն բաւակա-
նին, արդինաւէտ են հանդիսացել
դաստիարակւող սերնդի համար:
Առանձնապէս, Ս. Մանդինեանցի
միծ ծառակութիւնն ան է, որ իւր
բոլոր գրւած քներով սկզբնապէս օ-
րինակ տւեց դաստիարակութիւնը
աղգապին մտաւոր հողի վերաց հաս-
տանելու և ուսումնական առարկա-
ներն կանոնաւոր մշակման ենթար-
կելու»: Ճշմարիտ պատմաբանը գո-
րանով չէ կարող բաւականանալ.
Նա անաշառ գրչով պէտք էր մի
առ մի քննէր նոցա մանկավարժա-
կան զործունէունը և հեղինակու-
թիւնները, նա պէտք էր պարզա-
բանէր, թէ որքան ինքնուրունու-
րունութիւն կազ աչք մանկավարժ-
ների երկասիրութիւնների մէջ, թէ
որն է դոցանից աւելի զօրեղ իւր
զործունէութեան մէջ: Այդ անաշառ
քննադատութիւնը կը լինէր Երգը-
կեանցի զրքի ամենաթանկագին
մասը և այդ երկասիրութիւնը կը
լինէր մի գոհար և բարզական ողի
մեր մանկավարժների համար:

Խօսելով գրքի բովանդակութեան
մասին, չնոտանանք լիշել նիւթի
արծարծման ձեւ մասին: Աւելի նպա-
տակավարմար կը լինէր, եթէ հեղինակը
նկարագրեր խոչըր տառերով
իւրաքանչիւր մանկավարժի տեսու-
թիւնը, ասդ մանր տառերով նորա
կենսագրութիւնը: Այժմ խառնչիոթ
է հանդիսանում զրքի բովանդակու-

թիւնը. տեսութիւնը շատ անգամ երկասիրութեանց մասին, չնորհախառնւած է մանկավարժի կենսագրութեան հետ. Այն ժամանակ այդ տրամադրութիւնն աւելի կը կազմէր աջխատութիւնն ամբողջութիւն, որով մի մեթոդական ամբողջութիւն, որով կը հեշտացնէր այդ երկասիրութիւնը ուսումնասիրողի գործը:

Վերջացնելով երկտող գրութիւնն աՊատմութիւն մանկավարժութեան երկասիրութեանց երրում եմ այ. Գրիգորիս Երզնկեանցին, որ անխոնիջ աշխատութեամբ լուս է ընծակել մի այդպիսի օգտական ձեռնարկ և խորհուրդ եմ տալիս իւրաքանչիւր հայ ուսուցչի ունենալ այդ գիրքն և դարձնել իրանց ուսումնասիրութեան նիւթ:

Բայ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Տարօրինակ կերպով քաղաքական նոր դէպ.քեր՝ կատարւած երկրագնդիս ամենաստարբեր կողմերում, եկան ընդհանուր եւրոպական ուշադրութիւնը շեղելու հայկական խնդրից, դէպի որը մի տարուց աւելի է ինչ դարձրած էր իւր հայեացքները ամբողջ քաղաքակիրթ աշխարհ։ Մեծ պետութիւններից փոքրագոյնը՝ Իտալիան՝ ստիպւեց իւր ոյժերը հաւաքել արիսխնիական գործերի համար, ուր՝ Անբա.Ալաջի՛ռում անսպասելի կերպով իտալական զօրքը մի մեծ պարտութիւն կրեց՝ կորցնելով 1200 ստորին զինւոր, 17 սպայ և 50 ենթասպայ։ Բայց այդ խնդիրը չէր կարող ընդհանուր եւրոպական կոնցերտի մէջ փոփոխութիւններ առաջ բերել հայկական խնդրի նկատմամբ։ Սակայն այլ եղաւ խնդիրը, երբ բոլորովին և ամբողջ աշխարհքը զարմացնելու չափ անսպասելի կերպով պատերազմի հրաւերի նման մի բան եկաւ Անգլիային Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների կողմից, այսինքն այնտեղից, ուրկից ամենից քիչ էր սպասւում որ և է քաղաքական բարդութիւն, մասաւանդ որ դորա առիթ տւողն է Անգլիայի վէճը Հարաւային Ամերիկայի Վինեցուէլեան հանրապետութեան հետ՝ սահմանակից մի կտոր հողի սպատճառով։ Բայց հազիւ ամերիկացոց պատերազմական եռանդը մի փոքր նստել էր—որ ահա օրակարգի խնդիր դարձւեց այն դէպքը, որ Հարաւային Աֆրիկայում գտնւող Տրանսվաալի փոքրիկ հոլլանդական հանրապետութեան վրայ յարձակումն գործւեց 7—800 անգլիացիների կողմից, առաջնորդութեամբ Զեմսոն զօրավարի, որը սակայն անձնասոուր եղաւ Տրանսվաալի հանրապետութեան նահագահ Կրիւգէրին։ և դէպքը սուաւալի հանրապետութեան նահագահ Կրիւգէրին.

ցաւ աւելի ևս մեծ կարեորութիւն, շնորհիւ Գերմանիայի կայսեր արտայայտութիւններին յօդուա Տրանսւաալի և ընդդէմ անդլիական կառավարութեան, չնայած որ վերջինս նախօրօք յայտնել էր իւր անհամերաշխութիւնը Ձեմոննի դորձողութիւնների հետ և հրամացել նորան յետ գառնալ իւր ինքնագլուխ արշաւանքից։ Կարծես պարզւում է որ Ձեմոննի արշաւանքը կապ ունի Տրանսւաալում եղած մի յեղափոխական կուսակցութեան հետ։ բայց թէ ունէր արդեօք որ և է թաքուն դիտաւորութիւն գերմանացոց կայսրը անդլիացիններին վրդովեցնելով, — այդ գեռ մնում է շպարզւած։ Սակայն Փակուը սա է, որ այս գեկաեմբերի վերջը, երբ գրում ենք ներկայ տողերը, անդլիական մամուլը աւելի այդ գործով է զբաղւած։

Ահա թէ ինչ հանգամանքների մէջ դեռ ևս շարունակում է հայկական խնդիրը, առանց իւր վերջնական լուծումը սուացած լինելու։ Կոտորածները, որոնց ամփոփ նկարագիրը մենք տւինք անցեալ անգամ, շարունակւեցին, թէեւ ոչ այն արագ յաջորդականութեամբ, ինչպէս նախընթաց երկու ամիսները։ Բայց այդ ամենի վրայ աւելացաւ մի նոր հանգամանք — Զէ յթունի ապստամբութիւնը, որը թէեւ սկսւել էր նախկին ամիսներում, բայց սուացու իւր պատերազմական բնաւորութիւնը մանաւանդ՝ երբ Զէյթունում պաշարւած թրքական գարնիզոնը՝ 4—500 մարդ՝ կոտորւեց զէյթունցոց ձեռքով իբր հատուցո մն ամենզ հայերի վրայ թիւրքերի կատարած բարբարոսութիւնների։

Աեփորմների իրագործելու խնդրի մասին ոչ մի նորութիւն, և ոչ մի յառաջադիմութիւն այդ կողմից Խնդիր է յարուցւած հայերի կրած կորուստները պետական զանձարանից հոգալ այդ նոպատակով արած փոխառութեամբ։ Միջամտութիւն է եղած մեծ պետութիւնների կողմից նաև միջնորդ հանդիսանալ Թիւրքիացի և Զէյթունցոց մէջ, որոնց դէմ սուլթաննը տասլ հազար զօրք է ուղարկուծ։ Մուսու Փա Ռեմբդ-փաշայի հրամանատարութեամբ՝ հըրամանով որ գրաւեն երկիրը և բնակիչներին սրի անցկացնեն Առայժմ տաճկաց զօրքը շրջապատել է Զէյթունը և վերցըրել ամրութիւններից մէկը, բայց բնակիչները շարունակում են հաստատ

մնալ իրենց լեռների դժւար մատչելի տեղերում, թոյլ յարաբերութիւն ունենալով արտաքին աշխարհի հետ:

Խնչ վերաբերում է զրութեանը կ. Պոլսում՝ նա մնացել է անփոփոխ, չնայած որ պետութիւնների պահանջած սուլթանական վերմանը՝ երկրորդ պատերազմական նաւեր անցկացնելու և Պոլսի առաջ կանգնեցնելու մասին՝ սաորագրւեց սուլթանից մեր տոմարով նոյեմբերի 28 (նոր տոմարով 10 ին գեկտ.), որով այժմ պետութիւնները 12 պատերազմական նաւեր ունին կ.

Պոլսի առաջ: Ճիշտ է, որ զրութիւնը աւելի վատ կը լինէր, եթէ չլինէին այդ նաւերը, բայց պետութիւնների իրար հետ անհամաձայնութիւնը, որ մենք լուսաբանեցինք մեր անցեալ յօդւածում, նոյնը լինելով այժմ, մանաւանդ որ Անդլիան և Խտալիան այս ամսում երեք տարբեր քաղաքաղան հարցերով իրենց ոյժերը ջլատելու հարկադրւեցին — Պոլսի առաջ կանգնած նաւերի կարևորութիւնն էլ ներկայ բովեաց պիտի ընկնէր համապատասխան չափով:

Այս է ահա զրութեան հակիրճ նկարագիրը նոր տարւայ շեմքի: առջև:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ:

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԼԻՄԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Տ. ԱՐԿՈՄԵԴԻ

Մեր երկրի քաղաքների ինքնավարութեան կեանքի մէջ տեղի ունեցող դէպերը—վերաբերեն նրանք ձափնաւորների և քաղաքագլխի ընտրութիւններին և կամ քաղաքազին Դուռմալի (խորհրդարանի) և Վարչութեան գործունէութեան—անկասկած գրաւում են այն ամենքի ուշադրութիւնը, որոնք համարում են քաղաքազին ինքնավարութեան հաստատութիւնը իրը մի վերին աստիճանի կարեոր հասարակական ֆակտոր Եթէ մեր անշարժ, անկենդան քաղաքներում հնարաւորութիւն կայ կուտարական հոսանք առաջ բերել, այդ կարելի էր միան առելի քաղաքազին ինքնավարութեան քան որ և է այլ հաստատութեան միջոցով, Քաղաքներին բարեկեցիկ, վակելու քաղաքսկրթական կերպարանք տալ հիմնել քաղաքներում արդիւնաբերական հիմնարկութիւններ, կանոնաւորել աշխատանքը մտցնելով կարդ ու կանոն աշխատող և արդիւնաբերող դասակարգերի փոխադարձ յարաբերութիւնների մէջ, հիմնել այլ և այլ մարդասիրական հաստատութիւններ և հասարակութեան զարգացումն առաջ մղող հիմնարկութիւններ և այլն և այլն, այս ամենը պարտաւորութիւններ ևն, որոնք դնուում են քաղաքազին ինքնավարութեան վրաւ:

Հաստ մեծ է, արդարե, այս ֆակտորի կատարելիք դերը մեր քաղաքների համար Ուստի չէ կարելի առանձին ուրախութեամբ չիշատակել այն իրողութիւնը, որ ներկայումս կովկասի երկրորդական, աննշան քաղաքներում—ինչպէս են Գանձակ, Շուշի, Գորի, Նուխի, Ալեքսանդրոպուլ և այլն հիմնուում է իշեալ հաստատութիւնը. Սակայն խնդիրն ան է թէ մեր քաղաքների զլուս անցած վարչութիւնները որքան օդաւում են իրանց տրւած իրաւունքներից, զործունէութեան եռանդի ինչ աստիճան են ցուց տալիս. Փորձը ցուց է տւել, որ մեծ կենդրոններում ինչպէս Թիֆլիսն է, վառ կենսունակութիւն արտաչալուել է. մինչդեռ միւս քաղաքները—ինչպէս Նրեանն է, չեն վակելմա աղոթիսի համբաւ. Դրա գլխաւոր

պատճառը գտնում ենք այն բանի մէջ, որ Երևանի պէս քաղաքներում կուլտուրական, հասարակական նոր տարրեր չեն առաջ եկել, հազրագիւա են մինչև անդամ քաղաքավին ինքնավարութեան գաղափարն ըմբռնող անհատներ։ Շատ կան բարձր կրթութիւն ստացած մասնագէտ անձինք՝ իրաւաբաններ, բժիշկներ, դիւզատեսներ, ուսուցիչներ և այլն—սական որանք, կարծես, կարեորութիւն չեն համարել միջամտելու քաղաքավին գործերի մէջ, բնաւ ձգում չեն արտադարտեր չենք ասում վարչութեան անդամ կամ քաղաքազում լինելու, դոնէ լոկ խորհրդարանի ձախաւոր ընտրելու։ Ուզում եմ ասել, որ ընդհանրապէս ուսեալ դասակարգը և կամ հասարակութեան ընդունակի, խելացի քաղաքացիները իրանց պահել են և պահում են հեռու քաղաքավին գործերից։ Այս հարցի առիթով գուցէ մէզ առարկեն ցենզի խնդիրը մէջ բերելով։ Մեր ինտէլիգէնտ գասակարդի մեծամասնութիւնը, մանաւանդ գաւառում, կուսեն մեզ, անապահով վիճակ ունի. ուստի և նա կաչք չանձնալով անկարող կը լինի օրէնքի պահանջի համաձան մասնակցութիւն ունենալ քաղաքավին գործերին։ Ուզու է ազդ նկառողութիւնը. բայց ցենզի խնդիրը այնպէս չնչին բան է, որ ուսեալ դասակարգին թէ հեշտ է և թէ պէտք է ձեռք բերել։

Շատ մեծ մոլորութիւն է այնպիսի մի կարծիք թէ ինտէլիգէնտ դասակարգը չպէտք հոգաչ իր տնտեսական ապահովութեան մասին, թէ նա փոքրանում է, չնչին է դառնում այն բարեկից, երբ իր իբր դասակարգի անձնական ապահովութեան խնդիրների մասին մտածում է։ Կրկնում ենք սա մի սխալ և դատապարտելի հակեացք է, որ ունին շատ շատերը մեր գործիներից։ Ընդհակառակը։ Ուրաքս զի լուսաւորւած դասը հնարաւորութիւն ունենալ զեր խաղալ մեր հասարակական և անտեսական ասպարէդնէրում, նա պէտքէ զինւի գիտութեան զէնքերով և թէ կուլտուրակի անհրաժեշտ միջոցներ ձեռք առնէ. նա կը հասնի ազդ նկառակենքին հետամուտ լինելով իր նիւթական ապահովութեան և բարեկեցութեան խնդիրներին. Նթէ նա ազգպիսի ուղղութեան կը հետեւի, նրա համար հեշտ կը լինի նաև կալւածական զինզ ձեռք բերել իրաւագէս մասնակցութիւն ունենալու քաղաքավին ինքնավարութեան գործերին։ Սական ազգպիսի ուղղութեան չէ հետեւ մեր ինտէլիգէնտ դասակարգը, ոչ էլ բուռն հետաքրքրութեան նշաններ ցուց տաել զէպի հասարակական խնդիրները։ Մրա լաւ ապացուցը կարող է տալ Երևանը և ազդ քաղաքի գուման։ Այս աւստեղ համառօտ կ'արձանագրենմ սուն թւի նուեմբեր ամսի 15-ին կատարւոծ քաղաքազիսի ընտրութիւնը Երևանում, որը կարող է մօտաւոր գաղափար տալ ընթերցողին մեր երկրի արզիւնաբերական նշանաւոր կենդրուներից մէկի քաղաքավին ինքնավարութեան արդի դրութեան մասին։

Թերևս լաւանի և ընթերցողին, որ բժ. Տիգրանեանցը անցեալ 1894

թէի ամսուը հաստատւեց Նրեանի քաղաքագլխի պաշտօնի մէջ. իսկ վերջինս ներկազացրեց իր հրաժարականը. Նրան լաջողեց մի քանի ամիս միայն քաղաքագլխի պաշտօն վարել. Մենք չենք մտնում քննութեան մէջ այն հանգամանքների, որոնք դրդեցին նրան հրաժարել հասարակական ասպարէզից, սակայն եթէ ճիշտ է պատուղ այն լուրը, որ անձնական պատասխիրութեան դիպչող մի չնչին հանգամանք առիթ է եղել հրաժարման, երբէք աղղափիսի մի վարմունք արդարացուցիչ չենք կարող համարել:

Նախկին քաղաքագլուխ Վասիլ Գեղամովի Մըջանի կորոսաբեր և անխաջող հանդամանքների չնորհիւ քաղաքը գտնուում է կատարեալ ողբալի վիճակի մէջ. շատ կիսուական խնդիրներ չարուցւած և չլուծւած, քայաքը պարտքերի մէջ թագաած, փողոցները աղտոտ, օդն ու ջուրը անմաքուր. մանաւանդ Նրեանի գործածական ջուրը, որը ջուր չէ, այլ ամօթչինի ասել, լացքի ջուր է,—ահա աղղափիսի պարագաներում քաղաքի համար ահագին բարիք կը լինէր մի խելացի գործունեալ վարչութիւն և լաւ կազմակերպւած քաղաքափին Դումա:

Ոչ մի քաղաքում ազգաբնակութիւնը աշքի չէ ընկնում անսպէս ազգանդակւած, ազլասեուած ինչպէս Նրեանինը. Այդ նշմարում է աւելի խորական սեռի մէջ. փորձեցէք ներկայ լինել մի հանդիսին, մի տօնախմբութեան և տեսէք թէ ինչ ազանդակ, տղեղ, նիհար, մեսելաչին կանացի դէմքեր են ձեզ հանդէալ դալիս Ժողովուրդի այս ազանդակման գլխաւոր պատճառներից մէկը ես վերագրում եմ ջրի, օդի կեղտուութեան և թէ փակ, անշարժ կեանքին:

Մանաւանդ Ջրի և քաղաքի մաքրութեան խնդիրները ամենակենսական խնդիրներն են. Նրեանի համար, որոնց վերաբերութեամբ սական ոչինչ դրական բան ցանքօր չէ արւած: Կրկնում ենք՝ ալսպիսի պարագաներում անհրաժեշտ էլք տոկուն, խելացի և հաստատամիտ մի քաղաքազլուխ, որը գործի ծանրութիւնը իրան վրաէ աւնելով՝ խոլս չուար ապարէզից ամեն զատարկ և չնչին պատճառով: Աւզիզ է, պատւասիրութեան զգացումը չատուկ է ամեն մի կրթւած մարդուն, բայց քանի որ խնդիրը վերաբերում է ընդհանուր շահերին, ազդ դէպքում մարդս իր «համը» մի կողմն է գնում, զոհում է իրան, ի նկատի ունենալով որ ընդհանուրի զգացումը է պահանջում: Բանը հէնց նրանումն է, որ հասարակական գործունէութեան ասպարէզը վարդերով չէ ծածկւած. որէտք է, անցնել փշոտ շաւիղը հասարակական բարօրութեան իդէալներին հասնելու համար: Չնչին անմիտ մի հանդամանք չէ կարող առիթ տալ անձնուրաց հասարակական գործչին խոլս տալու հասարակական ասպարէզից: Հակառակ դէպքում—աղղափիսի մի վարմունք թուլութիւն, փոքրողութիւն կ'անւանելու Միւս կողմից, եթէ մէկը կոչւած է հասարակութեան քւէով

մի պատասխանատու պաշտօնի, նա բարովապէս իրաւունք էլ չունի խոյն տալ գործից, հրաժարւել ժամանակից առաջ աննշան պատճառով. հաւարակական զատի առաջ ալղայինի մի վարմունք. կը համարէր մեղանչունն պարտաճանաշութեան դէմ:

Աւս կարենոր դիտողութիւններն անելուց լետոյ գիմննք մտանաւորապէս քաղաքազիսի վերջին ընտրութիւնների մասին խօսելու:

Նուեմբերի 15-ին նշանակած էր ընտրութիւնը. Զայնաւորների թիւը ընդամենը քսան և երկուս է, որոնցից 14 հազ են, 8 թուրք, Թուրք ձունաւորները ընդհանրապէս միարերան են գործում. Նրանք, ցաւալի է սուել գրեթէ միշտ առանձին դերք են բռնում և կազմում են խորհրդարանի լետաղէմ, բէակսիօններ տարրը:

Խոկապէս թէ հայերի և թէ թուրքերի մէջ գորութիւն չունի բնաւ կուսակցական պալքար վում զաղափարների համար, այլ նրանք բաժանւած են 3, 4, 5 հոգուց բաղկացած փոքրիկ խումբերի, որոնցից իւր բազանչիւրը զեկավարում է աւելի իր անձնական, նեղ չաներով քանչ քաղաքի բարեկեցութեան խնդիրներով: Թէ այս համգամանքը և թէ զշւ խաւրապէս ախ, որ որոշ գաղտնաբարների և ուղղութեան հետեւղ կուսակցութեան բաժանումներ չկան, այլ կան բաժանւած խորակներ, թափանակ: Ներկայ ընտրութեան՝ առիթով, որը արդէն մի քանի ամիս առաջ չափոնի էր ձանաւորներին, տեղի ունեցաւ միան մի նախալարատական ժողով. այդ ժողովում թւրք ձանաւորները, զաւելով հաշվից ինչպէս միշտ, ցանկութիւն չեն լավանում ձախ տալու հակ թիւնածուներից և ոչ՝ մէկին: Խոկ հայերը նունպէս բաժանւում են խմբակների թևկնածութեան հարցի առիթով:

Ալուսեղ պէտք է մի տխուր հանգամանք լիշառակել, այդ այն է, որ ներկայում Երեւանում չկայ քաղաքազլուխ լինելու համար իրաւախոն, ընդունակ, զարգացած և այլ արժանաւորութիւններով օժտւած մի անձն, որի վրայ ընտրութիւնը մեծամասնութիւնը համարձակ կերպով, առանց խղանական հարաբեկութիւնի իր աչքը: Դուքց կան աղղափիսիներ, բայց նրանք թագնւած են կամ հեռու են պահում իրանց, ասպարեզ չեն դուրս գալիս: Հենց նուն իսկ, եթէ ի նկատի առնեք քաղաքապէն դումայի ներկայ կազմը, որտեղ մի հատ աչքի ընկնող ինտէկտէնտ, անձ չկայ բառիս բռն նշանակութեամբ, այն ժամանակ պարզ հասկացողութիւն կարելի է կազմել պատեղի քաղաքային ինքնավարութեան գործերի մասին:

«Անվ պէտք է լինի քաղաքազլուխու ակսհարցն էր, որ կ'լսէիք ամեն մէկի բերանից: Հասարակութեան և ձանաւորների չը չաններում խօսւում էր ոմն չայկ Ամբակումնանի և վերջերս իրաւաբան խանակ Անլիք Աղամալեանի՝ (լաւոնի Պահրաման Մելիք: Աղումալեանի որդին): Բնկնածութեան

մասին. խօսւում էր նոցնպէս Մ. Բունիաթեանցի, Ղորդանեանցի, Քալանթարեանցի մասին. Պ. Հայկ Ամբակումեան, ինչպէս լսեցի, մերժել է իր թեկնածութիւնը քաղաքագլխի պաշտօնի համար. նա հաշտարար դատաւոր է Երևանի գաւառներից մէկում, Խոկ պ. Մելիք-Աղամալեանի մասին ոչինչ որոշ բան չալտուեց. ձանաւորներից մի քանիսը լուս ունէին, որ նրանից թեկնածութեան համաձանութիւնը կ'աշխատեն ստանալ շուտով. երևի հենց այդ գիտաւորութեամբ ձանաւորներից մէկը ժողովում, նաևս քան ընտրութեան ձեռնարկելը, առաջարկեց լիտաճդել ընտրութիւնը. Ժողովի, նախագահը, քաղաքագլխի տեղապահ պ. Բունաթեանց՝ շատ իրաւացի նկատեց թէ ինքը շատ անզարմար է գտնում դարձեալ լիտաճդել ընտրութիւնը. մինչդեռ ձանաւորները երկար միջոց ունէին խորհեշու քաղաքագլխի լաւագոն ընտրութեան մասին. Ցամենաց դէպս ժողովը գաղտնի քուէարկութեամբ ձանից բազմութեամբ որոշեց անմիջապէս ձեռնարկել ընտրութեան:

Զարմանալի դանդաղ և անհուատես մարդիկ են առհասարակ մեր իրաւասուները. Եթէ հասարակութեան մէջ գտնուում է մի անձն, որ ար ժանաւորութիւններ ունի և լաւ համբաւ է վաելում, ինչո՞ւ նախօրօք չօգտել, քանի որ միջոց կայ, չմտածել, չաշխատել, չամողել սրան նրան արժանաւոր անձի թեկնածութիւնն առաջ քաշնլու. և ինտոք գալ փոխանակ զրան, ժողովում առաջարկել ընտրութիւնն լիտաճդել. Պ. Խո. Մելիք Աղամալեանը, ասում են, ունի լաւ քաղաքագլուխ լինելու արժանաւորութիւններ. ինքը կրթւած, ընդունակ, խելացի անձն է, Նթէ նա աւելի օգտակար կը լինէր, ուրեմն Դուման գործել է մի աններելի սխալ մունք, Կարող էք երևակալիք. զեռ ժողովի նիստը շրացւած, ձանաւորներից շատ-շատերը տարակուանքի մէջ էին թէ ում պէտք է ընտրել. Կը տեսնէիք երկու-երկու, երեք-երեք ձանաւորների ջոկ ջոկ խմբակներ կանգնած պատի մօտ, անկիւնում, զրան շեմքին փսփոց են գցել և խորհրդակցում քաղաքագլուխ ընտրելու. Առանց նախապարասուած լինելու զալ և քաղաքագլխի ընտրութիւն անել, դա չգիտեմ թէ որտեղ է լուսած և տեսնւած.

Ահա ալսպիսի պայմաններում տեղի ունեցաւ ընտրութիւնը. ընտրողների թիւը քսան էր. բացակալում էին մի քանի ձանաւորներ. գալունի քուէարկութեամբ նախ ընտրւեցան թեկնածուներ. Մ. Բունիաթեանցը (քաղաքագլխի տեղապահ) ստացաւ 14 ձան, Թաղ. Քալանթարեանց (առանձին լանձնարարութեանց պաշտօնեալ նահանգապետի մօտ) - 10 ձ., (առանձին լանձնարարութեանց պաշտօնեալ նահանգապետի մօտ) - 10 ձ., Ցովի. Ղորդանեան (նախկին քաղաքագլուխ) 4 ձան, Մէհատի-բէկ Սուլթանով (քաղաք. վարչ. անդամ) 1 ձ.: Բացի պ. Բունիաթեանից միւս ները հրաժարեցին քուէարկւել. Ընտրութեան հետեանքը լատնի է «Մուրճուի ընթերցողներին, — պ. Մ. Բունիաթեանցն ընտրւ ց 12 ձա-

Նով ընդդէմ 8-ի, Ընտրութեան ալսպիսի հեանանքից լետոյ ձայնաւոր-
ները ժամ 9-ին երեկոցեան սուս ու փուս ցրւեցան իրանց տեսերը, ինչ-
պէս սուս ու փուս եկել էին: Քաղաքագլխի ընտրութիւնը տեսեց մօտ
մի ժամ:

Նորընտիր քաղաքագլուխ պ. Միք. Բոնիաթեանի մասին ընդհան-
րապէս վաս չէ կարելի ասել. երկար ժամանակ, մօտ տաս տարի ծառա-
չել է իբր քաղ. վարչ. անդամ, ուրեմն փորձւած, տեղեակ է քաղաքակին
դործերին, շիտակ, հանդարտաբարով մարդու համբաւ է վակելում, առանց
բարձր կրթութեան, Եւրոպակում ճանապարհորդութիւններ է արած: Ի սրտէ
ցանկանում ենք լաջողութիւն նորընտիր պաշտօնեալին իր հասարակական
գործունէութեան մէջ:

ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԸ ՄԵՐ ԺԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

ԳԷՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

Նատ տեղեր, մեր երկդասեան դպրոցների երգեցողութեան ուսուցիչները կաշխներից զուրս են զալիս, ըստ ծրագրի՝ անցնել ութ ձախ շարականներ. Այդ պարոնները, շատ պարզ է, որ չեն հասկանում այն թէ որքան ձանձրացնում և նոյն իսկ բթացնում են խեղճ և ամսեղ մանուկներին. և այդ անում են նրա համար, որ չլինի թէ աւագ-ուսուցիչը կամ հոգաբարձուները չասին թէ բան չի սովորեցրել և տարւակ վերջը դուրս անեն... Ահա թէ ինչ վիճակի են մատնած մեր դպրոցներում երգեցողութեան և ձախագրութեան դասերը: Եւ ինչ, փորձեցէք արտպիսի զպրոցների Վ-րդ բաժնի (վերջին տարւակ) աշակերտներից մէկին նարցնել մի ամենահասարակ կանոն ձայնադրութիւնից, նա, փոխանակ առասխանելու, ապշած կը նաէք, որովհետեւ ոչինչ չոնի պատասխանելու...

Մի որ և է առարկալի ուսուցիչ, եթէ չկարողացաւ իւր առարկան հետաքրքիր դարձնել աշակերտներին, շատ պարզ է որ նա ոչ մի չաջողութիւն չի ունենալ և ամբողջ տարում ոչ մի չառաջադիմութիւն չի կարող ցուց տալ.

Դասերն աշակերտներին հետաքրքիր դարձնելու և նրանց չձանձրացնելու համար, հարկաւոր է մասամբ գոնէ ծանօթ լինել մանկավաճական կանոններին, որի համար պահանջում է և փոքր ինչ զարգացում...

Այս բաներն աչքի առաջ ունենալով, զժւար չէ ենթազրել, որ հէնց այդ իսկ պատճառով էր որ Արխտակէս սրբազնը (Սեղբակեան) ճեմարանի տեսուչ եղած ժամանակի, ձախնագրութեան համար քննութիւն տւողներից պահանջում էր ամենապակասը թեմ. զպրոցի Վ-րդ դասարանի քննութիւն կամ վկաչական: Այդ միանգաման խելացի և օգտակար կարգադրութիւնը շատ ուրախալի էր և մենք կարծեցինք որ գոնէ ակտունետե մեր ծխական դպրոցները կ'ազատւէին անկարմար անձնաւորութիւններից: Բայց ափսոս շատ կարճ տեսց այդ...

Նախ քան այդ կարգադրութիւնը, ամեն մի մարդ, լինէր նա դպրոցի երես չտեսած արհեստաւոր, ծառաւ չ (կ'ապացուցանենք ևթէ հարկ լինի) և ազն, մի երկու-երեք անխօս նոտաճու մօտ տիրացութեան սովորելով և նրանից էլ մի թերթ թուղթ առնելով, դառնում էր պաշտօնական ուսուցիչ «Հայկական եկեղեցական ձախագրութեան» և մտնում էր պաշտօնական ուսուցչական ցանկի մէջ:

Ի՞նչ հեշտ բան, առանց կարգալու, առանց խելքին զոր տալու, 50—60 րուբլով ուսուցիչ դառնալ... էլ ինչ հարկաւոր էր ցէնզ:

Եւ ինչ անմտութիւն պահանջել այդպիսի մարդկանցից, որ իրենց առարկան մի որոշ սիստեմի ենթարկեն, առարկան՝ որն առանց աչն էլ զուրկ է թէօրիավոց և հիմունքներից, որը չի դիմանալու ակնաթեթև կրտսիկալի, (մի ուրիշ անգամ կ'աշխատենք խօսել հայկ. եկեղ. ձախագրութեան մասին) և հէնց այդ վերոդիշեալ պատճառներով էլ ձախագրութեան ուսուցիչների վրայ ընկնում է մեծ պարտականութիւն—կանոնաւորել իրենց առարկան և սուտ ու սիսալ բաներ չուսուցանել սաներին:

Այդ նպատակին հասնելու համար, ձախագրութեան ուսուցիչներին օգնութեան կարող է հասնել «Եւրոպական ձախագրութիւնը»:

Ամեն մի ձախագրութեան ուսուցիչ (ուսուցիչ ենք ասում...) ուսումնասիրելով եւրոպական ձախագրութիւնը, կը կարողանակ կանոնաւորել իւր գասկերը և անհամեմատ հեշտացնել իւր դորձը:

Եւրոպական ձախագրութեան մշակւած կանոնները միակ բանալին կարող է լինել մեր ձախագրութեան ուսուցիչների համար դասաւութեան մէջ, որի օգնութեամբ միայն կարելի է իսկ ապէս ձաւնագրութիւն սովորել իւր գասկերը:

Մենք չենք ասում որ ալֆմ պէտք է թողնել հայկ. ձախագրութիւնը և եւրոպականը սովորեցնել, որը մեր ձախագրութեան մաքրն է—այդ հարցը ժամանակը լաւ. կ'որոշէ—ալ՝ Եւրոպական ձախագրութեան մշակւած և զանազան թէօրիաների վրայ հիմնւած կանոններով ուղղել մեր ձախագրութեան սիսալները և այնպէս անցնել որի հետևանքը կը լինի այդ առարկալի լառաջաղիմելը և որ, ուսուցման ոգուն համաձայն, սուտ և սիսալ բաներ սովորեցրած չենք լինի աշակերտներին:

Մի երկու խօսք էլ մեր զպոցական երգերի մասին:

Ինչքան պատասխանաւութիւն որ ընկնում է ձախագրութիւն դաստող ուսուցիչների վրայ այնքան պատասխանաւութիւն էլ ընկնում է միենոն ուսուցիչների վրայ երգի դասերի համար:

Նախ ուսուցիչը ամենախիստ ընարողութիւն պէտք է անէ երգերի մէջ թէ խօսքերի և մտքի, և թէ եղանակների նկատմամբ:

Դժբաղդաբար մեղանում նկատւած է արդէն որ երգի ուսուցիչները մեծ մասամբ ալդ բանն աչքի առաջ չունին. Նատ դպրոցներում մանուկ-

Ներին տրում են նոցա հասակին անհամապատասխան և հասկացողութիւնից բարձր երգեր, կամ նոյն իսկ աչնպիսի երգեր, որոնցից ոչինչ բարողական չի կարելի դուրս բերել աշակերտների համար:

Ազգափախ երգեցողութիւնը ոչ միտք ունի և ոչ էլ օգուտ, բացի վեասը: Շատ անգամ էլ վերցնում են մի որ և է երգ կամ, աւելի ճիշտն ասած, աշուղական մի «խաղ» և, անունը ժողովրդական երգ կնքելով, սովորեցնում են մանուկներին: Ժողովրդական երգեր, այս, պէտք է սովորեցնել դպրոցներում: Բայց ազգափախ երգերի ընտրութեան մէջ շատ խիստ պէտք է լինել, որովհետեւ մանուկներին ամեն տեսակ վայրի մերու բան չի կարելի տալ:

Պէտք է աչքի առաջ ունենալ, որ երգը կրթելու է մանկան միտքը, նրա համար լինելու է զբաղեցնող և կրթող մի միջոց, ուստի չպէտք է սովորեցնել աչնպիսի երգեր, որոնք զարթեցնում են նրա մէջ անպատճե զգացմունքներ: Երեխանները թութակներ չեն, ուստի չպէտք է տալ նրանց աչնպիսի երգեր, որոնց անգիր անեն թութակի պէս, առանց հասկանալու այդ երգի միտքը, նրա բարուղականը: Չպէտք է տալ նրանց աչնպիսի երգ, որը պարունակէ իւր մէջ նոյն իսկ բառեր՝ որոնց գործադրութիւնը դուրս է մանկան աշխարհականութիւնից:

Գալով եղանակներին, այսքանը կասենք, որ առհասարակ հայերս մի զարմանալի զատկութիւն ունինք—ամեն ինչ աշխատում ենք լավացնել, թէկուզ այդ անկարելի էլ լինի:

Երբ մի որևէ եւրոպ. եղանակի կտոր դնում է մի ինչ որ հայերէն երգի վրայ, այդ եղանակը անպատճառ պիտի աղաւաղեն իրենց կամեցածի պէս երգելով և ուսուցանելով, առանց մտածելու, որ ոչ մի իրաւունք չունին մի որ և է հեղինակի աշխատութեան հետ աղղփիսի խաղ խաղալու:

Թողէք, պարոններ, երգերն իրենց եղանակներով, աշխատեցէք երգել անպատճառ նոտաններով—ինչպէս որ գրած են, այն ժամանակ միան կը տեսնէք, որ աղղփիս գեղեցիկ է: իսկ եթէ աւելի հետաքրքիր լինէք, այն ժամանակ կը նկատէք թէ հեղինակը իւր այդ եղանակով մեր ո՞ր զգացմունքներն է կամեցել շարժել:

Այս առարկան մինչեւ այժմ ոչ մի ուշադրութեան չի արժանացել, որի չնորհիւ և համարեա բոլորովին մոռացութեան մատնած՝ հետզհետէ չետ է զնացել:

Մեր այս դրութեան մէջ, այս դատապարտելի անփոխութեան առաջն առնելու պատասխանառութիւնը ընկնում է գլխաւորապէս մեր ուսումնարանական վարչութիւնների վրայ:

Նոցա պարտականութիւնն է այդ առարկալի համար ևս, ինչպէս միանների, ուսուցիչ հրաւիրելիս խիստ ընտրութիւն անել, և արժանա-

ւորներին խրախուսելու իսկ ուսուցիչների պարտականութիւնն է աշխատանք, իրենց առարկան բազմակողմանի՝ կերպով ուսումնասիրել և այդպիսով գուցէ կարելի լինի այդ առարկան բարձրացնել և իւր դիրքում պահել։ Բայց ամենամեծ պատասխանատութիւնն ընկնում է հաջ երաժիշտների վրայ, որոնք Զաքարէի պատանձումն են պահել այս հարցի վերաբերմամբ։

ՆԱՄԱԿՆԵՐ ՍԵՒ ԵՐԱՎԻ ԱՓԵՐԻՑ

3. ՄՈՒՐԱԴԵԱՆՅԻ

IV

Այս տարի ամբողջ Սուխումի շրջանում՝ իմ ստացած տեղեկութիւններին նակելով՝ թութունը շատ լաւ է եղել թէ չատկութիւնով և թէ քանակութիւնով. Շատ տեղ արդէն շրջանում ծախւած են թութունները, թութունի գները այս տարի բարձր են. Մծարա գիւղում, ուր ստացում է շրջանի ամենաընտիր թութունը, այս տարի թութունի գինը հասաւ մինչև 5 ռուբլի ու կէս՝ փթին. Ճշմարիտ է աղակէս բարձր գնուզ միան միերեք տունն է ծախսած, բայց և այնպէս չէ կարելի չփշել որ ընդհանրապէս ասելով, այս տարի ամեն տեղ էլ թութունը լաւ գին ունի. Նոյն իսկ մեր Ծէրէլդակի պէս տեղում, ուր այս վերջին երկու տարին շատ ընկաւ թութունի գինը, այս տարի այդ տեղ էլ հայ գաղթականներից միերեք տուն կարողացան ծախել թութունը փութը 10 ռուբլով. Իսկ Ծէրէլդակի հայերին մօտիկ լոյն գաղթականներից մի քանիսի թութունը մինչեւ անգամ տասից էլ անցաւ. Դրա պատճառը ոչ այնքան լոյների հմտութիւնն ու վարպետութիւնն է, որքան իրանց նստած տեղի չարմարութիւնն և հողավին ու կլիմական պայմանները. Նրանց տեղը հայերի նստած տեղից ցածր է, անքան ցուրտ չէ և հողն էլ թութուն բերող.

Ճախւած թութուն գլխաւորապէս զեռ Ծէրէլդակամ կաէ. շրջանի միւս տեղերում, Գուղառողի բաժնում, ինչպէս ասեցի, չճախւած ալսօր շատ թութուն կաէ. Այնտեղ ամեն տարի էլ համարեա ազդպէս է լինում. չճախւած թութուն չէ մնում. Խսկ այս տարի, որ ինչպէս երեսում է, պահանջը շատ է, էլ աւելի լաւ է ծախւուն. Այն տեղերի համար ալսօր տաս ըուբլի փթին ստոր գին է. տասից պակաս՝ այս տարի դեռ չէ լսւած այն կողմերում. Միջակ գինը այս տարի՝ ծախւածներին նակելով կարելի է ընդունել 12—13 ռուբլի փթին.

Բանը մեծ գնով ծախելը չէ, բանը ծախսածի համեմատ գինը ստա-

նալն է. Այս վերջին տարիներս, մանսւանդ սրանից երկու տարի առաջ, քիչ չեն եղել այնպիսի դէպքեր, երբ գիւղացին թութունը լանձնելիս՝ չէ ստացել այն գինը, որով ծախած է եղել այլ նրանից աշաքան կամ այնքան պակաս. Յիշում եմ երկու տարի. սրանից առաջ ինչպիսի լաւահատութիւն ու գժգոնութիւն էր տիրում շրջանի բոլոր թութուն արդիւնաբերողների մէջ. թէ հայ և թէ ցոճ գաղթականներ, ամենքն էլ դժողոհ էին վաճառականներից շատերի կողմից զործուած կեղեցումներից ու զրկանքներից. Չորս կողմից լաց ու զժգոհութիւն էր լսվում նրանց հարստահարող ու անարդար առեստրի վրայ. Խութունը լանձնելիս՝ կոտրում էին աջ ու ձախ, ոչ թէ մի-մի փթերով, այլ տամնեալ փթերով. Չեմ մոռացել՝ մէկին մինչեւ անգամ ամբողջ 80 փութ կոտրել էին մի անգամից, մոռանալով, որ աղջան տասնաւոր փութ թութուն ստանալու համար, խեղճ գիւղացին ինչքան արև ու անձրեւ էր կերել, ինչքան կեանք էր մաշել, ինչպիսի անխիղճ ու տմարդի բան. կոտրել միանդամից 80 փութ, ոտի տակ տալ այնքան աշխատանքը, մերժել ու չտալ ամբողջ ութ հարիւր բուրդի (փութը տասը բուրդով է եղել ծախսած թութունը), իրան էլ ինչ կը մնայ. Ասենք թէ աւելի էլ մնայ, պէտք է խլել ձեռքից աւելին, նրա հալալ աշխատանքը, նրա քրտնքի արդիւնքը.

Ճշմարիտ է գուցէ ամենքին աղջան շատ-շատ չէին կոտրի, լաց միննոցն չէ. քիչ ունեցողի համար՝ քիչն էլ շատ բան է, և վերջապէս անարդարութիւնը անարդարութիւն կը մնայ, ինչքան էլ թէ կեղեցումը քիչ չափով եղած լինի. Գանք որ այն տարին զեղչերի մեծ մասը տասնեակ փթերով էին հաշուած. Հենց զիցուք, եթէ ամեն մէկից տասուտաս փութ, կամ նուն խսկ եթէ զրա կէսն անգամ կոտրէին (միջին հաշուզ դրանից պակաս չէր լինի), գարձեալ վնասը ահագին բան է լինում. Ամբողջ շրջանում հաշելով 500 տուն հայ գաղթականներ, միմիան հակերի վնասը կը լինէր քսանուհինդ հաղար ուրելի, եթէ ոչ աւելին. Հապա լոյների վնասը. չէ որ նրանք էլ հակերի նման՝ հաւասարապէս ենթարկեցան զրկանքներին, Այսպէս ուրեմն միմիան մի տարւան վնասը ահագին թիւ է կազմում, ինչքան կը լինի հապա այն բոլոր վնասների ու զրկանքների գումարը, որ համարեալ պարբերաբար ամեն տարի էլ գար են զրել, թէս պէտք է ասել վերջներ ոչ այնպէս խիստ, ինչպէս երկու տարի առաջ. Վերջին երկու տարիներս կեղեցումները մի քիչ մեղմացել են և թութուն արդիւնաբերողները փոքր ինչ չունչ են առել. Եթէ ազդ էլ չինի և կեղեցումներն առաջւան պէս շարունակւէին, ահագին հարւած կը համնէր թութունի մշակութեած զործին և դրանով մեծապէս կը վնասւէր երկրի տնտեսական զարգացումը:

Պէտք է զիտենալ, որ թութունի մշակութիւնը այսուղ, Ստխումի շրջանում, պատահական ու կողմնակի պարապմունք չէ. Այդ բերքի մշ-

կութիւնը ախտեղ, կովկասեան ափերում և մամնաւորապէս մեր շրջանում՝ հացաբուխերից աւելի է տարածւած։ Համարեա աճնքան սիմինդրու ցորեն չեն ցանում, ինչքան թութուն։ Թութունը ոչ միայն ամենատարածւած բերքն է, ալ և շրջանի ամենաառաջին ու գլխաւոր արտահանող բերքն է։ Ամբողջ շրջանում մի հայ գաղթական տուն չկայ, որ դրանով պարապելիս չլինէր, չոների մէջ կան թութուն ցանողներ, բայց հայերի մէջ—հազւագիւտ են դրանք։ Չնայելով կրկնող զրկանքներին, չնայելով տեղ-տեղ հողակին կապալի ծանր պայմաններին, ալդ բերքի մշակութիւնը տարուց տարի մեծ ծաւալ է ստանում հայերի մօտ։ Այսօր միմիան շրջանի հայ գաղթականների տարեկան արտահանած թութունի քանակութիւնը մի պատկառելի թիւ է կազմում, այն է մօտ քսան ու հինգ հազար փութ, որ քիչ բան չէ մի 500 տան համար։ Եօթանամնական թւերի սկզբին, երբ զեռ նոր էր սկսել շրջանում թութունի մշակութիւնը և հայ գաղթականներ չկափին, տարէնը միան 2 հազար փութ է եղել ստացելիս ամբողջ շրջանից։ Ընդունելով 25 հազար փութ, մի տան վրայ միջին հաշւով դալիս է 50 փութ, այն է մօտ մէկ դեսնատին պլանտացիա, որ շատ չպէտք է թիւ, քանի որ շրջանում շատ կան աճնպիսի հայքանակ տեղեր, ուր մի տուն մշակում է 2—3 դեսնատին թութուն, իսկ տեղ-տեղ նուն իսկ 4—5 դեսնատին և մինչեւ անգամ դրանից աւելի։ Այդ կողմից Սուխումի շրջանը ամբողջ Կովկասեան ափերում առաջին տեղն է բռնում։ թէ արտահանած թութունի քանակութիւնով և թէ ընտիր չատկութիւնով։

Սուխումի շրջանից չետուց, այս վերջին մի-երկու տարին թութունը լաւ ծախւում է նոյնպէս և Սոչիի բաժնում, ուր այդ բերքի մշակութիւնը համարեա միան հայ գաղթականների ձեռքին է։ Անցած տարի աճնտեղ էլ լաւ ծախւեց թութունը՝ մինչև 10 լուրի, իսկ տեղ-տեղ մի-երկսինը մինչեւ անգամ տասից էլ մի քիչ աւելի։ Բայց և աճնպէս, ինչպէս երեսում է, թութունը աճնտեղ զեռ այն գինը չունի, ինչ որ ունի Սուխումի շըրջանում։

Ամեն տեղ էլ Կովկասեան ափերում մշակուած թութունը զուտ թիւրքական տեսակի սերմիցն է, սամսոն և տրապիզոն։ Ամենաարածւածը—սամսոնն է, որ թէ աւելի ազնիւ է և թէ աւելի զին ունի։ Տրապիզոնը քիչ է և ամեն տեղ չեն անում։

Զարմանալի է, որ մեր Կովկասեան գործարանատէրներից համարեա ոչ ոք չէ գալիս ասք կրզմերը, թէն Կովկասեան ափերի թութունի հըռչակը, ինչպէս երեսում է, Ուուսասատանի ամեն կողմերումն էլ տարածւած է։ Դրան ապացուց է այն հանգամանքը, որ մեր կողմերի թութունը զնելու համար տարուց տարի եկող վաճառականների թիւն աւելանում է Ուուսասատանի ու Պրիմի կողմերից եկող նորանոր չափոնի թիրմաներով։ Հաս-

անգամ նոյն իսկ՝ թութունը չքաղած, իրար վրայ թափում են նրանք, տեղ-տեղ իրար ձեռքից խլում են հաւանած թութունը, այնքան որ երբեմն դրա պատճառով իրար հետ անախորժ վէճերի ու դատի մէջ են բռնւում: Մասնաւորապէս իր ազնիւ ու ընտիր թութունով մեծ անուն է հանել Մծարա զիւղը, թէև համարեա ամբողջ շրջանումն էլ, գուցէ բացի միայն բարձր ու ցուրտ Ֆէբէլդակից, ամեն տարի էլ ընտիր թութուն է լինում:

Անմիիթար լուրեր են գալիս հալրենիքից: Առաջան պէս պանդուխտներ ու գաղթականներ են գալիս Անատոլիական ափերից: Այստարի և կողների մեծ մասը Տրապիզոնին մօտակաչ Պլատանա գաւառակի հայերիցն էին, թէև կազին նոցնպէս մի քանի տուն Զարշամբակի կողմնրից: Խմ ստացած ամենանոր լուրերին նաև լուսնիքում շատերն են պատրաստում գաղթելու գէպի մեր կողմերը: մի քանի առանցից ալս մօտիկ օրերա են գալու Խնչպէս երեսում է, ընդհանուր դժգոհութիւն է տիրում ամբողջ Տրապիզոնի վիլայէթում: Տնտեսական ծանր պարման-ները ամեն տեղ էլ նահանդի մէջ - ճնշում, խեղդում են հայ ժողովրդին:

Բոլոր նամակների մէջ, որ ստացում են Անատոլիական ափերից ալս տեղերի պանդուխտների անունով, նրանց ծանր վիճակն է վիշտու: Ակդ տեսակ նամակներից շատերն են անցել իմ ձեռքը. երեք խօսք կան որ նրանց բոլորի մէջ էլ միշտ կրինուում է. պարտք, տուրք ու «փարա»: Ամենքն էլ պարտք ունին, ամենքն էլ տուրքերից են խեղդւած. ամենքն էլ փող-փարա են ուզում: Հայրը որդուն, եղբարը եղբօրը, կինը իր էրկան - ինչ որ զրում են, զերջ ի վերջոց փող են ուզում: Առանց փողի անունը տալու համարեա ոչ մի նամակ չէ ստացում, առանց հարցնելու, թէ ում որ զրում են, աղքան փող կունենաց, որ իրանց զրկի: Եթէ ունենաց, ի հարկէ չի խնացի, չէ որ զրա համար է թողել իր աշխարհը, զրա համար է բաժանել նրանցից, զրա համար է ծով ու ցամաք եկել, սարէ սար անցել, թէ ինչ է մի քիչ փող աշխատի, որ տան վիճակը թեթևանալ:

Աշխատանք, բայց դաւոն ու լեզի աշխատանք: Օտարութեան մէջ, ուրիշների մօտ, ոփելիներից հեռու, զուրկ սրտակից ու կարեկից ընկերից՝ կնոջից, մօրից, եղբօրից, զուրկ բոլոր քնքշութիւններից ու սիրուց, նա պէտք է մաշի իր օրերը, ամիսներն ու ձիգ տարինները ուրիշի դռներն ընկած, ուրիշի արտերում, ուրիշի գործի վրայ, ուրիշի օջախի մօտ... Ի՞նչ զժւար ու վաս բան է երբեմն պանդխտութիւնը, Աշխատանքը, ամենօր լարւած ոչքերով ծանր աշխատանքն է միայն, որ մոռացնել է տալիս նրան իր վիճակը, մտահան անել տալիս նրան իր սիրելիները և մի-

քիչ հովութիւն տալիս նրա զարդից ու կարօտից ազրւած ու մաշւած սրտին, ի՞նչ անէ. վերադառնալ պարապ, զատարի ձեռքով—այդ չի կարող նա, Աւելի լաւ է համարում մի քիչ էլ սպասել, մի քիչ էլ համբերել, մինչև որ մի փոքր գումար կանցնի իր ձեռքը, Աւ ահա նորից շարունակում է անխնաց ու կենսամաշ աշխատանքը. արե, անձրի ու բնութեան ոչ մի պատահար ու սարսափ նրան չէ վախեցնում. չէ կանդնեցնում նրան իր մտքից. մինչև որ վերջապէս մի քանի մանէթ փող է անցնում նրա ձեռքը և նա՝ անհամբեր շտապում է վերադառնալ իր օջախը.

Բայց ամենքին չէ վլճակում արդ աջող վախճանը. Ամենքը չեն դիմանում օտար, պանդիտական կեանքից անբաժան զրկանքներին. Տաժանելի աշխատանքին, տեղ-տեղ Կովկասեան ափերի նորնքան տաժանելի ու ապականւած, ջերմոտ կլիմային, դառն օտարութեան—ամենքը չեն դիմանում Վահ նրան, ով հիւանդանում է:

Մեն-մենակ ընկած է հիւանդ պանդուխտը. անտէր, անոք-նական, Ով պիտի նրան խնամի ու պահպանի, ով պիտի նրան դեղ անի. ով պիտի ուրիշի համար դիշերը անքուն անցկացնի. Քանի-քանիսներն են ևղել ալղակու, Աւ ահա շատերը, դեռ ջահիլ ու կտրիճ, երիտասարդական ծաղիկ հասակում փշել են իրանց վերջին չունչը օտար աշխարհում, ուրիշի դռանը. դարդն ու կարօտը սրտի մէջ՝ իրանց հետ զերեղման են տարած. Դառն պանդիտութեան զոհերն են դրանք. Խոկ աշնաեղ՝ հայրենիքում դեռ սրբառում են նրան, դեռ կարօտում են նրան, մինչև որ վերջապէս մի չարագուժ նամակ կիմացնէ նրանց իրանց սիրելի ակուրբաթի» մահը.

Ի՞նչ պէտք է անէ նրա որբացած տունը, ով պիտի կերակրէ, պահպանէ նրանց, ով պիտի տայ թիւրքական անվերջ ու մնչափ տուրքերը. Մի տուն էլ պակսեց հայրենիքից, զաղմել, թողնել, փախչել աւստեղից, ալս դարդ ու կրակի աշխարհից, ուր մահ ու զերեղման է թւում նրանց աչքին, գնալ, կորչել մի տեղ, ուր ապրում է հանդիստը; ուր տիրում է խաղաղութիւնը և ուր արդար վաստակը չեն խլում աշխատաւորի ձեռքից:

Բայց ահա թշւառներն ու դժգոհներն աւելանում են, ամենքի ցաւն էլ մէկ է: Երկրի հալածական վիճակը կանգնեցնում, միացնում է բոլոր թշւառներին. շատերն են ուզում զաղթել, Աւ ինչի համար չզաղթեն, քանի որ ախ պալմաններում, ուր իրանք ասլրում են, դժւար է, ծանր է, անկարելի է ապրել, չի դիմացվիլ: Շատերն իրանց համար հող չունեն. ունեցածն էլ մնծ մասով անբեր, քարքարոտ, մաշւած. Նա ուրիշի հողի վրա է բանում, ախտեղից է ստանում իր հացը. բայց ախ էլ ձեռքին չեն թսղնում, Նա աշխատում, Նա քրտնում է. ուրիշն է խլում, ուրիշն է ուտում: Նրա հողի ստացւածքը չի բաւականում տուրքերին, տուր-

քերը մէկ չեն, երկուս չեն, որ տակ ու պրծնի. նրանք ոչ թիւ ունին, ոչ համար իրանք իրանց աճում ու աւելանում են. նա ո՞ր մէկը տակ, ո՞ր մէկից աղատվի: Հաց չունի, հանգստութիւն էլ չունի. նա արհամարհւած է իր բնիկ աշխարհում, իր մայր հալրենիքի մէջ: Նրա կեանքը, նրա գուքը, նրա սեփականութիւնը, եթէ ունի մի որ է սեփականութիւն, ոչնչով ապահուած չեն. օրէնք, արդարութիւն չկաչ նրա համար. նա օգնող պաշտպանող չունի: Ամենքը նրա վրաէ են բարկանում, նրան վախեցնում, նրան մեղաղրում: Ոչ ոքից, ոչ մէկից նա լուս, օգնութիւն չէ ստանում. նա ամենքից հալածւած ու մոռացւած է: Խճչ անի, ինչպէս անի, որ մնակ իր երկրում, զաղթի ախտեղից, երբ նա լաւ համողւած է, որ այդ քոլոր հալածանքն ու անիրաւութիւնը վերջ չունի, քանի որ մնում է ինքը ախտեղ, քանի որ ինքը թիւրքի ձեռքին կը լինի: Մինչև երբ ալպէս Ո՛չ, չէ կարելի միշտ ազգպէս ապրել, պէտք է թողնել, գնալ, դաղթել անպատճառ. քիչ-քիչ հաւաքւում խմբւում են. զաղթողները ահա պատրաստ են: Հարժուում, ուղղւում է գաղթողների կարաւանը զէպի Սեծովի ափերը, ուր սպասում է նրանց համար պատրաստած նաւը, որ պիտի տանի հեռացնի նրանց հալրենի գրկից:

Ազպէս հետզհետէ քիչ-քիչ զատարկւում է հալրենիքը, ամականում է հալրենիքը. ամականում պարապւում են հալի զիւղերն ու տները, և կենդանի հալերի տեղ հալի երկրի մէջ մնում են իրեն հալութեան վկաչ միմիան մեռած հալերի անբարբառ շիրիմները...

Երեսում է, որ Թիւրքիան ալս վերջերս չափ ու սահման կորցրել է: Դրա ապացուցը՝ ան բոլոր տեղեկութիւնները, որ Հայաստանի ամեն կողմերից իրար վրաէ հասնում են մեզ: Հալի ամբողջ երկրից թշւառութեան ու տանջանքի հառաչանքներ են լսում: Կոտորած, աւերմունք ու բունութիւն է զործ դրոււմ ամեն տեղ հալի զլինին: Եւ այդ բոլոր հալածանքն ու անգթութիւնը մի սարսափելի միտք, մի զժոխալին նպաստակ ունին. ջնջել, ոչնչացնել հալին իր երկրի մէջ. Էլ չտեսնել նրան: Միթէ դրա ապացուցը չէ ան հանգամանքը, որ վերջին ժամանակներս, ինչ որ հայկական հարցը սուր կերպարանք է ստացել, կառավարութիւնը առաջւան պէս չէ կանգնեցնում զաղթականութիւնը և ոչ մի արգելք չէ զնում զաղթել ուղողների առաջ: Ճշմարիտ է, առաջ էլ երբեմն-երբեմն ինչքան էլ զաղթէին թուլաւութիւն էր լինում, բայց զոնէ ալս էլ էր պատահում որ անցագիր տալու համար զիւղացուն այնքան քամում, կեղեցում էին, որ շատ անզամ նորա ճարը կարւում էր, զաղթելու միտքը թողնում էր մի առ ժամանակ, մինչեւ որ կարողանար մի քանի լիրա ձեռք բերել, որ նրանով անցագիր ստանար. թէև օրէնքով անցագրի համար սահմանաւած վճարը լիրակից քիչ է: Բայց առաջ ով էր նաևում օրէնքին. Խճչքան կարողանում էին, զջլում էին. ով էր միտք անում, թէ զիւղացին ալս

քան փող չի ունենաց չի գաղթի: Հիմա ինչպէս պատմում են, աղպէս չէ: Ինչպէս երևում է՝ գաղտնի խիստ կարգադրութեան շնորհով՝ առնում են միայն օրէնքով անցագրի համար սահմանած վճարը—մի քանի դուրսչ: Ել ուրիշ ոչինչ: այնքան քաշում են կաշառք վերցնելուց: Երբեմն նոյն իսկ, ինչպէս պատմում են, չքաւրներից ուզ ել չեն պահանջում. տալիս են անցագիրը այնպէս, առանց փողի, միան թէ որ առաջ կարչի, գնակ...

Փոխանակ գաղթելն արգելելու, զաղթողներին չթողնելու, ինչպէս պատմում են, վերադարձող պանդուխտներին է արգելում վերադառնալ հայրենիքը. նրանց չեն թողնում իրանց բնիկ աշխարհը մտնել զանազան անմեղ պատճառներով, որինը՝ իրը թէ անցագրի ժամանակը անցած է վինում, որը երաշխաւոր չէ կարողանում գտնել և ալն: Ի՞նչ երաշխաւոր պիտի գտնի զիւղացին բաթումի պէս օտար քաղաքում, ուր իրանց գիւղից ոչ ոք չկայ, ոչ մշակ և ոչ առնտրական. ուրեմն և ոչ ոք ել չի ճանաչի իրան: Այս ինչ բանի համար է պէտք երաշխաւորը—իր աշխարհը, իր հայրենիքը, իր տունը գնալու համար:

Այս բոլորը ապացուց չէ արդեօք այն գազան մտադրութեան՝ հայը բնաշինչ անելու նպատակին, նպատակ՝ որ զեռևս շարունակում է գործ դրւել այնքան անխնայ ու անզութ կերպով, չնայելով այն բանին, որ բէֆորմների ծրագիրը դեռ առպարէզի վրայ է և մարդասէր պետութիւնները մի կողմից շարունակում են լոյս տալ հալածած ու վհատած հալին, միւս կողմից սպառնում բռնաւոր թիւրքիալին:

ԴՐԱՄԱ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ ԳԵՂԱՐԻԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

«Ազահ», կոմեդիա հինգ արարւածով, Սոլիերի. թարգմանութիւն պ.
Արուբի. — «Ասլան-Բալասի», պ. Արդարեանի, փոխադրութիւն «Վերք-
Հայաստանի» վէպից.

«Ազահ», Սոլիերի ի նպաստ պ. պ. Վրուբի և Ստեփանեանի:

«Ազահը» Սոլիերի շատ բաջողւած կոմեդիաներիցն է, բայց և անպէս դուրս է այն երեք կոմեդիաների շարքից, որոնք կազմում են նորա վառքի պասկը. Ամսեղ ես ի նկատի ունիմ նորա «Ճարտիւֆը», «Դոն-Ժուանը» և «Միզանարապը». Որքան էլ հետաքրքրական վնի Ազահի բովանդակութիւնը, տիպերը իրական և կենդանի, խօսակցութիւնները աշխոյժ և հոգեբանական, վերլուծութիւնը ճշմարիտ, աշնուամենայնիւ նա չէ կարող ունենալ վերռիշեալ տրիլոգիաին բարձր նշանակութիւնը. Ազգպիսի նշանակութիւն չունի նա այն պատճառովի, որ նորա մէջ արծարծւած խնդիրը չունի այն կարևորութիւնը, որ ներկայացնում են Տարտիւֆը և միւսները. — Հարկաւ, ժլատութիւնը—արատ է, և արատը ընդունակ է աղաւաղելու մարդու բնաւորութիւնը, բայց նա անքան տարածւած և կործանիչ արատ չէ, որքան, օրինակ, Տարտիւֆի կեղծաւորութիւնը և Դոն-Ժուանի իդամոլութիւնը. Ժլատութիւնը, կարելի է ասել, աւելի անհատական բնաւորութիւն ունի. Ժլատը աւելի ինքն իրան է վնասում, քան թէ ուրիշներին. ամենաշատը նա կարող է նեղը ձգել իւր ընտանիքի անդամներին կամ նոցա, որոնք շատ մօտ վարաբերութիւն ունին Ժլատի հետ. Բայց չնայած դորան, եւրոպական գրականութիւնը մշակել է Ժլատի մի շարք տիպեր Էւկլիփոն՝ Պլատոսի, Ժլատ ասութիւնը Պուշկինի¹), Պլիւշկին՝ Գոդովի²), Բալզակի՝ «Հայր Դո-

¹⁾ Որի թարգմանութիւնը տրւում է «Մուլճն ի ներկայ համարում» Ծան. Խմբ.

²⁾ Տես դորա թարգմանութիւնը «Մուլճ» 1892 № 5.

րիօ» և զերջապէս Մոլիկը Հարագագոնց — Եթէ համեմատենք այս տիպերը, որոնք բոլորն էլ նկարագրւած են տաղանդաւոր հեղինակների ձեռքով, շատ ընդհանուր դժեր կարող ենք գտնել նոցա բնաւորութեան և զգացմունքների մէջ: Օրինակ. նոցա ամենքի մէջ բժացած կամ մեռած են մարդու ամենաբարձր զգացմունքները՝ սէր, համակրութիւն, դութ: Միւս կողմից՝ նոցա մէջ մենք տեսնում ենք վերին աստիճանի զարդացած կամկածամութիւն:— Նոքա մշտական երկիւղի մէջ են, թէ իրանց կարող են կողոպտել: Նոքա զողում են ունեցած չունեցածի վրայ: Նոքա իրանց բերնի հացը կտրում են, իրանց զրկում են, սահմանափակում են իրանց պահանջները: Եւ ալսպիսի ընդհանուր դժեր շատ կարելի է դանել նոցա մէջ: Բայց տարբեր են նոցա ժլատութեան սկզբնական պատճառները: Պլիւշկինը առաջ միան խնալող կալւածատէր էր. կեանքի զանազան պայմանները աւելի և աւելի զարդացրին նորա մէջ խնալողութիւնը, որը զարձաւ կիրք և ապա ժլատութիւն: Ժլատ ասպետը առաջ փառասէր ասպետ էր, որը, չունենալով հոգեկան արժանաւորութիւններ իւր փառասիրութեանը բաւականութիւն տալու համար և իմանալով, որ ոսկով և արծաթով կարելի է իշխանութիւն և ոչ ձեռք բերել, սկսեց կուտակնել ոսկի և արծաթ, և ալպախով առաջացաւ նորա մէջ ժլատութիւնը: Բացի ազգ, մէկի ժլատութիւնը ամելի ստոր տեսակի ժլատութիւն է, միւախնը՝ աւելի բարձր: Պլիւշկինը հաւաքում և պահում է ամեն բան, ինչ ձեռքն է ընկնում—մեխեր, երկաթի կտորտանք, պալտեր: Ժլատ ասպետը միան ոսկի և արծաթ է զիւռում:

Իւր բենեֆիսի համար պ. Վրոզը ընտրել էր Մոլիկի «Ժլատը»: Մեզ հետաքրքրում էր այն, թէ որչափ կարող էր ուսումնասիրնել նա մի այնպիսի դժւար դեր, որպիսին է Հարագագոնի զերը: Եւ ահա մեր տացած տպաւորութիւնը: Հէնց առաջին անդամից, իւր ոտը բեմի վրայ զնելով, պ. Վրոզը դրաւց մեր ուշադրութիւնը, մեր հետաքրքրութիւնը շարժեց: Մեր առջև կանգնած էր մի նիշար, կոշտացած և ցամաքած ծերունի—ապացուց, որ երկարամեաց զրկանքները իրանց գրոշմը զրել են նորա ամբողջ մարմնի վերալ: աչքերը խոր ընկած, որոնք կարող են փայլ ստանալ միան ոսկու առաջ: Երեսը և ճակատը ստոը և զժողովն, որոնց վրայ ծալւում են կնճիռները ամեն անգամ, երբ ծագում է նորա հոգում կողոպտած լինելու ան ախոր զգացմունքը: Նորա բոլոր զգալարանները կարծես, ծառալում են նորան, իւր գանձի պահարաններ: ականջները, սրում է նա, երբ մի շշով կամ շան հաջոց է լսում: քթով կարծես ցանկանում է հոտոտել գողի ներկալութիւնը: ասես մի րոպէ նորա մըտքից չէ հեռանում, որ թագցըրած զանձ ունի պարտիզում, բաւական է մի կասկածելի ձախն, և ահա նա պատրաստ է ընդհատել խօսակցութիւնը

և վազել գանձի կողմը։ Այս բոլորը ամենայն ճշտութեամբ արտաքալտում էր պ. Վրուրը, Յետով՝ Հարպագոնի հոգին հանդիսա չունի. կասկածամոռութիւնը նորան տանջում է, երբեմն նորան թւում է, որ գանձի տեղը զիտեն նորա տանեցիք, և ահա խորամանկ հարցերով նա կամենում է ստուգել աւդ. ծառան, որին նա հեռացնում է իւր տանից, կարող է մի բան թուցրած լինել, և ահա նա նաշում է ձեռքբերին, քրքրում է զրպանները, չափում է ոտից մինչև գլուխ և վերջումը մի կասկածու և լուս հայեցք է ձգում նորա վերակ. Ագդ ևս բաւականին լաջող էր պ. Վրուրի խաղի մէջ։ Եւ չետով ան ծիծաղելի քնքշութիւնը և ժպիտը, որով նա դիմում էր իւր սիրուհուն՝ ան տեսարանը, որտեղ նա խրատում է իւր ծառաներին թէ ինչպէս պէտք է իրանց պահեն հիւրերի առաջ, որ չտեսնեն պատառւածքը շորի վերակ. ինչպէս արագ անցկացնեն մատուցարանը հիւրերի մօտից, որ շատ չկարողանան վերցնել—այս բոլորը տպաւորութիւն գործում էր պ. Վրուրի գերակատարութեան մէջ։ Ազտեղ մի բան միան պէտք է նկատել. ան ծառան, որ իւր ետեղ գէպի հանդիսականները էր դարձնում իւր շորի պատառւածքը, ցուց տալու համար, մոռանում էր, որ գեղարւեստն ունի իւր չափն ու սահմանը, որից չէ կարելի անցնել՝ առանց զզւանք առաջացնելու նալողների մէջ։ Հանդիսականներն հաւատում էին, որ նորա շորը կարող է ճղւած լինել և բոլորովին կարօտ չէին նորա քամակը տեսնելու. Հարպագոնը տեսաւ—բաւական է. Առհասարակ գերասանը պիտի խոչս տաէ աչզպիսի անկարմար տեսարաններից, նա պիտի հրաժարւի իւր մնութիւնից անպատճառ ծիծաղցնել հանդիսականներին ան բռակէին, երբ նոցա միտքը ուրիշ բանով է գրադւած. թող նա վշի Համլէտի խօսքերը, թէ ազդպէս վարւող գերասանը միան իւր ողորմելի մնավառութիւնն է արտաքալում։—Բայց այս վիշեցինք փակագծի մէջ։ Վերալառնք պ. Վրուրի խաղին—Մինչ չմ չորրորդ արարւածը նորա խաղը մտածւած էր և խելացի։ Յետով նա սկսեց աւելի և աւելի թուլանալ և հինգերորդ արարւածում անհետաքրքըրական դառնալ Զորրորդ արարւածում կողոպտում են Հարպագոնի գանձը. զա մի անբաղդութիւն էր նորա համար, որի նմանը երբէք նորան չէր պատահել. նորա կեանքի ընթացքը փոխւում է. նորա կուռքը ջարու ու փոշ. ու չինում. Համարեա հառաչելու նա բեմ է գալիս, լալիս է կամ գոռում և սպառնում մարդկանց, հոգին նւազում է, ձանը կերկերում։ Ազդեղ ազնս ծիծաղելու տեղ չէ. զարմանքը սառցնում է ծիծաղը հանդիսականների գէմքին։ Նորա մենախօսութեան ժամանակ պ. Վրուրը բաւականաշափ ազդու չէր. Նա սկսեց իւր մենախօսութիւնը շատ բարձր ձանով և չետով կամաց կամաց իջեցրեց ձանը—զա լաւ էր նւազած ձանը ապացուց էր, որ Հարպագոնը հասել է լուսահատութեանը և հոգեպէս ընկճանել է, նա ալնքան թուլացել է, որ հարկաւոր է մի լենա-

րան՝ կրթնելու համար։ Ազդտեղ պ. Վրուրը չոքեց իւր տեղումը։ Մեզ
թում է, որ աւելի բնական կը լինէր, եթէ նա, օրինակ, այդ ըստէին
ձեռքերն ու գլուխը լինէր աթոռին և ազդպիսի դրութեան մէջ
մեար մի քանի վայրկեան։ Հաւանական է, որ ազդպէս կ'անէր ընկ-
մած և լոգնած մարզը, քան թէ իւր տեղումը չոքէր։ Յետոյ մեզ թում
է, որ նախկին եռանդով չէր կարող նա, բարձր գոռալ, ինչպէս այդ
արեց պ. Վրուրը, Ամենամեծ սպասնալիքը, որով նա ցանկութիւն է լայտ-
նում կախել մարդկանց, բնական կը լինէր արտաչափել այդ բռպէին աւելի
ցածր և խոյած ձանով, քան թէ բարձր ձանով։ Երբ նա ոկզբում բար-
ձըր գոռում էր, զա բնական էր, նորա հոգին լարւած դրութեան մէջ էր։
Բայց երբ նա սկսեց թուլանալ, զեռ ևս շրատով նա չէր կարող ստա-
նալ նախկին զօրութիւնը։ Խիստ ձգւած ուժգին ձան է հանում, բայց
երբ նա թուլանում է, խորին և եթ չէ կարող առաջւաէ պէս ձգւել. այդ
կարող է կատարել միան կամաց կամաց։ Ինչպէս աստիճանաբար իջաւ
չարպագոնի ձանը, նույնպէս աստիճանաբար նա պիտի բարձրանար-
պ. Վրուրը շատ պիտի աշխատէ հինգերորդ արարւածի վերաց։ Հանդի-
սականը ոչ մի վայրկեան չպիտի մոռանալ, որ ժլատին մեծ անբախտու-
թիւն է պատահել։ Հարպագոնը ալզանդ աւելի անհանդիստ է, աւելի
վշտացած, աւելի բարկացած։ Մանաւանդ թուլ էր այն տեսարանը, երբ
Հարպագոնի հարցին թէ ինչպիսի արկղ էր նորա տեսած արկղը, նա պատաս-
պագոնի հարցին թէ մեծ էր։ Հարպագոնը, որ ուրախացած էր, թէ արդէն գան-
խանում է թէ մեծ էր։ Հարպագոնը, որ աճուամենանիւ նորա ար-
ձը գտնել է, զարձեալ լուսահատում է որ աճուամենանիւ նորա ար-
կղն է տեսել։ Հարպագոնը նորից հարցնում է, թէ ինչպիսի գոյն ունիր
Ծառան դարձեալ սխալում է գոյնի վերաբերմամբ, և Հարպագոնը դարձեալ
լուսահատում է։ Ահա պարբերաբար միմեանց տեղի տւող այդ ուրախու-
թիւնը և լուսահատութիւնը չերևաց պ. Վրուրի խաղի մէջ։ Չնայած այդ
բոլորին, պ. Վրուրը ընդհանրապէս ուսումնասիրել էր Հարպագոնի գնըրը
և լաւ ապաւորութիւն էր գործում հանդիսականների վերաց։ Բայց նա
կարող է աւելի կատարելագործել այդ պատասխանատու գերը, և ապա-
կարող է աւելի կատարելագործել այդ պատասխանատու գերը, և ապա-
գալում մենք այդ սպասում ենք նորանից։ Դժբախտաբար, միջոցս չէ նե-
ցալում մենք այդ սպասում ենք նորանից։ Այդ երեկով համար արդէն լիովին բաւական էր «Ագահը»,
համ վոդըկիները։ Այդ երեկով համար արդէն լիովին բաւական էր «Ագահը»,
որը մեզ թէ ծիծաղեցրեց և թէ մտածելու նիւթ տւեց։ Ել ախորժակ չէր
մեացել լսելու առաջարկութիւն անող փեսացուի անվերջանալի առատի
տատը և պապի պասլը»։

Հինգշաբթի նույնելք. 30. Առաջան-Բալասի, դրամա չորս արարտա-
ւածով և հինգ պատկերով, փոխադրութիւն Խ. Արովեանի Ալէրք Հայա-
տանի» վէպից, կատարւած պ. Սարդարեանի ձեռքովի ի նպաստ պ.պ. Սար-
դարեանի և Մատինեանի:

Դեղեցիկ միտք էր լզացել պ. Սարդարեանը փոխադրել դրամակի և
շարմարեցնել մեր բնմին Արովեանի չափանի վէպը. Այս երկրորդ անգամն
է ներկայ տարումը, որ կովկասի պատմութեան երկու նշանաւոր մասնատ-
ները մենք տեսնում ենք բնմի վերաց պատկերացրած. Եթէ նոյն իսկ
ուրիշ հետաքրքրութիւնը չունենալին այդ ներկաչացումները, նոյն պատ-
մական նշանակութիւնը անուրանալի է.—Հայ մելիքութիւնները, Հասան-
խանի արշաւանքը Ղարաբաղսւմ, Շուշաչ բերդի հիմնարկութիւնը, Երե-
ւանի դրաւելը ռուսներից, հայ ժողովրդի տրամադրութիւնը այդ ժամա-
նակներում—այս բոլորը պարզում է նոյն համար, որոնք առրթ ունե-
ցան տեսնելու թատրոնում «Ղարաբաղի աստղագէտը» և «Ասլան-Բալասին»:
Բայց վերջինս աւելի ես մեծ կարեւորութիւն է ներկաչացնում: Արովեանի
վէպի լեզաբանական, գրականական և կուլտուրական նշանակութիւնը
բաւականին պարզ է շատերի համար: Ճիշտ է, վէպը սպառւած է այժմ,
շատերը չունին, որ կարդան, և նա սպառում է մի հրատարակչի՝ երկրորդ
անգամ լուս տեսնելու համար: Բայց նոյն իսկ նոքա, որոնք միջոց չեն
ունեցել այդ վէպը կարդալու, այնքան լսած և կարօտացած կը լինին նորա-
մասին, որ նոյն համար «Վէրք Հայաստանին» մի terra incognita է:
Իսկ թէ արտասուքով զրւած այդ երկասիրութիւնը մի շատ պատւաւոր
տեղ է բռնում մեր **XIX** դարի գրականութեան պատմութեան մէջ, այդ ով
կարող է ուրանալ? Այստեղ բաւական է լիշել միան, նախ, այն հանդա-
մանքը, որ արեւելան հայոց գրականութեան առաջին հիմնաքարը այդ
երկասիրութիւնն է, և նորա հետ անմիջապէս կապւում է Պերճ Պոօչեանի
«Յօս և Վարթիթերը», և երկրորդ որ, որ նա վերջին վէպի հետ միա-
սին տալիս են քսանական թւականների հայ ժողովրդի զրութեան մի
լրացրած և կենդանի պատկեր, այնպէս որ այդ ժողովրդի իդէալները,
հասկացողութիւնները, հաւատալիքը, սովորութիւնները, լեզուն՝ իւր նուրբ,
ճկուն և հազար ու մէկ զարձածներով, մի խօսքով, նորա մոտաւոր, բա-
րովական և տնտեսական վիճակը, ամենան հարազատութեամբ արտափայ-
լել են այդ վէպերի մէջ, ինչպէս առարկաները մաքուր ջրի երեսին, Զգի-
տեմ, նոյն իսկ չափազանցութիւն կը լինի արդեօք իմ կողմից, եթէ ասեմ,
թէ զոքա հայկական էպոպէններ են, եթէ ոչ դեղարւեստական, զոնէ կուլ-
տուրական տեսակէտից, և եթէ համեմատեմ «Վէրք Հայաստանին» Խլիա-
կանի հետ, և «Յօս և Վարթիթերը» Ողիտիականի հետ:

Այս խորհրդածութիւններով ես միան կանչացաւ ասել, որ արգարե-
գեղեցիկ միտք է Ալէրք Հայաստանինը դրամակի փոխադրիլը, թէպէտ

ալդ միտքը նոր չէ։ Գեռ ևս վաթսունական թւականներին մի ալդպիսխ փոխաղբութիւնն արել է Պերճ Պոօշեանը, և ալդ փոխաղբութիւնը (անզասից) վերնազրով) տպւած է «կոռունկի» մէջ և ներկալացւել մի քանի անգամ Թիֆլիսում և գաւառներում։ Բայց վաթսունական թւականները հեռու են մեզանից, ոմանց համար հին փոխաղբութիւնը մոռացւած է, միւսների համար բոլորովին անլաւտ։—Նոր սերնդի համար պլ. Սարդարեանի փոխաղբութիւնը նորութիւն էր։

Տեսնենք ալժմ, թէ որքան լաջող էր վերածւած վիալը դրամակի, և ահա մեր կարծիքը ալդ մասին։ Պիեսը շատ շքեղ էր, շատ բազմամարդ և շատ աղմկալից էֆֆէկտները շատ էին շլացնելու աստիճանի չափ։ ասիական երաժշտութիւնն, զինուրական երաժշտութիւնն, երգ, կոփի, անթիւ հրացանաձկութիւններ, սպանութիւններ... Արտաքին էֆֆէկտները, ինչ ասել կ'ուզէ, տպաւորութիւնն են զործում բեմի վերաց և երբեմն նորքա անհրաժեշտ են։ Պոսմիթեսը էսքիլէսի տրագեդիաէի մէջ անդունդն է ընկնում կործանող լեռների հետ՝ սաստիկ երկրաշարժի բուլէին։ Լիր արքան թափառում է անապատում որոտումների և կարծակների մէջ։ Մակրէթը իւր սարսափելի չարագործութիւնո կատարում է խաւար և փոթորկալից գիշերը։ Բայց, նախ, արտաքին էֆֆէկտները չպէտք է լինեն չափազանց շատ, որովհետեւ, հակառակ զէալքում, նորքա կը տանեն մեր միտքը դէտի ուրիշ կողմ, և փոխանակ հետաքրքրելու հերոսի վիճակով և գաղափարներով, մենք կը կլանւենք ոչ կարեոր բաներով։ Եւ բայց ալդ, արտաքին էֆֆէկտները ինքն ըստ լինքեան առանձին նշանակութիւն չպիտի ունենան, նորքա միան պիտի լրացնեն զործողութեան տպաւորութիւնը, որ առանց այն էլ բաւականին զօրեղ պիտի լինի։ Զակտք է մոռանալ, որ զրաման աւելի պիտի ազգէ մեր մտքի և զդացմունքների վերաց քան թէ մեր լսողութեան և աչքերի վերաց Դրաման պիտի լինի ալնպէս, որ, եթէ մենք հանելու լինինք նորա միջից բոլոր արտաքին էֆֆէկտները, զրեթէ նորութեամբ կարողանակ սպահանել իւր ոչը և ամբողջութիւնը։ «Լիր թագաւորը» շատ քիչ բան կը կորցնի, եթէ փոթորիկը լինի միան արքացի սրտում։ Մակրէթի սպանութիւնը դարձեալ սարսափելի կը լինէր, եթէ նա չլաջորդէր ամպերի ճակթիւններով։

Բայց ալդ արտաքին էֆֆէկտները չեն պիեսի զլխաւոր թերութիւնները, նորքա աւելի հետեանք են այն վերաբերման, որով պլ. Սարդարեանը ձեռնարկել է վէպի փոխաղբութեանը։ Բանը այն է, որ փոխաղբութ չէ ունեցել մի առաջնորդող զաղափար։ Եթէ ալդպիտի զաղափար լինէր, այն ժամանակ նա հեշտ կարող էր որոշել թէ ինչն է կարեոր պիեսի մէջ և ինչը աւելորդ և զուրս ձգելու բան։ Առանց կապող զաղափարի չէ կարող լինել գեղարւեստական ամբողջութիւն։ Դրամազի ընթացքում սկզբից մինչև վերջ պարզ և որոշ պիտի լինի այն զաղափարը, որի անու-

նով նա գործում է, կամ այն կիրքը, որի դրդմամբ գործում է։ Համլէտի նպատակը վրէժինզրութիւնն է հօրեղբօրից։ Շէլոկի նպատակը վրէժինզրութիւնն է քրիստոնեաներից։ Մակրէթի նպատակը գահն է և արքական ծիրանին։ Ահա մի աշդպիսի որոշ նպատակ, որոշ ձգտում չունի Աւալան-բալասին։ Ճիշտ է, նա հայրենասէր է և պարսկատեաց, բայց նորա նպատակը չէ հայրենասիրական մի որ և է գործ կամ թէ վրէժինզրութիւն պարսկիներից։

Յետո՞ք պի Սարդարեանը սկտք է աչքի առաջ ունենար, որ վէպի և դրամակի սահմաները տարբեր են։ կան բաներ, որ թովարելի են վիպասանին, բայց ողբերգակին—ոչ։ Ահա մի օրինակ, Զորբորդ արարւածում Ասլան-Բալասին ծանր վերք է ստանում, որի հետեանքը մահ է։ Վիպասանը կարող է վիրաւորին տանել տուն, նկարագրել նորա կեանքի վերջին վայրկեանները, մահը, և գեռ աւելին՝ կարող է նկարագրել նորա թաղումը և ազն։ Բայց դրամակի մէջ դոքա ոչ մի նշանակութիւն չունին։ Այն բոպէին, երբ մահացու վերք ստացաւ Աղասին, դրաման պիտի վերջանակ, ալճունետու մեր հետաքրքրութիւնը կորչում է։ Էլ ամենելին հարկ չկար վարագույը նորից բարձրացնելու և ցուց տալու մեղ հերսուին՝ թախտի վերաց դրած մահան մահնի մէջ, լսել տալու մեղ նորա մերձաւորների սուկ ու շիւանը... Եթէ Աղասին, մեռնելուց առաջ, բան ունէր ասելու, կ'ասէր անմիջապէս գնդակահար լինելուց լիտ։ Կ'ասէր և հոգին կ'աւանդէր։ Դա կը լինէր գնդեցիկ Փինալ։

Այսպիսով վերջին տեսարանը աւելորդ էր։ Զորբորդ արարւածը հիմնւած էր պատահմունքի վերաց և նախապատրաստած ու նախատեսնւած չէր առաջին երեք արարւածներուն։ Ինչ վերաբերում է առաջին, երկրորդ և երրորդ արարւածներին, նոքա լաւ տպաւորութիւն էին գործում և տեղի էին տալիս բուռն ծափահարութիւնների։ Ընդհանրապէս հասարակութիւնը գոհ մնաց, գուցէ և շատ գոհ։ Դորա պատճառը զրամացի հետաքրքրական, հանրածանօթ և ժողովրդական հարուստ նիւթն էր, լիտո՞ք պիեսի կենդանի և շարժուն բնաւորութիւնը և էֆֆէկտները, և վերջապէս հերոսի բնաւորութեան մի քանի լատկութիւնները և զործերը, որոնք շատ համապատասխան են մեր ժամանակակից արամազրութեանը։

Դալով դերակատարութեանը, սկտք է ասեմ, որ ընդհանրապէս նա բաւարար էր։ Միայն արարատեան բարբառի առանձնաչափութիւնները չէին կարողանում արտավագույթ դերասանները։ Նոցա լեզուն մի տեսակ խառնուրդ էր գրականականի և գաւառաբարբառների,—մի բան, որ բաւականին խորթ էր թւում արարատեան բարբառին սովոր մարդու համար։ Բայց նկատողութիւններ ունիմ լալտնելու նաև պ. Աբելեանի վերաբերմամբ ևս արդէն առիթ եմ ունեցել ասելու, որ նա ձգտում է ուշալականութեան։ Դա գովիճի լատկութիւն է։ Բայց թող նա չմոռանալ, որ-

ոչալականութիւնն էլ ունի իւր սահմանը: Վերջին անսարանում Աղասին
մեռնում է: Հանդիսականները, ի հարկէ, շատ լաւ գիտեն, որ նորա դերը
կատարող դերասանը չի մեռնում, այլ միայն ձեւցնում է: բայց արդէն
ծիծաղ էր չարուցանում այն, որ նա ամեն կերպ աշխատում էր նմանւիլ
մեռնողի և ազդպիսով տպաւորութիւն գործել: Նորա լեզվն ջուր էլն կա-
թեցնում, և նա բերանը բաց ու խոսի էր անում,—դա իբր թէ նշան
էր, որ մեռնողի վերջին վագրկեանները հասել են: Ազդպէս վարել նշա-
նակում է զեղարւեստի սահմանից դուրս գալ: Կան հանդամանքներ, երբ
զեղարւեստը զիտմամբ խուսափում է խիստ իլլիւզիաներից, որովհետեւ
փչացնենք արձանը և աւելի աշխատավոր կատարութիւն գործելու տեղ, նա
ծիծաղ է չարուցանում: Օրինակ, մարմարիոնից շինւած լաւ արձանը մեղ
դուր է գալիս, և մենք չենք պահանջում, որ ամեն կերպ արձանը նման
լինի մարդուն: Բաւական է, որ աչքերին գոյն տանք, սև կամ կապուտ,
մարդու աչքերին աւելի նմանեցնելու համար—և մենք դորանով կը
փչացնենք արձանը և կը դարձնենք մանըկէն:

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆՅ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԹԻՖԻ 1895 թւականին զերտադանցեց անցեալ 1894 թւականինը. իսկ 1896 թւականի համար մինչև դեկտեմբերի վերջը՝ այս տարի մօտաւորապէս կրկնապատիկ աւելի են զրւածքան անցեալ տարի մինչ նոյն օրը՝ 1895 թւականի համար. Մնում է միայն ցանկանալ որ այս հոսանքը շարունակի նաև նոր տարւակ լունւար ամսին:

«ՄՈՒՐՃ» ՆԻՒՐՈՒՆԵՐԻ 1896 թւականի համար «Մուրճ» նւիրել են՝
1) Ա. Աղէլեան—Թիֆլիսի գաւառի Գուռնուկ զիւղի հալոց
եկեղ.—ծխակ. դպրոցին (խմբագրութեան ընտրութեամբ և դպրոցի
հոգաբարձութեան խնդիրքի համաձայն) —2) Պր. Արքահամբ Բուռ-
նիաթեան—Գողթանի Ցղնա գիւղի հալոց եկեղ.—ծխակ. դպրո-
ցին; —3) Նունը—Զաքաթալի հալոց եկեղ.—ծխական դպրոցին
(երկուսն ևս նվիրութեամբ). —4) Պր. Յակոբ Յակոբի ան-
գիւղաբէկի հալոց դպրոցին; —5) Պր. Սարգիս Կոժենիկի ան-
Մոգդոկի հալոց դպրոցին. —6) Բժ. Խաղէսո Զաքաթա-
նանց զիւղի հալոց դպրոցին (խմբ. ընտրութեամբ). —7) Նունը—
Խանքենդի հալոց դպրոցին (խմբ. ընտրութեամբ). —8) Պր. Յովհան-
նէս Կիտակ անց Հաշտարխանում—Նոր-Բագազեթեան պահեստի
գնդի հայ զինուրներին Երևանում (խմբ. ընտրութեամբ). —9) Նուն-
ը—Գորւաչ պահեստի զօրքի հայ զինուրներին (խմբ. ընտ.). —10)
Պր. Ալէքսանդր Մելիք-Ազարեան—Ռաշտի հալոց գրադարա-
նին. (Շարունակութիւնը կը զետեղնեաք լունւարի համարում):

ԱՊԱՒԻԿ ԲԱԺԱՆՈՐԴՄՐՈՒԹԻՒՆԸ: Զնակած որ մենք լայտարարում ենք
բաժանորդագրրւթեան պայմանները, բայց գտնուում են բազմաթիւ
անձինք, որոնք ճշգութեամբ չեն չարգում այդ պայմանները, և
վճարը կատարում են անկանոն և խմբագրութեամս համար
շատ անկարմար կերպով, այն է թողնելով վճարը մինչ տարւակ վերջը
և նոյն իսկ մինչ լաջորդ տարւակ սկիզբները. Մենք այդ հանգա-
մանքը առանձին ուշադրութեան չենք առնիլ, եթէ միայն ապա-
ռուիների գումարը մեզ համար կարևորութիւն չներկաչացնէր և

տարւայ մանաւանդ վերջին ամիսները խմբագրութեանս նեղը չը-
ձգեր, սովհակելով մեզ անձիշդ գտնւել զէպի տպարանը, թղթավաճառը
և ալին։ Մեր բաժանորդների առանձին ուշքն ենք դարձնում այն
հանգամանքի վրայ, որ բաժանորդագին մի անդամից վճարելու
գմւարացողները՝ կարող են մաս-մաս վճարել՝ ստորագրւելիս
3 ո., և մինչ մարտի 1-ը ես 3 ո., մնացածը մինչ չուլիսի 1-ը լրա-
ցնելու պահմանով։

Ենկիրիքի ՆԱՀԱՆԳԱՊԵՏ նշանակւած է Թէւֆիդ փաշա, նախկին միւ-
շիր վեցերորդ զօրաբանակին Բաղդատում։ Նորա օդնական նշանակ-
ւեց Մուսթաֆա Էֆէնդի, Խրէքի նախկին միւթեմարիֆը։

ԵՏԻՐՆԵՒ նահանգապետի օդնական նշ. Արիֆ փաշա (Լուլիրնէ գտնւող
Փէրիզներից)։

ՀԱԼԻՊԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ նոր նշանակւած է Զիհնի փաշա (կոխարէն Հա-
սան փաշալի)։

ԳԱՂ.Թ ԴէՊԻ ԹիկիրՔիԱ. Հոկտեմբերի 1-ից մինչ նուեմբերի 5-ը «ապ և
ալլ տեղերից» կ. Պոլիս էին եկած 391 տուն 2126 գաղթական,
որոնք նահանգներ են զրկւած հաստատւելու համար։ (Ալզպէս են
զեկուցանում կ. Պոլսի թերթերը, առանց որոշելու թէ ինչ գաղթա-
կաններ են դոքա, որտեղից եկած և որ նահանգները զրկած։ Բաց
հասկանալի է որ դոքա կազմում են շարունակութիւնը Հիւս։ Կով-
կասի Կուրքանի նահանգի չէրքէզ մահմեղական լեռնաբնակների
գաղթին, որոնց մի մասը թւով 1232 հոգի, Թիւրքիակում (Էնկիւ-
րիի նահանգում) հաստատւելու լուրը հաղորդեցինք «Մուրճո-ի անցեալ
9—10 համարում, էջ 1335)։ Եւ զեռ երեխ մենք առիթներ ենք ու-
նենալու ալդ քաղթի մասին նոր տեղեկութիւններ տալու, որով-
հետեւ, (ինչպէս հաղորդեցինք ամսագրիս № 7. էջ 1088) գաղթող-
ները կուրքանից մինչ 1000 տուն են։ Անկարենոր չէ սուլդ տեղեկու-
թիւններ ունենալ թէ արդեօք ինչ հողեր են լատկացնում Թիւր-
քիակում հաստատող ալդ գաղթականներին—ազատ հողեր, թէ
հայ գիւղերը աւերելուց և հայերի ցրւելուց պարապմնուցած հողերը։
ԲԱՐԵՆՈՐՈՒՌԻՄ ԵԵՐԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՐԾ մի մասը (Ֆէրրիդ Սաղէդին
փաշա, Խրապիմ և Զեմալ Բէյերը) եղաւ Գիւմիշխանէ, ուրիից ան-
ցաւ Բաբերզ. խակ միւս մասը (Սամի Էֆ., Ֆերիդ Աբդուլլահ փաշա
և Բիւշտի Էֆ.) Ամասիակում իրենց գործը վերջացնելուց չետոք՝ ան-
ցել է Թոքասու

ԿՈՎԿԱՍԵՑԻՐԻ ԵՐԿՐԻՄ ՎԱՐՉՈՒԹ ԵԱՆ ՄԵՋ. Պետրովրդի «Ն ո-
վու Վարեմիա» մած օրաթերթին պատասխանելով՝ Թիւր

լիսի «Նովոե Արագրանիե» օրաթերթը խւր համարում առ 29 նոյեմբերի, հետևեալ թւանշաններն է առաջ բերել, հիմնելով «կովկասիան Օրացուց» ոռուս պաշտոնական հրատարակութեան վրայ՝ Կովկասի Կաւազարչապետի խորհրդի մէջ տեղացիք (հայ. վրացի, թուրք) կազմում են պաշտօնեանների թւի մէջ 0% (ասինքն ոչ մի տեղացի չկայ). Կառավարչապետի կանցելարիտայում տեղացիք կազմում են պաշտօնեանների 19% (իսկ ոչ տեղացիք՝ 81%). Պետական կալածների մինիստրի լիազօրի վարչութիւնը կովկասում (չհաշւած սահմանաչափ պաշտօնեաններին և տակսատօրներին) տեղացիք կազմում են պաշտօնեանների 25% ջրաբաշխական հաստատութիւնների մէջ տեղացիք կազմում են 8% (ուրեմն ուսումներ և առշասարակ ոչ-տեղացիք 92%). Նահանգապետների և փոխանահանդապետների մէջ տեղացիք կազմում են 17% (ոչ-տեղացիք 83%). Կովկասեան զինուորական շրջանի դատարանի մէջ տեղացիք կազմում են 0% (ուրեմն ոչ մի տեղացի). Թիֆլիսի դատարանական պալատում (չհաշւած կանցելարիան) տեղացիք կազմում են 4% (ոչ-տեղացիք 96%). Թիֆլիսի նահանգական դատարանում (չհաշւած կանցելարիան) տեղացիք կան 16% (ոչ-տեղացիք 84%). Քութայիսի նահանգական դատարանում (կանցելարիան չհաշւած) տեղացիք 12% (ոչ-տեղացիք 88%). Դանձակի նահանգական դատարանում (կանցելարիան չհաշւած) տեղացիք 13%. Երևանի նահանգական դատարանում (կանցելարիան չհաշւած) տեղացիք 17% (ոչ-տեղացիք 83%). Քաղաքացիական կառավարութեան բժշկական մասի վարչութեան մէջ տեղացիք կազմում են 17% (ոչ-տեղացիք 83%). Կովկասեան ուսումնարանական շրջանի վարչութեան մէջ տեղացիք 0% (ուրեմն ոչ մի տեղացի):

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀՈԳԵԽՈՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԻ ԱՆԳՐԿՈՎ
կասում: 1894 թւականին Պետական խորհուրդը, թուլատրելով պետական գանձարանից ոռճիկ տալ մահմէղական հոգնորականութեան Անդրկովկասում, դարձրեց ներքին գործերի մինիստրութեան ուշքը այս բանի վրայ, որ պէտք է շտապեցնել այդ հոգնորականութեան պահպանողութեան աղբիւրների խնդրի լուծումը, որովհետև այդ գործի համար պետական ծախքը վճռւած էր տակ ժամանակաւորապէս, մինչև որ կը պարզուի թէ մահմէղական հոգնորականութեան դուքերից ինչ եկամուտ է ստացւում և որքան ազատ է մնում: Կովկասի կառավարչապետը այդ առիթով կախնեց, որ մահմէղական հոգնորականութեան մասին պոլութենիելի մէջ չիշւած առւրքեր և նւիրաբերութիւնները վաղուց չեն ստացւում ոչ շիա և ոչ սուննիտ զաւանութիւնների համար, և որ վաքուֆակին դրամա-

գլուխ շիա մեջիդների համար կազ 70.000 ռ., սունճիների համար 16.000 ռուբլի, և որ զոցա եկամուտները բոլորն էլ գնում են մեջիդների և ուսումնարանների պահպանութեան վրայ: Այդ պատճառով, կառավարչապետի կարծիքով, մահմէդական հոգմուրականութեան պահպանութիւնը պէտք է կատարվի պետական գանձարանից: Ներկաւազութիջներ ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԻՆ Թիֆլիսի քաղաքացին խորհրդարանը ընտրեց իւր անդամների միջից՝ Ալէքս. Մանթաշնանին, Կոնստ. Ալիխանեանին և Միք. Շահպարոնեանցին: Դեպուտատների մէջ կը լինի նաև քաղաքապէտում իշխու. Նիկ. Արդութեան-Նրկանաբազուկ: Բոլոր ընտրւածները Թիֆլիսի Փինանսական աշխարհից են:

Դանձակ քաղաքից պատգամաւորներ ընտրւած են հաշտարար դատաւոր Ն. Ն. Մելիքեան, Ա. խան Զիադիստանով:

ԳէՈՐԳ ՏէՐ-ԲԱՐԹՈՂԻՄէՈՍԵԱՆ, որ Խզմիրի հաջոց աղզակին վարժարանների տեսուչն էր անցեալ ուսումնական տարին, ընտրւած է Կ. Պոլսի կենտրոնական ուսումնական խորհրդի կողմից իբր Կ. Պոլսի ազգային վարժարանների կրթական տեսուչ: Պր. Տէր-Բարթողիմէոսեան աւարտած է Գէորգեան ճեմարանը, ուր և զասախոսած է ապա Քրուսալի մէջ պաշտօն վարած և անցեալ տարի Խզմիր էր հրաւիրւած: Իւր նոր պաշտօնը Կ. Պոլսում ստանձնելուց առաջ՝ պԳ. Տէր-Բարթողիմէոսեան ալժմ մեկնած է Եւրոպա, ուր մի տարի պիտի մնայ: Ուսումնասիրելու համար Զիցերիալի, Գերմանիալի և Ֆրանսիալի վարժարանները, մասնաւորապէս նախակրթարանների կազմակերպութիւնը, կարգ ու սարգը, ծրագիրները, ներքին սպասարկութիւնը և ալյն:

ԿՈՎԿՈՍԵԱՆ ՄԱՄՈՒԼ: Վ. Արդիկաւակազում ներկայ գեկտեմբերին սկսեց հրատարակել «Աւազքէկ» անունով ուսուաց օրաթերթ, որ պիտի լուս տեսնի շաբաթը երեք անդամ: Հրատարակիչն է Ս. Կազարով: Խմբագիրը՝ Ա. Կալուբէկիո:

«ԾԱԻԹՈՂ» ԵՒ «ԱՍՏՂ. ԱՐԵՒԵԼԵԱՆ» Վերջին անունով 1896 թւականին թեհրանում մի թերթ է հրատարակելու շաբաթը մի անգամ: արտօնատէրն է Մակար Մակարեան: Ակսակիսով Պարսկաստանի մակրաքաղաքը կ'ունենաց երկու հայերէն թերթ—«Յ աւ ի դ» և «Յ, ս տ դ Ա. ր կ ե լ ե ա ն»: Վերջինիս լաւտարարութեան թերթը մեզ վրայ արաւան տապաւորութիւնը, որ նոր թերթի հրատարակութիւնը հետևանք է մի լաւտնի խմբի ցանկութեան՝ կուել Յ աւ ի դ ի դէմ: Պարսկահայերի փոքրիկ թիւը և թէ նոցա ահազին մնձամասնութեան մատար-բարուպական ստոր դրութիւնը աչքի առաջ ունենալով՝ մենք լուս չունինք թէ թեհրանի երկու խմբագրութիւնները կարողանան գա-

դափարական կուի պատշաճ սահմաններում մնալ և պահ պահնել իրենց գոչութիւնը իրր երկու բանակների ներկայացուցիչներ։ Այդ պատճառով պարսկահայերի մանաւանդ երիտասարդութեան պարտքն է բազդի բերմունքին չժողնել խնդիրը, այլ գիտակցական բուռն միջամտութիւն գործել ան թերթի օգտին, որը ապագաէ է խոստանում։ Եւ մենք կարծում ենք որ Շաւիդը իր փոքրիկ անցեալով կարողացել է կենդանութեան և աւողջ զարգացման մի քանի գրաւականներ տալ, որոնց գնահատելը պէտք է։ Խոկ ինչ վերաբերում է «Աստղ Արենեան» թերթին, —մենք նորա մասին կը դատենք միայն գէթ մի տարի գործի մէջ տևոնելուց վետոց։

ՆԻՒԹԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ.

Ղզլարեցի հանգուցեալ Տէր-Մովսէսեան-Գյլեանի ազգական-ները 3000 ռուբլի չատկացրել են զանազան բարեգործական նպատակների, 1000 ռ. երկուու եկեղ. ծխական գպրոցներին, 400 ռ. նուն դպրոցներին՝ մի մի աշակերտ և աշակերտուհի պահելու համ. ր, 500 ռ. Ղզլարին մօտիկ Ղարաջալիլ զիոդի գպրոցին, 300 ռ. գանքին, 300 ռ. զերեզմանական եկեղեցուն և 500 ռ. Ղզլարի բարեգործական ընկերութեան։

Հանգուցեալ կոմսուհի Ա. Խ. Դելեան եան եան, (ռուսաց լուսաւորութեան մինիստր կոմս Դելեանովի կինը), ծնեալ Լազարեան, կըտակով թողել է՝ 49.000 ռուբլի Մոսկվաէի Լազարեան ճեմարանում վեց որդեգիր պահելու 10.000 ռ. Պետերբուրգի հայոց եկեղեցուն կից ապաստարան շինելու վեց աղքատ պատաւ կանանց համար։

Քերբերեանի կտակի բովանդակութիւնը մենք արդէն հաղորդել ենք «Մուրճ»-ի ընթերցողներին, կտակատարների հրատարակած հաշվեց որ վերաբերում է ժամանակամիջոցին լուլիսից մինչ 1-ն օգոստոսի, երեսում է որ առ 1-ն օգոստոսի 1895 կար 126.071 ռուբլի 99 կոպ., որի մէջ հետաքանի հոդեր 102.500 ռուբլու։

Տիկ. Մարգարիտ Լալակեան (Բագու) նիրել է լանուն ս. Սինոդի 600 ռ. և 2000 ռ. ի նպաստ Դէորդեան ճեմարանի։

Գրիգոր Սերեբրակեանց կտակով թողել է 40.000 ռուբլի, որի տոկոսիքը պիտի տրւին ազգային զանազան հաստատութիւնների։

Վ.Բ.Ց ԲԱՐԵԳՈՒԹԻՒՆՆԵՐ. Քութակուի նահանգի Բանագաւառի Խւանձկարա զիւցում վախճանւած իշխ. կոնսու. Օտիեւիչ և ի պիտի ան ի կտակել է զիւղացիներին հողեր, որոնք չատկացրած էին սոցա կանոնադրական թղթերով (ռուսաւո՞րեա գրամմութիւն)։ Հաղերի արժէքն է 20.000 ռուբլի։

ՍԱՆԱՄՍԱՐԵԱՆԻ ԿՏԱԿԻ գործադրութեան մասին ստացանք Սանամարեանի կտակակատարներից մի հաշիւ, որից տեղեկութիւն կը տանք զալ ամիս։

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ հաղորդում են ալդ քաղաքում զեկտեմբերի 4-ին պատահած ժամանակի բաւականին զգալի հարւածների մասին, որոնցից առաջինը հղու առաւտեան մօտ ժամ 5-ին, երկրորդը ցերեկւաչ ժամ 11-ին և երրորդը՝ զիշերը ժամ 12-ի մօտ. Անասներ չեն եղել. ԻԳԴԻԲԸ ՄՆՈՒՄ է ԳԻՒՂ. Ներկայ դեկտ. 10-ին Խղդիրի հասարակութիւնը առաջարկութիւն ստացաւ կառավարութիւնից՝ Խղդիր զիւղը քաղաք դարձնելու. Առ ալդ Խղդիրը կազմող երեք հասարակութիւնները (բռն Խղդիր, Խղդիրմաւա և Բհարլու գիւղերի բնակչութերը) զեկտ. 17-ին կալացրած համախօսականով գրեթէ միաձայն մերժեցին կառավարութեան առաջարկը. Մերժման պատճառաբանութիւնը ան է որ Խղդիր գիւղը միւլքադարական է, և ալդ պատճառով հողերը գեռ պէտք է լիս գնւեն կալւածատէրերից, որ ան կարող են, և որ գիւղացիք կը զրկւեն երկրագործութեամբ պարագելու հնարաւորութիւնից և ալնու.

ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՇՈՒՇՈՒՄ. Շուշակ թեմական ղըպրոնոցը, որ 1894 թւականի վերջում տեղի ունեցած դէպքերից վետով կառավարում էր հոգենոր իշխանութիւնից ընտրւած ժամանակաւոր մասնաժողովի ձեռքով, Վեհ. Կաթողիկոսի հրամանով աժմնորից պիտի կառավարւի կանոնադրութեան համաձայն, ալսինքն ժողովրդից ընտրած հոգաբարձութեան ձեռքով. Առ ալդ՝ զեկտեմբերի 10-ին կատարեցին քաղաքի չորս եկեղեցիներում հոգաբարձական պատգամաւորների ընտրութիւններ, տասը-տասը հոգի ամեն մինում, որոնք և պիտի ընտրեն հոգաբարձուներու.

ՊԵՏՐՈՎԼԻ ՄԻՆԱԾՆՈՐՃ ԹԻՒՐՅԻԱՅՈՒՄ. Թիւրքիաի պետական խորհրդի անդամ Պետրոս էֆ. առաջարկած է աաձիկ կառավարութեան՝ Թիւրքիաի մեջ վաճառուղ պետրոլը (կերոսին) մենաշնորհ անել և այս նպատակով օսմանեան անանուն (ակցիոներական) ընկերութիւն կազմել. Պետրոս էֆ. ցուց է տւած որ ալս մնաաշնորհը տարեկան 250.000 ոսկի կարող է բերել ընկերութեան, որից 50.000 ոսկի պիտի մնաա ընկերութեան, իսկ 200.000 ոսկի կը վերցնի պետական դանձարանը. Ալդ առաջարկութիւնը նպաստաւոր ընդունելութիւն է դտած և ելմտական մինիստրութիւնը որ ալդ առաջարկը, քննելու պաշտօն ունէր, ալս մասին մի քանի տեղեկութիւններ է խնդրած հանրօգուա շինութիւնների մինիստրութիւններից:

ՔՈՇԱԿ. Ալէքսանդրապովի հայոց զարոցների հոգաբարձութեան կաթողիկոսի կոնդակով թուլատրւած է հանգուցեալ ուսուցիչ Մկրտիչ Արաբաշեանի ալրիին ալս տարի տալ 300 ո. և ալնունետե ամեն տարի վճարել 100 ոուրլի մինչև ալրիի որդիքը չափահասութեան կը հասնեն:

ՍԻԳԱՐԻ ԹՂԹԻ ՄԵՆԱՇՆՈՐՀ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ խնդրել է ձեմիլ բէզ
անուն մի ոմն իւր ընկերներով, որի համար Բ. Դուռը ելմտական
մինիստրութիւնից մի քանի լուսաբանովթիւն է խնդրել:

ՔԱՆԻՈՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ ԲԱԹՈՒՄՑ: Բաթումի մէջ Ծովնան և ընկ.
Նաւթային գործարանի բանտարները 1894 թականի լուսիսի 1-ից
